



Ch. Utkunertofw E  
Pyligunru kw E  
9 f<sup>12</sup> 2h

891.99
u-42



891.542-3

Ա-42

Ս. ՍԶԱՐՈՆԵԱՆ

(ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ)

# ՃՎԷՅՑԱՐԱԿԱՆ

===== ԳԻՒՂԸ

ՆԱՄԱԿԱՆԻ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էլեկտրատպարան օր. Ն. Ս. Ղազնեանի, Պոլից, 7

1913

2320

21 JUN 2005

891,99

Ա. Ա. ՀԱՐՈՆԵԱՆ

Ա-42

(ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ)


177

# ՃՎԷՅՑԱՐԱԿԱՆ

===== ԳԻՒՂԸ

1001  
205

ՆԱՄԱԿԱՆԻ



359

Թ Ի Յ Լ Ի Ս  
Էլեկտրագ. Օր. Ն. Աղանեանի, Պոլից. 7  
1913

### ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այս երկը գրւած է սրանից 7—8 տարի առաջ:

Եւ դեռ այն ժամանակ, երբ մաս-մաս լոյս էր տեսնուած «Մուրճ» ամսագրում, ծանօթ և անծանօթ համակիրներ յաճախ խորհուրդ էին տալիս ինձ այս նամակները ամփոփել մի հատորի մէջ և տալ մեր ժողովրդին որպէս ընթերցանութեան պիտանի գիրք:

Ձախորդ պարագաներ արգելք եղան իրագործելու ընթերցողների ցանկութիւնը:

Այժմ լոյս ընծայելով «Շվէյցարական գիւղը», չը կամեցայ բաւականանալ մի միայն «լաւ է ուշ, քան՝ երբէք» առածի թելադրանքով, և աշխատեցի հնար եղածին չափ թարմացնել տարիներ առաջ գրւած այս աշխատութիւնը: Ու դիպւածին հաճելի եղաւ, որ ես վերստին աչքէ անցնեմ այս նամակները հէնց Շվէյցարիայում և յատկապէս այն վայրերում, որոնք նիւթ են դարձել այս իմ նկարագրութիւններին, խոհերին ու խորհրդածութիւններին:

Բարեբաղդաբար շատ բան չը գտայ փոխւած: Եւ հասկանալի է:

Շվէյցարիայի պէս պահպանողական, աւանդապաշտ մի երկրում 7—8 տարին շատ չնչին ժամանակ է համայնական կեանքի արմատական փոփոխութիւններին համար: Խոշոր և ուժեղ ցընցումները վաղուց հետէ պայմած այդ ժողովուրդը՝



2057

այժմ սիրում է ընթանալ էվօլյուցիայի խաղաղ ճանապարհով:

Տեխնիկան է միայն, որ ամեն օր հրաշքներ է գործում արդիւնաբերութեան ու արդիւնագործութեան շրջանում. կուլտուրան նորանոր և աւելի կատարելագործւած միջոցներով ու ձևերով փուլում է, տարածւում է այս երկրի մի ծայրից միւսը. բայց ժողովրդի հոգին, նրա բարոյական սկզբունքները, նրա քաղաքական, համայնական կեանքը հեշտ չի կերպարանափոխւում:

Հնութեան սէրը ամենէն ուժեղ զգացմունքներից մէկն է նոյն իսկ քաղաքակիրթ երկրներում:

Այնուամենայնիւ ես չափազանց գոհ եմ, որ պատեհութիւն ունեցայ նորից անցնել տարիներ առաջ տեսածս վայրերը և տեղն ու տեղը ջնջեցի այս աշխատութիւնից, ինչ ինձ թւում էր երկրորդական կամ անկարևոր, աւելացրի, ինչ որ պակասում էր, ճշտեցի ու սրբագրեցի թւեր ու թւականներ, և աւելացրի նաև մի ամբողջ նոր գլուխ՝ XIX-դ և XX-դի կէսը:

Երջանիկ կը լինիմ, եթէ այս գիրքը գէթ մի փոքր օժանդակի մեր ժողովրդի առաջադիմութեան գործին, սէր զարթեցնելով նրա հոգում դէպի քաղաքակրթութիւն, դէպի լոյս և բանալով նրա աչքի առաջ կեանքի նոր ու աւելի հրապուրիչ հորիզոններ:

Կուրբալթ-Հարուն

Սեպտեմբեր 1912

Լօղան

## I.

## Սիրելի ընկեր!

Տեղեկութիւններ ես խնդրում Շվէյցարիայից, իրաւունք ունես, արժէ ծանօթանալ այս երկրի հետ, ես սիրով եմ կատարում ցանկութիւնդ: Միայն թոյլ տուր ինձ խնդրեմ, որ իմ տպաւորութիւնները քեզ հաղորդեմ հրապարակով. կարծում եմ, որ քեզ պէս շատ շատերին դա հետաքրքիր կը լինի:

Ես չը գիտեմ իսկապէս, թէ շվէյցարական կեանքի որ կողմի հետ դու կը կամեանայիր աւելի մօտիկից ծանօթանալ, բայց ես քեզ գրելու եմ պարբերաբար այս երկրի գիւղի մասին: Ես համոզուած եմ, որ դա քեզ մասնաւորապէս կը հետաքրքրի. դու գիւղացի ես, ինչպէս և ես: Ամբողջ քաղաքակիրթ աշխարհում շվէյցարական գիւղը առանձին հետաքրքրութեան և ուսումնասիրութեան առարկայ է եղել միշտ: Ես յիշում եմ, թէ Պարիզի վերջին 1900 թուի ցուցահանդիսին ամեն օր ինչ ահագին բազմութիւն էր խոնւում այն մուտքի առաջ,

որ տանում էր դէպի շվէյցարական զիւղը: Շատ կողմերով դա չափազանց օրիգինալ է, այդ ճշմարիտ է, բայց դրանից բացի ես իմ առանձին պատճառներն ունեմ այս երկրի զիւղն ընտրել իմ նամակներին նիւթ. բացատրեմ, գուցէ և դու համաձայնես ինձ հետ:

Մի ընդհանուր քաղաքակրթութիւն կայ, որի անունն է արեւմտեան քաղաքակրթութիւն և որ յատուկ է եւրոպական բոլոր երկրներին: Այս ու այն երկրում որոշ տեղական գոյն, տեղական առանձնայատկութիւններ, ազգային բնաւորութիւն ընդունելով հանդերձ, եւրոպական քաղաքակրթութիւնը, եւրոպական կուլտուրան իր ընդհանուր բնորոշ գծերով մնում է համարեա նոյնը ամեն տեղ: Այդ նմանողութիւնն արտայայտուում է մանաւանդ մեծ քաղաքներում, արդիւնաբերական խոշոր կենտրոններում, և արեւմուտքին բոլորովին մի անձանօթ մարդ, օրինակ, հեռաւոր արևելքից առաջին անգամ հասած մի շինացի, մի սիամցի հետգհետէ զանազան քաղաքներ այցելելով՝ հեշտութեամբ կարող է ինքն իրան միշտ միևնոյն երկրում կարծելու թիւրիմացութեան մէջ ընկնել: Ինչ ասել կ'ուզի, որ ծիծաղելի կը լինէր ասել, թէ չը կայ գերմանական, ֆրան-

սիական, անգլիական նոյն իսկ շվէյցարական ուրոյն կուլտուրա, արդիւնք իւրաքանչիւր ազգի ստեղծագործող հանձարի, ցեղական առանձնայատկութիւնների, հոգեբանական զանազան դործօնների տեղական-աշխարհագրական, կլիմայական և քաղաքական պայմանների, բայց անուրանալի է, որ այդ բոլոր քաղաքակրթութիւնները, իրանց սկզբունքներով, իրանց հիմունքներով ընդհանուր նմանողութիւն ունեն պահպանելով առանձնայատուկ երանգներ: Եւ այդ քաղաքակրթութիւնը հարթ, հաւասար հոսող ջրի պէս միապաղաղ չի պատել արեւմուտքի բոլոր երկիրները, նրա ընթացքը ալեծածան է, վեր ու վար, մէկ տեղ շատ, միւս տեղ նուազ, մէկ տեղ հաստ շերտով, միւս տեղ նօսր: Այսպիսով կուլտուրական բարիքները անհամաչափ կերպով են տարածուած ոչ միայն զանազան երկիրներում, այլ և մի և նոյն երկրի զանազան մասերում: Շատ անգամ մի և նոյն երկրում քաղաքակրթութեան բարձրագոյն պահանջներին համապատասխանող քաղաքների կողքին հեշտութեամբ կարելի է տեսնել զիւղեր, նոյն իսկ ամբողջ գաւառներ, որոնք կուլտուրական տեսակէտից կատարեալ հակոսնեայ վիճակի մէջ են նոյն քաղաքների հետ: Այցելելով օրի-

նակ Ֆրանսիայի գլխաւոր քաղաքները, արդիւնաբերական խոշոր կենտրոնները՝ Պարիզ, Լիօն, Մարսէլ, Նանսի, մարդ հեշտութեամբ կարող է սխալ եզրակացութեան հասնել այդ երկրի ժողովրդի ամբողջութեան մտաւոր և տնտեսական կացութեան մասին, եթէ նա անծանօթ է օրինակ Սալօյեայի գիւղերին: Նոյնը կարելի է ասել համարեա իւրաքանչիւր երկրի մասին:

Միմիայն քաղաքներով անհնարին է ընդհանուր և ճիշտ գաղափար կազմել որ և է երկրի մասին: Միայն կուլտուրական, քաղաքակրթական բարիքների այն չափը, որ բաժին է ընկել այս կամ այն երկրի գիւղական ժողովրդին կարող է որպէս չափ ծառայել որոշելու համար նոյն ժողովրդի ամբողջութեան մտաւոր, բարոյական և տնտեսական բարեկեցութեան ընդհանուր մակերևոյթի բարձրութիւնը: Ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ որ և է մեծ քաղաքի էլեկտրական լուսաւորութիւնը, էլեկտրական տրամվայները, գեղեցիկ և մեծ ձեմելիները, շքեղ տները և այլ բազմապիսի յարմարութիւնները, եթէ մի քիչ հեռու գիւղեր կան, ուր ճանապարհ ու կամուրջ չը կայ, ուր ողորմելի խրճիթները գիշերները չեն լուսաւորուում. ուր մարդը խաբսափում է

տգիտութեան ու խեղճութեան անթափանցիկ խաւարի մէջ:

Ահա թէ ինչո՞ւ անհրաժեշտ է ամենից առաջ գիւղն ուսումնասիրել, մօտիկից ծանօթանալ գիւղական ժողովրդի, այն աշխատաւոր սև մասսայի հետ, որ բոլոր դարերում, բոլոր աշխարհներում իր ուսերին է կրել իր հայրենիքի ճակատագրի ծանրութեան մեծագոյն մասը, որի քրտինքի կաթիլների քանակութիւնից է կախուած այս ու այն երկրի բաղն ու դժբախտութիւնը, որ իր ծոցում կրում է մի ամբողջ ազգի կենսական ոյժերի աղբիւրը, կարող է քաղաքային մաշուած սերունդը փոխանակել առողջ հոսանքով և պրօլետարիայի թիւը սահմանել:

Գիւղի ազդեցութիւնն ու նշանակութիւնն էլ աւելի մեծ է մանաւանդ այն երկիրներում, ուր կազմուած չեն տակաւին արդիւնաբերական խոշոր կենտրոններ, մուտք չեն գործել մեծամեծ դրամագլուխներ, կօլլեկտիվ հսկայական ձեռնարկութիւններ արդիւնաբերական նշանաւոր ճիւղերի համար, և ուր ժողովուրդը շարունակում է կապուած մնալ իր հողին: Շվէյցարիայում ուր մեծամեծ քաղաքներ չը կան և ժողովրդի մեծամասնութիւնը երկրի բնա-

կան պայմանները շնորհիւ երկրագործութեամբ և խաշնարածութեամբ է պարապում, ուր նա՝ այդ ժողովուրդը ներկայանում է որպէս կրթուած գիւղացիների մի բազմութիւն — «Les paysans cultivés» — ինչպէս սիրում են իրանք իրանց անուանել շվէյցարացիք, գիւղի առաջնակարգ նշանակութիւնն ակներև է:

Ահա թէ ինչո՞ւ, սիրելիս, Շվէյցարիայի մասին քեզ որոշ գաղափար տալու համար ես կսկսեմ հէնց գիւղից. երբ մի երկրում գիւղը իր աշխատաւոր ժողովրդով երջանիկ է, քաղաքների երջանկութիւնն ակներև է, մինչդեռ հակառակը միշտ չի կարող ճիշտ լինել:

Այս յառաջաբանից յետոյ, ես անցնում եմ իմ բուն նիւթին՝ շվէյցարական գիւղին: Այժմ՝ երբ այս երկրի մի գիւղում նստած, գրում եմ քեզ այս տողերը, բնականապէս անկարող եմ ամեն վայրկեան չը յիշել միևս գիւղը, այն հեռաւորը, որից հեռացել ենք երկուսով էլ, ուր անցել է մեր մանկութիւնը, որ մեր կեանքի արշալոյսին ժլատացել է մեզ իր ցաւոտ, գունատ ժպտով, որ մեր ճակատին դրոշմել է դեռ օրօրոցի մէջ իր անվերջ թախիծի կնիքը և որի ճակատագիրն այնքան զբաղեցնում է մեզ, ես.

անկարող եմ շարունակ աչքի առաջ չունենալ մեր տգէտ, խաւար ամբոխին, որ սողում է իր ցաւերի ծանրութեան տակ մի խուլ անքոցով, որ աչքերի մէջ էլ փայլ չունի, սրտում եռանդ ու յոյս, և երբէք, երբէք չի կարողանում երևակայել թէ երկնքի տակ այլ վիճակ, այլ բաղդ, այլ կացութիւն հնարաւոր է իր համար: Սև գոլութիւն, անասնական մի ողբալի գոյութիւն, որ նա քաշ է տալիս դարերի միջից, ինչպէս յոգնած ճանապարհորդը փշոտ, խանձուած անապատների մէջ, լալիս է և հնազանդ է իր ճակատագրին: Ի՞նչպէս մոռանալ նրան, ի՞նչպէս ջնջել գլխից այն յիշողութիւնները, որոնք լոյսի առաջին շողի, և մայրական կաթի առաջին կաթիլի հետ են տեղ բռնել: Արևելքի յայտնի առածը յիշում ես՝ «Կաթի հետ մտածը՝ հոգու հետ դուրս կը գայ»: Հաւատացած եմ, որ քեզ չեմ ձանձրացնի, եթէ երբեմն իմ նամակներում, ևրոպական կեանքի պատկերների կողքին, դու գտնես նաև հայրենի ծանօթ պատկերներ, ծանօթ դէմքեր, ծանօթ երեւոյթներ: Ժամանակի և տարածութեան միջից այս վերջիններն ինձ երևում են ինչպէս մանկութեան երազներ, հեռու և մշու-

շապատ, բայց հէնց այդպէս նրանք աւելի սիրելի են ինձ, աւելի հմայք ունեն:

Ես ուրախ եմ, սիրելիս, որ քո նամակն ինձ հասաւ ճիշտ այն ժամանակ, երբ ամառային արձակուրդներն անցկացնելու համար եկել եմ շվէյցարական մի գիւղ: Եւ հէնց այս գեղեցիկ առիթից կ'օգտուեմ քո հարցասիրութեանը բաւականութիւն տալու: Շվէյցարական շատ գիւղեր եմ տեսել, բայց ինչո՞ւ չը սկսել հէնց սրանից, ուր ապրում եմ: Դա աւելի հեշտ և աւելի ճրջ-գրիտ կը լինի: Սա կարող է առաջին պատահած գիւղը համարուել, ամենասովորականներից, որ միւսներից ոչ մի առանձին առաւելութիւն չունի: Ես քեզ կընկարագրեմ այդ գիւղն այնպէս, ինչպէս որ նա կայ, առանց աւելացնելու, առանց չափազանցութիւնների: Եթէ նկարագրիս մէջ երբեմն գտնես վառ գոյներ, բանաստեղծական կտորներ, այդ էլ ընդունիր իբրև զուտ իրականութիւն և ոչ արդիւնք իմ երևակայութեան թռիչքներին:

Գիւղը՝ ուր ես ապրում եմ, Պիզու է կոչւում և գտնւում է Վօ կանտօնում Լօզանից ոչ հեռու: Բերն գնացող երկաթու-

ղու գիծն անցնում է մօտով և մի փոքրիկ կայարանից մինչև գիւղը հազիւ երկու կիլօմետր ճանապարհ է: Այդ տարածութիւնը ոտքով անցնելը խիստ հաճելի զբօսանք է: Վար ես իջնում մի սիրուն խճուղիով, մի պահ քայլում ես անտառապատ բլրակի կողքով, շուտով քեզ ընկերանում է մի կարկաչուն վտակ, որ ներքևում աղմկում է ծառերի և խոտերի մէջ. ահա մի տնակ ճանապարհի վրայ՝ մէջքը դարձրած դէպի անտառն ու վտակը, չորս կողմից ծառեր. ահա երկրորդը, մենաւոր ու թախծոտ, ուր մի քանի հաւեր թափառում են խոտերի մէջ, մի քանի շիկահեր երեխաներ, որոնք խաղում են դրան առաջ և հետաքրքրութեամբ նայում օտարականին, մի բան փրսփստում, ծիծաղում: Անցնում ես կամուրջով, կրկին լուսթիւն, անտառակի ստուերը ծածկել է ճանապարհը, զով է և խաղաղ. խրճուղին հարթ է, ինչպէս կտաւ, նա գալարւում է ծառերի մէջ, մարդ չի շտապում և քայլում է հանդարտ, ազահաբար ներս քաշելով սառն օդը և ականջ դնելով անտառի մեղմ փսփսուկին:

Ահա և գիւղը. մեծ չէ նա, հազիւ 15 — 20 տնից բաղկացած. առհասարակ Շվէյցարիայում չը կան մեծ գիւղեր ինչպէս մեր

երկրում, ուր 3—4 հարիւր տներ իրար վրայ խիտ առ խիտ կուտակուած են երբեմն: Այստեղ գիւղերը միշտ փոքր են և տներն էլ իրար վրայ թափուած չեն, այլ փռած շրջակայքում: Առաջին շէնքը որ բարձրանում է հայեացքի առաջ՝ գիւղական երկյարկանի սպիտակ դպրոցն է, նա իշխում է բոլոր տների վրայ, ամենից մեծն է, ամենից շքեղն է: Չը կայ մի գիւղ, ուր դպրոցը չունենայ առաջին շինութիւնը: Դպրոցի առաջից է անցնում գիւղի միակ լայն փողոցը, մի սիրուն խճուղի, որի երկու կողմերում շարուած են տները: Այս փողոցի վրայ շինուած են հասարակաց քարեայ աւազաններ, ուր շուրը անընդհատ հոսում է քարէ մեծ կուռի մէջ. աւազանը ծածկուած է և օրուայ որ ժամին ասես, այնտեղ կարելի է տեսնել գիւղացի կանանց և երեխաներին: Վճիտ և առողջարար է շուրը, մաքուր է աւազանի շուրջը, նա ոչնչով չի յիշեցնում մեր լեռնային գիւղերի աղբիւրները, որոնց չորս կողմում կարելի է միշտ տեսնել լուացած կանաչեղէնի մնացորդներ, հաւի և ձկան փորոտիք, փետուրներ, պտուղների կեղևներ և ուրիշ այնպիսի գարշութիւններ, որ մարդ նողկանք է գգում աղբիւրին մօտենալիս: Այստեղ հա-

ճելի է նստել աւազանի մօտ և լսել նրա մեղմ խշշոցը:

Տների կազմութեան, բաժանմունքների նկարագիրը թողնելով մի այլ անգամի, կ'ասեմ այժմ որ նրանք շինուած են իրարից դատ դատ և իւրաքանչիւրն ունի իր փոքրիկ պարտէզն ու բանջարանոցը, ուր աշխատում է մի կին, մի աղջիկ, կամ մի փոքրիկ երեխայ: Տների շուրջը բակի պատեր չը կան, պարտէզն ու բանջարանոցները ոչնչով չեն փակուած, դռների առաջ ընկած են երկրագործական զանազան գործիքներ, կահ կարասիք, տախտակներ, զամբիւղներ, կողովներ և այս բոլորի վրայ ոչ մի հսկող աչք չը կայ, որովհետև ոչ մի վրտանգ չը կայ: Օտարականը կարող է ապահով կերպով անցնել փողոցով, մտնել որ տունը կամենում է, հաստավիզ գամբռներ չեն պառկած դռների առաջ, նրանց հաջոցը չի աղմկում գիւղի խաղաղութիւնը, եղած մէկ երկու շներն էլ այնքան մեղմ տեսք ունին, այն աստիճան խեղճ են, կարծես հրաման են ստացել չը հաջել, նրանք նայում են անցորդին և պոչերը կախ ձգած թողնում գնում փիլիսոփաների անտարբերութեամբ: Մի փոքր մեծ, կասկածելի շների դնչերն էլ դրուած են երկաթէ ցանցի

մէջ, որ զրկել է նրանց յանցաւոր փորձի որ և է հնարաւորութիւնից: Շատ վաղուց է, որ շունն այստեղ դարձել է տան դարդ և ոչ պահապան, որովհետեւ անձանօթն էլ թըշնամի չէ, այլ եղբայր, բարեկամ: Մեր երկրի անազին, կատաղի շները մասին յաճախ առիթ եմ ունեցել պատմել շվէյցարացիներին. նրանք մանկական զարմանքով լսելուց յետոյ, անմեղօրէն հարցնում են, թէ ինչո՞ւ համար են այդ գազանները: — Գողերի, լինում է պատասխանը, և նըրանք մնում են այն երեխայի կացութեան մէջ, որ հենց նոր լսել վերջացրել է մի ցնորական հէքիաթ:

Ասացի, որ Պիդուն հազիւ 15—20 տուն ունենայ միասին խմբուած, որոնք և կազմում են նրա կեդրոնը, կորիզը, ուր գտնւում է պոստատունը, դպրոցը, եկեղեցին, ինչպէս և շինական կառավարութիւնը: Բայց սրանցից բացի գիւղական համայնքը էլի տներ ունի, հեռու կեդրոնից, շրջակայքում: Այդ տները մի բանաստեղծական անկարգութեամբ ցաք ու ցրիւ փռուած են դաշտավայրի բոլոր անկիւններում իրարից խռոված մանուկների պէս: Սա մի սովորական երևոյթ է շվէյցարական բոլոր գիւղերում: Արեւելքում անապահովութիւնը, սպանու-

թեան և կողոպուտի մշտական սարսափը ստիպել է մարդկանց ոչ միայն իրար մօտ սղմուած ապրել, այլ և հարեան տների պատերի մէջ անցքեր շինել՝ վտանգների ժամանակ օգնութիւն կանչելու: Այսպիսով մեր երկրի գիւղերում այլ է տան տեղը, այլ է այգու տեղը, որ սովորաբար բնակութիւնից շատ հեռու չի լինում և վերջապէս այլ է ցանովի տեղը կամ արտը: Շվէյցարական գիւղում հողն այդպիսի դասերի չի բաժանուում. գիւղացին իր տունը շինում է, ուր կամենում է, բանջարանոցը՝ և այգին, ուր յարմար է: Այդ ընտրութիւնը կախուած է բացառապէս իր անձնական յարմարութիւններից, այդպէս նա իր տունը շատ անգամ աշխատում է շինել իր ամենամեծ արտի մօտ, ուր և լինի, որքան և գիւղից հեռու ընկած, այդ միևնոյն է, ոչ մի արգելք, ոչ մի երկիւղ. նա հանգիստ կարող է ապրել իր արտում: Եւ նայելով՝ թէ ի՞նչ անուն ունի այս կամ այն արտ, այս կամ այն բլրակ, որի կողքին գնում է բնակուելու գիւղացին, նոյն անունը տրւում է և նրա շինած տանը. այսպէս Պիդուի դաշտերում կայ մենաւոր տուն, որ կոչւում է «Pied de boeuf» (եզան ոտք), «Corne de cerf» (եղջերուի եղջիւր) և այլն: Եւ տըն-  
Շվէյց. գիւղը



կուած է այնտեղ մի հատիկ տունը, հեռու մնացած բնակութիւններէց, ցերեկը արևի շողերով ողողուած գեղանկարչօրէն սպիտակին է տալիս դաշտերի միապաղաղ կանաչի մէջ, իսկ գիշերները համատարած խաւարի մէջ նրա ճրագը լուսամուտներէց թարթում է անցորդին և լռութեան ու ամայութեան մէջ կեանքից, յոյսից ու աշխատանքից խօսում: Որքան պօէզիա, որքան գրաւչութիւն կայ այդ տների մենաւորութեան մէջ. այստեղ ամեն ինչ գեղեցիկ է ու մեղմ, և խնձորի ու տանձի ծառերը, որոնք պատուարում են նրան և՛ փոքրիկ շունը, որ վազվզում է, կամ պառկած է դռան առաջ, և՛ մեծ, սպիտակ կատուն, որ հնձած խոտատեղում մկներ է որսում առաւօտից երեկոյ և մանաւանդ փոքրիկ աւազանը, ուր լեռնային աղբրի վճիտ ջուրը հոսում է, հոսում է անընդհատ մի անուշ կարկաչիւնով: Յերեկը այդ տներում շատ անգամ մարդ չը կայ, եթէ աշխատանքի օրեր են. բայց դուռը բաց է և դռան առաջ նստած են երկու փոքրիկներ, երկու գանգրահեր շէկ երեխաներ, քոյր ու եղբայր, որոնց մայրը դաշտ գնալիս պատուիրել է տանը նրստել: Եւ այնտեղ են փոքրիկներն իրանց շան, հաւերի և կատուի հետ, վազվզում են

կամ ճանապարհի վրայ սնակներ շինում: Սոհեմ, խելացի մանուկներ, որոնք միշտ այնպէս հնազանդ են ծնողներին, այնքան հոգատար, այնպէս մեղմ դէմքով, մեղմ աչքերով:

Երեկոներն զբօսանքի ժամերին ես դուրս եմ գնում գիւղից դէպի դաշտ: Այնտեղ՝ կանաչագարդ հարթութեան մէջ բարձրանում է մի բլրակ, որի կատարին ծառերի մի խումբ, պսակ են կազմում: Բարձրանում եմ այդ բլրակը և խոտերի մէջ ընկղմուած նայում եմ դէպի արևմուտք, դէպի դաշտավայրը, դէպի լեռները: Գիւղի վրայ բացուող տեսարանը կարելի է դիտել ամեն օր և չը կշտանալ: Շվէյցարական բնութեան գեղեցկութեան մասին շատ է գրուել, կըրկնութիւններ չեմ ուզում անել, կասեմ միայն, որ այդ բնութեան մի խիստ բնորոշ գիծն է զարմանալի քնքշութիւնը, անօրինակ նրբութիւնը: Ամեն ինչ մեղմ է այստեղ, խաղաղ, նրւրբ. ոչինչ վայրի, ոչինչ յախուռն ու յանկարծական. փոփոխութիւնները թէ երկրի վրայ և թէ երկնքում, մի ամպից միւսը, մի գոյնից միւսը, ձորից դէպի բլուրը, բլրից դէպի հարթութիւնը կատարում է կամ կատարուել է անուշիկ զգուշութեամբ, մեղմիկ շարժումով, որ հայեացքը չը խրտնի,

սիրտը թունդ չը լինի: Հարաւի փոթորիկներն իրանց աւերիչ թափով չեն գալիս խոռվելու այս վսեմ ներդաշնակութիւնը, բնութիւնն այստեղ ընդոստ կերպով չի ցնցւում, այլ պառկած կոյսի պէս մեղմօրէն հեռւմ է, մարդը յանկարծական յոյզերի բռնկումներ չի ստանում այստեղ, այլ խոհերի և մելանխօլիայի մէջ ընկղմւում:

Առաջս բացւող տեսարանը Շվէյցարիայի ամենասովորական տեսարաններից մէկն է և սակայն նա առասպելօրէն նկարչական է: Այս դաշտալայրը. սա մի հարթութիւն չէ, այլ կանաչի ալէծածան մի ծով, բուրավից ու գեղեցիկ, որի մակերևոյթը երեկոյեան զով քամու առաջ դողդողում է այնքան մեղմութեամբ, այնքան քնքշութեամբ: Եւ այդ կանաչագարդ հարթութեան վրայ գալարւում են կտաւի պէս սպիտակ, կոկիկ խճուղիներ, երկու կողմից եզերուած ծառերի շարքերով: Հորիզոնը եզերող լեռներն արևմուտքում երկնքի ֆօնի վրայ ծրագրւում են իրանց կատարների անտառներով, և նրանցից իւրաքանչիւրը նման է գոթական ճաշակի ատամնաւոր հսկայական դղեակի, որի սրածայր աշտարակները իրանց անթիւ քանդակներով լողում են վերջալոյսի շողերում: Ամենից շատ սիրում եմ մի մե-

նաւոր ժայռոտ բլուր, որ յամառ կերպով պահում է իր կատարին մի քանի ծառեր, ասես եղանակների խստութեան դէմ իր գըլխի ճաղասն սքօղելու: Բլուրների լանջերին, ձորակներում դեռ երևում են հնձող գիւղացիներ, առանց բաճկոնի, լայնեզր ցօղէ գլխարկով. խոտով բարձած մի սայլ բարձրանում է յամրաբար, քաշողը մի հատիկ եղ է, երբեմն նոյն իսկ մի կով. ահա մի կին, որ չանգռիկը ուսին դրած յետ է գալիս դաշտերից, մի խումբ աղջիկներ, որոնք ծածկւում են անտառի մէջ երգելով. նրանց տները հեռու են, բարձր լեռնալանջին, գիւղից անջատուած: Լեռնադաշտի հէնց կենտրոնում մի ձկնաձև բլուր, որի վրայ երեկոյեան մշուշի միջից երևում են գիւղի տները՝ կղմինդրածածկ, կարմիր կտուրներով, սպիտակ պատերով: Հեռու դաշտերում կանաչների մէջ թաղուած՝ տեսնում եմ գերեզմանատունը, ուր հանգչում են մեռելները ծաղիկների բուրմունքի և մշտադալար ծառերի սօսափիւնի տակ: Գիւղից դէպի հարաւ ձգուած է մի այլ բլուր, որ կրում է իր մէջքին գիւղական եկեղեցին, մի փոքրիկ շէնք, պարզ, անգարդ, որի սուր գոթական դանդակատունը բարձրանում է համեստօրէն, և կարծես ամաչում է, որ այսքան

փոքրիկ, կծկուած շէնքի վրայ ինքն այնքան բարձր է, այնպէս երկար:

Լուռ է շրջակայքը. լուռթիւն է իշխում և գիւղում: Զարմանալի է, երեկոները՝ երբ դաշտերից, արտերից աշխատաւորները վերադառնում են տուն, դարձեալ գիւղում առանձին փոփոխութիւն չի առաջ գալիս. նոյն խաղաղութիւնը, նոյն մեղմութիւնը, որ այնպէս յատուկ է Ծվէյցարիային, շվէյցարական ժողովրդին, շարունակւում է: Ծուն չի հաշում, անասուններ չեն բառահում, երեխաներ չեն լալիս, մարդիկ չեն աղմկւում, աներում մէկիկ մէկիկ վառւում են ճրագները, ընթրիքի ժամն է, քիչ յետոյ ամենքը քուն կը մտնեն, այս օրհնուած երկնքի տակ:

Նայում եմ այս պատկերին և դարձեալ միտս է գալիս մեր գիւղը, այն տխուր հարթութիւնը, որ ձգւում է մինչև Մասիսի ստորոտները, աղային սպիտակ շերտով ծածկուած հնագին տարածութիւնը, որտեղից անասունները խոյս են տալիս, այն ճահճապատ հողերը, որոնք այնքան առատօրէն մոծակներ ու միազմներ են տալիս, այն բլրակները, որոնք մեզանում «ղուեր»-են կոչւում, քարերով պատած, չոր, խանձուած, անմարդաբնակ, ուր սողում է օձը և ուր հրացանը ձեռքին մարաղ է մտել արիւ-

նածարաւ քիւրդը: Յիշում եմ մեր ճանապարհները, որոնք կարծես ոչ թէ մարդկանց ձեռքով, մտածուած կերպով են շինուած, այլ իրանք անցել են, որտեղից և ինչպէս կամեցել են, կտրտուած ցեխերով լի փոսերով. փոշու մէջ կորած՝ չոր եղանակին, անանցանելի՝ անձրևոտ օրերին. մեր առունները, խոր ու տղմոտ, որոնք կամուրջ չունեն, յիշում եմ նրանց մէջ թաղուած ծանրակազմ, այլանդակ սայլը, հնագին հաստավիզ գոմէշները, որոնք ձկուում են, գալարւում են, բեռը դուրս քաշել չեն կարողանում. երեկոյ է, մթնում է, տէրը՝ տանջուած, փոշոտ, քրտինքոտ գիւղացին, անհանգիստ է, նա կատաղած է, շարժում է խարազանը, կաշուէ ոլորուն խարազանը ֆուռում է օգի մէջ, կենդանու մարմնով փաթաթւում, պորտը պատուում, որտեղից արիւնը կաթիլ կաթիլ հոսում է տգիտութեան և վայրենութեան սեղանի վրայ: Յիշում եմ մանաւանդ մեր գիւղի առաջի կամուրջը, որ տարին մի անգամ գարնանը կը շինէին բարակ փայտերով ու ցեխով, չորացած հողը վրայից կը թափուէր, կը մնար կամուրջի միայն կմախքը, մի քանի փայտեր, յետոյ այն էլ կը գողանային թուրքերը, առուն կը մնար առանց կամրջի, ճանապարհը

անանցանելի, մինչև որ Մահտեսի X-ը իր հոգու վարձքի համար մի գերանի կտոր ձրգէր վրան ոտքով անց ու դարձի համար: Ես ու դու մեր մանկութեան օրերում քանի անգամ դաշտ գնալիս իրար բռնած, դողդողալով անցել ենք այդ բարակ գերանի վրայից, քանի քանի ուրիշները շուրն են թափւել և ակամայ վարդավառ արել: Ա՛խ, այդ կամուրջը ես երբէք չեմ մոռանայ: Խեղճ մանկութիւն, այն ժամանակ ես համոզուած էի, որ այն առուի վրայ ուրիշ որ և է կամուրջ հնարաւոր չէ և թէ ամեն երկրի մանուկներ գիւղից հեռանալիս պարտական են դողդողալով անցնել մի նման գերանի վրայից:

Հապա մեր գիւղի ամառային երեկոները. դաշտից՝ դունատ, չորացած դաշտից նախիրը յետ է գալիս և իր հետ գիւղ է բերում միջատների անթիւ բազմութեան հետ և փոշու ամպեր. ամենքը իրար են խառնւում. շները՝ չը գիտես ինչո՞ւ, մէկէն ըսկսում են հաչել, հալածել փոշոտ, կեղտոտ, հիւժւած անասուններին, մարդիկ էլ աղմկւում են, գզիրն էլ չը գիտես ինչ է կանչում, փողոցներում աթարի կոյտերի վրայ շարուած կանայք էլ իրար են անցնում, ըսկսում են ճվճվալ, գիւղի հրապարակի մէջ

ուէն է գողգողում, մէկին ծեծում են, միւսին հայհոյում և ամբողջ գիւղը կարծես դրւում է պատերազմական դրութեան մէջ: Այս բոլորը անցնում է աչքիս առաջից, իսկ ես շարունակում եմ բլրից նայել շվէյցարական գիւղի տեսարանին և տխուր մտքերը պաշարում են ինձ:

← Յը գրութիւն!

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

ԿԻՋ.

## II.

Ես քեզ խոստացայ, սիրելիս, նկարագրել Շվէյցարիայի գիւղական տունը իմ յաջորդ նամակներից մէկում: Երէկ ես այդ նպատակով այցելեցի մի գիւղացու տուն և այսօր գրում եմ քեզ: Բայց թոյլ տուր ինձ նախ մի քանի խօսք ասել գիւղական պանսիօնների մասին, որոնք բնորոշ երևոյթ են այս երկրում և մեր ժողովրդին միանգամայն անծանօթ:

Գիւղական պանսիօնին իբրև նմուշ պիտի առնեմ հէնց իմ բնակածը: Հաստ, կարմիր այտերով, շիկահեր և ժպտադէմ տանտիկին կայ, որ վարում է տնտեսութիւնը, ամուսինը խուլ է, բայց ամբողջ օրը դաշտային աշխատանքներով է զբաղուած՝ տունը կառավարելու հոգսը կնոջը թողած: Նա սիրով ընդունեց հեռու երկրացի ուսանող օտարականին և ծանօթացրեց իր պանսիօնի հետ: Ահա այդ է, որի մասին մի քանի խօսք կ'ասեմ, ապա կ'անցնեմ շվէյցարական տանը:

Այս պանսիօնում կան 5—6 սենեակ-

ներ, որոնց մէջ ապրում են տասնի չափ օտարականներ հաւաքուած գանազան կողմերից, ամարային ամիսներում Շվէյցարիայի կենսարար օդը շնչելու: Այսպիսի պանսիօններ կարելի է գտնել այս երկրի համարեա իւրաքանչիւր անկիւնում, մանաւանդ լեռնային գիւղերում: Առհասարակ Շվէյցարիայում չը կայ փոքր ի շատէ յարմար, գեղեցկադիր, օդաւէտ վայր, ուր պանսիօն չը լինի: Չոր ու անտառ, լեռնալանջեր ու կատարներ, վճիտ լճերի ափեր, այս բոլոր տեղերում գործնական շվէյցարացին ստեղծել է բազմաթիւ յարմարութիւններ իր երկրի բնական և կուլտուրական բարիքները վայելելու եկող հազարաւոր օտարականների համար:

Եթէ չէք կամենում ապրել գիւղերում, եթէ առանձնութիւն, լոռութիւն սիրող մարդ էք, կարող էք խոյս տալ բնակութիւններից, հեռանալ խուլ անտառները ոտքով կամ ֆինիկիւլերով բարձրանալ Ալպերի կատարները և այդ տեղերում էլ դուք կը գտնէք երջանիկ ու խաղաղ կեանքի բոլոր յարմարութիւնները, մի հիւրանոցում կամ մի պանսիօնում: Ահա այդպիսի մի պանսիօնում եմ ապրում ես և այդ տեղի կեանքը ըստ իս շատ ուսանելի, հետաքրքիր կողմեր է

ներկայացնում: Չանազան ազգութիւններինց պատահական մարդիկ են հարեաններս, ի միջի այլոց երկու ամուսիններ կան, եօթանասուն տարեկան երկու պառաւներ, որոնք ծեր ազաւնիների պէս գուրգուրում են իրար և արևի վերջին շողերի պէս ասես դժուարանում են թողնել աշխարհը:

Հետաքրքիր գոյգ է. նրանք սեղանին միշտ իրար կողքի են նստած, տարօրինակօրէն նման դէմք ունին, երկուսն էլ կարմիր, երկուսն էլ կոլոր, ու կենսուրախ. միասին ժպտում են, միասին խօսում, միասին լռում են, կարծես քոյր ու եղբայր լինին: Հասարակութեան սրախօսութիւնների մըշտական առարկաներ են, նրանք լսում են հաճութեամբ և ծերերի բարի ժպտով: Հասակաւոր զաւակների և թոռների տէր են, իրանք էլ եկել են գիւղ «մի քիչ կազդուրուելու», այսպէս են ասում իրանք: Այս «կազդուրուել» բառը նշանակալից է, դու խօս գիտե՞ս, սիրելիս, որ եթէ «մի ոտքը գերեզմանում» մեր ծերերը կազդուրուելու մասին մտածեն, ամենքը տարօրինակ կը գտնեն, «կեանքից չը կշտանալը» մեր երկնքի տակ համարում է ամօթ, համարեա մեղք: Տառապանքներով ու սևերով լի արեւելքում մարդը վաղ է դադարում կեանք

վայելելուց և ժամ առաջ դերեզմանի մասին մտածում, որ գուցէ նրան հանգիստ և երկնային երջանկութիւն պարգևի: Դու խօսմ չես մոռացել մեր գիւղի յայտնի սկանդալը, երբ մեր 50—55 տարեկան հարեանուհին երեխայ ծնեց: Ողջ գիւղը տակն ու վրայ եղաւ, կարծւում էր թէ Նեոը ծնեց, այլապէս ո՞վ է տեսել, որ այդ տարիքի կինը երեխայ ծնի, նրան էլ ինչ կը սագի երեխայ ծնել, որպիսի խայտառակութիւն, մըտածում էին ամենքը և անօրինակ դէպքի մասին խօսում էին փափսուկով: Օ՛հ, տարօրինակ երկիր է մեր երկիրը, այնտեղ տառապիլը, տանջուլը, ցաւեր կրիլը, որքան կուզես, ձեռք մեկնող, ոտքի կանգնեցնող չի լինի, բայց վայելքի, ինքնուրոյնութեան, անհատական մարդկային իրաւունքների, բնական անբռնաբարելի իրաւունքների վրայ ծանրացած է բարոյական մի բութ ըմբռնումն, որի տակ խեղդւում են այնքան մարդկային ազնիւ յոյգեր, խեղաթիւրւում, այլանդակւում են այնքան շիտակ բնաւորութիւններ: Այլ է Շվէյցարիան, այստեղ մարդն աշխարհ է եկել կարծես վայելելու և ոչ թէ անօգուտ, անմիտ տեղը տառապելու համար: Ահա երկու ծերունիներ, գերեզմանին մօտեցած երկու կեանքեր, որոնք

սակայն շարունակում են լայն կերպով վա-  
յելել աշխարհը և ոչ ոք տարօրինակ չի գրա-  
նում, ոչ ոք չի յիմարանայ ասել, թէ ծե-  
րութեանը չի սազի մարդավարի կեանք:

Կան և ուրիշ պանսիօներներ, ալգասցի  
մի փոքրիկ, կայտառ աղջիկ, որ առաւօտից  
երեկոյ վազվզում է մարգագետիններում և  
խնձոր կամ տանձ կրծում. նա առանձին հե-  
տաքրքրութիւն չի ներկայացնում բացի այն,  
որ շատ սիրուն երգում է, երբ բերանը պը-  
տուղներով լիքը չէ: Կան երկու ուրիշ պա-  
ռաւած աղջիկներ, սրանք արդէն ուրիշ բան  
են և հսգեբանական հետաքրքիր ուսումնա-  
սիրութեան նիւթ կարող են մատակարարել:  
Սրանց տեսելուց և դիտելուց յետոյ ես  
միայն հասկացայ թէ ինչու վարդապետները  
մեծաւ մասամբ չոր սիրտ և անողորմ են  
լինում և այնքան ուշադիր են դէպի իրանց  
մարմինը, դէպի ստամոքսի պահանջները և  
այնքան անտարբեր, անհոգ դէպի իրանց  
ըրջապատը: Այս խեղճ կանայք վաղուց կորց-  
րել են սեփական օջաղ, գաւակներ ունե-  
նալու յոյսը, կեանքը նրանց համար դադա-  
րել է իր յաւիտենական խորհուրդն ունե-  
նալուց, որ անվերջ գոհողութիւնների մի  
շղթայ է տեսակի պահպանութեան համար,  
իրանց նամանների հոգսերն ու ցաւերն ան-

ծանօթ են նրանց, երեսայի ձայնը ուշ գի-  
շերին նրանց քաղցր քունը չի խանգարել,  
նրանց ամուլ ստինքը ոչ ոքի չի կերակրել,  
և նրանց հոգածութեան միակ առարկան մը-  
նացել է սեփական մարմինը, սեփական ստա-  
մոքսը: Այդտեղ է նրանց կեանքը իր ողոր-  
մելի ամբողջութեամբ: Պէտք է տեսնել, թէ  
որքան ուշադիր են սրանք դէպի իրանց յար-  
մարութիւնները, ինչպիսի ընտրութիւն կե-  
րակրների, որքան քնքոյշ խնամք ըստ ամե-  
նայնի կատարեալ վիճակի մէջ պահելու ի-  
րանց մարսողութիւնը, քունը, հանգիստը:  
Խիստ անհաճոյ է լսել, երբ նրանք իրար  
յետեից, իրար ընդհատելով սկսում են պատ-  
մել սեղանակիցներին, թէ այս կամ այն կե-  
րակուրը ինչպէս ազդեց իրանց քնի, ստա-  
մոքսի, և տրամադրութեան վրայ, թէ ինչ-  
պէս իրանք ստիպուած են զգուշանալ այս  
կամ այն ըմպելիքից, թէ որքան թշուառ են,  
որ երէկ անձրևի պատճառով չը կարողա-  
ցան կատարել սովորական պտոյտը, որ լաւ  
քնեն: Այս բոլորը ոչինչ, եթէ սրա հետ մի-  
ասին որ և է ուրիշ բան հետաքրքրէր նը-  
րանց, եթէ այն ծերունիների պէս երբեմն  
խօսէին իրանց գաւակներից, իրանց հոգսե-  
րից, եթէ անհանգիստ լինէին իրանցից դուրս  
թէկուզ մի հատիկ էակի ճակատագրով. այդ

չը կայ, նրանք նոյն իսկ ատում են իրանց շրջապատողներին և մանաւանդ ալգասցի ջահիլ աղջկան, կան միայն երկու մարմիններ, երկու բերան, երկու ստամոքս: Այս է բոլորը: Ի՞նչ գարշելի է մարդը. երբ նա միմիայն նիւթ է, առարկայ, կենդանի, կամ աւելի ճիշտ, երբ նա անասուն է:

Պանսիօնում կայ նաև մի ուրիշ սպայ, որ ամենքի գարմանքն է շարժում իր մետաքսեայ բլիւզով, իր թաւ, երկար, երկճըղանի միբուքով. ուրախ մարդ է, բայց երբեմն սաստիկ գայրանում է, երբ լսում է ֆրանսիական լեզուի իր համար անհասկանալի, տարօրինակ ոճեր: Այսօր օրինակ, նա սաստիկ կատաղել էր լսելով, որ ֆրանսիացիք ասում են՝ «il vient de mourir» — «հէնց նոր մեռաւ»: Նա թարգմանում էր բառ առ բառ և ստացւում էր մի այսպիսի բան. որ «մարդը մեռել է, բայց գալիս է» և բացականշում էր, թէ ինչպէս կարող է մարդը գալ, երբ մեռած է արդէն:

Իմ բոլոր հարեաններից ամենահետաքրքիրը գուցէ մի ջահիլ անգլուհի է, հարուստ ընտանիքի զաւակ, որ շվէյցարական լեռներն է եկել բժշկուելու մի տարօրինակ հիւանդութիւնից: Այս դժբաղդ օրիորդի հիւանդութիւնը կայանում է նրանում, որ նա

առաւօտից երեկոյ խօսում է տղամարդկանց մասին իրան խնամող կնոջը, բայց հէնց որ դրսում մի այր մարդու պատկեր է տեսնում, շտապով փախչում է իր սենեակում փակւում և արտասւում: Իր շրջագայութիւնների համար ընտրում է խուլ, առանձնացած անկիւններ, տղամարդի չը պատահելու համար, իսկ եթէ ճանապարհին պատահում է մի անծանօթի, տուն է գալիս և հանգիստ չի առնում, մինչև իմանայ նրա ով լինելը: Նա բոլորովին խենթ չէ, բայց անպայման հիւանդ է հոգեպէս և երևի հեռու չէ այն ժամանակը, երբ պէտք կը լինի նրան փակել որ և է ապաստարանում: Արդէն յաճախ կատաղութեան ըոպէներ է ունենում, երբ ջարդում է ձեռքի տակ ընկած իրերը և ապտակում է խնամող կնոջը: Ուշ գիշերին ես երբեմն լսում եմ նրա լացի ձայնը, կամ դայրոյթի աղաղակները:

Հետաքրքրուեցի այս կնոջ անցեալով և դուրս եկաւ, որ նա զոհ է մի մութ բոմանի, մի դժբաղդ սիրոյ, որից յետոյ, նախ մեղանխօլիս է եկել վրան, ապա լուել է երկար ժամանակ և ի վերջոյ հասել է այս կացութեանը: Խեղճ կին. սա մէկն է այն միլիօնաւոր դժբաղդներից, որոնց մէջ խօսում է բնութիւնը յախուռն թափով և որոնք ժա-

մանակակից հասարակական կազմի ընդուն-  
լած բարոյական ձևերին, պահանջներին  
բաւականութիւն տալու համար զոհ են  
բերում իրանց ետը, իրանց անհատական  
մարդկային իրաւունքները:

Ինչպէս տեսնում ես, սիրելիս, կինը  
անգամ քաղաքակիրթ երկրներում դեռ չի  
ազատուել այն բարոյական կապանքներից,  
որ դարբնել է հասարակութիւնը, կամ ա-  
ւելի շուտ տղամարդկանց հասարակութիւնը,  
դարձնելով նրան իրաւագուրկ, բայց բազ-  
մաթիւ պարտականութիւններով ծանրա-  
բեռնուած մի էակ: Ահա քեզ մի կին, մի  
փխրուն, մի քնքոյշ կեանք, աշխարհ եկած  
սիրոյ անյաղթելի պահանջներով, սիրտը  
բաց նուիրական զգացմունքների, մաքուր  
յոյգերի համար, և նա սիրում է մի երի-  
տասարդ, ինչո՞ւ, ինքն այդ ասել չի կարող,  
բայց տեսել է, և սիրել. երիտասարդն այդ  
չը գիտէ, իսկ օրիորդը իրաւունք չունի,  
բարոյապէս ընդունուած իրաւունք, դիմել  
նրան և իր սէրը յայտնել: Ի՞նչ կ'ասի աշ-  
խարհ, եթէ յանկարծ իմացուի, որ առա-  
ջարկութիւն անողը եղել է աղջիկը և ոչ  
երիտասարդը: Եւ աղջիկը սիրտ չի արել  
այդ յանդուգն քայլն անել, նա չի համար-  
ձակուել պատուել պատշաճաւորութեան, պայ-

մանական ամօթի շատ հին քօղը, նա խո-  
րասուզուել է իր սեփական աշխարհի մէջ,  
և իր մենակութիւնից սարսափած միտքը  
անկարող է եղել տանել յարատե լարուած  
վիճակ և վրայ է հասել հոգեկան ունակու-  
թիւնների զարհուրելի աւերածը: Ինչո՞ւ այս-  
պէս, կը հարցնես անշուշտ, բայց դա կը  
լինի մէկն այն բիւրաւոր «ինչո՞ւներից»,  
որոնք դարերի յետեից վազում են մարդ-  
կային հասարակութեան հետ, որոնց շատե-  
րի պատասխանը թէև տեսականապէս պատ-  
րաստ է համարուում, բայց գործնական կեան-  
քը, բիրդ իրականութիւնը շարունակում է  
անտես առնել դարմանները և ընթանալ  
զծուած շաւղով այնքան զոհերի, այնքան  
բազդերի, այնքան արցունքների վրայով:

Շվէյցարական գիւղի նկարագրութեան  
մէջ գուցէ քեզ մի քիչ անտեղի թւայ, որ  
ես զբաղւում եմ պանսիօնով, բայց ինչպէս  
ասացի, դա այստեղ մի երևոյթ է և շատ  
կողմերով հետաքրքիր երևոյթ այս գիւղա-  
կան կեանքում: Շնորհիւ այդ պանսիօննե-  
րի մարդ ոչ միայն լայն հնարաւորութիւն  
ունի ապրել գիւղերում և դիտել տեղական  
կեանքը, այլ և աշխարհի զանազան կողմե-  
րից այստեղ թափուած տարբեր ազգու-  
թիւնների ներկայացուցիչների հետ ծանօ-

Թանալ, կապեր հաստատել, մի բան որ  
 այնքան ուսանելի է: Իրար բոլորովին օ-  
 տար, անծանօթ մարդիկ խմբուում են միա-  
 սին միևնոյն յարկի տակ, միևնոյն պայման-  
 ներում, միևնոյն եղանակով ապրում ամ-  
 բողջ ամիսներ, կամաց կամաց սահմանների  
 և ցեղերի ստեղծած խտրութիւնը թուլա-  
 նում է մարդկանց մէջ և կազմւում է մի  
 կօսմօպօլիտ հասարակութիւն, որի անդամ-  
 ները գիտեն յարգել փոխադարձաբար մի-  
 մեանց ազգային, անհատական բնաւորու-  
 թիւնը, առանձնայատկութիւնները, սովո-  
 րում են սիրել իրար, համամարդկային սի-  
 րով, որ չի ճանաչում ցեղական, կրօնական,  
 բարոյական անմիտ նախապաշարմունքներ:  
 Պանսիօնները ըստ իս համբերող, լայն ոգի  
 պատրաստելու համար հիանալի դպրոցներ  
 են, և շվէյցարական մեղմ երկնքի տակ,  
 այս խաղաղ բարեկիրթ գիւղերում այս գե-  
 դեցիկ բնութեան ծոցում, լեռների մէջ, ան-  
 տաններում, ուր ամեն ինչ խօսում է սի-  
 րուց և ոչինչ ատելութիւնից, կոպիտ, բիրդ  
 անասնութիւնից, նրանք՝ այդ պանսիօնները,  
 դառնում են կրկնակի գրաւիչ, կրկնակի ու-  
 շազրաւ: Բայց ես բաւականանում եմ այս-  
 քանով և դառնում եմ շվէյցարական գիւ-  
 ղական տանը:

Երեկ մեր տանտիկինը մի դբօսանք  
 էր կազմակերպել: Պէտք էր ոտքով պտոյտ  
 գործել Մօն-Պելլըէն լեռան շուրջը և երե-  
 կոյեան տուն վերադառնալ: Բացի հիւանդ  
 անգլուհուց մնացած բոլոր պանսիօններն  
 սիրով յանձն առան առաջարկութիւնը: Վաղ  
 առաւօտից ճաշի համար պաշար վերցնելով  
 ճանապարհ ընկանք: Այս այդ պտոյտները  
 շվէյցարական դաշտերում ու լեռներում. ով  
 կարող է մոռանալ: Անընդհատ քայլում ենք  
 կամ հարուստ մարգագետինների կանաչա-  
 պատ կածաններով, կամ անտառների նեղ  
 շաւիղներով: Ամենքի վրայ էլ ուրախ արա-  
 մադրութիւն է իջել. ալգասուհին մի կա-  
 տարեալ այծեամ է դարձել և քրքջալով,  
 ճչալով ցատկոտում է շարունակ և ամենից  
 առաջ է անցել: Երբեմն երբեմն մի բոսլէ  
 կանգ է առնում ճանապարհի եզրի թփերի  
 առաջ, մի բուռը պտուղներ հաւաքում,  
 բերանը լցնում և առաջ վազում. կենսու-  
 րախ թռչնիկ: Երկու պառաւ ամուսինները  
 թև թևի բռնած, քայլում են երիտասարդի  
 եռանդով. ոուս սպան ինչոր մոմոում է և  
 էլ բարկացած չէ Ֆրանսիական լեզուի իր  
 համար անհասկանալի ոճերից, մինչև ան-  
 դամ երկու միշտ թթուած պառաւ աղջիկ-  
 ները բարձրաձայն ծիծաղում են և ի վեր-

Չոյ նրանք երգել սկսեցին:

Հրաշագործ բնութիւն:

Ճանապարհին մի գիւղացի օջաղի առաջ նստած՝ կեռասից օղի է պատրաստում. նա հրաւիրում է զբօսնողներին ճաշակել այդ ըմպելին: Ոմանք ընդունում են բարեմիտ հրաւէրը, ուրիշները հրաժարւում են, ալլաատհին խմում է և քրքշում: Առաջ ենք անցնում անտառի միջով: Թւում է, թէ ամայութիւն է իշխում այստեղ և երկար ժամանակ մարդու երես տեսնելու չենք: Բայց ահա ճանապարհը անտառում լայնացաւ, մեր առաջ բացուեց մի փոքրիկ կանաչ հրապարակ շրջապատած ծառերով և այնտեղ մի սիրուն, սպիտակ գիւղական տուն: Տանտիկինը մեզ այնտեղ է առաջնորդում մի փոքր հանգստանալու, հիւրերն ընդունւում են սիրով, ծեր գիւղացին իր երկու որդու հետ ընդառաջ է գալիս և հրաւիրում ամենքին և առաջարկում է մի մի բաժակ զինի: Առիթից օգտուում եմ դիտելու այս մեծ գիւղական տունը և ահա այդ դիտողութեան արդիւնքն է, որ քեզ գրելու եմ այսօր:

Տանտէրը մի կայտառ և սրախօս ծերունի է, մօրուքն ու բեխերն իսպառ ածիլած, հագին կարճ բաճկոն ու սպիտակ,

օսլայած շապիկ, գլխին կրում է լայնեզր ցօղէ գլխարկ, ոտներին գեղջկական կոշտ կօշիկներ, որոնց տակի բազմաթիւ մեխերը քայլելիս բաւական մեծ աղմուկ են հանում քարերին դիպչելով: Ախ այդ շվէյցարացի ծերունիները, չը տեսայ մէկը, որ օտարի առաջ մշմշայ, գանգատուի, տրտնջայ իր բաղդից, իր տնից, իր դաւակներից: Խօսեցրու մեր երկրի մի գիւղացու, նրա կացութեան մասին հարցեր տուր և իսկոյն կը սկսուի «սև օրերի», «դարդերի», «չար բաղդի» մի անվերջ նկարագիր, որ ոչինչ էլ չը գտնի գոնէ մի յուսահատական «ահ» կ'անի: Շվէյցարացի գիւղացին դրա հակառակ միշտ կենսուրախ է և նոյն իսկ յաճախ կատակասէր, սրախօս, նրա ճակատի կնճիռները ցաւերի ակօսներ չեն, այլ ժամանակի, խաղաղ, և երջանիկ մի անցեալի:

Մեր տանտիկնոջ միջոցով ես խնդրում եմ ծերունուն ցոյց տալ ինձ իր տունը, պատմել իր կացութիւնը. տեղեկութիւններ տալ իր պարապմունքների մասին: Նրա սիրալիր պատրաստակամութիւնն ինձ զարմացնում է, մեր երկրում ինչ ազգութեան և պատկանելիս լինի գիւղացին, հէնց որ հետաքրքրուեցիր նրա վիճակով, կամ երբ մանաւանդ փորձես գրի առնել նրա պատաս-

խանները, վտանգն զգացող կրիայի պէս գլուխը ներս կը քաշի կը լսի, կամ այնպիսի ստեր, այնպիսի աբսուրդներ կասի, որ գլուխդ կը կորցնես: Մեր գիւղացու համար ամեն մի լաւ հագնուած մարդ, որ տեղեկութիւններ է հաւաքում գիւղի, ժողովրդի, նրա վիճակի մասին, անպայման կասկածելի է և չար դիտաւորութիւններ ունեցող: Գիտե՞ս ինչ կը նշանակի մեր գիւղացու լեզուով հետեւեալ նախադասութիւնը թէ «ձիերը գրում են» կամ «հողերը գրում են», դա նշանակում է թէ ձիերը խելու են, հողերը պիտի պակասեցնեն կամ հարկերը շատացնեն. նա ուրիշ բացատրութիւն գտնել չի կարողանում և աշխատում է խոյս տալ: Ասենք ամբողջ դարեր արևելքի բռնակալները լծի տակ ծեծուած և խեղաթիւրուած բնաւորութիւններն ուրիշ կերպ լինել էլ չեն կարող, մեր ժողովուրդն ինքն իր բարոյական պատկերը, իր աշխարհայեացքը դրել է այս իմաստուն առածի մէջ՝ «երբ բերանը շատ է այրում, մարդ թանն էլ է փչում»: Շվեյցարացին ոչինչ չի թագցնում, որովհետև սովորել է ոչ ոքից չը վախենալ, նա «թանը չի փչում», որովհետև «բերանը երբէք չի այրուել»:

Բայց դառնանք բուն հարցին, այս տան

նկարագրին: Դրսից շինութեան տեսքը այնքան գեղեցիկ է, այնքան գրաւիչ: Բաւական չէ, որ չորս կողմը անտառ է, առաջը փոքրիկ մշակուած պարտէզ բանջարանոցով, կանաչ բաղեղներն էլ բանաստեղծական անկարգութեամբ բարձրացել են և սիրունիկ ոլորներով, օձապտոյտ շրջաններով պատել շինութեան պատերի երեսը: Արևկող տեղերում տնկուած են տանձենիներ, որոնց ճիւղերը երկաթէ թելերով և մեխերով միացած փուռել են սպիտակ պատերի վրայ և այսպիսով ստացուել է կուտապի պէս տափակացած մի ծառ շինութեան երեսին կպած: Այդ ծառը տանեցոց սիրելին է. քնքոյշ խնամքը, փորձառութիւնը ժամանակի ընթացքում նրանից պատրաստել են մի սիրուն զարդ, որ սակայն տալիս է այնքան համեղ և այնպէս սիրուն պտուղներ:

— Տեսէ՛ք, որքան մեծ են տանձերը, պարոն, ասում է ծերունին, ես եմ տնկել և ես եմ խնամում, եթէ ժակն ու կլարան առանց իմ թոյլաւութեան տանձերը քաղեն, անտառի ու պարտէզի բոլոր թռչունները կը փախչեն և էլ նրանց համար երգող չի լինի: Ժակն ու կլարան ծերունու փոքրիկ թոռներն են, երկու շիկահեր, անուշ մանուկներ, որոնք կանգնած մեր յետևում,

լսում են պապի ասածները, և այտերն ու-  
ռեցրած, փոքրիկ ձեռները յետևները դրած,  
նայում են կախկիսուած պտուղներին:

— Մենք այդ չենք անի, grand père  
(պապիկ) ասում են երեխաները միամիտ  
անհանգստութեամբ, իսկ ծերունին կամա-  
ցուկ ծիծաղում է իր սրամտութեան ար-  
դիւնքը տեսնելով:

Ներս ենք մտնում: Տունը բաղկացած  
է երկու բնօրնոցից. մի կողմում սե-  
նեակներն են ու խոհանոցը, իսկ միւս կող-  
մում գոմն է ու մարազը: Տունը երկյար-  
կանի է և բաղկացած է հինգ սենեակից,  
վեցերորդը խոհանոցն է: Ննջարանը, սեղա-  
նատունը և ընդունարանը առանձին առան-  
ձին սենեակներում են: Ես թոյլաութիւն  
եմ խնդրում նայել անկողինը, դա համա-  
րեա ոչնչով չի զանազանում քաղաքի բնա-  
կիչների անկողիններից. նոյն մաքրութիւ-  
նը, նոյն կազմուածքը, փափկութիւնը: Պա-  
տերի վրայ կախկիսուած են նկարներ՝ որոնց  
նիւթը վերցրած է շվեյցարական պատմու-  
թիւնից. այստեղ է Մայօր Դաւէլը, Վիլհելմ  
Տէլլը, Բօնիվարը: Մի փոքրիկ էտաժէրկայի  
վրայ շարուած են մի քանի տասնեակ գըր-  
քեր, մաքուր կազմուած, նայում եմ մի  
քանիսը, «La suisse illustrée» «Պատկերա-

զարդ Շվեյցարիա», մի հաստ հատոր, որի  
մէջ մանրամասն կերպով նկարագրուած է  
Շվեյցարիան ազգագրական, աշխարհագրա-  
կան, պատմական տեսակէտից: Մի ուրիշ  
հատոր՝ «Lac Lemman» «Լեման լիճ», կան  
մի քանի ըմբաններ, շվեյցարական ազգային  
լեգենդաներ, երգերի ձայնագրած ժողովա-  
ծու, Աստուածաշունչ, Աւետարան, ձայնա-  
գրած ազօթագիրք, ընտանիքներին նուիրած  
մի ամսագիր և այլն:

Ինձ ամենից աւելի հետաքրքրում է  
սրանց խոհանոցը. ըստ իս մի ժողովրդի  
կուլտուրական հակումների, նրա ճաշակի  
զարգացման, նրա մաքրասիրութեան, քա-  
ղաքակրթութեան աստիճանի ամենալաւ նը-  
շանը խոհանոցն է, ինչպէս և լինի բնա-  
կարանը, թէկուզ մի պալատ, բայց եթէ նը-  
րա կողքին մի գարշալի հաւաքնում են կե-  
րակուր պատրաստում, ուր առանց սիրտ-  
խառնոցի մտնել չի կարելի, քաղաքակըր-  
թութեան, բարեկիրթ կեանքի մասին խօսք  
լինել չի կարող: Դու խօս գիտես, սիրելիս,  
որ մեր երկրի քաղաքներում էլ կրօնական  
ձևով ապրելու յաւակնութիւններ են ներս  
սպրտել. այժմ կարելի է այնտեղ էլ տես-  
նել ըստ երևոյթին կրօնական տուն, նոյն  
իսկ էլեկտրական զանգակ, լիվրէյով դռնա-

պան, բազմաթիւ սենեակներ կրօպական կան կարասիքով, բայց հէնց նոյն տան մէջ մի ներքնայարկ, մի կեղտոտ, մրոտ, խոնաւ, ցածր նկուղ շատ անգամ ծառայում է իբրև խոհանոց, ուր գեղեցիկ տանտիկիւնը իր խշխշան շորերով չը գիտէ ինչպէս շարժուի փոշուց ու աղբից խուսափելու համար:

Քաղաքակրթութեան արտաքինը միայն իւրացնող, արուեստականօրէն ըմբռնող մի ժողովուրդ իր հեռուողութիւններէ մէջ միշտ ծիծաղելի կապիկ է. նա նման է պարսկաստանցի համշարիի, որի ածիլած գլխի վրայ չը գիտես ինչո՞ւ, դրել են մի նոր, փայլուն ցիլինդր:

Շվէյցարական քաղաքներում ես հիացած էի նրանց խոհանոցների մաքրութեան վրայ, այդ հիացմունքս իր գագաթնակէտին է հասնում գիւղական տան խոհանոցը տեսնելով: Մի անկիւնում փոքրիկ կուռը լի է վճիտ, թարմ ջրով, միւս կողմում հաստատած է երկաթէ օջաղը, սրբուած ու մաքուր. յատակը գունաւոր քառակուսի աղիւններով զարդեր են կազմում, պատերը սպիտակ ու մաքուր, սախտակէ դարեկների վրայ առանձին կարգերով շարուած են ամանները, մէջտեղում մի մաքուր սեղան,

այստեղ լոյս է, ինչպէս միւս սենեակներում, ոչ մի հոտ, ոչ մի անախորժ պատկեր: Այսպիսի խոհանոցը համարձակ կարող է սեղանատանը փոխանակել և նոյն իսկ քաղաքներում շատ կան ընտանիքներ, որոնց խոհանոցը և սեղանատունը նոյնն է:

Ծերունի տանտէրն ինձ առաջնորդում է դէպի իր տան երկրորդ բաժինը. ներս ենք մտնում գոմը: Դա մի երկար շինութիւն է, ուր անասունները կապուած են միայն մի շարքով: Երկար մսուրքը բաժանուած է առանձին մասերի և ոչ մի կենդանի չի կարող տեսնել, թէ միւսն ի՞նչ է ուտում: Մսուրքի վրայ կենդանու դէմ ու դէմ պատի մէջ տախտակեայ դռնով, մի մի լուսանցք կայ, որ բացուած է մարագում. կերակրի ժամերին այդ դռնակները բացուած են և իւրաքանչիւր կենդանի ստանում է իր բաժինը: Սա այն յարմարութիւնն ունի, որ գոմի դռնից ոչինչ ներս չեն բերում, ոչ մէկը չի իմանում, թէ ի՞նչ է ստանում միւսը, նրանք իրանց կապերը չեն ձգձգում, անհանգիստ չեն լինում, ամեն մէկն ապրում է իր ուրոյն կեանքով: Գոմը չոր է, լուսաւոր ու մաքուր, յատակը ծածկուած է փափուկ, թարմ ծղօտով, որի վրայ պառկում են անասունները. և այդ ծղօտն ան-

դադար փոխուում է, որ խոնաւ չը լինի: Մեր երկրի շատ գիւղացի ամենամեծ սիրով իր ողորմելի խրճիթը կը փոխէր այս գոմի հետ եթէ հնար լինէր:

Մէկ մէկ նայեցի անասուններին, վեց կով, մի քանի հորթեր ու երինջներ, մի ձի, և մի ահուելի կազմուածքով ցուլ: Կովերից մէկը հիւանդ է, ծերունին ասում է. որ նրա կորուստը ծանր կը լինի իր անտեսութեան համար. որովհետև ամեն մէկն արժէ 6—7 հարիւր Ֆրանկ (մօտ 250 ռուբլի). իմ ներկայութեամբ կովը կթում են մի փայտեայ ամանի մէջ, ես չգիտեմ մեր երկրի քանի կով կարող է մի անգամից այդքան կաթ տալ: Սրանք այնքան մեծ են, որ կարծես կովեր չը լինեն, այլ մի ուրիշ ցեղի պատկանող կենդանիներ: Այս ցուլին հաւասար՝ ես մեր երկրում գոմէջ չեմ տեսել: Նա կատաղի է և վտանգաւոր, զսպելու համար պարանը անց են կացրել քթի միջնորմի ստորին մասի ծակից, որ յատկապէս այդ նպատակով կենդանու փոքր ժամանակ բացուած է: Յուլեր կան, որոնց երբէք դուրս չեն թողնում: Այսպիսի ցուլերից և կովերից ծնուած հորթերը իրանց գեղեցկութեամբ և մեծութեամբ զարմանք են շարժում. երկու տարեկան շվէյցարական հորթը շատ անգամ

մեր երկրի կովին հաւասար մեծութիւն ունի: Եւ այդ հորթերը երբէք չեն ծծում, բացատրում է ինձ ծերունին, նրանց հէնց սկզբից տալիս են ջրախառն կաթ ամաններ մէջ, որ նրանք խմում են: Այդ կենդանիները փակուած են գոմերում ամբողջ մասը, նրանց կերակրում են հնձած խոտով: Այնքան ժամանակ, որ դաշտերում ցանք կայ, հնձելու մարգագետիններ կան, դրսում ոչ մի ազատ անասուն տեսնել չի կարելի, նրանց ոտների տակ ոչինչ չի տրորուի, անգամ հնձած մարգագետինը: Մեր երկրի յայտնի «զիանի» գաղափարը չը կայ այս երկրում: Բայց այդ մասին ես կը գրեմ մի ուրիշ անգամ: Չը նայելով որ կենդանիները մինչև աշուն շարունակ փակած են գոմերում, այնուամենայնիւ օդը այստեղ մաքուր է, կարելի է մնալ ժամերով առանց խեղդուելու գոմերին յատուկ մթնոլորտով:

Անցնում ենք տեսնելու մարագը, որ ինչպէս վերևում ասացի՝ կից է գոմին, կամ աւելի ճիշտ՝ վերջինս, որ համեմատաբար աւելի ցածր է, մարագի մէջն է, որի ընդարձակ առաստաղը վերից ծածկում է, հովանի է անում նաև գոմի վրայ: Խոտի մեծամեծ դէղեր շարուած են գոմի կտրին բայց մարագի մէջ: Այնքան ընդարձակու-

Թիւն կայ այստեղ, որ երկրագործական բո-  
լոր գործիքները, գութան, սայլ շարուած  
են մարագի յարկի տակ ներս բերուելով  
երկփեղկանի ընդարձակ դռնով: Դաշտից գա-  
լիս է բարձած սայլը, գիւղացին կարիք չու-  
նի ժամանակ կորցնել, խոտը վար թափել  
և յետոյ կրել մարագ, նա հեշտութիւն ունի  
բարձած սայլն անասուններով ներս քշել  
շինութեան յարկի տակ և պաշարի համար  
յատկացուած տեղում ցած թափել. եզներն  
արձակում են յետ տանում գոմը, իսկ սայ-  
լը մնում է: Բոլոր մարագները տախտակ-  
ւած են ու կատարելապէս չոր, որ անա-  
սունների ձմեռուայ պաշարը չը փթի:

Ես կուզէի դեռ երկար մնալ այս տա-  
նը, բազմաթիւ հարցեր տալ բարեմիտ տան-  
տիրոջը, դիտել նաև մեղուի փեթակները,  
որոնք շարան շարան երևում են պարաէզի  
ծառերի տակ, բայց գալիս են մեզ կանչե-  
լու, ժամանակ է տուն վերադառնալ, ես  
նոյն իսկ ուշացել եմ, սպան գանում է, որ  
չարժէ Շվեյցարիա գալ գոմերով զբաղուելու  
համար, որոնցից մեր երկրում շատ կան,  
չարածճի ալգասուհին բարձրաձայն ասում  
է, որ Monsieur-ն անպատճառ հովիւ լինե-  
լու ցանկութիւն ունի, երկու պառաւ աղ-  
ջիկները լուռ են թէև, բայց թթուած են,

որովհետև մենք կարող ենք ընթրիքին ու-  
շանալ, տանտիկինը միշտ բարի, միշտ սի-  
րալիր, հանգստացնում է ամենքին և մենք  
ճանապարհ ենք ընկնում տուն: Այս անգամ  
ես էլ չեմ հետաքրքրում սիրուն դաշտա-  
նկարներով, շուրջս լսուող խօսակցութեամբ,  
ալգասուհու անվերջ մանկական երգերով,  
երկաթուղային զնացքն անցնում է մեր ա-  
ռաջից, գնում է հեռու, և նրա հետ միասին  
լիմ մտքերը գնում են դէպի այն հեռաւոր  
վայրերը, սիրելի վայրեր, ուր կեանքի պատ-  
կերը սակայն միանգամայն տարբեր է այս-  
տեղ տեսածիցս: Ես յիշում եմ մեր դիւղի  
տները, այն դարշահոտ տները, ուր անհուն  
ժամանակից ապրում է հայ գիւղացին, յի-  
շում եմ մեր թոնիրները, նրա շուրջը խրմ-  
բած տկլոր ու զգզուած մանուկները, ո-  
րոնցից քանի քանիսը տարիների ընթաց-  
քում հէնց իրանց առաջի հնոցի բոցերի մէջ  
են ընկնում և կենդանի խորովում: Առա-  
ւօտ է, մայրը վեր է կենում, աթարը  
բերում և թոնիրը ծուխ ձգում, մի վայր-  
կենում խրճիթը կորչում է խաւարի մէջ,  
կեղտոտ անկողիններից դուրս են սողում  
երեխաները, նրանք չեն համարձակուած  
բարձրանալ, ոտքի կանգնել, որովհետև ծուխը  
խեղդում է, ուստի ծնկների վրայ մօտենում

են թոնրին, ուր կուացած աշխատում է մայրը աչքերը կարմրած, և ծխից արցունքով լցուած: Միւս կողմից անասունները մեր խեղճ, վտիտ կովերն ու գոմէշները դուրս են գալիս գոմերից ամբողջապէս աղբի մէջ կորած, գարշահոտ ու այլանդակ, մէջքերին, գլուխների վրայ գունդ գունդ աղբ, յոգնած, շճած, գոմի ծանր մթնոլորտից, դանդաղ, օրօրուելով շարժւում են դէպի գիւղամէջ և իրանց նման այլ ողորմելի կենդանիների հետ գնում են դէպի դաշտ չոր, գունատ խոտեր կրծելու մինչև երեկոյ, երբ կը գան փակուելու նոյն աղտեղի գոմում, ծծելու նոյն թունաւոր օդը, թաթախուելու նոյն աղբի մէջ և այսպէս շարունակ հազարաւոր տարիներից ի վեր ո՛վ գիտէ, դեռ էլի մինչև երբ...

Ճանապարհին տանտիկինս ինձ հարցնում է մեր աների կազմութեան մասին, մեր գիւղացու, նրա ապրուստի եղանակի մասին: Ես նկարագրում եմ ամենայն անկեղծութեամբ. նա լսում է, իմ պատմութիւնը նրան այնքան անհաւանական է թւում, որ մի վայրկեան աչքերն աչքերիս մէջ ուղղած փորձում է իմանալ, թէ չեմ ստում արդեօք: Բայց երբ հասնում եմ թոնրի նկարագրին, երբ նրան պատմում

եմ, որ մեր գիւղերում ամբողջ ընտանիքը բնում է, ուտում է, աշխատում է միեւնոյն յարկի տակ, մի հատիկ թոնրատան մէջ, նա էլ չի կարողանում զսպել իրան և բացականում է՝ «Mais c'est impossible» բայց այս անկարելի է:

— Իրաւունք ունիք, տիկին, պատասխանում եմ, ձեզ ներկայացրածս պատկերը այնքան տարօրինակ է, այնպէս տարբեր ձերինից, որ դուք հաւատալ չէք կարողանում, բայց տարաբաղդաբար իմ նկարագիրը միայն կատարեալ չը լինելու թերութիւնն ունի և ոչ չափազանցութեան:

— Բայց այն փոս բանը, պարոն, այն փոս բանը ես բնաւ հասկանալ չեմ կարողանում, այնտեղ ասում էք վառում են և ծուխը լցնում խրճիթը:

Այդ «փոս բանը» թոնիրն է և միամիտ շվէյցարուհին չի կարողանում հաւատալ թէ այդպիսի վայրենի, հրէշաւոր բան հնարաւոր է մի տան մէջ. ինձ չի ասում, թէ սուտ ես խօսում, բայց աներկբայ եմ, որ նա իմ նկարագիրը գտնում է կամ անկարելի, կամ աւանուագն չափազանցացրած: Ես լսում եմ և անձնատուր լինում իմ խոհերին, չորս կողմներս լռութիւն է, երեկոյեան մառախուղն իջել է արդէն, մշուշի մէջ ծրագրը-

ւում է արևելքում Մօն-Պելլրէնը անտառի  
 ծառերով ինչպէս բաշ իր պարանոցը պա-  
 տած. սուրոցով անցնում է երկրորդ դնացքը  
 և շտապում է հեռո՛ւ, հեռո՛ւ, ալզասուհին  
 սկսում է մի տխուր մելօդիա, աստղերը  
 մէկիկ մէկիկ բացում են աչքերը, և մենք  
 քայլում ենք կանաչ դաշտերի միջից, խո-  
 տերի և ծաղիկների բուրմունքով յղփացած:  
 Տունը հեռու չէ, ճրագները պըլպըլում են:

Յը գրութիւն!

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

### III

Իմ նամակների հետևողութեան մէջ,  
 սիրելիս, դու երևի առանձին, կանխամտա-  
 ծուած սխտեմ չես գտնի: Արդարև, ես  
 խոյս եմ տալիս չոր ծրագրից, որի համե-  
 մատ պիտի իրար վրայ կուտակէի հում  
 նիւթերի, աշխարհագրական, ազգագրական,  
 պատմական, տնտեսագիտական փաստերի  
 ամբողջ շարքեր և թուանշանների ամբողջ  
 սիւներ:

Ես ապրում եմ այս երկրի մի գիւղում,  
 ուրեմն բուն ժողովրդի ծոցում, տեսնում  
 եմ ու մասնակից եմ նրա առօրեայ կեան-  
 քին, որ արտայայտում է մանր ու մեծ  
 բազմաթիւ երևոյթների մէջ իմ աչքի առաջ,  
 և ինչ որ տեսնում եմ գրի եմ առնում յի-  
 շատակարան պահողի պէս:

Պատկերները բազմազան են, շատ ան-  
 դամ, ինչպէս ասացի, անսխտեմ, բայց ու-  
 բիշ կերպ չի էլ կարող լինել, որովհետև  
 կեանքը չափազանց բարդ է, որպէս զի կա-  
 րելի լինի նրա արտայայտութիւնները, նրա

բազմապիսի տարամերժ երևոյթները չափած, ձևած նախագծի տակ դնել:

Առօրեայ սովորական յարաբերութիւնների մէջ, երբեմն մի պատահական խօսակցութիւն, մի անակնկալ ծանօթութիւն, շատ անգամ մի աննշան դիպուած, այնքան ուսանելի են որ և է անհատի, հասարակութեան՝ նոյն-իսկ ամբողջ մի ժողովրդի հագեկան աշխարհի այս կամ այն կողմը պատկերացնելու համար: Ահա այս է, որ ես փրնտուում եմ այստեղ՝ շվէյցարական գիւղում իմ շրջագայութիւնների, գրօսանքների ժամանակ, դիպուածական ծանօթութիւնների, խօսակցութիւնների մէջ:

Այս բոսպէին վերագարձայ մի փոքրիկ ճանապարհորդութիւնից. գնացել էի մի հեռաւոր գիւղ ընկեր ուսանողին այցելութիւն ժիւրա լերան ստորոտում: Մտքովս էլ չէր անցնում, որ վերագարձիս պէտք կը համարեմ գրի առնել այդ օրուայ տպաւորութիւնները. բանից դուրս եկաւ, որ այս երկրի ո՞ր կողմը դառնաս, ինչ և անես, անպատճառ ուշագրաւ երևոյթներ պիտի տեսնես, որոնց գրի առնելը մեր երկրի, մեր ժողովրդի համար երբէք անօգուտ չէ:

Դիտաւորութիւնս իմանալով ուսու սպան ընկերացաւ ինձ և մենք վաղ առաւօտից ճա-

նապարհ ընկանք դէպի ժիւրա՝ ոտքով: Անցեալ անգամ այս սպայի մասին գրելիս ես մոռացայ աւելացնել որ նա բժշկուում է բեմատիզմից Պիդուից քիչ հեռու Շերը գիւղում, այս կողմերում յայտնի բժիշկ Րէյմոնտի մօտ Կնայպի մեթոդով և ման է գալիս համարեա ոտաբոբիկ, համարեա եմ ասում, որովհետև նրա կրած բարակ կաշուէ սանդալները հազիւ են ծածկում նրա ներբանները՝ բաց թողնելով ոտքի երեսը մինչև սրունքները: Կարո՞ղ ես երևակայել, թէ որքան տարօրինակ է այս ոտաբոբիկ, բարակ մետաքսէ բլիւզով ու երկար միւրուքով, կճատ քթով օտարականն այս կողմերում: Այս տարօրինակութիւնն էր որ գիւղի եզրում գրաւեց մի շվէյցարացու ուշագրութիւն և նա մօտենալով սպային շատ քաղաքավարի կերպով ասաց.

—Եթէ Monsieur-ն կարծում է, թէ Պիդուում կօշկակար չը կայ և այդ պատճառով ոտաբոբիկ է շրջում, չարաչար սխալում է. իրաւ է, այստեղ գիւղ է, մենք գիւղացիներ ենք, բայց էլի մեզ պատշաճ կօշիկներ ենք հագնում: Ձեր խոնարհ ծառան կօշկակար է, վերջացրեց նա խորը գլուխ տալով: Մենք մի վայրկեան շփոթուեցինք այս անսպասելի ճառից, ասլա անմի-

Չապէս նկատելով՝ որ մարդը մի երկու բա-  
ժակ աւելի է գարեջուր խմել, ժպտացինք,  
խոսացանք կօշիկ կարել տալ և առաջ ան-  
ցանք: Աննշան դէպք, բայց ես յետոյ քեզ  
կը պատմեմ, թէ դա ինչ անսպասելի, ի՞նչ  
հետաքրքիր հետևանք ունեցաւ մեզ համար:

Հետաքրքիր է երբեմն սպայ ընկերա-  
կից ունենալ: Երկաթէ ձեռնոցների մէջ ապ-  
րած այս մարդիկ շատ անգամ աշխարհի,  
քաղաքակրթութեան, բարոյականութեան  
մասին ունեցած իրանց հասկացողութիւն-  
ներով անմեղօրէն տարօրինակ են: Գնում  
ենք լայնարձակ դաշտերով բնակութիւննե-  
րից հեռու. մեր առջև գտնում ենք Չրհորի  
նման մի վիհ, չի գիտեմ երբ և ինչո՞ւ փո-  
րուած այստեղ. և այդ վիհի շուրջը, այս  
հեռաւոր վայրերում, մարդիկ պէտք են հա-  
մարել երկաթէ լարերով պատել որ և է ձա-  
խորդ զիպուածի առաջն առնելու համար:

—Նայեցէք, նկատում եմ ուղեկցիս,  
նայեցէք, թէ հեռու համարեա ամայի տե-  
ղում ի՞նչ խնամքով պատել են այս վիհը,  
որ մարդ կամ անասուն չընկնի. ինձ հա-  
մար սա մի հետաքրքիր փաստ է այս ժո-  
ղովրդի հասարակական բնազդների, համե-  
րաշխութեան ոգու, նոյն-իսկ նրա բարձր  
կուլտուրայի:

—Այստեղ ես հետաքրքիր ոչինչ չեմ  
գտնում և ըստ իս փոս փորողի վզակոթին  
պիտի տալ:

—Բարեկամ, շվէյցարացին անօգուտ  
տեղը փոս չի փորի, եթէ կայ, կը նշանակի  
հարկաւոր է. «վզակոթը» բարբարոսու-  
թիւն է, երկաթէ այս թելերն իբր հասա-  
րակական խնամքի մարմնացումն կուլտու-  
րան են ներկայացնում:

Վէճը երկար շարունակուում է ճանա-  
պարհին և սպան ոչ մի կերպով չի ուզում  
համաձայնել, որ «վզակոթից» դուրս ու-  
րիշ կուլտուրա կարող է լինել:

Լուում եմ և միտս են գալիս մեր գիւ-  
ղերի փողոցները, ուր գիշերային խաւարի  
մէջ շատ անգամ մարդ վիզը, ոտքը կոտ-  
րելու վտանգի մէջ է. ցորենի հորեր, հին  
չորացած ջրհորներ, որոնք ամեն քայլափո-  
խում առաջդ են բացում, և չկայ ոչ ոք,  
որ բողոքի և ծածկել տայ: Մարդը հասա-  
րակական խնամքի, հոգածութեան առար-  
կայ չէ, ապրում է միայն զիպուածի պա-  
տահականութեան ցանցի միջից սողոսկելով,  
մինչև կը հասնի վիզը կամ մէջքը կոտրելու  
օրհասական ժամը: Այնտեղ վիհերով ծած-  
կուած են բանուկ փողոցները, այստեղ հե-

ուաւոր, ամայի դաշտերում, անտառներէ մէջ վիհը շրջափակուած է:

Նգրակացութիւնը քեզ եմ թողնում, սիրելիս, դու երևի ինձպէս դեռ չես մոռացել Ս.-ենց նեղ փողոցի վրայ գոմի պատի տակ ջրհորը, որ տարիների ընթացքում անփոյթ կերպով բացուած էր այնտեղ՝ գիշերները հաստատ մահ սպառնալով:

Որքան և մարդ անծանօթ լինի, Շվէյցարիայում չի մոլորուի երբէք, որովհետեւ ամեն կողմ գեղեցիկ խճուղիներ կան ծառազարդ ու հովաշատ և ամեն մի անկիւնում, ճանապարհների ճիւղաւորութեան սկզբում գեղեցիկ սիւների վրայ կարելի է կարդալ թէ այս ու այն կողմում ո՞ր գիւղերն են, քանի կիլոմետրով հեռու, ինչ բարձրութիւն ունին ծովի մակերևոյթից: Այս յարմարութիւններով ի հարկէ կարելի է օրերով ճանապարհորդել առանց որևէ դժուարութեան, բայց ես և ուղեկիցս ճանապարհորդութիւնն աւելի հետաքրքիր դարձնելու համար երբեմն-երբեմն թողնում ենք մեծ ճանապարհները և բռնում խոտոր ուղի-րութիւններ. այդ գէպքերում պէտք է լինում մերթ այստեղ, մերթ այնտեղ տեղեկութիւն հարցնել պատահած անձանց: Ծառապարհ են ցոյց տալիս օտարականներին

արևելքում, ճանապարհ են ցոյց տալիս և այստեղ, բայց ինչպէս, ահա այս է հետաքրքիրը:

Բոլոր երկրներում, բոլոր ժամանակներում ճանապարհորդը, օտարականը նկատուել է իբրև Աստուծոյ հովանաւորութեան տակ գտնուող մի մարդ. արևելքը՝ մանաւանդ, մի առանձին պատկառանք ու խորհրդաւոր հաւատ է տածել դէպի ճանապարհորդի ճակատագիրը՝ թելադրուած այն երկիւղած ենթադրութիւնից, թէ գուցէ թափառական խեղճի արտաքինի տակ որևէ սուրբ կամ նոյն-իսկ աստուածութիւնն է շրջում աշխարհի վրայ մարդկանց արդարութիւնն ու ճշմարտասիրութիւնը փորձելու: Եւ մարդիկ բաց են արել իրանց դուներն օտարական հիւրի առաջ, խնամել և ճանապարհ են ցոյց տուել նրան: Օտարականին ճանապարհ ցոյց տալն արևելքում նկատուել է և նկատում է իբր մի կրօնական երկիւղածութեան գործ, մի նուիրական պարտք երկնքի առաջ, որ մարդու բարոյական հասկացողութիւնների միակ աղբիւրը և ներշնչողն է համարուում:

Անշուշտ, գրաւիչ բան է, որ մի մարդ թէկուզ աստուածահաճոյ գործ կատարելու համար ճանապարհ ցոյց տայ, օգնի մոլո-

բուածին, բայց ևս աւելի գրաւիչ կը լինէր, եթէ նոյն գործողութիւնը կատարուէր ոչ իբրև կրօնական պարտք, գերագոյն հատուցման եսասէր ակնկալութեամբ:

Միրելիս, դոգմերի հետ կապուած, անհունի անծանօթ աղբիւրներից բղխող բարոյականութիւնը ժամանակի ընթացքում դառնում է չափազանց խախուտ. բանականութիւնն է, որ յաւիտենական է դարձնում բարոյական իդէան: Ի՞նչ արժէք ունի, օրինակ, քիւրդի մօրալը, որ նրան արգելում է սպանել իր տունն ասպատանած օտարին, բայց թոյլ է տալիս կողոպտել նոյն հիւրին հէնց-որ վերջինս իր դռնից մի փոքր հեռանայ: «Ղօնալը սուրբ է» արևելքում. այդ լաւ, իսկ եթէ նա ամենեւին սուրբ չէ և իր հոգսերի համար թափառող մէկն է: Ահա այստեղ են հեռանում իրարից դօգմայի և բանականութեան առողջ հիմքերի վրայ հաստատուած մօրախերը, արևելքն ու արևմուտքը:

Առաջինը՝ որին մենք դիմեցինք ճանապարհի ուղղութիւնը հարցնելու մի գիւղացի էր. նա վերագառնում էր կիրակնօրեայ զբօսանքից իր կնոջ և երկու երեխաների հետ: Մարդը լաւ յոգնած էր, երևի շատ էին քայլել:

— Պարոն, հաճեցէք մեզ ասել, Լա-Կուզը դնալու համար կարող ենք այս անտառով անցնել:

— Անշուշտ, պարոններ, բայց անտառում կաժաններ շատ կան, դուք կարող էք մոլորուել, է՛լիզ, դարձաւ նա կնոջը, դուք այլիք երեխաների հետ մինչև ես վերագառնամ:

Եւ նա առաջ ընկաւ, ներս մտաւ անտառը, երկար քայլում էր մեզ հետ մինչև դուրս եկանք վստահելի կաժանի վրայ:

— Այժմ կարող էք ուղիղ գնալ:

Շնորհակալ եղանք, նա ժպտաց մեզ շվէյցարացու բարի ժպտով և յետ գնաց:

Անտառից դուրս գալով մեր առջև նկատում ենք մի փոքրիկ տնակ. բոլորովին մենակ, բոլորովին հեռու միւս բնակութիւններից. տնակից դէպի դանազան կողմեր տանում են երկու շաւիղներ, որո՞վ դնալ— մօտենում ենք տնակի դրանը, մեզ հանդիպում է մի կին և մի եօթ տարեկան տղայ:

— Տիկին, ներեցէք, որ ձեզ անհանգիստ ենք անում, օտարական ենք և կ'ուզէինք իմանալ, թէ այս երկու շաւիղներից ո՞րը կ'առաջնորդի մեզ Լա-Կուզը:

— Շնոր, դարձաւ նա մօտը կանգնած փոքրիկ երեխային, գնա պարոնների հետ,

մտիր մօտակայ անտառը, տար մինչև այն-  
տեղ, ուր ճանապարհները կտրում են իրար,  
ցոյց տուր և շուտ արի:

Փոքրիկ Շարլը կարծէք ուրախ էր մօր  
հրամանին. նա ցատկոտելով առաջ անցաւ  
և առանց մազի չափ անգամ քաշուելու օ-  
տարականներին շուտով մեզ հետ ծածկուեց  
անտառում: Տեսնելով՝ որ ճանապարհը եր-  
կարում է և երեխան մենակ պիտի վերա-  
դառնայ, մենք առաջարկում ենք փոքրիկին  
մեզ թողնել և էլ առաջ չը գնալ, մանաւանդ՝  
որ երկնքում ամպեր կան և մեր պատճա-  
ռով կարող է թրջուել: Ի դուր անցան մեր  
բոլոր ջանքերը, մանուկը շարունակում էր  
գնալ առաջ անդադար կրկնելով՝ որ ինքը  
չի վախենայ մենակ վերադառնալ, որ մայ-  
րիկն ասաց գնալ մինչև ճանապարհների հան-  
դիպած տեղը:

— Բայց դու յետոյ մենակ պիտի վե-  
րադառնաս, իմ փոքրիկ:

— Ես միշտ մենակ գալիս եմ այստեղ  
սունկեր հաւաքելու:

Եւ փոքրիկը վազում է առաջ, մինչև  
հասնում ենք նշանակած տեղը: Նրան տա-  
լիս ենք մի քանի սու և նա merci ասելով  
յետ է դառնում և վազէվազ սուռն գնում:  
Մենք երկար ժամանակ կանգնած նայում

ենք այդ անտառների դաւակին, այդ ան-  
մեղ հրեշտակին, որ երգում է անհող, որ  
չի վախենում խուլ անտառում, և որի մայրն  
էլ մազի չափ անհանգիստ չեղաւ նրան ու-  
ղարկել անծանօթ օտարականների հետ այս  
խուլ վայրերը: Եւ ինչից վախենան, մար-  
դից, բայց մարդը վաղուց է դադարել այս-  
տեղ գազան լինելուց. գայլերից, բայց ամ-  
բողջ Շվեյցարիայում մի հատ գայլ չը կայ,  
խալառ ջնջել են շատ վաղուց: Թող լուր  
տարածուի, թող լրագրերում գրուի, թէ  
այս ինչ անտառում մի գայլ կամ մի արջ  
է յայտնուել, անմիջապէս բազմաթիւ ըն-  
տիր որսորդական խմբեր կը կազմակերպուէն  
և մի քանի օրից յետոյ գազանի արիւնս-  
թաթախ դին կը բերեն:

Երեխան, մենակ՝ անտառում...

Ինչպէս չը յիշեմ, սիրելիս, մեր սղոր-  
մելի գիւղերը, մեր անտէր խեղճ ու կրակ  
ժողովուրդը, որ տասնեակ տարիներ դողում  
է մի հատ բորենուց և որ տարին մի քանի  
երեխայ գոհ է տալիս գազանին, ինչպէս  
հէքիաթիւների վիշապին: Իմ ու քո մանկու-  
թիւնն էլ խօսմ անցել է բորենու սարսափի  
տակ. յիշում ես, ընկեր, ինչպէս էինք դո-  
ղում ամարային գիշերները կտուրների վրայ,  
երբ զգիրը կանչում էր «կապուտեցէք երե-

խաներին, ճրագը վառ պահէք, գէշն էլի գուրս է ընկել, զգոյշ քնեցէք»։ Դէ արի ու քնիր, ո՞վ կարող էր աչք փակել, մենք սարսափով սպասում էինք թէ գազանը երբ կը դայ մեր կտկորդից բռնելու։ Հէնց այս բուպէիս կարգացի մեր երկրից եկած թերթերում, թէ բորենին դարձեալ երեսխաներ է տանում, քանի տարի է, քանի երեսխաներ պատան-պատան եղան, յօշոտուեցան։

Տէր Աստուած, մեր երկիրը դեռ քարէ դարումն է ապրում, երբ գազանի մոնչոցը լսելով կիսամերկ մարդը վազում էր այրը մտնում և մի մեծ քարով անցքը փակում։

Թող այստեղ Շվէյցարիայում մի գազան վիրաւորի մի երեսայի, ամբողջ երկիրը տակն ու վրայ կը լինի, բոլոր ընտիր հրացանաւորները բան ու գործ թողած գէնքը վայր չեն դնի, մինչև գազանն ընկնի։ Անցեալները լրագրերում գրուեց, թէ վալէ կանտօնում մի փոքրիկ օձ կծել է մի դիւղացու. ինչ աղմուկ բարձրացաւ, լրագրերում ինչէր գրեցին. հարց ու փորձ, պաշտօնական և մասնաւոր հաղորդագրութիւններ, թէ մօտերքում դեղատուն եղել է, բժիշկը շուտ հասել է, հիւանդի վիճակն ի՞նչպէս է, օձն ի՞նչ գործ ունէր այստեղ, ո՞րտեղից պիտի եկած լինի, ի՞նչ պիտի ա-

նել, որ նման դէպք չը կրկնուի և այլն և այլն։ Բարեբաղդաբար խածածն անվտանգ էր, այստեղ վտանգաւոր մեծ օձեր չը կան։

Մեզանում իւրաքանչիւրն ապրում է իր համար, իր ցաւի մէջ տապալուած, համայնական գործակցութեան ոգին շատ թոյլ է դեռ։ Գայլը երեսայ է տանում, փոխանակ ընդհանուր ուժերով գազանից ազատուելու, իւրաքանչիւրն աշխատում է իւրայիններէ ձարը տեսնել, գիշերները բարձր տեղ պառկել, իսկ ով անկարող է, ով միջոց չունի, թող նրա գաւակը գազանը տանի։

Ողորմելի, բայց և յիմար ժողովուրդ. երբ դու կը սովորես մի փոքր դէմ գնալ քո սև ճակատագրին, երբ դու կը հասկանաս՝ թէ աշխարհում այլ վիճակ, այլ կեանք հնարաւոր է նաև քեզ համար...

Սիրելիս, ես քեզ իմ նախորդ նամակում նկարագրել էի այստեղացիների դարմանքը մեր գիւղական տան և մասնաւանդ մեր թոնիրների վրայ. ես անկարող եմ նրկարագրել սրանց ապշուլթիւնը, երբ անցեալ օրը մեր երկրի թերթերում կարդալով ես պատմեցի բորենու արշաւանքների մասին։ Գիտե՞ս, եթէ ես ասէի, որ մեր երկրում մարդիկ գլխի վայր են ման գալիս, կամ սողունների նման միշտ սողում են փոքրի

վրայ, կամ հացի փոխարէն քար են կըրծում, կամ անասունների պէս բառաչում են, ես աւելի չէի կարող զարմացնել, քան երբ ծանօթացրի նրանց մեր բորենու էպօպէյի հետ:

է՛հ թողնենք, ես բուն հարցից շատ հեռացայ, զգում եմ, որ երբ հարցը մեր երկրի ցաւերին է գալիս, ես իստակ շատախօս եմ դառնում. ներքը ինձ, սիրելիս, այդ թերութիւնը, «դարդը մարդու աշուղ կ'անի», ասել են մեր միշտ դարգոտ հայրերը:

Շարունակում ենք մեր ճանապարհը:

Անտառից դուրս ենք գալիս, երեք երեխայ՝ 10—12 տարեկան միասին արածացնում են մի քանի կովեր:

—Լսիր, փոքրիկ, դիմում ենք մէկին, Լա-Կուդըը հեռու չէ՞:

—Ո՛չ պարոններ, այ, ի՞նչ մինչև առաջիկայ դիւղը, անցէք կամուրջը, դուրս եկէք գիւղից և կը քայլէք էլի կէս ժամ:

Սքանչելի պատասխան մանուկների բերանից, «ի՞նչ, անցէք, կը քայլէք կէս ժամ» — անմեղ, գրաւիչ իմացականութիւն է փայլում այս հակիրձ, խելացի ցուցումների մէջ:

Քայլում ենք, Լա-Կուդըը հեռու չէ. ահա մի անակ, որի երկու կողմով անց-

նում են երկու ճանապարհներ. փոքրիկ ցանկապատից նայում է մի կին:

—Տիկին, այս երկու ճանապարհից որն ընտրենք Լա-Կուդըը մտնելու համար:

—Երկուսն էլ դանազան կողմերից այնտեղ են տանում:

Մենք յայտնում ենք մեր ցանկացած տունը. նա ցոյց է տալիս դէպի աջ: Մենք առաջ անցանք սովորական Merci-ն ասելով: Բաւական հեռացել էինք, երբ մէկը յետևից մեզ կանչեց. յետ ենք նայում, ճանապարհ ցոյց տուող կինն էր:

—Պարոններ, մոռացայ ասել, որ երբ հասնէք կամրջին, մի անցէք, այլ շարունակեցէք բարձրանալ ավով, այդպէս աւելի շուտ կը հասնէք:

Այս արդէն մի այնպիսի ուշադրութիւն էր դէպի օտարականը, որ մենք խօսք չը գտանք մեր հիացմունք ու շնորհակալութիւնը յայտնելու: Եւ երբ մարդ մտածում է, որ այս բոլորը կատարւում է ո՛չ կրօնական երկիւղի զրդումով, ո՛չ՝ որովհետև՝ «ճամբորդը սուրբ է և Աստուծոյ հովանու տակ», այլ որովհետև նա մի մարդ է, դէպի որը պարզ մարդկային պարտք պիտի կատարել առանց որևէ ակնկալութեան երկնքում կամ երկրի վրայ, այն ժամանակ մարդու հոգին

նոջը: Խեղճ կի՛նն ամբողջ օրը մտածել է թէ մեզ ի՞նչպէս դիմաւորի, ի՞նչպէս ներողութիւն խնդրի: Պէտք եղաւ կրկին և կրկին հաւաստիացնել բարի տանտիկնոջը, որ մենք բնաւ վիրաւորուած չենք, որ ընդհակառակը շատ էլ գուարճացել ենք նրա ճառով:

— Հարբած էր, գիտէ՞ք, պարոններ, հարբած էր, դէ՛ երբ մարդ մի փոքր աւելի է խմում...

Խեղճ, միամիտ շվէյցարուհի, և մենք կուշտ-կուշտ ծիծաղում ենք այդ դէպքի և նրա այս աստիճան անսպասելի հետևանքի վրայ:

Յը գրութիւն.

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

#### IV.

Սիրելիս, այսօր կիրակի է, գնում եմ այստեղի գիւղական եկեղեցին ժամերգութեան ներկայ լինելու. ինձ ասացին, որ ամեն կիրակի քահանան քարոզ է խօսում, թէ եկեղեցին և թէ մանաւանդ քահանան ինձ շատ են հետաքրքրում: Շվէյցարական, քաղաքային քահանաների մտաւոր և բարոյական առաւելութիւնների հետ ծանօթ եմ, քեզ անշուշտ չեմ գարմացնի, թէ ասեմ, որ նրանք բոլորն էլ անպատեհաւ համալսարանական են և մեծ մասամբ աւետարանական առաքինութիւններով օժտուած մարդիկ:

Նախորդ նամակներից մէկում քեզ գրել էի, որ այս գիւղի եկեղեցին գտնուում է մի կանաչազարդ բլրակի վրայ և իր սուր գոթական գանգակաձևով իշխում է շրջակայքի վրայ, թէեւ բուն շէնքը շատ փոքր է: Սա իսկապէս եկեղեցի էլ չէ, այլ փոքրիկ մատուռ, որ իրանք անուանում են chapelle: Այստեղ ժամերգութիւնը կատարւում է միայն կիրակի օրերը, մի պատեօրի ձեռքով, որ միաժամանակ հովուում է մի

քանի գիւղ, և դա ոչ մի անյարմարութիւն չի ներկայացնում, ի նկատի ունենալով յարաբերութիւնների հեշտութիւնը:

Ճաշից յետոյ ժամի 2½-ն է, մի այլ գիւղում իր կրօնական պարտքը կատարելուց յետոյ, քահանան հազիւ այժմ է հասել այստեղի ժամերգութեանը: Եկեղեցու փոքրիկ զանգի ձայնը միակերպ ու դողդոջ տարածւում է շրջակայքի վրայ և գիւղում փոքրիկ իրարանցում է սկսւում: Համարեա ամենքն առանց խտրութեան պատրաստւում են գնալ եկեղեցի, և ոչ ոք այս տօն օրին չի աշխատում: Մարդ ու կին, աղջիկներ ու տղաներ, բացի շատ փոքր երեխաներից, դիմում են դէպի կանաչ բլրակը, որտեղից զանգի ձայնը հնչւում է անընդհատ: Եկեղեցու բակում գիւղացիները խմբեր կազմած խօսում են ու ծխում, իսկ կանայք ու աղջիկները զբօսնում են կանաչների վրայ, ահա ժամհարը դուռը բացեց. տղամարդիկ սպասում են, որ նախ կանայք ներս մտնեն անդաւորուեն. նրանցից յետոյ իրանք առաջացան: Այժմ համարեա ամբողջ գիւղը այս փոքրիկ եկեղեցումն է համախմբուած:

Այս եկեղեցին ներսից նոյնքան անշուք է, որքան և դրսից. նրա բոլոր զարդը կազմում են փայտէ խեղճ նստարանները շա-

րուած պատերի շուրջը, մի փոքրիկ ամբիոն քահանայի համար, և մի վերնայարկ՝ ուր բարձրանում են փայտէ աստիճաններով: Առհասարակ բոլոր բողոքական եկեղեցիները թէ քաղաքներում և թէ գիւղերում վերին աստիճանի անշուք են լինում. կաթօլիկ եկեղեցու ծառայեղ զարդասիրութիւնը, ոսկու և արծաթի անչափ առատութիւնը, թանկագին զարդանօթեղէնները, արձանները, պատկերները, որոնցով պապականութիւնը ծանրաբեռնել և խեղդել էր հաւատը, իլեղերին, քրիստոնէական նախնի պարզութիւնը վերականգնելու իր եռանդի մէջ, մղեցին դէպի մի այլ ծայրայեղութիւն և նա իր հաստատած եկեղեցին դարձրեց մի տեսակ դասախօսութիւնների դահլիճ, ուր աղօթողի և իր Աստծու մէջ ոչ մի փայլուն առարկայ, ոչ մի թանկագին իր չը կայ: Բողոքականն իր եկեղեցու մերկութեան մէջ աշխատում է իր հոգու մերկութեամբ կանգնել երկնքի առաջ և իր խնդրուածքներն ու աղօթքը կատարել առանց որ և է շնչաւոր կամ անշունչ միջնորդի, ահա թէ ինչու նա մերժում է նաև խոստովանութիւնը, որը մի տեսակ հերքումն է իր կրօնական անհատականութեան, իր ազատութեան: Քա-

ղաքների եկեղեցիներն էլ անդարդ են, ուր մնաց գիւղականները:

Այս էլ այդ անշուք գիւղական եկեղեցիներից մէկն է: Այստեղ բազմութիւնը տեղաւորուեց առանձին կարգով. մի կողմում այդ տարին իրանց 16 տարին լրացնող տղաները, նրանց յետևում նոյն տարիքն ունեցող աղջիկները: Հակառակ կողմում հասակ առած ու ջանիլ կանայք և աղջիկներ: Տղամարդիկ մեծ մասամբ բարձրացան վերնայարկը: Ժամաւորներից իւրաքանչիւրն իր ձեռքում ունի մի գիրք, դրանք ձայնագրած սաղմոսներ են: Ամենքն էլ երգել գիտեն հոգևոր երգեր, որ դպրոցներում սովորում են ձայնագրութեան հետ միասին:

Քահանան դեռ չը կայ, բազմութիւնը լռելեայն սպասում է: Ես առիթից օգտուում եմ նստարանների վրայ շարուած դէմքերը դիտելու: Ամենքն էլ տօնական շորեր ունեն. տղամարդիկ մեծ թէ փոքր մաքուր, օսլայած շապիկ գոյնգոյն փողպատներով: Գեղջուկներ են, այդ երևում է նրանց ամբողջ արտաքինից, սև զգեստները ճմռոտած ու ծալծլած, պարզ է, որ նրանք միայն տօն օրերին են հրապարակ դալիս, պահծու շորեր են: Կանայք գոյնգոյն շրջագգեստներ ունեն գեղջուկ ճաշակով կարուած, գլխարկ-

ները ցօղից են ու լայնեզր, ու գրաւիչ անհոգութեամբ դրուած շիկաներ գլուխներին:

Ինչ որ զարմացնում է օտարականին շվէյցարական այսքան գրաւիչ, այսքան գեղեցիկ բնութեան մէջ բնակիչների տգեղութիւնն է: Ահա այստեղ իմ առաջն է համարեա ամբողջ գիւղը և սակայն այդ բոլոր բազմութեան մէջ ոչ մի իսկապէս գեղեցիկ տղամարդ կամ կին: Կոլոր սպիտակ դէմքեր են, մեղմ, անարտայայտիչ աչքերով, որոնք թարթում են երեխայական միամտութեամբ: Մեր երկրի այն սիրուն, գանգրահեր գլուխները, այն վառ և իմացականութեամբ լի աչքերը, այն խորթափանց հայեացքը, այն խոհուն, կամ աւելի ճիշտ խորամանկ ճակատներն այստեղ չը կան: Կանայք մեծ մասամբ կարճահասակ են, տգեղ իրանով, հարթ կրծքով, պաղ, անփայլ աչքերով, այտերը միշտ մի փոքր կարմիր, որ սակայն բնաւ գեղեցիկ չէ, գլուխները հարաւի կանանց հարուստ վարսերից գուրկ, շվէյցարական կլիման կարծես թշնամի է մազերի, ինչպէս նաև ատամների: Սպիտակ փայլուն ատամներ և ալեծածան հարուստ վարսեր ունեցող մարդ կամ կին այս երկրում շատ հազուադիւր են: Հարաւի բնակիչների այս երկու առաւելութիւնները միշտ շվէյցարացի-

ների մէջ գեղասիրական նախանձ են շար-  
ժում: Բայց հասակաւորների տգեղութեան  
հակառակ սրբան գեղեցիկ են շվէյցարացի  
երեխաները՝ մի մի հրեշտակներ, որոնց նա-  
յելով՝ մարդ մնում է զարմացած՝ թէ այդ-  
քան գեղեցիկ մանուկները ինչպէս են վեր-  
ջում այնքան տգեղանում:

Իմ դիտողութիւններն ընդհատում է  
քահանան, որ ներս է գալիս և բարձրանում  
իր ամբիոնը: Նա մի երիտասարդ մարդ է,  
հազիւ երեսուն տարեկան, համակրելի դէմ-  
քով, բարեձև, համարեա գեղեցիկ կազմուած-  
քով, յամենայն դէպս աւելի գեղեցիկ, քան  
բոլոր նստողները: Նրա հետ մտնում են  
գիւղական սւսուցիչը և եկեղեցու տիրացուն:  
Այս երեքը, որ գիւղական ինտելիգենցիան  
են ներկայացնում, հագնուած են համարեա  
միակերպ, քաղաքի ձևով, իրանց շարժում-  
ներով տարբերում են միւսներից և աչքի  
ընկնում գեղջուկ ու պարզ բազմութեան  
մէջ: Ժամհարն էլ վատ չէ հագնուած, նա  
սև ժուկեա ունի, սպիտակ շապիկ, իսկ նոր  
ածիլած դէմքը փայլում է տօնին պատշաճ  
հանդիսաւորութեամբ, բազմութեան մէջ  
միակ բարձրահասակ մարդն է, բայց կոնատ  
է, նրան պակասում է ձախ թևը: Իր միակ  
ձեռքում նա բռնած ունի փող հաւաքելու

մի խիստ օրիգինալ թաբաղ, դա թիթեղեայ  
մի փոքրիկ արկղիկ է, փայտեայ երկար կո-  
թով. ամեն մի նստարանի ծայրում, կանգ-  
նելով, ժամհարը մեկնում է այդ ամանը և  
նստողները հերթով ձգում են այնտեղ ի-  
րանց լումաները, ապա նա մեկնում է նոյն  
ամանը դէպի վեր՝ դէպի վերնայարկը, առանց  
շարքերի մէջ շրջելու, և հեշտութեամբ հա-  
ւաքում սանտիմները: Ես նկատեցի, որ ա-  
մենքն անխտիր որ և է դրամ ձգեցին ժամ-  
հարի թաբաղը, և ինչպէս իմացայ յետոյ,  
այդ ձևով հաւաքուած դրամը յատկացւում  
է բացառապէս գիւղի աղքատներին:

Ժամերգութիւնն սկսուեց մի սաղմոսով,  
որ տիրացուն երգել սկսեց, բազմութիւնը  
ձայնակցեց ոտքի կանգնած. մեղմ ու խըղ-  
ճուկ ձայներ, որոնք միախառնուելով կազ-  
մեցին մի դուրեկան համերգ՝ նոյնքան ան-  
յոյզ, նոյնքան խաղաղ, որքան ամեն բան  
այս երջանիկ երկրում: Համերգը լսեց, քա-  
հանան կարդաց «Գործք առաքելոցից» Պօ-  
ղոսի այցելութիւնն Աթէնքին, ապա գիրքը  
փակելով, նա կարդացածը քարոզի նիւթ  
դարձրեց: Նա խօսում էր այնպէս, ինչպէս  
կը խօսէր քաղաքի մի լաւ պաստօր, թէ իբ-  
րև ոճ, թէ իբրև նիւթի յաջորդական մշա-  
կումն, այդ քարոզը մի օրինակելի դասա-

պատահական պոռոտաբոյժ արկածախնդիրները, կեանքի բոլոր ասպարէզներում անպէտք համարուած թշուառականներ, չեն կարող երազել անգամ, ժողովրդի ուսուցիչ, հոգևոր հովիւ դառնալ այստեղ:

Երջանիկ երկիր, քահանայ և ժողովուրդ իրար արժեն. այս օրուայ հրաշալի քարոզը լսում էր Շվէյցարիայի գիւղացին, որոնց եղբայրները մեղանում անգրագէտ են դեռ, և յայտնի չէ, թէ երբ գրագէտ կը դառնան: Ուշադրութեան արժանի մի երևոյթ ևս, այս ամբողջ քարոզն ու ժամերգութիւնը տևեց ուղիղ մի ժամ, ոչ աւել և ոչ պակաս: Այս բանը ես նկատել էի դեռ քաղաքների եկեղեցիներում: Դու գիտես, սիրելիս, որ մեր վարդապետներն ու տէրտէրները կամ խօսել չը գիտեն, կամ երբ բերանները բանան, էլ վերջ չը կայ. ամբողջ ժամեր... Մեր քարոզիչները կարծում են, թէ երկար խօսելը խելքի և կարողութեան նշան է, սկսում են Ադամից մեր օրերով վերջացնելու համար: Չը գիտեմ, դու ինչպէս, բայց ես լաւ յիշում եմ, որ երբ մեր եկեղեցիներում վարդապետը կամ քահանան երեսը դարձնում էր դէպի ժողովուրդը և արտասանում իր «սիրելի ժողովուրդը» (ինչքան շատ են սիրում քեզ, խեղճ ժո-

ղովուրդ)... ես միշտ դրւում էի այն մարդի կացութեան մէջ, որին սպառնում են մի ծանր պատիժ տալ, առանց որ ինքը, այդ խեղճ մարդը կարողանար հասկանալ թէ ինչո՞ւ: Եւ սկսում էր անհամութիւնների հին շարքը, տգէտ, անտրամաբան բարբանջանքների անծայր շղթան, յօրանջիր որքան կ'ուզես, այս ու այն ոտիդ վրայ յետուիք փոխ առ փոխ քանի կամքդ է, բայց քարոզը վերջ չունի: Մարդը խօսում է, խօսում, ինքն էլ չիմանալով թէ ի՞նչ, իսկ թէ հաւատո՞ւմ է իր ասածին թէ ոչ, այդ մեծակ ինքը գիտէ, ուրիշ ոչ ոք: Հաւատացնում են, որ մի անգամ Պասկալը իր բարեկամին երկար նամակ գրելուց յետոյ վերջում աւելացրեց հետևեալ ուշագրաւ խօսքերը. «Ներիր, բարեկամ, որ երկար եղաւ նամակս, կարճ գրելու ժամանակ չունեցայ»: Թորիմաստ խօսքեր, ճշմարիտ է, որ հակիրճ ու տրամաբանօրէն մի բան ասելու կամ գրելու համար աւելի մտածել է հարկաւոր՝ հետևապէս և աւելի ժամանակ, քան թէ երկար ու անկապ-անհամ խօսել գրելը: Ասենք, արևելքը միշտ շատախօս է ու ձանձրալի և արևելցին իր ժամանակը ինայել, գնահատել չը գիտէ. ամեն ինչ այնտեղ ձգձգւում է և ընթանում սպանիչ դանդաղութեամբ: Եր-

կար ու անհամ է խօսում արևելքում քարոզիչը, երկարանում է միշտ մասնաւոր խօսակցութիւնը, երկար ու ձիգ են մեր բռները, երկար ու ոլորուն են մեր եղանակները: Ապա մեր լրագրերը, շատախօսութիւնների մի շտեմարան, մի փոքրիկ լուր հաղորդելու համար այնտեղ դու կը գտնես ամբողջ սիւնեակներ, ճառ՝ սկզբում, ճառ վերջում, իսկ մէջ տեղում մի քանի խօսք բուն նիւթի մասին:

Էհ, սիրելիս, քարոզի և քահանաների մասին խօսելիս ես ինչպէս մոռանամ մեր տէրտէրին. յաւակնոտ ու փքուն, դրսում շատախօս, լեզուանի, եկեղեցում քարոզելու համար բոլորովին համր, ինչպէս ձուկը: Նա քարոզ չէր խօսի երբէք, և որպիսի փրկութիւն մեր ժողովրդի համար: Միայն տարին մի անգամ ծնունդի Ձրօրհնեաց հանդիսին. նրա սև օրն էր, որովհետև նա ստիպուած էր մի քանի խօսքով խաչը ջրից հանելու հրաւէր կարդալ իր հօտին: Հէշտ բան է, երեսը դարձնել դէպի ժողովուրդը և բաներ ասել. խեղճ մարդը, առանց այն էլ փոքրահասակ, այդ ժամանակ իսպառ փոքրանում էր, ասես զրակալի յետևում ծածկուելու համար: Բայց ճար չը կար, պէտք էր մի բան ասել, նա հազում էր, քրտնում, և վերջ

ի վերջոյ գտնում էր տարիներ շարունակ կրկնած իր երեք նախադասութիւնը. «Սիրելի ժողովուրդ, դուք գիտէք, որ մենք ամեն տարի խաչ կը հանենք ջրից, էս տարի էլ հանում ենք, եկէք, հանէք»: Խաչը ջրից հանում էին և տէրտէրն սպասում էր մինչև յաջորդ ջրօրհնէք էլի մի երկու խօսք ասելու համար: Ինչ ուզում ես ասա, բայց ես մեր տէրտէրին սիրում էի իր այդ սովորութեան համար. կեանքում քիչ չեն նըրանք, որոնք եթէ բնաւ չը խօսէին, շատ աւելի լաւ կը լինէր:

Յը գրութիւն.

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

## V.

Ահա քեզ մի հետաքրքիր գուգադիպու-  
թիւն, սիրելիս, անցեալ նամակովս քեզ նը-  
կարագրեցի այստեղի գիւղական քահանան  
և եկեղեցին, իսկ այժմ գալիս եմ քեզ պատ-  
մելու թէ ի՞նչպէս են կատարուում այստեղ  
թաղումները, որովհետև հէնց այսօր ներ-  
կայ եղայ մի յուղարկաւորութեան:

Մեռնողը տան աշխատաւոր էր, մի ըն-  
տանիքի հայր: Գիւղն ամսոսանքով լսեց  
նրա կանխահաս ցաւալի վախճանը: Յուղար-  
կաւորները բազմաթիւ էին: Մեռնողի հայ-  
րը՝ մի եօթանասուն տարեկան ծերունի,  
տան բակում ընդունում է յուղարկաւոր-  
ներին: Նա հազիւ է կարողանում քայլել  
տարիների և վշտի ծանրութեան տակ, բայց  
և այնպէս դողդողալով դիմաւորում է ե-  
կողներին, որոնք նրան ասում են քանի մի  
մխիթարական խօսքեր: Վաղուց հետէ պա-  
հարանում քաշ արած սև զգեստները այսօր

այս սգի ժամին հանել և հագցրել են խեղճ  
ծերունուն, երևի օրուայ խորհրդաւորու-  
թիւնը, սգի ընդհանուր պատկերը արտա-  
քինի այլանդակութեամբ չը խռովելու հա-  
մար: Միայն ծերունին չէ, որ հագել է  
տխուր ժամին պատշաճ զգեստ, բոլոր յու-  
ղարկաւորներն առանց բացառութեան սև  
սիւրտիւկ, սև գլխարկ կամ ցիլինդր, ինչ-  
պէս և սպիտակ մաքուր օսլայած շապիկ  
ունեն: Այս մարդիկ կարծես մի հանդիսի  
են եկել, և իրաւունք ունեն, սիրելիս, մահն  
էլ մի հանդէս է և բոլոր հանդէսներից ա-  
մենախորհրդաւորը, ամենաահաւորը: Եթէ  
որևէ մերձաւորի հեռաւոր երկիր ճանա-  
պարհ ընկնելը առաջ է բերում առանձին  
տխուր տրամադրութիւն, որ հանդիսաւո-  
րութիւնից զուրկ չէ, սրչափ աւելի հան-  
դիսաւոր է լինելու վերջին «բարի երթը»  
դէպի այնտեղ, «որտեղից ոչ մի ճանապար-  
հորդ չի վերադառնում»: Միւս կողմից մահը  
ինքն ըստ ինքեան արդէն այնքան սարսա-  
փելի, այնպէս ջախջախիչ, այնպէս անյոյս  
է, որ միանգամայն աւելորդ է էլ աւելի  
ծանր, էլ աւելի անախորժ դարձնել այն՝  
արուեստական, արտաքին միջոցներով:

Բակում՝ ինչպէս ասացի, հետզհետէ  
հաւաքուեցին սևազգեստ յուղարկաւորները,

եղանակը լաւ էր, հէնց այնտեղ դրսում էլ պարզեցին մի սեղան. ապա մէկը դուրս բերեց մատուցարանների վրայ յուղարկաւորների թուին հաւասար բաժակներ, և տուեց ամեն մէկին մի մի հատ, նրան հետեւեց մի ուրիշը և իւրաքանչիւրին տուեց մի բաժակ գինի, մի երրորդը մատուցարանով անցաւ բոլորի առաջից և ամեն մէկը վերցրեց մի մի հատ կարկանդակ:

Այս տեսարանն ինձ խիստ հետաքրքրեց, մի բաժակ գինի և մի հատ կարկանդակ, ահա շվէյցարական գիւղում մեռելահացը: Նայում էի և մտածում մեր երկրի տնաքանդ «քելեխի» մասին. յիշում էի թէ՛ ինչպէս մեզանում մեռելատէրը աչքերը սրբելով՝ ստիպուած է այս ու այն կողմն ընկնել բրնձի, իւղի, հացի, մսի. ճար անել մի քանի հարիւր հոգի կերակրելու համար, այն ժամանակ, երբ տան մնացած անդամները տակաւին տաք գիակի շուրջը կատարում են սոսկալի ողբը: Անշուշտ, երեխայամտութիւն կը լինի հեգնութեան առարկայ դարձնել առհասարակ որևէ ժողովրդի ազգային սովորութիւն և մասնաւորապէս մահուան հետ կապուած սովորութիւնները: Քելեխը, որի մասին այնքան գրուել է և գրուում է մեզանում շատ անգամ, նոյն-իսկ

թեթեամիտ, անպատշաճ լեզուով, ժողովրդի համար կարող է նոյնքան սրբազան համարուել, որքան, օրինակ, իր մեռելի վրայ թաղման կարգ կատարելը: Եւ դա շատ հասկանալի է, եթէ ի նկատի ունենանք, որ ամեն մի սովորութիւն, մանաւանդ կրօնական՝ իր խորը պատմական-փիլիսոփայական ծագումն ունի, արմատացած է դարեկան ծագումն ունի, արմատացած է ժողովրդի ամենանուիրական հասկացողութիւնների հետ: Նրանք կը փոխուեն, երբ արմատական փոփոխութեան կ'ենթարկուեն այդ սովորութիւններին ծագումն տուող հասկացողութիւնները: Սա չի նշանակում սակայն, որ ժողովրդի գիտակցական մասը պէտք է հանդարտ սպասի մինչև այդ բոլորն ինքն իրան փոխուի, պէտք է աշխատել վերացնել այդ փասակար սովորութիւնները. բայց երբէք չը հեգնել, երբէք թեթեամտօրէն չը վերաբերուել, և որ գլխաւորն է՝ երբէք չը վիրաւորել ժողովրդի զգացմունքները, որոնց հետ խորապէս կապուած են այս կամ այն սովորութիւնները: Ամեն բան կախուած է միմիայն ժողովրդի կրթութիւնից, նրա մտաւոր մակերևոյթի բարձրացնելուց, մնացածը ինքն իրան կը կատարուի:

Ես շարունակում եմ նկարագրելը: Յու-

ղարկաւորները բաւում սպասում էին, իսկ դագաղը գտնուում էր ներսում: Ինչ որ ինձ զարմացրեց, ներսից չէր լսուում և ոչ մի ձայն. լացն ու ողբը կատարուում էր լուսթեամբ, առանց աղմուկի, առանց այլանդակութիւնների:

Հասաւ պաստօրը, նա մէկիկ մէկիկ ձեռք տուեց յուղարկաւորներին և սգաւոր բարեկամներին, որոնց ուղղեց քանի մի մխիթարական խօսքեր: Դագաղը տնից դուրս բերեցին բակը: Քահանան կարգաց մի պատշաճաւոր աղօթք, ապա բնաբան առնելով «Մեղքով մահը աշխարհ մտաւ» խօսքերը, հէնց այնտեղ, բաւում խօսեց մի մխիթարական քարոզ, որի ընթացքում շօշափեց շատ ժամանակակից բարոյական հարցեր: Ի՞նչ ասել է՝ մեղքով մահը մտաւ աշխարհ, բացականչեց նա, ի միջի այլոց, երբ ոչ միայն սկզբնական մեղքը չէր գործուել, այլ նոյն իսկ մարգն էլ գուցէ գոյութիւն չունէր, բայց մահը կար աշխարհում: Մարդու ապրուստի եղանակը, նրա վարք ու բարքը, իր Ֆիզիկական և բարոյական ոյժերի վատնումը շատ անգամ կամաց կամաց պատրաստում են նրան մահը, կամ աւելի ճիշտ մեռցնում են նրան նախ քան վերջնական մահը: Երիտասարդ ոյժերի անխնայ

վատնումը, շռայլութիւնը, մեղկութիւնը, ահա թէ ինչ ասել է՝ սկզբնական մեղքը և նրանից առաջացած մահը: Չափաւոր վայելքները, ապրելը լրիւ կեանքով և բնական սահմաններումն աշխատանքը, երբէք մահ չեն առաջ բերում, այլ կեանք: Ապա պաստօրը մխիթարեց սգաւորներին, խօսեց հանգուցեալի առաքինութիւնների, նրա հեղութեան, աշխատասիրութեան, բարութեան մասին և վերջացրեց իր խօսքը՝ կոչումն անելով դէպի մարդկային լաւագոյն առաքինութիւնները, որոնք միայն ընդունակ են գեղեցկացնել կեանքը, խորհուրդ տալ մարդկային ծանր ճակատագրին և թուլացնել մահու սարսափը, յաղթահարել նրան:

Կանայք չը կային, սղամարդիկ վերցրին դագաղը և առաջ ընկան, յուղարկաւորները զոյգ-զոյգ շարուեցին իրար յետեւից, նախ պաստօրն ու ազգականները, ապա մնացած բազմութիւնը:

Թափօրը շարժուեց դէպի գիւղից դուրս, կանաչապատ լեռնադաշտի միջից անցնող սիրուն ծառուղիով: Հեռու երևում է գերեզմանատունը իր մշտադալար մացառների ցանկապատով, որ դաշտերի ընդհանուր կանաչութեան մէջ թւում է մի գալարուն մոյգ երիզ: Ահա և գերեզմանատունը. թա-

փօրը ներս մտաւ երկաթապատ դռնից: Սա կարծես գերեզմանատունն չէ, այլ մի ծաղկազարդ զբօսավայր: Իւրաքանչիւր շիրիմ շրջապատուած է կանաչի ու ծաղիկների փոքրիկ ցանկով, տեղ տեղ քարերը կորել են պսակների, գիրլեանդների մէջ: Ոմանք նոյն իսկ խնամոտ ձեռքով իրանց մեռած սիրելիների յաւիտենական բնակարանին հովանի անելու համար անկել են սգատերև ուռիներ, որ կախկիսել են իրանց դալար ճիւղերը մինչև գետին, համբուրւում են շիրիմների հետ: Քարերը բոլորն էլ փոքր են, մեծ մասամբ փոքրիկ մարմարներ՝ սիրուն խորհրդանշաններով քանդակուած: Մուռացուած շիրիմներ չեն, իւրաքանչիւր գերեզմանի վրայ երևում է խնամք, առանձին հսկողութիւն, ծաղիկները մշակուած են, խոտերը յարգարուած:

Այս սիրուն, ծաղկազարդ շիրիմների մէջ մի փոքրիկ փոս է փորուած նաև հանգուցեալի համար: Խորութիւնը մեծ չէ, մի արշիւնից հազիւ մի փոքր աւելի: Դագադն իջեցրին փոսի մէջ, պաստօրը կարգաց դարձեալ մի քանի աղօթք. ապա ամենքը հեռացան, գնացին՝ գերեզմանափորերից բացի, որոնք շարունակում էին հողով ծածկել գերեզմանը: Վերադարձին ես տեսայ

թէ ինչպէս պաստօրը մօտեցաւ հանգուցեալի ծերունի հօրը, որ դժուարութեամբ էր քայլում, իր թևն առաւ նրան և ճանապարհի բոլոր ընթացքում նա համարեալ գրկած տանում էր անգօր ծերունուն, խօսում, մխիթարում էր նրան մի լաւ գաւառի սրտացաւ հոգացողութեամբ, աշխատելով ամօքել վշտահար ծերունու ցաւոտ սիրտը: Թագումից վերադարձող բազմութիւնը այլ ևս հանգուցեալի տունը չը մտաւ, ինչպէս անում են մեր երկրում և հացկերութիւն չեղաւ, այլ իւրաքանչիւր ոք իր տունը, իր աշխատանքին գնաց, մեռելատէր ընտանիքին ազատելով այդ ահագին բազմութիւնը կերակրելու անօգուտ և աւերիչ հոգսից:

Այսպէս վերջացաւ թաղումը:

Յուզարկաւորութիւնից յետոյ, մարդիկ վերադարձան գիւղ, իսկ ես դեռ մենակ թափառում եմ կանաչազարդ, ծաղկապատ գերեզմանատան մէջ, թափառում եմ և միտս է գալիս մեր գիւղի գերեզմանատունը: Սարերի կրճքից պոկուած սև սև ժայռերի ահագին կտորներ սղմում են մեր մեռելների կրճքերը, ասես նրանց կրած ցաւը խլացնելու համար: Այնտեղ, այն մեր ողբալի ծրնդաւայրում գեղարուեստը չի մեղմաց-

նում մահի սարսափը և գերագոյն ոչնչացման աւերածի արտաքին պատկերը միանգամայն համապատասխան է ներքինին: Ոչինչ չը կայ մեր գերեզմանատանը, որ սգաւոր աչքի հայեացքը հանգստացնի, ոչինչ, որ կեանքի ունայնութեան և մեր գոյութեան տխուր վախճանի վրայ մի խաբուսիկ քօղ ձգի: Եւ այդ հասկանալի է, սիրելիս, ցաւերով ու տառապանքներով լի գոյութիւնները գերեզմանների մէջ էլ պահում են իրանց արտասուելի պատկերը: Ժայռեր, ժայռեր, կեանքն ամբողջ ապառափ, քար է մեր գիւղերում. ինչո՞ւ զարմանալ, որ գերեզմաններում ժայռեր են շարուած:

Շրջում եմ և մտածում նաև մեր երկրի թաղումների (մասին, երբ ողբն ու արցունքը այնքան առատ են դառնում. երբ մարդիկ չեն լալիս, այլ ճշում են. երբ սգի մի փոթորիկ է անցնում մի տան, մի թաղի, մի գիւղի վրայ: Արևելքում մահերը մի սոսկում են բերում իրանց հետ, որ աւերածի բոլոր ոյժն ունի, այնտեղ ողբերն իրանց յուսահատութեամբ զարհուրելի են, ամեն մի թաղումով կարծես մի տուն է փլչում, մի ընտանիք ջնջւում:

Անշուշտ մահերի առթիւ կատարուող սուգը, թաղման ծէսերի յուսահատական

մանրամասնութիւնները, ինչպէս նամակիս սկզբում ասացի, արտաքին նշան են այն հասկացողութիւնների, որ այս կամ այն ժողովուրդ կապում է մահուան գաղափարին, անդրշիրիմեան կեանքին, բայց դրա հետ միասին անուրանալի է, որ կան նաև շատ հասարակական տնտեսական պատճառներ, որոնք մեծացնում են կորուստը և շատ անգամ իրօք աւերած առաջ բերում հարուածին ենթակայ ընտանիքի ծոցում:

Թողնենք դեռ այն մահերը, ուր խօսողը միմիայն սիրտն է, կամ ինչպէս մեր երկրում ասում են «Ղիպեարի մումուռը», երբ որ և է տնտեսական պատճառ չի կարող խառնուել սգին, երբ կիզիչ ցաւը իբր հիմունք ունի միմիայն մի սիրելու կորուստ. բայց այլ է խնդիրը, երբ այդ կորուստին, այդ հոգեկան, բարոյական զրկանքին աւելանում է նաև կեանքի նիւթական դժուարութիւնների մօտաւոր ծանր հեռանկարը, երբ ընտանիքը անտէրութեան անողորմ վիճն է տեսնում իր առաջ բացուած այն սև փոսին նայելիս, որ ծածկում է մի սիրելու դիակ: Ահա այս վերջին դէպքում մահերի առթիւ եղած սուգն ու յուսահատութիւնն ստանում է կրկնակի ուժգնութիւն, և ողբը

չափեր է ընդունում, որից մարդու աղիքներն են գալարւում:

Ով երբ և իցէ տեսել է մեղանում մի բազմանդամ ընտանիքի մօր, այրու սուզը իր «գլխաւորի», իր «տէր ու տիրականի», իր ամուսնու համար, նա կը համաձայնի, որ դա սովորական ողբ չէ, դա ցաւերով ուռած սրտի մի զեղումն չէ, այլ ինքնասպանութիւն է. մի սրտաճմլիկ կոչումն գէպի մահը, որ գայ մնացածներին էլ տանի, որովհետեւ անտէր են, էլ ապրել չեն կարող: Եւ արդարև, ո՞վ է հոգացողը, մտածողը նրա, այս ողորմելի այրու և նրա որբ մնացած զաւակների համար: Արևելքում «գլխաւորից» զրկուած ընտանիքը, եթէ շատ մօտիկ սըրտացաւ ազգական չունի, զո՞ն է ամեն տեսակ պատահականութեան, ամենաանողորմ ոտնձգութիւնների, ենթակայ կատարեալ անտէրութեան, դատապարտուած ոչնչանալու: Ես, որ արևելցի եմ, տեսել եմ նկարագրածը սուզերը, մասնակից եմ եղել շատերին, ճաշակել եմ նրանց պատճառած յուսահատութեան բոլոր դառնութիւնը, տեսել եմ որբեր, այրիներ, այժմ տեսնում եմ նոյնը այստեղ և զարմանքով նկատում եմ, որ տարբերութիւնն ահագին է: Ինչ ուզում են ասեն, բայց համարձակ կարելի է ասել, որ

արևելեան «եթիմի» հասկացողութիւնը հաւասար չէ արևմուտքի orphelin-ին և «որբ-կայրին» հաւասար չէ այստեղի veuve-ին: Դու երևի կը համաձայնուես ինձ հետ, որ «եթիմ» և «որբկայրի» բառերը մեղանում այնքան յուսահատութիւն, այնքան խեղճութիւն են պարունակում, որ դրանցից մահուան հոտ է փչում:

Եւ դա շատ հասկանալի է, սիրելիս, արևելքում, ուր ընտանեկան, ազգակցական կապերն այնքան զօրեղ են, ուր ցեղական եսասիրութիւնը իր արտայայտութիւնների մէջ ոչնչով յետ չի մնում անհատական եսասիրութիւնից, ուր «թասիրը», ընտանեկան աւանդութիւնները, հաստատուած շահերի նոյնութեան վրայ շողկապում են իրար այնքան հեռուոր ազգականներ, նոյն արևելքում կատարելապէս բացակայ է հասարակական խնամատարութիւնը, (assistance publique) և հազիւ թէ նա արտայայտուում է «ողորմութեան» ստորացուցիչ և վատ ձեւով: Ահա թէ ինչու «որբ և այրիներն» ու «եթիմները» եթէ տէր ու տիրական չունեն, համարեա մահու բաժին են: Այլ է այստեղ, ուր անհատը, նրա գոյութիւնը իր մերձաւորներից դուրս դրուած է նաև ընդհանուր հասարակական խնամքի ներքոյ, որբերն ու

այրիւնները երբէք անտէր չեն մնայ, նրանց շահերը հնարաւոր չափով պաշտպանուած են չարամիտ ռանձգութիւններէց, խեղճերի կըրած ծանր կորստին չի միանում նաև ապագայ դառնութիւններով ու ցաւերով լի մի կեանք:

Մի ուրիշ անգամ, գուցէ ես առիթ կուենեամ քեզ նկարագրելու, թէ այստեղ ի՞նչպէս է կազմակերպուած հասարակական խնամատարութիւնը (assistance publique) գիւղերում, իսկ այժմ թոյլ տուր քեզ յիշեցնել թէ մեզանում հասարակութիւնն ի՞նչ է անում որբերի համար: Օրէնք, ի հարկէ գոյութիւն ունի, որ պարտք է դնում հասարակութեան վրայ խնամակալներ կարգել որբ երեխաների վրայ, կառավարել նրանց ստացուածքը և հայրութիւն անել: Ինչպէս տեսնում ես լաւ օրէնք է, բայց ի՞նչ անես, որ երբ հասարակական խիղճը զարգացած չէ, պարտքի գիտակցութիւնը լայն կերպով չի ըմբռնուած և անգամ լաւ օրէնքի գործադրութիւնը վատ մարդկանց ձեռքում դառնում է մի կատարեալ չարիք, դու խօս գիտես, թէ մեզանում խեղճ այրիները, մանաւանդ՝ եթէ ամուսնուց մնացած փոքրիկ ժառանգութիւն կայ, ինչպէս են աշխատում ամեն կերպ, որ իրանց որբերը ազատ մնան

համայնքի խնամքից, նրա ընտրած խնամակալներից, որոնց «հայրութիւնից» սարսափելու բոլոր իրաւունքն ունեն, որովհետև փորձը ցոյց է տուել, որ այդ հայրերը միշտ քարուքանդ են անում որբերի փոքրիկ տընտեսութիւնը: Մեր գիւղական խնամակալների մասին խօսելիս միտս ընկաւ մի հետաքրքիր օրինակ. Պարիզի վերջին ցուցահանդիսի զեղարուեստական բաժնում դրուած էր ի միջի այլոց մի բրօնզեայ արձան, որ ներկայացնում էր «փրկութիւն». դա մի յաղթանգամ մարդ էր, պատրաստ ձեռքի պարանը ձգելու ջրում խեղդողին, բայց դէմքի արտայայտութիւնն այն աստիճան սարսափելի էր, որ ինձ հետ շրջող ընկերս ծիծաղելով ասաց՝ «եթէ ես լինէի խեղդողը ոչ մի պայմանով չէի համաձայնի բռնել այդ սարսափելի մարդու պարանը»: Մեր կողմերում որբերի խնամակալներն ինձ ահամայ յիշեցնում են «փրկութիւն» ներկայացնող այն սարսափելի մարդը. հասկանալի է, թէ ինչո՞ւ «եթիմ» բառը այնքան սարսափ ունի իր մէջ արևելքում:

Բարքերի տեսակէտից բնորոշ չէս զըտնում նաև մեր երկրի հետևեալ ստացուածքը՝ «եթիմին ոչ ծեծիր, ոչ հայհոյիր, միայն հացը ձեռքից խլիր և ճանապարհ դիր»:

Անողորմ առած, որ սակայն իրագործ-  
ւում է ամբողջութեամբ, ոչ միայն հացն  
են խլում որբի, այլ և՛ հայհոյում, և՛ ծե-  
ծում են:

Յը գրութիւն.

Ընկերք՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

VI

Յիշում ես, սիրելիս, իմ նամակներից  
մէկում ակնարկելով մեր երկրի գիւղական  
կեանքի տխուր երևոյթներից մէկի զիանի  
մասին, խոստացայ քեզ գրել թէ ինչպէս է  
հասկանում շվէյցարական գիւղացին սեփա-  
կանութեան գաղափարը, ինչով և ինչպէս է  
արտայայտւում նրա յարգանքը դէպի ուրի-  
շի քրտինքի արդիւնքը: Այսօր կատարում  
եմ խոստումս, և դրան առիթ տուող դէպքը  
այն աստիճան ուշագրաւ է, որ ես կ'սկսեմ  
հէնց այդ դէպքից:

Տունը՝ ուր ես ապրում եմ, գտնւում է  
գիւղի եզրին. իմ լուսամուտի տակից անց-  
նում է այն մեծ խճուղին, որ մի կողմից  
անցնելով դաշտերից գնում է դէպի Մօն-Պե-  
լլըէն և Բերնի կանտօնը և միւս կողմից  
միանում է այն ճանապարհին, որ տանում  
է դէպի Լօզան: Պարապ ժամերին ես սի-  
րում եմ իմ լուսամուտից նայել լայնար-

ձակ ու կանաչազարդ դաշտերի և լեռնալանջերի մէջ գալարուող սպիտակ ճանապարհին, որ այնպէս պարզ ու սիրուն դժադրւում է համատարած կանաչաւուն ֆօնի վրայ: Ճանապարհն ինքն ըստ ինքեան միշտ հետաքրքիր է, այն դիտելիս մարդ մի փոքր փրկիստփայ է դառնում: Եւ դա հասկանալի է, սիրելիս, մեծ ճանապարհի վրայ կատարուող անցուդարձը երբեմն յարուցանում է այնքան խոհեր, նայում ես երկար, երկար, և քեզ թւում է, թէ առաջդ կեանքի մեծ ուղին է, որով անցնում են այնքան մարդիկ՝ իւրաքանչիւրը շալակած իր ճակատագիրը: Ինձ համար, իբրև արևելցու, ճանապարհը կրկնակի խորհրդաւորութիւն է ներկայացնում. դու յիշում ես անշուշտ մեր հէքիաթները, որ լսել ենք ձմեռ ժամանակ սաքուններում, բուխարու կրակի առաջ. յիշում ես, թէ արևելքի երևակայութիւնը ինչեր է կապել հեռաւոր, մեծ ճանապարհներին, որոնք դէպի անյայտն են տարել և միացել ճակատագրի գաղափարին: Այնքան խորիմաստ անցքեր, նշանակալից դիպուածներ, անակընկալ արկածներ, բարձր առաքինութիւններ ու սև ոճիրներ, որոնք անցել են արևելքի մեծ ճանապարհների վրայ: Չը կայ մի հէքիաթ, որի հերոսը դէպի հե-

ռաւոր, անյայտ աշխարհները ճամբորդած չը լինի: Մեծ ճանապարհը դեռ այսօր էլ արևելքում այն խորհրդաւոր հովիտն է, ուր կեանքը պարզում է իր խորհուրդը, իր փրկիստփայութիւնը:

Այժմ, երբ ես դիտում եմ այս մեծ ճանապարհը, զգում եմ, թէ որքան արևելցի եմ ինքս, այնքան բան եմ բերել ինձ հետ մեր հին հէքիաթներից: Ամեն բան, ինչ կատարւում է այս ճանապարհին, իմ աչքում մի առանձին խորհուրդ ունի. չէ որ մենք արևելցիներս տրամադրուած ենք դէպի միստիցիզմ: Առաւօտները այստեղով աշխատաւորները դաշտ են գնում դեռ արևը չը ծագած, երբ ես անկողնում եմ լինում, աւելի ուշ մանուկները հեռաւոր խրճիթներից գալիս են դպրոց, լուսամուտի տակից անցնում են քաղցրիկ շատախօսութեամբ: Երեկոյեան դաշտերից գալիս են խոտով բարձած սայլեր ու սայլակներ և դաշտերի դիւրալի բուրմունքը տարածում են դիւղի փողոցներում, աղջիկները խմբով անցնում են երգելով իրանց ժողովրդական երգերը, որոնք ի դէպ է սսել, ինձ բնաւ դուր չեն գալիս, որովհետև նրանցում տխրութեան, ցաւի նշոյլ չը կայ. իսկ արևելցին կարծես առանց սևի ու վշտի գեղարուեստ հասկա-

նալ չէ կարող: Պատահում են նաև բնորոշ գրեթատով տուրիստներ, անգլիացի կամ գերմանացի օրիորդներ ու կանայք, որոնք խրմբերով գնում են վերելք կատարելու դէպի շվեյցարական լեռների ամպամած կատարները:

Եւ ես դիտում եմ այդ բոլորը, դիտում և մտածում մեր հէքիաթների մեծ ճանապարհների և անծայր արկածների մասին: Այս բոլորն անշուշտ հետաքրքիր է, բայց այսօր ճանապարհի վրայ մի դէպք տեղի ունեցաւ, որ հետաքրքիր լինելուց զատ, նաև խիստ բնորոշ է այս երկրի բարքերի ու բարոյական հասկացողութիւնների տեսակէտից:

Ես իմ լուսամուտից տեսայ, թէ ինչպէս մի գիւղացի ճանապարհով քշում էր մի եգ, կամ աւելի ճիշտ՝ քաշում էր՝ մի հաստ չուան պարանոցից կապած: Հնազանդ եզը հետևում էր տիրոջը առանց գլուխն այս կամ այն կողմը դարձնելու: Գիւղացին հասաւ ճանապարհի վրայ շինուած մի տան և կանգ առաւ մտածողութեան մէջ: Նա նայեց այս ու այն կողմը, երևում էր մի տեղ է փնտռում եզը կապելու համար դրսում: Նրա մտահոգութիւնն ինձ անհասկանալի էր, որովհետև հէնց իր աչքի առաջ ճանապարհի եզրին ծառեր

կային, որոնցից շատ հեշտ էր կապել եզը, ուր մնաց, որ կարելի էր կենդանին ազատ թողնել՝ առաջի խոտերն արածելու, մինչև որ տէրը կը գար. բայց տէրը երևի ուրիշ կերպ էր մտածում, նա յետ գնաց դէպի այն կամուրջը՝ որով անցել էր քիչ առաջ. եզը քամոցի շրի մէջ և սլարանը պնդացրեց կամուրջի փայտերին ու յետ եկաւ, ներս մտաւ առաջի տունը: Քիչ յետոյ նա դուրս եկաւ, արձակեց իր եզը, պարանը ձեռք առաւ և շարունակեց ճանապարհը: Ես ցած իջայ և նրան ընկերացայ:

— Բարև պարոն...

— Բարև պարոն:

— Թոյլ կը տայի՞ք արդեօք մի փոքր տեղ ձեզ ընկերանալ:

— Հաճութեամբ, եղաւ պատասխանը: Մենք քայլեցինք միասին դէպի գիւղից դուրս:

— Ես ձեզ մի քանի հարցեր ունեմ տալու և յոյս ունեմ չէք զլանայ ինձ պատասխանել:

— Խնդրեմ, ես պատրաստ եմ կատարել ձեր ցանկութիւնը, անշուշտ օտարական էք:

— Այո, օտարական եմ, ես ձեզ տեսայ հեռուից և նախ կ'ուզէի իմանալ, թէ ինչո՞ւ

համար այս կենդանուն չէք թողնում ազատ գնալ ճանապարհով և կաշկանդել էք պարանով, ինձ թւում է թէ նա խողաղ է և բնաւ փախչելու նպատակ չունի:

Գիւղացին ժպտաց.

— Այդ այդպէս է, սիրելիս, բայց մեր երկրում, օրէնքով յունիս, յուլիս, օգոստոս ամիսներում անասուններին ազատ չէ կարելի թողնել, որպէս զի չը տրորեն հարեւանի խոտերը. ընդհանուր խոտունձից յետոյ միայն մեր գոմերից հանում ենք անասուններին և արձակ թողնում դաշտերում. իսկ մինչև այդ՝ նրանք բոլորն էլ փակուած են գոմերում և կերակրւում են հնձած խոտով: Եզը՝ որ տեսնում էք, ես գնեցի այսօր հարևան գիւղից. նա փախչող չէ, բայց էլի անասուն է, կարող է ճանապարհի եզրից գնալիս այս ու այն կողմից կանաչին փնաս տալ, իսկ կանաչը իմը չէ, ուրիշին է, որ աշխատել է, հասցրել, որ հաւաքի իր անասունների համար: Դէ որ ամեն մի մարդ, որ եզ է քշում մեծ ճանապարհով, թոյլ տայ, որ իր անասունները մի փոքր տրորեն մօտի արտերը և խոտատեղերը, փնասն ահազին կը լինի, և շատերը կը թշուառանան, ահա թէ ինչու ես իմ եզը քաշում եմ պարանը կապած պարանոցից. այսպէս լաւ է,

թէ իմ խիղճը հանգիստ է և թէ այս արտերի տէրերը կարող են հանգիստ լինել:

— Այժմ մի ուրիշ հարց, ասացէք խնդրեմ, ինչո՞ւ քիչ առաջ ձեր եզը քշեցիք առուի մէջ մտցրիք և կապեցիք կամրջից:

— Պատասխանս համարեա նոյնն է, ես չը գիտէի ո՞ւր թողնել կենդանուն, երբ ես ստիպուած էի մի առ ժամանակ հեռանալ նրանից, ճանապարհի ծառին կապել չէի կարող, որովհետև կ'ուտէր ծառի տակի կանաչը. ազատ ձգել նոյնպէս անհնարին էր, չորս կողմս ուրիշի չը հնձած խոտատեղեր էին: Միակ ելքն այն էր, ինչ որ արեցի:

— Գուք գուցէ զարմանում էք, շարունակեց շվէյցարացին, որ մենք այս աստիճան ծայրահեղ հոգատարութիւն ունինք դէպի մեր խոտատեղերն ու արօտատեղերը, բայց պիտի գիտենաք, որ մենք նրանցից բացի ուրիշ ոչինչ չունինք, մեր աղքատ բնութիւնը միայն խոտ է տալիս մեզ, և խոտը մեզ համար ամեն ինչ է. նա և՛ մեր ցորենն է, և՛ մեր գարին և մեր այգին, նրանով ենք պահում մեր անասունները, հետեապէս նա է մեր գլխաւոր արդիւնաբերութեան, այսինքն կաթնեղէնի աղբիւրը:

Ես լսում էի ծայրայեղ ուշադրութեամբ, ինձ համար այս փոքրիկ խօսակցութիւնը,

այս փոքրիկ դիպուկածը շատ բան էր պար-  
զուում:

— Մեր երկիրը, ինչպէս տեսնում էք,  
աղքատ է, շարունակեց խօսակիցս, ինչպէս  
է ձերը:

— Օ, մերը շատ հարուստ է, բնութիւ-  
նը մեզ տալիս է ամեն ինչ և այն քիչ աշ-  
խատանքով, տաք, հարաւային երկիր է:

— Բաղդաւորներ, ասաց նա. ես նայե-  
ցի երեսին և չը կարողացայ ժպտաւ ծած-  
կել: Ինքն էլ չը գիտէր, այս միամիտ շվէյ-  
ցարացին, թէ ինչ կծու հեգնութիւն կայ  
այս մի հատիկ բառի մէջ, բաղդաւորներ...

Գիւղից շատ էինք հեռացել, ես սեղ-  
մեցի խօսակցիս ձեռքը և յետ դարձայ դէ-  
պի գիւղ, նոյն ճանապարհով:

Ես քայլում էի հանդարտութեամբ, դի-  
տելով կանաչադարձ շրջակայքը, ճանապար-  
հը և նրա երկու կողմին շարուած պտղա-  
տու ծառերը: Ես տեսնում էի, թէ ինչպէս  
անմիջապէս ճանապարհի եզրին երկու կող-  
մից բարձրանում է խոտը պատի պէս, ու-  
րովհետև ոչ մի կենդանու ոտք չէ դիպել:  
Յիշում ես սիրելիս, մեր արտերի մարզերը,  
մանաւանդ այն արտերի, որոնք մեծ ճա-  
նապարհների եզրերին են գտնուում. մարդ  
ասելով մեզանում հասկանում են իւրաքան-

չիւր արտից մի բաւական մեծ տարածու-  
թիւն, որ «կարելի է» արորել, ուտացնել,  
աւերել. երանի թէ միայն մարդով բաւա-  
կանանան. յաճախ նրա անունով հասնում  
են կենտրոնին: Ո՞վ է մտածում, թէ որքան  
աշխատանք, որքան քրտինք է արորում  
յանցաւոր ոտների տակ:

Անցնում եմ այս ճանապարհով, դիտե-  
լով նաև պտուղներով ծանրաբեռնուած ծա-  
ռերը հեռաւոր դաշտերում: Այս ծառերը  
տնկուած են իւրաքանչիւր արտի կամ խո-  
տատեղի մօտ և ի հարկէ պատկանում են  
հողատիրոջը: Ինչ ասել կուզէ, որ նրանց  
վրա հսկող պահապան չը կայ, պտուղները  
մեծանում, հասնում են, ծանրաբեռնուած  
ճիւղերը կախոււմ են ճանապարհի վրայ, օ-  
րօրում են անցորդների գլխին կամ քսում  
են նրանց ուսին, ասես ուշադրութիւն զրա-  
ւելու համար, բայց և այնպէս ոչ ոք, ոչ ոք  
ձեռք չի բարձրացնում քաղելու թէկուզ մի  
հատ պտուղ, կտրելու մի փոքրիկ ոտ, ու-  
րովհետև դրանք ուրիշի սեփականութիւն  
են, ուրիշի քրտինքի արդիւնք, որ խորին  
յարգանքի առարկայ է:

Ճանապարհին ես տեսնում եմ սալորի,  
կեռասի, խնձորի բազմաթիւ ծառեր, նրան-  
ցից շատերի տակ թափթփած են հասած

պատուհները, անցորդները տեսնում են, բայց ոչ ոք չի կռանում մի հատ վերցնելու, մինչև տէրը կը դայ և կը հաւաքի:

Եւ ինչ որ ուշագրաւ է, այստեղ դաշտերի պահապաններ չը կան. դրսում, ինչպէս և գիւղերում, ամեն ինչ թողուած է հասարակաց խնամքին: Զիանը և գողութիւնը վաղուց անցել են հէքիաթների կարգը: Արևաշատ տեղերում պատահում են խաղողի այգիներ, որոնցից և ոչ մէկը ցանկապատ չունի: Պտուղը հասնում է, կախուում ճանապարհի վրայ, դեղին ողկոյգները ախորժելի տեսքով գրաւում են անցորդների հայեացքը և սակայն ոչ ոք չի մօտենում, ոչ մի ձեռք չի մեկնում, չը նայելով որ հսկող աչք չը կայ: Եւ աւելի հետաքրքիրն այն է, որ հասակաւորներից ոչ պակաս ուշագիր են դէպի ուրիշի սեփականութիւնը նաև փոքրիկ երեխաները: Այսպէս իմ լուսամուտից երևում է հարևանի բակը, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ պտղատու ծառերի մի պարտէզ փռուած տան առաջ: Բակ ասելով մեր երկրում հասկանում ենք սովորաբար մի փոքրիկ տարածութիւն. աղբի մէջ կորած և երեք-չորս արշին բարձր պատով շրջապատուած: Շատ անգամ այդքանով էլ չը բաւականացած, մեզանում

պատերի վրայ շարում են ապակու կտորտանք, փուշ, որ բարձրանալն անհնարին լինի: Այստեղ բակն ինչպէս ասացի մի ծառագարդ պարտէզ է, չորս կողմից բաց, առանց պատերի, առանց պատուարի կամ խրամատի: Այսպէս է նաև մեր հարևանի բակը, խնձորենիները պտուղներով ծանրաբեռնուած՝ կախկիսուել են հէնց ճանապարհի վրայ, որ անցնում է այդ տան առաջից: Օրական երկու անգամ ես տեսնում եմ դպրոց յաճախող հինգից տասն տարեկան երեխաների խմբեր, որոնք կանչուածով անցնում են այդ ծառերի տակից. և ինչ, մինչև անգամ վերև չեն նայում: Այդ փոքրիկներից և ոչ մէկը մի հատիկ քար չի ձգում դէպի ծառերը: Սա ինձ ապշեցնում է: Նրանք վազվզում են ճանապարհով, քաշքշում են իրար և ոչ մէկը չի նետում դէպի արձակ դաշտը, որպէսզի չը տրտեն խոտերը: Բաւական է, որ նրանցից մէկն ու մէկը մի քիչ դուրս գայ ճանապարհից և ահա մի քանիսը մի անգամից կանչում են, «c'est défendu», այդ արգելուած է:

Շվէյցարական դաշտերով անցնելիս մարդ երբեմն տեսնում է այս ու այն տեղ տնկուած փայտեայ փոքրիկ սիւներ և վրան գրուած մեծ տառերով՝ «այս կածանը մաս-

նաւոր է և ոչ հասարակական» կամ թէ «սա մասնաւոր սեփականութիւն է և ներս մտնելն արգելուած» է. կամ «հաշտարար դատաւորն արգելել է այստեղ մտնել»: Եւ այս փոքրիկ յայտարարութիւնները միանգամայն բաւական են, որ անցորդները յարգեն սրա կամ նրա սեփականութիւնը:

Դու յիշում ես, սիրելիս, մեր դպրոցի ճանապարհը. մենք գնում էինք հարևան գիւղը սովորելու. բացի իսկական ճանապարհը, որ բաւական երկար էր, կար մի այլը, որ թէև շատ կարճ էր, բայց անցնում էր մի շարք արտերի միջից: Եւ ամենայն տարի աշնանից հասարակութեան և այդ արտերի տէրերի մէջ սկսում էր մի անվերջ պայքար: Հասարակութիւնն իր երթեւեկութեան համար ընտրում էր կարճ տարածութիւնը բոլորովին անփոյթ, թէ այդպիսով տրորում է իր հարևանի արտերը, ոչնչացնում է նրա երեխաների ապրուստը: Արտերի տէրերը դիմում էին իրանց կարծիքով մի շատ արմատական միջոցի, իրանց բարիքը փրկելու համար: Նրանք երթեւեկութեան հաւանական տեղի առաջ փորում էին մի լայն, երկար ու խոր խրամատ, նոյն բանն էին անում արտի միւս ծայրում, որտեղից պէտք է դուրս գային անցորդները:

Նրանք կրկնակի նպատակ ունէին, նախ արգելել անցուդարձը, իսկ ով ըմբոստ է, մտածում էին նրանք, թող ընկնի, ոտը կտորուի, որպէս պատիժ: Հասարակութիւնը սակայն այնքան էլ յիմար չէր, նա պտոյտ էր գործում արտի մէջ, աւելի լայն շրջաններով էր տրորում, նոր անցք, նոր ճանապարհ հարթում. փորում էին նորանոր խրամատներ, բացում էին դարձեալ նոր շաւիղներ, մրցութիւնը շարունակում էր մինչև մայիս, երբ վերջնական յաղթանակը մնում էր հասարակութեանը, որովհետև տէրերը դադարում էին բողոքելուց, քանի որ էլ ոչինչ չէր օգնի. տրորուած տեղում էլ ոչինչ չէր բուսնի: Ես ու դու էլ ի հարկէ շատ ուրախ էինք հասարակութեան այդ յաղթանակով, որ խիստ կարճացնում էր մեր ճանապարհը: Ես լաւ յիշում եմ, մեր համարեա բոլոր գիւղերում նման երևոյթներ կան. վայ այն մարդուն, որի արտը կտրուկ ճանապարհի յարմարութիւն է ներկայացնում, նա անպատճառ ոտի տակ կ'երթայ, նա անպատճառ ճանապարհ կը դառնայ:

Ես յիշում եմ նաև մեր զաւառի ս. Լուսաւորիչ ուխտատեղին, որ գտնւում է Ա... գիւղի հանդերձի մէջ: Ուխտագնացութիւնը ամառն է կատարւում, երբ արտերն ու

առևոյսաները դեռ հնձուած չեն լինում: Ա...եցիք ուխտագնացութիւնից մի օր առաջ ստիպուած են լինում ջրել եկեղեցուն մօտիկ գանուող տափերը, որպէսզի ուխտաւորները տրորել չը կարողանան, թէ չէ ոչինչ չի փրկի: Հարբած ու զուարճացող ամբոխը աւերած է սփռում այն եկեղեցու շուրջը, ուր աղօթելու է եկել, առանց մըտածելու, որ այդպիսով իր ուխտագնացութիւնը մի կատարեալ յանցագործութիւն է: Զարմանալի է, ամենից աւելի տանջուած, ամենից աւելի տառապող ժողովուրդը այդպէս սիրում է թշուառութիւն տարածել իր շուրջը: Սա մի ուշագրաւ երևոյթ է:

Հասարակութիւնն անհատի դէմ, այստեղ է մեր երկրի շատ չարիքների հանգոյցը: Որբը, անգօրբը, այրին, խեղճը, մենակ մարդը, սրանք բոլորը մի մի գոհեր են այն հազար գլխանի հրէշին, որի անունն է հասարակութիւն: Ես հասկանում եմ թէ ինչո՞ւ մեր երկրում, ուր իշխում է հասարակութեան համարեա գազանային կամայականութիւնը, մարդիկ այնպէս ուզում են եղբայր, մերձաւոր, ազգուտակ, կամ ինչպէս իրանք են ասում «քեօմադ» ունենալ: Յիշում եմ, ինչպէս հայրս յաճախ կրկնում էր, թէ որ Աստուած էլ «անքօ-

մադ», առանց ախպէր լինի, խղճալի է: Որքան դառն ճշմարտութիւն կայ այս խօսքերի մէջ: Հասարակութիւնն անհատի դէմ է մեր երկրում, հասարակութիւնն անհատի համար է Շվէյցարիայում: Սա մի ուշագրաւ հակադրութիւն է. մեզանում ուրախանում են տեսնելով որ մի մարդ առաջինը տրորեց և անցաւ մէկի արտի միջից, որովհետեւ միւսները հետևում են նրան առանց վրդովելու. այստեղ, Շվէյցարիայում, եթէ ճարուէր էլ մի այնպիսի անողորմ մարդ, որ առանց խղճահարուելու տրորէր, անցնէր մէկի արտով, այնուամենայնիւ դա ընդհանուր զայրոյթ կը յարուցանէր և ոչ ոք նրան չէր հետևի: Հասարակական խիղճը մի արդար և զգաստ դատաւոր է այստեղ, որի վճիռներից ոչ ոք խուսափել չի կարող: Մեզանում նա քնած է:

Բարոյական գաղափարները, սիրելիս, ինչպէս և սեփականութեան վերաբերեալ հասկացողութիւնները յարաբերական են տեղին և ժամանակին: Շատ բան որ մի ժամանակ համարուել է ընդհանուրի սեփականութիւն, այժմ մասնաւոր է, ինչ որ մասնաւոր էր, դառնում է ընդհանուր: Ով գիտէ գուցէ և ոչ շատ հեռաւոր ապագան սեփականութեան իրաւունքի և առհասարակ

նրան կապուած բարոյական հասկացողութիւններէ շրջանում այնպիսի աւերած առաջ կը բերի, որ ներկայումս մենք երևակայել անգամ չենք կարողանում: Ինչ որ պարզ է, ինչ որ դուրս է ժամանակից և տարածութիւնից, դա մարդկային հոգուն յատուկ արդարութեան և արդարադատութեան զգացմունքն է, որին այս կամ այն հասարակութիւն ենթարկում է իր այս կամ այն բարոյական հասկացողութիւնը և նրա վճռին ականջ դնում: Իր շէմքից հեռացող հիւրին կողոպտող քիւրդը իր որոշ բարոյական օրէնքն ունի, որ համապատասխանում է իր արդարադատութեան զգացմունքին. նա չի էլ հասկանայ, եթէ փորձես նրան բացատրել իր վարմունքի գէշութիւնը: Այստեղ մեղադրանքը տեղ չունի, նրա գլուխը ամբողջապէս յեղաշրջել պէտք է հետեանքի հասնելու համար: Յունական մի հին երգ ասում է «Իմ հարստութիւնը՝ իմ տէգն է, իմ սուրը և իմ սիրուն վահանը, որ մարմնիս պատսպարանն է. սրանցով եմ ես վարում, հնձում և քամում իմ խաղողի որթերի զինին»: Սա էլ կատարեալ քրդական հասկացողութիւն է եղել յատուկ և բնորոշ հնազոյն ժամանակներին: Բայց նոյն յոյնը իր մտածողների, փիլիսոփաների, բանա-

ստեղծների շնորհիւ վերջ ի վերջոյ մշակեց այն քաղաքացիական առաքինութիւնները, որոնց վրայ մենք նոյն իսկ այսօր սքանչանում ենք: Այսպէս միշտ պատմութեան էվօլիւցիայի ընթացքում բարոյական հասկացողութիւնները փոփոխւում են անընդհատ, անխախտ և կայուն է միայն արդարադատութեան զգացմունքը, որը զարթեցնել, այսպէս ասած յղկել, կռկել է հարկաւոր:

Իսկապէս մեծագործ մարդ կը լինի նա, ով կարողանայ մեր ժողովրդի հասարակական խիղճը կրթել, զարգացնել, զգայուն դարձնել դէպի շրջապատող չարիքը: Մի միայն հասարակական ազնուացած խիղճը կարող է վերջ դնել տգէտ, խաւար ժողովուրդների գլխին ծանրացող չարիքին, որի խոշոր հիմունքներից մէկն է անհատի և հասարակութեան շահերի անհամաձայնութիւնը, այդ երկու Ֆակտօրների մշտական պայքարը:

Լոյս, լոյս մեր ժողովրդի հասարակական խղճի մութ խորշերը լուսաւորելու:

Յը գրութիւն.

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

## VII

Որևէ երկրի քաղաքակրթութեան աստիճանը շատ չափեր ունի, սիրելիս, բայց ըստ իս լաւագոյն չափը պոստային կանոնաւոր հաղորդակցութիւնն է: Այն բոլորից յետոյ, ինչ ես առիթ ունեցայ քեզ գրելու Շվէյցարիայի և մասնաւորապէս այս երկրի գիւղական կարգերի մասին, կարծում եմ, այլ ևս քեզ չեմ գարմացնի, եթէ ասեմ, որ պոստային կազմակերպութիւնն այստեղ օրինակելի է: Ո՛չ միայն շվէյցարական քաղաքներում, այլ հեռաւոր գիւղերում պոստային գործն այնպէս է կարգաւորուած, որ կարող է եւրոպական շատ քաղաքակիրթ երկրների համար օրինակելի համարուել: Շրջիւր Շվէյցարիայում որքան կամենաս, անցիր դէպի ժիւրա լեռնաշղթան, դարձիւր դէպի Սլպերը, ներս թաղուիր խուլ լեռների ձորերում, ապրիր թէկուզ հովիւները մեռաւոր խուղերում (chalet), զնն ամենահե-

ռաւոր գիւղերը, լեռնային լճերի ափերում թափառիր օրերով, օտար լինես, թէ տեղացի, այդ միևնոյն է, եթէ դու կամենաս, քո նամակները քեզ կը հետևեն քայլ առ քայլ ամեն տեղ: Այս հանգամանքը ինձ, արևելքի կարգերի դառնութիւնը ճաշակածիս՝ այնպէս է գրաւում այստեղ, որ ես մի առանձին հաճոյք եմ զգում այստեղի հեռաւոր գիւղերում ստանալ հայրենիքիցս եկած նամակները, որոնք շատ անգամ ամբողջապէս ծածկուած են լինում գրուած և ջնջուած հասցէներով, իսկական նշան, թէ նամակը շատ է թափառել, թէ բազմաթիւ թղթատարներ ձեռքէ ձեռք են անցրել՝ գտնելու տիրոջը, որը թափառում է շվէյցարական լեռներում ու գիւղերում:

Գիւղական պոստը Շվէյցարիայում, դա բոլոր օտարականների, տուրիստների հիացմունքի առարկան է եղել: Սպիտակ խճուղին գալարւում է կանաչ լեռնալանջի վրայով, իջնում է դէպի ձորակը, կորչում է խուլ անտառների մէջ, յայտնւում է լեռան կատարին, կրկին ծածկւում է ձորերի մէջ, և այդ ճանապարհով անցնում է երկձի կառքը հնչիւն գանգակներով: Նրա վրայ մի մարդ է նստած, մի հատիկ մարդ՝ կառապանը. կառուչուկէ գլխարկը գլխին և կապոյտ

մահուղէ բլիւզով, եթէ զով է, և սպիտակ քաթանէ շապկով, եթէ ամառ է. ահա գիւղական պոստը բերող կառքը: Նա շրջապատուած չէ ձիաւոր պահակներով, նոյն իսկ մի հասիկ մարդը վրան ուրիշ զէնք չ'ունի, բացի իր ձեռքի մտրակից, բայց այդ նրա փոյթը չէ, ճանապարհները բոլորովին ապահով են անգամ ուշ գիշերով, վատ եղանակներին: Փոքրիկ զանգակների ձայնը հնչում է լեռների և անտառների լուծեան մէջ, տարածում է հեռու ու հեռու, այդքանը բոլորովին բաւական է, որ ամենքն իմանան, թէ այդ մենաւոր կառքով անցնում է Շվէյցարիայի պատիւը. փոքրիկ Դաշնակցութեան մեծ հովանու տակ դա մի սրբութիւն է, և նրան զիպչելը ոճիրներից մեծագոյնն է: Եթէ հեռուից պոստի հովանին նրա զանգակների ձայնն է, մօտիկից էլ Դաշնակցութեան նշանը, այն փոքրիկ անշուք, կարմիր խաչն է, որ փայլում է կառքի կողքին որպէս նուիրական կնիք դրուած անհատների գաղտնիքի, կապոցների մէջ գտնուող նամակների և այլ ծանրոցների վրայ:

Օրուայ որոշ ժամերին այդ փոքրիկ սիրուն կառքը այն կարճահասակ ու շիկահեր մարդու հետ անցնում է մեծ ճանապարհով, կանգ է առնում մի քանի րոպէ

այս կամ այն գիւղում, տալիս է ինչոր կապոցներ, ընդունում է նորերը և կրկին շարժւում է առաջ: Մի պահ ընդհատուած գանգակների ձայնը կրկին հնչում է, և պոստային կառքը Դաշնակցութեան խաչի հովանու տակ գնում է գէպի այլ լեռներ, գէպի այլ գիւղեր: Նա գալիս է մեծ քաղաքներից գիւղական ազգաբնակչութեանը պատմելու, թէ ի՞նչ է կատարւում հեռաւոր անկիւններում, ի՞նչ են մտածում, գործում մարդիկ օտար աշխարհներում, ի՞նչ է անցնում դառնում շվէյցարական այլ կանտոններում, այլ գիւղերում, այլ լեռներում: Եւ մի անհրաժեշտ պահանջ է շվէյցարական գիւղացու համար իմանալ այս բոլորը, ահա թէ ինչու այնքան սիրելի է նրա համար կառքը իր զանգի քաղցր հնչիւններով, այնպէս ցանկալի հիւր է ամեն տեղ և՛ այն կառապանը, աշխարհի բանբերը:

Այս գիւղում, ուր ես ապրում եմ, սիրելիս, օրական երեք անգամ պոստ է ստացւում կանոնաւոր կերպով, օրական երեք անգամ պոստային ցրիչը, մի նիհար, երկարահասակ աղջիկ թղթերով լեցուն կաշուէ պարկը կախած ուսից՝ հանդարտ անցնում է գիւղի փողոցներով, մտնում է տները, բաժանում է լրագրերն ու նամակները, ա-

պա դուրս է գալիս գիւղից և գնում է դէպի հեռաւոր խրճիթները. դաշտերում իմ սովորական զբօսանքների ժամանակ ես յաճախ եմ հանդիպում այդ թղթատար աղջկան. թեթևաքայլ և լուրջ, իր կատարած գեղեցիկ դերի բոլոր գիտակցութեամբ նա անցնում է դաշտերով մեն մենակ, ծածկւում է այս ձորակում, այն բլրի ետևը, այս անտառակում, ուր մի հատիկ, մենաւոր խրճիթ կայ, որ ստանալու մի բան ունի: Նայում եմ այդ աղջկան, և պատկառանքով է լցւում սիրտս դէպի այդ նիհար, փխրուն արարածը, որ ներկայանում է իմ աչքին որպէս քաղաքակրթութեան կենդանի խորհրդանշան: Կաշուէ այն փոքրիկ պարկը, թղթերի այն կոյարը, դա ամբողջ աշխարհի մարդկութեան միտքն ու հոգին է: Համամարդկային մեծ ընտանիքի ցան ու ցրիւ անդամների մէջ այդ փոքրիկ աղջիկը ինձ ներկայանում է որպէս մի դիւթական օղակ, որ այս հեռաւոր ձորերում, լեռներում, անտառներում ապրողներին կապում է այնքան աշխարհների, այնքան ազգերի, այնքան ծանօթների և անծանօթների հետ: Այսպէս է միշտ, սիրելիս, աշխարհի բազմը անօրինոց հօր գործօնների կողքին շատ անգամ մի թոյլ, մի փոքրիկ արարած հրաշք-

ներ է գործում լուսթեան ու անյայտութեան մէջ. այս փոքրիկ աղջիկը, որ վազվզում է դաշտերում խորհրդաւոր կապոցն ուսին, ըստ իս մի այնպիսի երևոյթ է, որի բացատրութիւնը կրնդգրկէր քաղաքակրթութեան ամբողջութիւնը:

Եւ դա շատ հասկանալի է, սիրելիս, որպէսզի մի երկրում նրա գիւղական ազգաբնակչութեան մէջ անգամ պոստը դառնայ անխուսափելի անհրաժեշտութիւն, որպէսզի հնարաւոր դառնայ, որ մի այսպիսի աղջիկ մենակ ու անպաշտպան, ծրարները շալաւած վազվզի լեռներում, հարկաւոր է ոչ թէ տարիների՝ այլ դարերի քաղաքակրթութիւն անցած լինել: Ահա թէ ինչու ասում եմ, որ այդ երևոյթի բացատրութիւնը քաղաքակրթութեան ամբողջ պատմութիւնն է:

Իմ առաջին այցելութիւնը շվեյցարական գիւղական պոստատանը ես երբէք չեմ մոռանայ: Քիչ անգամ քաղաքակրթական այնպիսի հետաքրքիր, այնքան խոշոր երեւոյթ, որպէս պոստն է, կարող է այն աստիճան գեղջուկ, պարզ բնաւորութիւն ստանալ, ինչպէս այդ պատահել է Շվեյցարիայում: Բոլոր այն նոր պաշտօնական ձևակախութիւնները, որոնք խորթ են օրէնքների ոգուն և արդիւնք սոսկ տառակերութեան,

որոնք սակայն այնպէս խեղդում են ամեն մի կենդանի գործ՝ անվերջ, անօգուտ արգելքներ յարուցանելով կեանքի յառաջագիժող հոսանքի դէմ, այստեղ ջնջուած են իսպառ, և մնացել է ինքը գործը, նրա իրական պաշտամունքը հասարակական բարիքի և քաղաքակրթութեան համար:

Ասածիս իբրև անհերքելի ապացոյց ես կը նկարագրեմ տեսածս պոստատունը գիւղում: Փոքրիկ երեխան ինձ ցոյց է տալիս մի սովորական տուն, ինչպէս շինում են շվէյցարական գիւղական տները: Արտաքուստ ոչինչ չը կայ, որ վկայէ, թէ առաջգ մի հասարակական հաստատութիւն է, բացի պատին կպցրած կապոյտ պոստարկղից:

Բաց բակում մի փոքրիկ քարէ աւազան կայ, ուր ջուրը թափւում է մի ծորակից: Աւազանի մօտ արևկող արած թաւալում է մի սիրուն կատու: Նրանից քիչ հեռու մի տարիքաւոր ու յոգնած տեսքով կին լուացք է անում:

Ես մօտենում եմ և կանգ առնում մըտածելով վարանոտ:

— Պարոնը երևի պոստատունն է հարցնում, ասում է լուացք անող կինը ինձ նայելով:

— Այո, տիկին, բարի եղէք, խնդրեմ ինձ ցոյց տալ:

— Համեցէք, հետևեցէք ինձ:

Բարի կինը թողնում է լուացքը, ձեռներն շտապով սրբում է գոգնոցով և առաջ անցնում: Ես հետևում եմ, ներս ենք մըտնում մի փոքրիկ նրբանցք, այնտեղ լալիս է մի փոքրիկ երեխայ. իմ ուղեկցուհին նըրան հանգստացնում է և ձեռքից բռնած գնում՝ ինձ պատուիրելով սպասել. մի վայրկեան յետոյ իմ առջևի պատի վրայ բացւում է փոքրիկ դռնակը, և ես նայում եմ, պոստատունն է, և լուացարար կինը պոստի կառավարիչն է:

Նայում եմ, մի հատիկ փոքրիկ սենեակ է, մի սեղան, վրան մարկաներ, ծրարներ, թղթեր, նրա առաջ մի տաբուրետ, որի հետ խաղում է նոյն երեխան, մերթ ընդ մերթ նայելով մօրը, որ ընդունում է իմ նամակը: Մօտիկ շէնքից, որ մի դոմ է, լսում է կովի բառաչը, կինը մի վայրկեան կանգ է առնում և կանչում է մէկին, և ինքը դուրս գնում. մի դուռ է բացւում խորքում, յայտնւում է մի ջահիլ աղջիկ, նա իր բանը գիտէ, անխօս մօտենում է սեղանին, շարունակում է մօր սկսածը:

Զըրընգ, զըրընգ... զըսուժ կանգ է առնում պոստային կառքը, աղջիկն աճապարելով դուրս է գալիս ընդ առաջ. կառապանը, որ միևնոյն ժամանակ պոստային պաշտօնեան է, բարձրաձայն և ուրախ շեշտով բարևում է աղջկան, առողջութիւնն է հարցնում, մի քանի կօմսլիմենտներ ասում, երկուսով էլ բացսիրտ ծիծաղում են:

Ապա հանդարտութեամբ կատարւում է կապոցների փոխանակութիւնը, կառքը հեռանում է դէպի ուրիշ գիւղեր, իսկ աղջիկը սկսում է բանալ նոր կապոցները և կարգաւորել: Ես հետևում եմ այդ տեսարանին մի այնպիսի բաց հետաքրքրութեամբ և ուշադրութեամբ, որ քիչ է մնում զարմանք շարժի: Եւ ճշմարիտ՝ ես զարմացած եմ այս բոլորի վրայ, իսկ նրանք զարմանում են երևի իմ զարմանքի վրայ:

Սակայն պէտք չէ կարծել, թէ գիւղական բոլոր պոստատներն այս աստիճան անշուք են, աւելի շուտ սա մի բացառութիւն է, զուցէ և ժամանակաւոր. եթէ ես նկարագրեցի այն, միայն կարգերի գեղձուկ պարզութիւնը ցոյց տալու համար էր, և ոչ թէ շէնքի մասին գաղափար տալու: Ընդհակառակը, ամենալաւ շէնքերը շվէյցարական թէ քաղաքներում և թէ գիւղերում պոս-

տատներն են և կրթական հաստատութիւնները: Գիւղերում իւրաքանչիւր դպրոցական մեծ ու շքեղ շէնքի մի մասը յատկացւում է պոստին: Այսպիսով գիւղական ուսուցիչը և պոստային միակ պաշտօնեան մի գրաւիչ զուգադիպութեամբ աշխատում են միևնոյն շինութեան մէջ, միևնոյն յարկի տակ, որպէս թէ զոյգ ամուսնի միևնոյն քաղաքակրթական մեծ գործի:

Ուշագրաւ մի երևոյթ ևս. գիւղերում պոստային պաշտօնէութիւնն ասես մի որևէ ընտանիքի սեփականութիւն լինի: Եթէ ընտանիքի տէրը կարգուած պաշտօնեայ է, ապա միւս անդամները նոյն պաշտօնի նեղութիւնները նրա հետ կիսում են հաւասար չափով, նրա պարտքը կատարում են փոխառ փոխ: Երբեմն պոստատանը կարելի է տեսնել մի տղամարդ սպիտակ կտակէ շապկով, մի ժամ յետոյ ձեզ կընդունին նրա կիսը, յետոյ տղան, վերջիվերջոյ նաև աղջիկը, նայելով թէ ո՞վ է ազատ և ո՞վ է զբաղւած: Եւ այս բոլորը կատարւում է ամենաբնական եղանակով, ոչ ոքի համար սա տարօրինակ չէ, ոչ ոք այս հանգամանքը օրէնքի դէմ չէ համարում, տառակերութիւնն այնտեղ անծանօթ է:

Շատ անգամ էլ պոստ ստացողը, կար-

գաղբողը հայրը կամ մայրն է լինում, իսկ ցրիչը, հեռաւոր խրճիթներէ և ձորերէ նամակատարը նրանց փոքրիկ տղան կամ աղջիկն է: Ահա թէ ինչու պոստային գործն՝ ինչպէս ասացի իւրաքանչիւր գիւղում դառնում է մի հատ ընտանիքի սեփականութիւն:

Եւ զարմանալին այն է, որ այս աստիճանն նահապետական, պարզ կարգերի մէջ, ուր մեծաւորի հսկողութիւնն ու խստութիւնն չը կայ, ուր անաւոր վերաքննիչը մըրկի պէս չէ գալիս անցնում, այնուամենայնիւ ոչ մի անկարգութիւն, ոչ մի զեղծում, ոչ մի անկանոնութիւն ընդհանուր. գործավարութեան մէջ: Ոչ ոք առիթ չի ունենայ բողոքելու, թէ իր նամակը կորաւ, թէ լրագիրը ժամանակին չը հասաւ, ոչ ոք ստիպուած չի լինի գնալ պոստից իր լրագիրը կամ նամակն ստանալու: Շոգ թէ ցուրտ, անձրև թէ պարզ եղանակներին միևնոյն ցրիչը որոշ ժամերին իր կապոցը շալակած՝ անցնում է դռնէ դուռ, ձորից ձոր՝ դաշտից դաշտ, իր պարաքը կատարելու: Փոքրիկ Դաշնակցութեան ազնիւ պաշտօնեաներ, որոնք խաւարի ու լուսութեան մէջ հաւատարիմ իրանց երկրի մեծ աւանդութիւններին, ամենափոքր գործի մէջ անգամ իրանց հայ-

րենիքի փառքին են ծառայում անխարդախ ու շիտակ ընթացքով!

Չը մոռանամ աւելացնել, որ պոստի հետ միասին իւրաքանչիւր գիւղում հնարաւոր է նաև հեռագիր ստանալ: Իսկապէս շատ անգամ բուն հեռագրատունն չը կայ, բայց գիւղը միացած է մօտակայ երկաթուղային կայարանի հետ հեռախօսով, հեռագիրն ստացւում այդ կայարանում և այնտեղից հեռախօսով յայտնւում է գիւղական պոստին, և անա հեռագիրը պատրաստ է: Այս սիստեմով համարեա իւրաքանչիւր գիւղից կարելի է հեռագրել աշխարհի որ ծայրը կամենաք: Այսպէս է միայն փոքրիկ, աննշան գիւղերում, բայց մեծ գիւղերը ուղղակի հեռագրալարով են միացած մեծ կենտրոնների հետ:

Նամակիս սկզբում ես ասացի, որ ըստ իսբաղադակրթութեան լաւագոյն չափը պոստային կանոնաւոր հաղորդակցութիւնն է որևէ երկրում: Դրա ամենափայլուն ապացոյցը զարձեալ Շվէյցարիան է: Եթէ այս երկրի գիւղական ազգաբնակչութիւնը օրական երեք անգամ պոստ է ստանում, այդ այն պարզ պատճառով է, որ նա կարիք ունի, որ նրա համար դա զարձեւ է կենսական պահանջ:

Ջրի և պարտադիր տարրական ուսումը Շվեյցարիայի գիւղական ազգաբնակիւթեան մտաւոր աստիճանն արդէն այնքան է բարձրացրել, և ճաշակն այնպէս զարգացրել է, որ քաղաքակրթուած մարդուն յատուկ մի շարք մտաւոր պահանջներ՝ ինչպէս օրինակ ընթերցանութիւնն է՝ և նրան անբաժան լայն հետաքրքրութիւնը օտար աշխարհների կեանքով, նրա համար դարձել են կենսական խնդիրներ: Մի կողմ թողնելով ընդհանրապէս գործնական կեանքին վերաբերեալ անհրաժեշտ թղթակցութիւնները՝ շվեյցարական գիւղացին նաև լրագրի այնպիսի պահանջ ունի, որ ամենօրեայ պոսար դարձել է նրա համար անխուսափելի:

Երեկ պոստատուն մտայ իմանալու համար, թէ քանի՞ թերթ է ստացում այս փոքրիկ գիւղում, ուր հազիւ 20—30 ընտանիք են ապրում: Եւ ի՞նչ. կարո՞ղ ես երևակայել իմ զարմանքը, երբ պոստային պաշտօնեան ամենասովորական եղանակով ինձ հաղորդեց, որ Պիգուում ստացում են 52 օրինակ զանազան թերթեր և ամսագրեր: Ուրիշ խօսքով տուն չը կայ, որ մի՛ երբեմն նաև երկու թերթ չը ստանայ: Ես ճանաչում եմ դրանցից մի քանիսը: Ամենից տարածուածը, մասնաւորապէս Վ. Կանտո-

նում, Լօզանում հրատարակուող «Feuille d'avis»-ն է, մի սովորական «յայտարարութեան թերթ», ինչպէս այդ ցոյց է տալիս վերնագիրը, բայց այնքան բազմակողմանի բովանդակութեամբ, որ բոլորովին բաւական է մի գիւղական ազգաբնակիւթեան հետաքրքրութեանը բաւականութիւն տալու: Նա ամեն օր ունի քաղաքական հեռագրեր աշխարհի բոլոր ծայրերից, քաղաքական լուրեր, քաղուածքներ օտար թերթերից, շվեյցարական ներքին, տնտեսական, հասարակական, քաղաքական կեանքին վերաբերեալ յօդուածներ ու լուրեր, կառավարչական հարդարագրութիւններ, երկրի օրէնսդրութեան վերաբերեալ մանրամասն տեղեկութիւններ, թեթև ընթեռնելի վէպիկներ և բազմաթիւ ու բազմատեսակ յայտարարութիւններ: Ի պատիւ Շվեյցարիայի պէտք է ասել, որ այնպիսի թերթերի տուած բարոյական-մտաւոր անունդն էլ խիստ առողջ է, և շվեյցարական մամուլը ժողովրդի սիրտը և միտքը չէ թունաւորում, հասարակական քաղաքական խնդիրների վերաբերմամբ թիւրիմացութիւններ չէ տարածում, չէ ստում, չէ խաբում: Ահա թէ ինչու շվեյցարական գիւղացին ճշտիւ գիտէ այն ամենը, ինչ կատարւում է թէ իր երկրում և թէ իր երկրից դուրս աշ-

խարհի բոլոր ծայրերում, և գիտէ մանրամասնաբար, ապրում է ոչ միայն իր հայրենիքի, այլև համամարդկային հայրենիքի մեծ կեանքով, մեծ ցաւերով ու ուրախութիւններով: Ես երբէք չեմ կարող մոռանալ մի դէպք, որին ականատես եղայ շվէյցարական գիւղում և որ խորապէս յուզեց ինձ: Ամբողջ սկզբին հեռաւոր գիւղում յարմար պանսիօն փնտռելով՝ կանգ առայ մի գիւղացու տան առաջ: Տանտիկինը, որից տեղեկութիւններ էի խնդրում, հետաքրքրուեց իմ ազգութեամբ, ես մի փոքր շփոթուած մնացի՝ հաստատ համոզուած, որ այս գեղջիւղին այս խուլ լեռներում հայ անուներ լսած չը պիտի լինի, և հետևապէս հարկաւոր է երկար բարակ բացատրել, թէ ի՞նչ ասել է հայ. սա մի հանգամանք էր, որ շատ էլ չէր շոյում իմ ազգային հպարտութիւնը:

— Հայ եմ, ասացի վարանոտ եղանակով:

— Ի՞նչ էք ասում, հայ էք, հայ. խեղճ հայեր, դժբախտ ժողովուրդ, սուլթանը ձեզ ինչպէս կոտորեց, ախ, Տէր Աստուած, դու ինչո՞ւ թոյլ տուիր, խեղճ հայեր... Պարզուեց, որ նա հայոց հարցի վերջին տարիների ամբողջ պատմութիւնը գիտէ իր փոքրիկ թերթից, որ կարգում է երեկոները իր երեխաների հետ, և ինչ ասել կ'ուզի, փոք-

րիկ երեխաներն էլ գիտեն շատ բան այն քրիստոնեայ դժբախտ ժողովրդի մասին, որին թիւրքերը կոտորում են հեռաւոր արեւելքում: Այս երևոյթը մենակ Վօ կանտօնում չէ, այլ ամբողջ Շվէյցարիայում նոյնն է, ամենքը կարդացել են, ամենքը գիտեն, և նրանց շիտակ, մաքուր մամուլը ոչինչ չէ թազցրել, ոչինչ չէ կեղծել: Թիւրքական սուլիմներն այստեղ ոչինչ չէին կարող անել, սրանց բարոյական մաքրութիւնը մի ժայռ է, որի վրայ կը խորտակուի գայթակղութեան ամեն մի նողկալի փորձ: Ակամայ միտս ընկաւ Փրանսիական Le petit journal-ը, որը նոյնպէս մի շատ տարածուած պատկերազարդ թերթ է ամբողջ Փրանսիայում: Հայկական սարսափների ժամանակ այս թերթի «ազնիւ» խմբագիրներն իրանց ընթերցողներին ուղարկեցին պատկերներ, որոնք ցոյց էին տալիս, թէ ինչպէս հայերը աւերում են թիւրքական մղկիթները և կոտորում են «խեղճ» թիւրքերին: Ապականուած մամուլի վարիչները աշխարհի մեծագոյն ոճրագործներն են:

Տը գրութիւն.

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

## VIII

Համայնքը, սիրելիս, խորհուրդ ունի միայն այն ժամանակ, երբ նրա կեանքում իրագործւում են փոխադարձ օժանդակութեան, գործակցութեան անհրաժեշտ սկզբբունքները: Եթէ համայնքի մէջ էլ մարդիկ անտեսապէս պիտի ապրեն իրանց ուրոյն անհատական կեանքով, այն ժամանակ գիւղը կորցնում է իր խորհուրդը և դառնում է մարդկանց մի աւելորդ համախմբում: Մեզանում էլ կայ համայնական կեանք իր բնորոշ արտայայտութիւններով, որ «հարեւանութիւն» է կոչւում. բայց ամեն ինչ այնտեղ այն աստիճան նախնական է, այնպէս քարացած միւսնոյն տեղում, որ արժէ մի քանի նմուշ բերել շվեյցարական գիւղական կեանքից՝ ցոյց տալու համար, թէ ինչո՞վ և ինչպէս պիտի արտայայտուի հաւաքական գործունէութիւնը: Այդ նպատակով ես այս անգամ ընտրում եմ երկու հաստատութիւն, գիւղական կաթնատունը և

փուռը, որոնք երկուսն էլ անագին նշանակութիւն ունեն գիւղական ազգաբնակչութեան համար, և որոնց հոսանք անգամ չը կայ մեր կողմերում:

Շվեյցարական որևէ գիւղի մօտենալիս՝ ճանապարհի վրայ կարելի է տեսնել մի փոքրիկ տնակ: Հեռուից կարելի է կարծել, թէ դա մի անբնակ տուն է, երեսի վրայ ձգուած, որովհետև դուռը միշտ փակ է, իսկ շուրջը ոչ ոք չէ երևում: Սակայն ամեն առաւօտ և երեկոյ այդ տնակի շուրջն սկսւում է մի առանձին կեանք ու կենդանութիւն: Դուռը բացւում է, ներսում մարդիկ են երևում, և միւս կողմից բազմաթիւ գիւղական սայլակներ են մօտենում, կանգ առնում այդ շէնքի առաջ, վար բերում բեռը և հեռանում: Սայլակները բոլորն էլ բարձուած են թիթեղեայ մեծ ու փոքր ամաններով, քաշում է մի եզ, մի կով կամ մի ձի, իսկ վարիչն է մի աղջիկ կամ մի փոքրիկ տղայ: Ահա այդ փոքրիկ տնակն է կաթնատունը կամ ինչպէս իրանք են ասում laiterie-ն. սայլակներն ամեն առաւօտ թիթեղեայ ամաններով կաթ են բերում այնտեղ և վերադառնում:

Ի՞նչպէս է կազմակերպուած այդ հետաքրքիր գործը:

Յայտնի է, որ շվեյցարական գիւղացու գլխաւոր պարապմունքը խաշնարածութիւնն է, և արտահանելու ամենայայտնի ապրանքը՝ իւղն ու պանիրը: Արանց վրայ է հաստատուած շվեյցարական գիւղական ազգաբնակիւթեան գրեթէ ամբողջ տնտեսութիւնը: Արտահանուած իւղ ու պանիրի փոխարէն շվեյցարացին կարողանում է ստանալ օտար երկրներից հաց և այլ անհրաժեշտ պիտոյքներ: Հետեապէս կաթը նրա համար ամեն ինչ է, և պարզ է, որ նա ստիպուած է առանձին ուշք դարձնել իր ապրուստի այս աղբիւրի վրայ և կանոնաւորել նրա վաճառքը: Այստեղից է ծագում առել հասարակական կաթնատների գաղափարը:

Իւրաքանչիւր տարի համախմբուած գիւղացիները հրապարակական աճուրդի են հանում կաթի գինը մի տարուայ ընթացքում: Գինը նշանակուում է 12—15 սանտիմ իւրաքանչիւր լիտրին: Գիւղացիներից նա՛ որի վրայ մնում է աճուրդը, յանձն է առնում ընդունել սահմանած գնով կաթի բոլոր այն քանակութիւնը, որ գիւղը կարող է արտադրել մի տարուայ ընթացքում: Իսկ գիւղը իր կողմից յանձն է առնում ստացուած բոլոր կաթը միմիայն կապալառուին

տալ և ուրիշ ոչ ոքի: Կապալառուն իրաւունք է ստանում նաև ձրիապէս օգտուել այն հասարակական շէնքից, որի մասին գրքեցի քիչ առաջ: Եւ այնուհետև ամբողջ տարուայ ընթացքում իւրաքանչիւր գիւղացի իր կովերից ստացած կաթը իր սայլակով տանում է և յանձնում կապալառուին և նրանից վերցնում ստացագիր: Տարուայ վերջում հաշիւները կարգի են գցում, և ամեն մէկին ստանում է իր տուած կաթի գինը, մի կլորիկ գումար:

Կապալառուն կատարեալ տէր է կաթնատուներ բերուած կաթի և նա է, որ պատրաստում է կարագ, իւղ և շվեյցարական զանազան տեսակի պանիրներ, այդ ձեռնարկութիւնից առաջացած օգուտը կամ վասաբ հաւասարապէս նրան են պատկանում:

Ինչպէս տեսնում ես, սիրելիս, կաթնատները շատ պարզ են և ըստ երևոյթին առանձին աչքի ընկնող երևոյթ չեն հանդիսանում: Բայց երբ մարդ մօտիկից է նայում հարցին, այն ժամանակ ակներև է դառնում այս հաստատութիւնների բոլոր օգտակարութիւնը: Նախ՝ ով ծանօթ է գիւղական կեանքին, նա անշուշտ լաւ գիտէ, թէ որքան կարևոր, կենսական նիւթեր փրչանում են, կամ չնչին գնով վաճառուում

վաշխառուներին՝ արտահանութեան դժուարութիւններին պատճառով: Ի՞նչ անի, ի՞նչպէս հաւաքի գիւղացին իր կաթը, եթէ հնարչունենայ անմիջապէս կաթնատուն տանել և դրամի վերածել:

Այս դէպքում նա չէ էլ շահագործւում, որովհետև անհատները չեն՝ որ սահմանել են կաթի գինը, այլ ամբողջ համայնքը, որի իւրաքանչիւր անդամը համարեա հաւասար չափով շահագրգռուած է այդ հարցում, վերաբերւում է գիտակցօրէն, հասկանում է իր արածի դրական և բացասական կողմերը: Ոչ ոք չէ շահագործւում, մասնաւոր անհատների ունեցած կաթը ազատուում է թթուելու, թափուելու վտանգից, և միևնոյն ժամանակ համայնքի մի անդամ՝ կապալառուն որոշ չափով շահուում է. ասում եմ «որոշ չափով», որովհետև համայնքը երբէք թոյլ չի տայ, որ նա՝ այդ կապալառուն կամ կապալառուները դառնան տգրուկներ և ծծեն ժողովրդի կենսական բոլոր հիւթերը:

Այս առթիւ ի՞նչպէս չը յիշեմ մեր երկրի «բամբակ առնողներին և բամբակի փող բաժանողներին»: Դա մի գործ է, որ ամբողջապէս հաստատուած է նենգութեան, խաբէութեան, կեղծիքի, անամօթ ստի վրայ: Ո՞վ է սահմանում բամբակի գինը, անշուշտ

անհատներ, որոնք իբր թէ յարմարուում են շուկայի գներին քաղաքատնտեսութեան յայտնի օրէնքների համաձայն, բայց իրօք իրանց քէֆին աւելացնում կամ պակսեցնում են: Իսկ թէ ինչեր են կատարուում այն հասարակական կշեռքի մօտ, ուր խեղճ գիւղացին տանում է իր քրտնքի արգիւնքը, այդ արդէն դու ինձանից լաւ գիտես:

Ինչ վերաբերում է «բամբակի փող բաժանողներին», որոնք այնպէս շարաշար կերպով օգտուում են գիւղացու նեղ վիճակից՝ «Նրի գնի» առնելով նրա ստանալիք բամբակը, դրանք տիպեր են, որոնց երբ էլ դատարան քաշ տաս, վաղաժամ չի լինի: Գարնանը՝ երբ գիւղացին նոր սերմ է գցել, նրան առաջարկում են վաճառել իր աշնան ստանալիքը: Գիւղացին շատ լաւ իմանալով՝ որ կողոպտուում է, ընդունում է առաջարկուած պայմանները, որովհետև հարկ պէտք է վճարել, պարտք պէտք է տալ, երեխաներին հաց պէտք է հայթհայթել: Եւ միայն բամբակը չէ՝ որի արգիւնքից այսպիսով զրկւում է, նրա քրտնքի բոլոր պտուղները խլւում են ամենաանխիղճ ձևով, որովհետև ինքը տգէտ է և անտէր-անպաշտպան:

Շվէյցարիայում, սիրելիս, իւրաքանչիւր գիւղացի դրուած է իր համայնքի

պաշտպանութեան ներքոյ, նրան ոչ կողոպտել և ոչ խաբել կարելի է: Մեզանում իւրաքանչիւր գիւղացի պարագիտների, անամօթ խաբեբանների համար մի պատրաստի որս է, արդարացնելով՝ «դառն դադես, դատարկ նստես» յայանի առածը, մի անէծք՝ որ ամբողջ դարեր ծանրանում է մեր դժբաղդ ժողովրդի ճակատին:

Կաթնատներից բացի երկրորդ հետաքրքիր հաստատութիւնը գիւղում հասարակական փուռն է: Շվէյցարական գիւղացին իր տանը հաց չէ թխում, ամեն մի գիւղում կայ մէկ երկու փուռ, որտեղից կարելի է կամ ամենօրեայ հացը գնել շատ բարեխիղճ գնով, կամ սեփական ալիւրը յանձնել թխելու որոշ վարձով: Այսպիսով նախ՝ ահագին խնայողութիւն է արւում վառելիքի մէջ, և երկրորդ՝ տանտիկինները ազատուած են հաց թխելու հետ կապուած բազմաթիւ դժուարութիւններից:

Ինչքան խելացի, ինչքան օգտակար բան կը լինէր, եթէ կարելի լինէր հասարակական փուռեր հաստատել նաև մեր գիւղերում, և առհասարակ ազատել մեր գեղջկուհիներին թոնիրներում հաց թխելու սպանիչ սովորութիւնից: —

Շվէյցարական գիւղի նկարագրութիւնը տալով անհեթեթութիւն կը լինի սպասել

կամ պահանջել, որ մեր երկրի գիւղերը վերակազմուեն ըստ շվէյցարականի: Այսպիսի հետևանքի հասել է Շվէյցարիան միմիայն շնորհիւ այն հանգամանքի, որ ամբողջ դարերի քաղաքակրթութիւն ունի իր թիկունքին: Առհասարակ քաղաքակրթութիւնը յանկարծակի չէ բանում սուսկի պէս: Իմ ցանկութիւնն է միայն շեշտել որոշ առաջնորդող սկզբունքների վրայ, որոնց իբրև հիմունք ընդունելով՝ հնարաւոր է մեր երկրի ներկայ կարգերում և պայմաններում մի համեմատական բարիք առաջ բերել: Նայում եմ շուրջս այստեղ, գիտում եմ, ապա մտաբերում եմ մեր երկրի գիւղական կեանքը ու նկատում եմ, որ մի շարք բաներ կարելի է իրագործել և՛ մեզանում:

Այսպէս աշխատանքի բաժանումը և առհասարակ պարապմունքների մասնաւորացումը, որ կեանքի յառաջադիմութեան համար այնքան անհրաժեշտ գործօն է հանդիսացել ամբողջ պատմութեան ընթացքում, մեր գիւղերում տակաւին լաւ չէ ըմբռնւած:

Ուրիշ անգամ ես քեզ առիթ եմ ունեցել գրելու, սիրելիս, որ շվէյցարական բնութիւնը աղքատ է. աւելացնեմ, որ մարդն այստեղ կարողանում է գլուխ թափել անդուլ, յամառ աշխատանքով: Սակայն աշխա-

տանքը, որքան և նա մեծ լինի, անկարող պիտի լինէր այստեղ թէկուզ համեմատական բարեկեցութիւն առաջ բերել, եթէ դրուած չը լինէր խելացի հիմունքների վրայ և եթէ չը տարուէր այնպիսի եղանակով, որ համապատասխանում է այս երկրի կլիմայական, հողային և մի շարք այլ առաջնակարգ նշանակութիւն ունեցող պայմաններին: Աշխատանքի ծանրութիւնը կամ մեծութիւնը անպատճառ յարաբերական չէ նրա արդիւնքին. դրան ապացոյց՝ մեր գիւղացիների աշխատանքը, որ հաւասար է ծանրագոյն տառապանքի և որ չէ կարողանում նրանց համար թէկուզ համեմատական բարեկեցութիւն ստեղծել: Շվէյցարական աղքատ բնութեան մէջ գիւղացին աւելի բարեկեցիկ է, քան մեր հարուստ բնութեան մէջ մեր գիւղացին: Ինչո՞ւ: Սա մի երևոյթ է, որի պատճառները կարծում եմ՝ շատ հետաքրքիր կը լինեն և քեզ համար, ուստի թոյլ տուր ինձ այսօր համառօտակի ծանրանալ այս հարցի վրայ:

Նախ ասեմ, որ այս երկրի հողագործութեան համար վաղուց անցել է՝ եթէ կարելի է այսպէս ասել՝ մշակութեան *սարածական շրջանը* (culture extensive), երբ գիւղացին կարող էր ցանել՝ որքան կամենայ՝

հողերի առատութեան պատճառով, և վրայ է հասել ինտենսիւ շրջանը (culture intensive), երբ նա ստիպուած է միևնոյն կտոր հողի վրայ թափել իր ջանքը ստանալու համար դարձեալ այնքան, որքան նախընթաց՝ հողի առատութեան շրջանում: Շվէյցարիայի քաղաքակրթութիւնը բազմաթիւ միջոցներ է տուել շվէյցարացուն ինտենսիւ կուլտուրայի համար: Կատարելագործուած մեքենաներ, քիմիական պարարտացում, սերմերի, անասունների ընտրութիւն, բնական չարիքների դէմ կուելու հազար ու մի զօրավիզ հնարներ, այս բոլորն ունի Շվէյցարիան և դեռ ամենայն օր էլ գիտութիւնը գալիս է իր նորանոր յայտնութիւններով ասելու արդիւնաւէտ աշխատանքի գաղանիքը: Եւ ինչ որ ասում են նորագոյն արուեստն ու գիտութիւնը, այն անմիջապէս ո՛չ միայն յայտնի է դառնում այս երկրի գիւղացուն, այլ և լայն կերպով դրւում է նրա տրամադրութեան տակ, որից նա կարող է օգտուել՝ ինչպէս և որքան կամենայ:

Ճշմարիտ է՝ մեզանում հողի սակաւութիւնը դեռ այն չափերը չէ ընդունել, ինչ որ եւրոպական երկրներում, բայց անուրանալի է, որ մեր գիւղացին արդէն տառապում է անտեսական այդ անխուսափելի

ցաւից, որ նրա համար էլ հասել է ինտենսիւ կուլտուրայի շրջանը, բայց դրա հետ միասին նա ոչ մի յարմարութիւն, ոչ մի պատրաստութիւն չ'ունի նոր և աւելի ծանր պայմաններում վարելու հողի մշակութիւնը: Տգէտ, խեղճ, անծանօթ քաղաքակրթութեան բարիքներին, գիտութեան մատակարարած պայքարի զօրեղ միջոցներին, նա միայն ախ է քաշում այն «երանելի» լաւ ժամանակների մասին, երբ ինքը կարող էր տաս տասնհինգ կտոր հողերից կէսը ցանել և կէսը թողնել «խամ»-հանգստանալու՝ յաջորդ տարին ցանելու համար:

Բնութիւնը խորթ մայր չէ և ոչ մի ժողովրդի համար, նրա ծոցը հարուստ է կենսաստու հիւթով, միայն թէ այն դուրս քաշել, նրանից օգտուել է հարկաւոր: Որքան բնական են «երանելի» ժամանակները մի երկրի համար, նոյնքան էլ բնական պիտի լինեն և՛ այսպէս կոչուած «չար» ժամանակները՝ հողի առատութեան և սակաւութեան տեսակէտից: Ընդհակառակը՝ արտասուելի պիտի համարուի այն երկիրը, ուր հողը շարունակ առատ է, և մարդը երբէք պայքարի, մտածելու, ուրիշ խօսքով՝ յառաջադիմելու պահանջը չէ զգում:

Հողի սակաւութիւնը ամենաբուռն կեր-

պով զգացւում է հէնց այն երկրներում, որոնք քաղաքակրթական բարձր շրջանում են գտնուում:

Անխուսափելի է այս էվօլյուցիայի մէջ, որով ընթանում է հողի մշակութիւնը. դրժբաղդ է այն ժողովուրդը, որ յետ է մնում ժամանակից, որ պայքարի պէտք ունի՝ առանց միջոցներ ունենալու, աշխատանքի պէտք ունի՝ առանց եռանդի և արտասուելի լքումի մէջ վշվշում է ու գանգատուում:

Ահա մի պատճառ, սիրելիս, թէ ինչու մեր գիւղացին խեղճ է, աղքատ, տառապած: Այդ պատճառը եթէ ձևակերպենք, ամփոփենք, պիտի ասենք մօտաւորապէս հետևեալը. հողի սակաւութիւնը մեզանում իրապէս վրայ է հասել, պէտք է սկսուի մշակութեան ինտենսիւ, զօրեղացրած շրջանը, բայց մեր երկրում դրա համար անհրաժեշտ պայմանները պակասում են: Նոր ժամանակի, նոր հանգամանքների մէջ մեր գիւղացին շարունակում է իր բուստինան: Հետևանքը՝ տնտեսական քայքայումն:

Այս չէ բոլորը:

Պատմութեան նախնական շրջանի մարդու և ժամանակակից մարդու, ինչպէս և նախնական հասարակութեան և քաղաքակիրթ հասարակութեան մէջ խոշոր տարբե-

րութիւններէց մէկը, եթէ ոչ խոշորագոյնը՝ աշխատանքի բաժանումն է գիտութեան, արուեստների և առհասարակ անհատական և հասարակական կեանքի բոլոր շրջաններում և մասնաւորապէս արդիւնաբերութեան զանազան ձևերի մէջ: Քաղաքակիրթ կեանքին յատուկ այդ մասնաւորացումը, որ յառաջադիմութեան խոշոր գործօն է հանդիսացել, կատարուել է և՛ հողի մշակութեան մէջ: Շվէյցարիայում՝ օրինակ՝ բուսնում է ցորեն, գարի, հաճար, տեղ-տեղ խաղող, բազմաթիւ պտղատու ծառեր, բայց այստեղ գիւղացին այդ բոյսերի մշակութեամբ ամենևին չէ պարապում կամ շատ քիչ: Նա իր հողերի մեծամասնութիւնը յատկացրել է արօտատեղերի, որ փոխանակ ցանելու՝ թողնում է, որ իր եզներն ու կովերն արածեն, կամ հնձում է՝ նրանց ձմեռային պաշարը պատրաստելու: Այսպիսով նա չ՛ունի հացաբոյսեր, բայց դրանց փոխարէն առատ խոտ ունի իր անասունների համար:

Փաստն ըստ երևոյթին տարօրինակ է, փոխանակ իր և իր զաւակների պարէնի մասին մտածելու՝ շվէյցարացին ամենից առաջ հոգում է իր անասունների մասին: Մեր գիւղացին լսելով այս՝ անշուշտ կը զարմանայ և նա հասկանալ անգամ չի կարողա-

նալ, որ ցորեն արտադրելու ընդունակ հողը մարդիկ կամաւ դարձնեն արօտատեղի: Բացատրութիւնը շատ պարզ է: Շվէյցարացին իր հողի տուած արդիւնքի տեսակէտից արել է հետևեալ հասկանալի հաշիւը. հացահատիկի այն քանակութիւնը, որ նա կարող է ստանալ իր տափից, նա համեմատել է այն օգտի հետ, որ նոյն տափը կը տար, եթէ մնար իբրև արօտատեղի և ծառայէր սննդելու իր անասուններին: Այս պարզ համեմատութիւնը նրան համոզել է, որ երկրորդն աւելի ձեռնտու է, որ իր լաւ կերակրուած կովերը այնքան կաթ ու հորթ և եզներն այնքան միս կը տան, որ նրանով կարելի կը լինի պէտք եղած հացահատիկներ զնել և մի բան էլ յետ դցել:

Հացահատիկներ ձարելու դժուարութիւնից նա չէ սարսափում, որովհետև յարաբերութեան հեշտութիւնը թէ՛ իր երկրի զանազան մասերի և թէ՛ օտար երկրների հետ՝ նրան լայն հնարաւորութիւն են տալիս իր կարագն ու պանիրը փոխանակելու օտարի ցորենի հետ և այսպիսով շատ աւելի արդիւնք ստանալ, քան այն, որ նա կարող էր ստանալ իր հողերի այլ ձևի շահագործութիւնից:

Այս բոլորը գրելով՝ իմ նպատակը չէ Շվէյց. գիւղը

բնաւ ասել, թէ մեր գիւղացին էլ լաւ կանի, եթէ իր վարելահողերը վերածէ արօտատեղերի և միայն անասնապահութեամբ պարապէ. այն, ինչ հնարաւոր է եղել լեռնային Շվէյցարիայում, չէ կարող անպատճառ հնարաւոր լինել և մեր բնութեան մէջ: Ես ուզում եմ միայն ցոյց տալ, թէ ինչ հայեացքով պէտք է առաջնորդուել հողի մշակութեան մէջ, որ բոլորովին անհրաժեշտ չէ և նոյնիսկ փաստակար է անպատճառ ամեն բերք ցանել: Ի հարկէ՝ հաճելի է, երբ մարդ կարող է վստահ լինել, թէ իր ընտանիքի պէտքերի համար ամեն մի բերք ստանալու է իր դաշտերից, բայց դա սովորաբար իրագործելի չէ, և եթէ գիւղացին անպատճառ ուզում է այդ բանին հասնել, նա գործում է ի փասս իր սեփական տնտեսութեան, որովհետև նա ստիպուած է այսպէս ասած՝ բռնանալ իր հողի կարողութեան, առանձնայատկութեան վրայ, խեղաթիւրել նրա բնական արտադրող, ստեղծագործող էներգիան: Դու լաւ գիտես, սիրելիս, որ մեր իւրաքանչիւր գիւղացի շատ անգամ մի տարում ցանում է ցորեն, գարի, կորեկ, բանջարեղէն, բամբակ, կնճիթ և յաճախ այնպիսի հողերի մէջ, որոնք բոլորովին համապատասխան չեն: Սա մշակութեան նախնա-

կան սխտեմն է: Արդիւնաբերութեան այն մասնաւորացումը, որ այնպէս բեղմնաւոր է դարձնում աշխատանքը, ծանօթ չէ ամենեւին մեր ժողովրդին, ամեն բան կատարում է վայր ի վերոյ, համարեա անհասկանալի կապրիզով: Ահա երկրորդ պատճառը մեր գիւղացիների խեղճ տնտեսութեան:

Ասացի, որ ինտենսիւ մշակութիւնը հնարաւոր է դառնում Շվէյցարիայում՝ շնորհիւ գիտութեան ու արուեստի մատակարարած նորագոյն միջոցների: Շատ հեռու կը տանէր մեզ այդ միջոցների մանրամասն նկարագիրը տալ, մանաւանդ որ ես այդ անկարող եմ անել, որովհետև մասնագէտ չեմ, ասեմ սակայն, որ դրանց մէջ առաջնակարգ տեղ է բռնում հողի պարարտացումը:

Սրա մասին մի քանի խօսք:

Կայ քիմիական պարարտացում, դրա մասին ես չեմ խօսի, որովհետև անօգուտ է նկարագրել այն, ինչ միանգամայն անկարելի է իրագործել մեր երկրի ներկայ պայմաններում: Դառնանք միւս ձևի պարարտացնելուն, որ ծանօթ է նաև մեր երկրում, այսինքն աղբով, մոխրով և այլ նիւթերով: Շվէյցարացին իր անասունների ամբողջ աղբը գարնանը սայլերով ցրում է իր հողե-

րում, լինի նա արտ կամ արօտատեղի:

Երբ ես նկարագրում էի այս երկրի գիւղերի մաքրութիւնը, երևի ինքդ քեզ հարցրիր. «ապա ի՞նչ են լինում այդ երկրի կունարկները, ո՞ւր է հաւաքում շվէյցարացին իր անասունների աղբը»: Սրանք էլ իրանց կունարկներն ունեն, սիրելիս, միայն բոլորովին տարբեր ձևի և տարբեր պայմաններում: Քեզ գրել եմ արդէն, որ սրանք իրանց անասունների տակ փռում են չոր խոտ, որ լեռանում է աղբի հետ: Գոմից դուրս հանելով աղբի և խոտի այդ շաղախը՝ տնից հեռու, ոտքից հեռու մի անկիւնում կուտակում են հողի դէզի պէս, վրան ջուր են բաց թողնում, որ փթի: Գարնանը, ինչպէս ասացի, այդ ամբողջ կոյտը տեղափոխում են և սրփռում դաշտերում: Եւ այդպէս ամենայն տարի: Ո՛չ մի տափ չէ մնում առանց պարարտանալու, ոչ մի տափ չէ մնում պարապ կամ ինչպէս մեզանում ասում են «խամ»: Արդիւնքը բնականապէս կրկնակի է լինում. թէ հացահատիկ է ցանուած, աշխատանքը վարձատրւում է, իսկ թէ խոտատեղի է, հնձում է երեք անգամ և դեռ աշնանն էլ, երբ անասուններին դուրս են թողնում գոմերից, ծառայում է որպէս լաւ արօտատեղի 1—2 ամիս շարունակ:

Գիտեմ, դու իսկոյն կ'ասես. «ի՞նչպէս կարող է մեր գիւղացին անասունների աղբը իր արտերը պարարտացնելուն ծառայեցնել, երբ դա նրա համարեա միակ վառելիքն է: Շվէյցարացին վառելու համար անտառներ ունի, իսկ մեր գիւղացին միմիայն աթար, որ ստանում է անասունների աղբից: Ի՞նչ անի, ի՞նչ վառի: Այո՛, սա ծանրակշիւ հարց է. և ես ստիպուած եմ սկսել մի քիչ հեռուից, սկսել մեր պատմական թոնրից: Իմ կարծիքով թոնիրը մեր գիւղացու տնտեսութեան համար մի չարիք է, որ ծանրացել է մեր երկրի վրայ դարերից ի վեր, և դեռ յայտնի չէ, թէ ե՞րբ պէտք է ազատուենք նրանից:

Թոնիրները մեծաւ մասամբ խոնաւ են, երբեմն նրանց յատակում ջուր է հաւաքւում, և խոնաւ գետնի մէջ փորուած այդ վիհը տաքացնել է հարկաւոր մինչև այն աստիճան, որ հաց թխել հնարաւոր դառնայ, որ խմորը նրա կողերին կպչի: Եւ որքան աւելորդ վառելիք է մաշւում այդ իր տեսակի մօլօխին կշտացնելու համար: Ի՞նչ անել, վերացնե՞լ տուն տաքացնելու այդ սիստեմը: Բայց ի՞նչպէս հաց թխել, տաքացնել բնակարանը: Հաց, արևելեան լաւաշը. կարծւում է, որ եթէ հայ գիւղացին լաւաշ չ'ուտի, չէ կարող ապրել: Նախ և

առաջ հէնց այդ լաւաշից պիտի ազատուել  
և ընդունել փռան հացը, որ տարածուած է  
ամբողջ աշխարհում, և որ շատ աւելի հեշտ  
է պատրաստել, քան լաւաշը: Հաւատացած  
եղիր, սիրելիս, փոխելով մեր հացի ձևը՝  
ահագին յեղափոխութիւն առաջ կը բերուի  
գիւղացու ամբողջ տնտեսութեան մէջ: Լա-  
ւաշից ազատուելով՝ կարիք չի լինի թոնիր-  
ները վառել շարունակ տարուայ չորս եղա-  
նակներին, այսպիսով կը տնտեսուի աթարը,  
այսինքն անասունների աղբը և կարելի կը  
լինի հողերի պարարտացնելուն ծառայեցնել:

Չը պէտք է մոռանալ, որ մեր գիւղե-  
րում իւրաքանչիւր տուն իր առանձին թո-  
նիրն ունի, և իւրաքանչիւր թոնիր ամեն  
օր վառուում է ամբողջ տարին շարունակ:  
Ընդունենք, որ ձմեռը պէտք է վառել խրը-  
ճիթը տաքացնելու համար, բայց տարուայ  
միւս եղանակներին բոլորովին հարկաւոր չի  
լինի վառել, եթէ վերացուի հաց թխելու և  
յաակապէս լաւաշ թխելու սխաւմը: Եւ  
միթէ հնարաւոր չէ մեր գիւղերում էլ փու-  
ռեր հաստատել:

Շատ անգամ մի փոքրիկ փոփոխու-  
թիւնը մարդկանց ապրուստի եղանակի,  
նոյնիսկ ճաշակի, զգեստի ձևի մէջ առաջ է  
բերում այնպիսի նշանաւոր բարոյական,

Ֆիզիկական և տնտեսական հետեանքներ,  
որոնց մասին կանխաւ մտածելն անգամ  
զժուար էր: Համարձակ կարելի է ասել, որ  
մեր երկրի լաւաշ հացի և առհասարակ թո-  
նիրների վերացումը մի այդպիսի յեղափո-  
խիչ նշանակութիւն կունենայ գիւղացու-  
կեանքի համար:

Ես դառնում եմ վառելիքի հարցին:

Ճշմարիտ է, որ մեր աշխարհը այդ կող-  
մից դրուած է ամենաձանր կացութեան մէջ:  
Մնտառները վաղուց հետէ իսպառ ջնջուած  
են բարբարոս տիրապետողների ձեռքով և  
մեր իսկ ժողովրդի տգիտութեան շնորհիւ:  
Ինչո՞վ դարմանել չարիքը: Սովորեցնել մեր  
գիւղացուն ծառեր տնկել ամեն տեղ, ուր  
հնարաւոր է և շարունակ. դու յիշում ես  
մեր անվերջ ճախճախոտ հողերը Մասսի  
ստորոտներում, մեր անծայր առուները, ո-  
րոնք գալիս են Արաքսից և կտրելով ահա-  
գին տարածութիւններ, վերստին գնում են  
Արաքս. բազմաթիւ մանր ու մեծ վտակնե-  
րը, որոնք ակօսում են մեր արօտները, բո-  
լորը, բոլորը պէտք է ծածկել ծառերով:  
Մեր կլիմայում ծառն աճում է արագու-  
թեամբ, 2—3 տարում. նա արդէն հաստ բուն  
ունի, ինչպէս օրինակ ուռենին ու նրա տե-  
սակի այլ ծառերը: Չեմ խօսում նաև ան-

տառներ տնկելու անհրաժեշտութեան մասին, որ բնաւ անկարելի չէ, որ տարաբաղդաբար իսպառ մոռացութեան է տրուած: Մեր գիւղացին սիրում է ծառը կտրել, բայց նրա տեղը նորը տնկել չը գիտէ. շվէյցարացին, իր ծով անտառներով, այնուամենայնիւ շարունակ տնկում է նոր ծառեր, նոր անտառներ, և նոյն իսկ որոշ տարիներ իր վառելիքը ներմուծում է դրսից, որ անտառները չըսակաւանան, չըսպառուեն:

Բնութեան պաշտամունքը, մասնաւորապէս սէր դէպի ծառերը պէտք է զարթեցնել մեր մանուկ սերնդի հոգու մէջ:

Յը գրութիւն.

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ.-ՆԱՐՈՒՆ

## IX

Շատ ուրախ եմ, սիրելիս, որ այսօր կարող եմ քեզ նկարագրել մի վերին աստիճանի հետաքրքիր երևոյթ, որ թէև շվէյցարական գիւղական ամենօրեայ կեանքին օրգանապէս կապուած չէ, այլ աւելի շուտ դիպուածական է, բայց և այնպէս լայն լոյս է սփռում այս երկրի ժողովրդի հոգու, մասամբ նրա ոչ շատ հեռաւոր անցեալի, ճաշակի, ձգտումների, սովորութիւնների վրայ: Խօսքս մի գիւղական ներկայացման մասին է: Ինքնըստինքեան մի շատ սովորական, շատ պարզ երևոյթ, այնպէս չէ, որ երկրի գիւղերում չեն պատահում ներկայացումներ: Բայց մի շարք կողմնակի հանգամանքներ այս անգամ յիշեալ ներկայացումը դարձրել էին առաջնակարգ հետաքրքրութեան առարկայ ոչ միայն Վօ կանտոնի բնակիչների, այլ և շատ օտարականների համար. նամակս հասկանալի դարձնե-

լու համար ստիպուած եմ մի փոքր հեռուից սկսել:

Ահա մի քանի շաբաթ է, շվեյցարական և գլխավորապէս Վօ կանտոնի թերթերը խօսում են մի հետաքրքիր պիէսայի մասին, որ կոչւում է «La Dime»-Տասանորդ, և որ խաղացւում է Լոզանից մօտ քսան վերստ հեռու՝ Մեզիեր գիւղում: Այցելուները հազարներով են հաշւում. պիեսան վերին աստիճանի օրիգինալ է, իսկ խաղը հիացմունք է շարժում: Ընդհանուր այս հետաքրքրութիւնը սակայն կարող է անհասկանալի մնալ օտարներին, չէ՞ որ դա այնուամենայնիւ մի գիւղական ողորմելի բեմ պիտի լինի և մի սովորական խաղ: Բայց ահա թէ խնդիրն ինչու՞ն է:

Շվեյցարական դաշնակցութեան այս գրաւիչ եղբայրութիւնը կազմող կանտոններից իւրաքանչիւրը իր ուրոյն պատմութիւնը, իր պատմական կեանքն է ունեցել և ունի, որ արտայայտւում է բազմաթիւ բնորոշ գծերով կառավարական, հարկային, կրթական, օրէնսդրական սխտեմի, ինչպէս և այս 22 փոքրիկ հանրապետութիւնների, փոքրիկ ժողովուրդների բնավորութեան վրայ: Օտարները հեռուից ճանաչում են միայն մի հատ մեծ Շվեյցարիա,

որ արծւի պէս թառել է Ալպերի վրայ, բայց մօտիկից դիտողը կը տեսնի, որ նրա թևերի տակ ծուարել են 22 փոքրիկ, իրարից անկախ կանտոններ: Ոչ շատ հեռավոր անցեալում այս կանտոնների յարաբերութիւնների մէջ տեղի են ունեցել զօրեղ ցընցումներ, երբեմն նոյն իսկ արիւննոտ ընդհարումներ: Եղել են աւելի զօրեղները, որոնք բռնացել են փոքրերի վրայ, տեղի են ունեցել ապստամբութիւններ, կռիւներ, օտար պետութիւնների միջամտութիւններ:

Սրանից ուղիղ մի դար առաջ Վօ կանտոնը ենթարկւում էր Բերնի իշխանութեանը, և նրա հողերը պատկանում էին զանազան կալուածատէր իշխանների: XVII-րդ դարի սկզբում Վօ կանտոնն ազատելու համար կատարուած մի փորձ վերջացաւ կատարեալ անյաջողութեամբ. պարագլուխը՝ մայիոր Դաւել բռնուեց ու գլխատուեց, իսկ ժողովուրդը շարունակեց տրտնջալով կրել բերնցիների լուծը: Սակայն Դաւելի թափած արիւնը անօգուտ չ'անցաւ, ինչպէս ոչ մի արիւն աշխարհում անհետեանք չի մնում: Ազնականների ձեռքով հարստահարուած ու նեղուած ժողովրդի խուլ զրգոյնութիւնն աճեց, մեծացաւ և XVIII-րդ դարի վերջին երեւի կը պայթէր մի արիւ-

նալի ապստամբութեամբ Բերնի դէմ, եթէ քաղաքական նոր հանգամանքներ արտաքուստ չը գային հասունացած խնդրին խաղաղ լուծումն տալու: Նապոլէոն Բոնապարտ Առաջին կոնսուլը՝ 1803 թ. փետրուարի 19-ին տուեց ամբողջ Շվեյցարիային մի նոր կազմակերպութիւն, նրա «Act de médiation-ը (միջնորդութեան ծրագիր) Հելվետեան հանրապետութիւնը, որ մէկ էր և անբաժան, հռչակեց փոքրիկ պետութիւնների դաշնակցութիւն՝ բաղկացած 19 կանտոնից: Միևնոյն ժամանակ Վօ կանտոնը ազատուում էր Բերնի տիրապետութիւնից և դառնում էր ինքնավար ու անկախ փոքրիկ պետութիւն:

Այսպիսով այս տարի (1903-ին) լրանում է Վօ կանտոնի ազատութեան հարիւրամեակը: Փոքրիկ ժողովուրդը պատրաստուում է մեծամեծ հանդէսներով տօնել իր ազատ կեանքի հարիւր տարին, որի ընթացքում այս երջանիկ երկիրը այնքան խոշոր առաջադիմութիւն է արել քաղաքակրթութեան մէջ և որով նա այնքան հպարտ է իրաւամբ: Անցեալներն իմ ուսուցչապետներից մէկը՝ պ. Բոսսիէ մի մասնաւոր խօսակցութեան ժամանակ ինձ ասում էր. «Դուք օտարներդ հազիւ թէ կարողանաք իսկապէս

իմանալ, թէ հարիւր տարուայ ազատ կեանքը ինչեր տուեց մեր փոքրիկ կանտոնին՝ շնորհիւ խղճի և մտքի լայն ազատութեան, ձեռներեցութեան որոշ զարգացման, ապակենտրոնացման սխտեմի բարեխիղճ գործադրութեան՝ մենք մի դարի մէջ հրաշքներ ենք գործել»:—Քաղաքակրթական այդ փայլուն էվոլիւցիայի, այդ անդադրում աշխատանքի արդիւնքը սակայն մենք օտարներս էլ ենք տեսնում և սքանչանում, պատասխանեցի ես. թոյլ տուէք նոյն իսկ նկատել, որ ձեր փոքրիկ հայրենիքում դուք տեղացիներդ համեմատութեան անկարելիութեան շնորհիւ՝ դուցէ երբեմն չ'իմանաք, նոյնիսկ չը գիտակցէք, թէ որքան երջանիկ էք դուք»:— «Այո, իրաւունք ունիք, ասաց նա ժպտալով, մենք աւելի քան երջանիկ ենք, nous sommes trop heureux!»:

Ահա՛ ինչպէս ասացի, այս երջանկութեան, վարարած գետի պէս այս փոքրիկ երկիրը հեղեղող բարօրութեան տօնն է, որ պատրաստուում է կատարել Վօ կանտոնը առաջիկայ յուլիսի 4—7-ին: Բոլոր նշաններից, կատարուող պատրաստութիւններից, ընդհանուր տրամադրութիւնից երևում է, որ մի քանի օր տևող հանդէսները լինելու են որքան փառաւոր, նոյնքան պարզ, ժողովր-

դական, և նոյնքան հետաքրքիր իրանց բազմակողմանի, օրիգինալ պարունակութեամբ: Նամակիս սկզբում յիշուած գիւղական ներկայացումը ահա այս տօնի, Վօ կանտոնի ազատութեան հետ կապուած մի երևոյթ է:

Ներկայացումը յատկապէս Մեզիերում և ոչ մի ուրիշ գիւղում կազմակերպելն էլ իր առանձին խորհուրդն ունի: Պիեսային իբրև նիւթ ծառայող պատմական դէպքը տեղի է ունեցել հէնց այդ գիւղում մի դար առաջ: Մի գրաւիչ հնարամտութեամբ այս գեղեցիկ գործի ձեռներեցները գտել են, որ շատ հետաքրքիր կը լինի միևնոյն վայրերում վերապրել հարիւր տարի առաջ կատարուած անցքերը: Եւ ինչ որ աւելի ուշագրաւ է, այժմ էլ բեմի վրայ գործող անձինք մի դար առաջ իրանց նախահայրերի կրած-ապրած օրերն են վերարտադրում, բոլոր դերակատարները Մեզիերի դերակատարներն են:

Լոզանից Մեզիեր տանող ելեկտրական երկաթուղու փոքրիկ կայարանը ասեղ ձգելու տեղ չը կայ: Վագոնները չեն բաւականացնում, ստիպուած են եղել ապրանքատար վագոնների մէջ աթոռներ շարել և յարմարացնել ճանապարհորդներին համար. այնուամենայնիւ ահագին բազմութիւն ստիպ-

ւած է ոտքի վրայ կանգնած ճանապարհորդել, ամենքին նստելու տեղ չը կայ: Ներկայացումը ճաշից յետոյ ժամի 2-ին է, և մինչև այդ ժամանակ այս փոքրիկ երկաթուղով մօտ 1500 մարդ պիտի հասնի Մեզիեր:

Վագոնները մէջ իրար վրայ սղմուած, բայց ոչ ոք դժգոհ չէ: Ճանապարհի գեղեցկութիւնը տրանջայու տեղ չի թողնում: Անտառապատ բլրակների անվերջ շարքեր աջ ու ձախ. կամ կանաչագարդ ալիքաւոր մարգագետիններ, որոնց միջից սլանում է ելեկտրական գնացքը առանց ծուխի, առանց աղմուկի: Տեղ-տեղ կանգ է առնում այս կամ այն գիւղում, ուր հազիւ մի քանի տուն են երևում ցրուած անտառների մէջ, պանդոկի պէս փոքրիկ կայարանից դուրս են գալիս մի քանի գիւղացիներ, — մարդ, կին, աղջիկ, աղայ, մի կերպով կախկիւսում են գրնացքի կողերից, ապա կրկին սլանում ենք: Ահա և Մեզիերը:

Գիւղը ներկայացնում է մի ուշագրաւ տեսարան: Որ կողմ դառնում ես, պատմական զգեստներով ծերեր, երիտասարդներ, մեծ ու փոքր տղաներ ու աղջիկներ: Սրանք բոլորը դերակատարներ են: Կարծէք թէ մարդ ժամանակակից շվէյցարական գիւղում

չէ, այլ մի ինչ որ հին աշխարհում, ուր այլ բարքեր, այլ սովորութիւններ, կարգեր կան: Գիւղական պարզութիւնը բեմական արուեստի գաղտնիքներին անծանօթ է. այստեղ ներկայացումից յետոյ կարծես ձանձրանում են զգեստները փոխել (և ի՞նչ կարիք կայ, երբ քիչ յետոյ նորէն հագնելու են!) և մեծ ու փոքր թատրոնից դուրս են գալիս պատմական շորերով՝ նայելու այցելուներին, կամ տուն են գնում նախաճաշելու, զուարճանում են դրսում իրանց յարուցած հետաքրքրութեամբ:

Պակաս օրիգինալ չէ թատրոնական շէնքըն իր բեմով: Մի ահագին փայտեայ շինութիւն, որ երկաթուղային վագոնների պահեստ է, վերածուած է թատրոնի և կարողանում է պարտկել մօտ 1500 մարդ: Սկսւում է ներկայացումը, վարագոյրը բարձրանում է: Տեսարանը ներկայացնում է Մեզիերի դաշտը, ուր մի խումբ գիւղացիներ—երեք մարդ և երեք կին գետնախնձոր են հաւաքում. նրանք աշխատում են և խօսում: Մի ընտանիք է, մէկն այն հազարաւոր ընտանիքներից, որոնց հարուածում է չարիքը հեռուից, և որոնք իրանց տառապանքով լի գոյութիւնը տանելու համար էլ համբերութիւն չ'ունին: Նրանց խօսակցութիւնից երե-

ւում է, որ իրանց կալուածատէրերի անողորմութիւնն էլ սահման չ'ունի, որ իրանց աշխատանքի մեծ մասը նրանց ճոխ, անհոգ կեանքի քմահաճոյքներին է ծառայում, որ իրանք աղքատ են, խեղճ ու տանջուած: Յոյսերը մնացել էր գետնախնձորը, որի մշակութիւնը նոր է սկսուած այդ կողմերում, և սակայն կալուածատէրը նրանց ապրուստի այդ յետին աղբիւրի վրայ էլ տասանորդ է դրել: Ընտանիքի հայրը արտնջում է, բայց համբերութիւնից է խօսում. որդին գայրոյթով ու կատաղութեամբ նգովում է իրանց ճակատագիրը, կանայք լրացնում են կարիքի և խեղճութեան ընդհանուր պատկերը՝ քայքայուած տնտեսութեան այն մանրամասըն նկարագիրներով, որը միայն կինը կարող է անել—տաք կերակուր չը կայ, հացն էլ երբեմն չի ճարւում, խոհանոցից օրերով ծուխ չի դուրս գալիս ևայն, ևայն: Մի ամբողջ ժողովուրդ է այս, որ իր յիմար կամ ոճրագործ տիրոջների շնորհիւ յետին ծայր խեղճութեան ու անարգանքի հասած՝ ելք, հնար է փնտրում, մեծ հրդեհը պատրաստող փոքրիկ կրակ է, որ կամաց-կամաց մխում է այս մութ, բայց տանջուած սրտերում: Ահա և ինքը կալուածատէրն իր շքախմբով, փայլիլուն շորերով, որ նայում

է այս ցնցոտիներով պատած, գունատ, յոգ-  
նած գիւղացիներին և ցինիկաբար խօսում  
է իր ուղեկիցներին իր ժողովրդի բարեկե-  
ցութեան մասին: Դէ, արտաքին խեղճու-  
թիւնը շատ անգամ խաբուսիկ է, կան ա-  
գահներ, կան հարբեցողներ: Շահագործուած,  
տրորուած գիւղացին իր տէրերի համար  
միշտ կամ ագահ է, կամ հարբեցող: Կալուա-  
ծատէրն անցնում է, գիւղացիք խոնարհուում  
են և յետևից հայհոյում՝ բռունցքներ ցոյց  
տալով: Յաջորդ տեսարանների մէջ յայտն-  
ւում են նորանոր դէմքեր, բժիշկը, պաս-  
տօրը, ուրիշ գիւղացիներ, կանայք, որոնց  
բոլորի խօսակցութեան նիւթը նոր տասա-  
նորդն է—«la dime» և իրանց օր-աւուր ծան-  
րացող վիճակը:

Ահա և եկեղեցին, գիւղական եկեղեցին  
ձմեռ ժամանակ. գիւղացիք խումբ-խումբ  
դուրս են թափւում, ցուրտ է, ձիւն է գա-  
լիս, բայց նրանք չեն հեռանում, խօսում են  
տաք-տաք: Պաստօրը եկեղեցում մի քանի  
խօսք է ասել կալուածատիրոջ անարդարու-  
թեան մասին, նոր տասանորդը համարել է  
անողորմ գործ: Պաստօրը գիւղի խելքն ու  
խիղճն է ներկայացնում. երբ նա բողոքում  
է, իր հօտը լուռ մնալ չի կարող: Հարիւր  
քսան հոգուց բաղկացած խօրը, որոնք բո-

լորն էլ գիւղի և շրջակայքի մեծ ու փոքր  
աղջիկներն ու տղաներն են, բեմի առաջ  
երկու մասի բաժանուած՝ երգում է:

«Ամեն օր միայն ցաւի ճիշ է, որ բար-  
«ձրանում է դէպի Աստուած, դէպի անողորմ  
«երկինքը. մեր խղճուկ խրճիթները ծածկում  
«են իրանց կտուրները սգաւոր անտառների  
«մէջ: Դժբախտ է նա, ով մի տիրոջ առաջ  
«ծառայի պէս պիտի խոնարհի ճակատը, ի՞նչ  
«արժէ նրա համար խաղաղ ու հանգիստ  
«կեանքը, եթէ նա պիտի լռի՝ կուլ տալով  
«անարգանքը: Չարթիր, ժողովուրդ, դիտակ-  
«ցիր քո պարտքերը և քո արժանիքը»:

Պաստօրի խօսքերը հասնում են Բերն.  
Նա կասկածելի է, որպէս խռովարար, և մի  
գիշեր օրէնքի անունով մի մութ կառք վեր-  
ցնում է նրան տնից և տանում անյայտ  
տեղ: Նա բանտարկուած է:

Խօրը երգում է.

«Սև օջաղի խորքում կատաղի հողմը  
«բորբոքում է մխացող կրակը, երբ վրայ է  
«հասնում երեկոն: Այգպէս էլ անարդարու-  
«թիւնը իր խստութիւններով զարթեցնում  
«է ատելութեան զայրոյթը սրտերի խոր-  
«քերում: Ի՞նչ քաղցր է վրէժխնդրութիւնը  
«բոլոր ճնշուածների համար»:

Այս անակնկալ ու սարսափելի դժբաղ-

դուժիւնից պատեօրի կինը խելագարուում է: Գիւղն իր շրջակայքով մումուում է, ինչպէս եռուն հնոց: Մուժ գիշերներ են, խրճիթներում, խոհանոցներում, կիրճերում, մուժ անտառներում կասկածելի ստուերներ են համախմբուում, փսփսուում, անյայտանում: Հազար գլխանի տառապանքն է, որ ձգձգուում, ոլորուում է և պուժկալու վրայ է. դարթնած գիտակցութիւնն է, որ խաւարի մէջ իր մեծ բողոքն է դարբնում մուժ ոյժերի հետ. և անտառները խեղճերի հետ են, նրանք ծածկում են դաղանիքը:

Սումբը երգում է.

«Գունաս խիղճը հալածում է ոճրա-  
«գործին, և նա մոլորուում է խաւարի մէջ  
«լուռ սարսափի հետ: Իզուր է նա աշխա-  
«տում ծածկել իր սիրտը, վրէժխնդրութեան  
«ձայնը հնչուում իր յետից: Նա լսում է  
«քամու երգը անտառներում և սոսկում է»:

Սակայն երեք ամիս յետոյ պատեօրն ազատուում է. դա արդարութեան և իրաւունքի յաղթանակն է, ժողովուրդը տօնում է այդ ցնծութեամբ: Սրանով է վերջանում պիեսան: Մի քանի տարի յետոյ ազատուում է նաև հայրենիքը:

Ահա, սիրելիս, մօտաւորապէս այն դրաման, որ այնքան աղմուկ է հանել Վօ կան-

տոնում և այնպէս հետաքրքրութիւն շարժել: Իւրաքանչիւր ներկայացուում մի տեսակ ժողովրդական տօն է. գիւղը ցնծութեան մէջ է, Լոզանը, կանտոնի մայրաքաղաքը՝ ծափահարում է. օտարները հիանում են:

Ուշադրութեան արժանի մի հանգամանք, սիրելիս, որ վերադարձիս ամբողջ ճանապարհին ինձ զբաղեցնում էր և որը՝ հաւատացած եմ՝ քեզ էլ բաւական խորհրդածութեան նիւթ կը տայ: Շվէյցարացի դրամատուրգը (Րընէ Մորաքս), որ գրել է այս գործը, անշուշտ քրքրել է իր երկրի սև օրերի պատմութիւնը և այնտեղից դուրս քաշել ամենացնցող նիւթը, և դա... մի պատեօրի երեքամսեայ բանտարկութիւնն է և ժողովրդի բողոքը տասանորդի դէմ: Մեզ արևելցիներին համար այսպիսի անցքերը մնում են աննկատելի: Երջանիկ երկիր չէ՞ այս, որի դժբաղդ օրերում մի պատեօրի երեք ամսով բանտարկութիւնը համարուում է տարեգրութեան մէջ խոշորագոյն դէպքերից մէկը: Յետոյ ինձ շատ զբաղեցրեց պատեօրի կինը, խեղճը չի կարողանում տանել իր ամուսնու այդ դժբաղդութիւնը և խելագարուում է: Ի՞նչ անեն հապա արևելքի սև երկնքի տակ այն մայրերը, որոնց դա-

ւակները յօշոտուում են իրանց աչքերի առաջ, այն կանայք, որոնց ամուսինները խողխողուում կամ կորչում են յաւիտեան և այն ոչ հարիւր տարի առաջ, խաւար, անսիրտ ժամանակներում, այլ այսօր, այս քաղաքակրթութեամբ դարում: Եւ այդ գետնախնձորի տասանորդը... հարիւր տարի առաջ գիւղացիք այս երկրում բողբոջել և չեն կամեցել տասանորդ վճարել կալուածատէրերին, իսկ այժմեան սերունդը տեսնում է բեմի վրայ այդ անցեալը և զարմանում, որ իր պապերն այնքան դժբաղդ ու ստորկացած են եղել, որ մինչև անգամ տասանորդ են վճարել գետնախնձորից: Երջանիկ երկիր, ուր ծիծաղն այնքան առատ է, որ յացն անհասկանալի է դարձել:

Ցը գրութիւն.

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

## X

Հաճոյքով եմ ձեռք առնում գրիչը, սիրելիս, ծաղիկների մասին պիտի խօսեմ: Այսօր իմ լուսամուտի տակից երգելով անցան բազմաթիւ զանազան հասակի երեխաներ: Գիւղական դպրոցի աշակերտ-աշակերտուհիներն են, որոնք իրանց ուսուցիչների և ուսուցչուհիների հետ ամարային ճանապարհորդութիւններ են կատարում իրանց երկրի այս գեղեցիկ լեռներում ու ձորերում: Նրանք ամենքն էլ ձեռներին երկար ձեռնափայտ ունին, իսկ թիկունքին, կամ կողքից կախուած փոքրիկ ամաններ պաշարով: Հետաքրքիրն այս չէ անշուշտ, երբ ճանապարհորդում են, պէտք է որոշ յարմարութիւններ ունենան: Ինձ զբաւեց մի ուրիշ բան: Երեխաներն առանց խտրութեան զարդարուած են ծաղիկներով. նրանք պսակներ ունին գլուխներին, փնջեր ձեռներին: Գրաւիչ տեսարան է, թուշունների պէս ճուռոզող այս փոքրիկ ամբօսը գալիս

է հեռուից ինչպէս ծաղկազարդ սարալանջի մի կտոր, որ թափ առած՝ խաղում է ճանապարհով:

Քիչ երկիր կայ, ուր այնքան առատ է ծաղիկը, որքան Շվեյցարիայում, և ուր ծաղիկի պաշտամունքը այնպէս մեծ է: Ես առիթ ունեցել եմ քեզ գրելու արդէն, որ շվեյցարական գիւղական տները ծառերի, ծաղիկների, խոտերի մէջ ծածկուած են: Տեսնելու բան է, թէ ինչպէս աշխատաւոր գիւղացին իր կոշտացած մասներով իր տան առաջ տնկում, ջրում, խնամում է զանազան ծաղիկներ, ինչպէս տան իւրաքանչիւր անդամը հասկանում է բնութեան այդ սիրուն զարդերի արժէքը, ճաշակում է նրանց պատճառած հաճոյքը: Իմ տանտէրը գիտէ պարտիզի բոլոր ծաղիկների անունները, նա ինքն է դասաւորել նրանց զանազան գեղարուեստական ձևերով, ինքն է պահում սերմերը՝ զարնանը նորից տնկելու համար և այդ բոլորը նա կատարում է նոյնքան խնամքով, նոյնքան հոգատարութեամբ, որքան իր դաշտային միւս աշխատանքները:

Իւրաքանչիւր ոք, որ գալիս է դաշտերից, սիրում է ծաղիկներով բեռնաւորուած տուն վերադառնալ. իսկ զբօսանքի գնացողների մեծագոյն գուարճութիւնն է փունջեր

կազմել՝ սրան-նրան ընծայելու համար: Ծաղիկների ընծան. դա մի գողտրիկ սովորութիւն է այս երկրում: Քաղաքից քաղաք, գիւղից գիւղ ծաղկեփնջեր ուղարկելն ամենասովորական երևոյթ է այստեղ: Ճանապարհորդելիս յաճախ կարելի է տեսնել կանայք և տղամարդիկ գնացքի մէջ, որոնք ահագին ծաղկեփունջ ունին ձեռներին, խնամքով պահում են թղթի մէջ՝ անշուշտ իրանց հեռաւոր բարեկամին տանելու համար: Մենք միայն մի ծաղկազարդի տօն ունինք, այստեղ զարնանը, ամբանը իւրաքանչիւր տօն օր մի-մի ծաղկազարդ է: Երջանիկ ժողովուրդ. դէպի ծաղիկն այս աստիճան սէր ունենալու համար անհրաժեշտ է հոգեկան որոշ անդորրութիւն, նիւթական ճնշող հոգսերից ազատ հոգի, որ մենք երբէք չը տեսանք մեր արևելքի սև երկնքի տակ:

Ծաղիկներով են զարգարուած այս երկրում տները, ծաղիկներ ունին իրանց եղջիւրների վրայ մրցանակ ստացող գեղեցիկ եզներն ու կովերը. ապաքինուող թէ մեռնող հիւանդն իր անկողնի մէջ բարեկամներից ծաղիկներ է ստանում, նոր աշխարհեկած երեխայի ծնունդը նոյնպէս ողջունուում է ծաղիկներով: Իսկ սրանց գերեզմա-

նատնները, քեզ գրել եմ արդէն, որ մի-մի ծաղկանոցներ են. մեզանում իւրաքանչիւր շաբաթ երեկոյ կանայք գնում են գերեզմանատուն մի բուռն խունկ ծխելու թարմ հոգաթմբերի վրայ, այստեղ խունկի տեղը բռնել է ծաղիկը. երբ շաբաթ երեկոյ կամ կիւրակէ սգազգեստ կին տեսնես ծաղկեփնջեր կամ պսակ ձեռքին, ասել է թէ նա գերեզմանատուն է գնում: Եւ սփռում է ծաղիկները դամբարանի վրայ, նստում է փոքրիկ աթուռի վրայ, մի վայրկեան վերարտադրում յիշողութեան մէջ մեռած սիրելու պատկերը, ապրում է նրա հետ հոգեպէս և կրկին տուն վերադառնում:

Այս բոլորից յետոյ զարմանալի չէ, որ Շվեյցարիայում ծաղիկների բազմաթիւ տեսակներ են մշակւում: Շաբաթը երկու անգամ տօնավաճառներին (jour de marché) շրջակայ գիւղերից կանայք անագին քանակութեամբ ծաղիկներ են տանում վաճառելու քաղաքներում: Եւ այդ կինը, որ կանգնել է հրապարակում իր ծաղիկներով շրջապատուած, սովորական գեղջկուհի է, որ հասկացել է սակայն ծաղիկների լեզուն՝ նրանց մշակութեանը նուիրելով իր կեանքը, սիրում է ծաղիկը և նրանով ապրում: Նա ճանաչում է իւրաքանչիւր ծաղիկ, գիտէ նրանց

անունները, առաւելութիւնները, մշակելու եղանակը, նրանք իր զաւակներն են. իւրաքանչիւր տանտիկին, որ հրապարակ է իջնում իր պաշարեղէնը գնելու, նա անպատճառ նաև մի փունջ կը տանի հետը տուն և ճաշին նրանով կը զարգարի սեղանը:

Որևէ ժողովրդի ճաշակի նրբութիւնը, պահանջների բարձրութիւնը, բարքերի մեղմութիւնը որոշելու համար շատ չափեր կարելի է աչքի առաջ ունենալ, բայց իմ կարծիքով բուռն սէրը դէպի բնութեան գեղեցկութիւնները, ծաղկի պաշտամունքը այդ չափերի մէջ վերջիններից չեն: Ինձ թւում է, սիրելիս, որ մարդու մէջ նստած հին դագանը թուլանում, ոչնչանում է, երբ նա քնքշաբար կուանում է ծաղկի վրայ, երբ յափշտակւում է նրա գեղեցկութեամբ, երբ նրա հաճոյքը նկատում է որպէս մի պահանջ, մի անհրաժեշտութիւն: Վայրենի քիւրզը, որ միշտ գրաւած ունի գեղեցիկ լեռները, բնութեան տեսարաններով հրճուել չը գիտէ, նա վերջալոյսը և վառ արշալոյսը, ինչպէս և ծաղկի կուսական գրաւչութիւնը ըմբռնել, հասկանալ չի կարող: Ծաղիկների պաշտամունքը որպէս գեղեցկի պաշտամունք՝ պէտք է որ զուգընթաց լինի քաղաքակրթութեանը:

Մեզանում էլ բնութիւնը սիրում են, բայց այդ սէրը իբրև հիմունք գեղեցկութիւնը չունի, այլ օգուտը, շահը: Մայր հողը, մայր բնութիւնը սնուցիչ, կերակրող է, նրա հարուստ կուրծքը նոյնքան գրաւիչ է, որքան մանուկի համար իր մօր սախնքները: Բայց բնութեան մէջ գեղեցիկը փնտրելու համար, ծաղկով, տեսարաններով յափշտակուելու համար անհրաժեշտ է որոշ դաստիարակութիւն, ճաշակի և բարքերի որոշ նրբութիւն, մեղմութիւն: Շվէյցարացի մանուկն ամենափոքր հասակից ստանում է այդ դաստիարակութիւնը. նա ծնւում է ծաղիկների մէջ, իր օրօրոցի շուրջը տեսնում է ծաղիկներ, սեղանի վրայ ծաղիկներ, դպրոցում նոյնը, իսկ լեռներն ու ձորերը ողջ ծաղկապատ են: Բնական պայմանները միացած դաստիարակութեանը, հոգու մշակութեանը, ընտանիքում և դպրոցում պատրաստում է այն բարքերը, որոնց մասին խօսեցի վերևում: Բնութեան, ծաղիկին, գեղեցկութեան սիրահար այս ժողովուրդը բնական նողկանք է զգում դէպի ամեն ինչ, որ գալիս է վիրաւորելու մարդկային ազնիւ զգացմունքները, որ անասնական է, բիրդ է, բարբարոսական է:

Սէր դէպի ծաղիկները և գուրգուրանք, քնքշութիւն դէպի կենդանի արարածը, սրբանք երկուսն էլ համարեա միևնոյն աղբիւրն ունին, ցոյց են տալիս ազնիւ դիւրագգացութիւն, խղճի մշակումն: Ես երբէք չեմ կարող մոռանալ տանտիկնոջս աղջկայ երկու պատմութիւնը. մէկը մի կատուի, իսկ միւսը մի փոքրիկ գորտի պատմութիւն: Դա մի փոքրիկ, հիւանդ՝ կատուի ձագ էր, որ նա գտել էր փողոցում, փէշի մէջ բռնած տուն բերել: Երկար ժամանակ մօր քնքշութեամբ նրան կերակրել էր և խնամել: «Օ՛, նա երբէք չը մեծացաւ, պարհն, ասում էր նա, չը կազդուրուեց, միշտ մնաց փոքրիկ, թոյլ ու քնքոյշ, այս պատճառով ես նրան աւելի էի սիրում»: Ապա նա մանրամասն կերպով պատմում էր ունկնդիրներին այդ խղճու ճուղ արարածի զանազան սովորութիւնները, ինչ էր սիրում նա, ինչպէս էր քնում, սւր էր սիրում մնալ կայն: «Եւ մի օր, վերջացնում էր նա, մեր անշնորհք աղախինն անգիտակցաբար տաք շուր թափեց վրան, և խեղճ անասունը մեռաւ»: Բազմութիւ անգամ էր նա կրկնել այդ պատմութիւնը և միշտ վերջացնելիս քիչ էր մնում լաց լինէր:

Իսկ իր փոքրիկ գորտն աւելի եղերա-

կան վախճան էր ունեցել: Նա նրան պահում էր փոքրիկ տւազանի մէջ մի քանի ուրիշ ջրային կենդանիների հետ: «Նա այնպէս կանաչ, սիրուն էր, ասում էր նա, այնպէս լաւ լողում էր, յետոյ հիւանդացաւ, ես շատ ուշ նկատեցի, որ միւս կենդանիներից, չը գիտեմ որը, նրա թաթերը կրծոտել էր, և նա մեռաւ»:

Չմեռը, երբ ճնճողուկներն ու այլ փոքրիկ թռչունները դժուարանում են պաշար գտնել, բնականապէս խմբերով մօտենում են բնակարաններին: Այն ժամանակ տեղտեղ բացօդեայ կարելի է տեսնել աղաւնիների բների պէս տախտակեայ տնակներ, ուր գրուած է՝ «pour les oiseaux» — թռչունների համար: Անցորդները ձգում են այնտեղ պաշար փոքրիկ թռչունների համար:

Շվէյցարիայում ես չեմ տեսել կենդանիների տանջանք, վտիտ եզ կամ ձի, որ հազիւ կարողանար քաշել սայլը, կամ մի մարդ, որ մտրակի հարուածներով պատուէր անասունի մէջքը: Այսպիսի մի երևոյթ ընդհանուր գայրոյթ, բողոք առաջ կը բերէր: Անշուշտ դա այն պատճառով չէ, որ կենդանիներին հովանաւորող ընկերութիւններ կան, այլ որովհետև հասարակական և անհատական խիղճն է մշակուած: Մարդիկ մանկու-

թիւնից են սովորում սիրել անասուններին, խնայել, խնամել նրանց: Կենդանիներն այստեղ զիւղերում պաշտպանուած են ոչ միայն ծեծից, այլև մոծակներից: Երբ շոգ է, և օդի մէջ խայթող միջատներ կան, շվէյցարացիին իր անասունները դաշտ չի հանի ցերեկով, այլ գիշեր ժամանակ, երբ զով է, և երբ մոծակներ չը կան: Իսկ նրանց գոմերը, նրանց մաքրութիւնը, բազմաթիւ այլ յարմարութիւնները դու գիտես արդէն իմ նախորդ նամակներից:

Գու գիտես, թէ մեր երկրում մասնաւորապէս կառապաններն ինչպէս են վարում իրանց ձիերի հետ: Քեզ կը զարմացնեմ երևի, եթէ ասեմ, որ շվէյցարական ձիուն մտրակ չի դիպչում երբէք: Ո՛չ մի գումարով, ոչ մի խնդրով կամ սպառնալիքով կարելի չէ շվէյցարացի կառապանին ստիպել, որ նա իր ձին աւելի արագ քշի, քան սովոր է: Մի որոշ ընթացք կայ, որ յատուկ է այս երկրի ձիերին, և որ փոխել տալ անկարելի է: Եթէ կառքը զառիվայրով է իջնում, կառապանն առանց տեղիցը շարժուելու՝ ձեռքի տակ եղած երկաթէ դաստակը կը դարձնի մի քանի անգամ, և ահա մի անիւր կը դադարի պտտելուց, կառքը կիջնի հանդարտ. իսկ եթէ բարձրանում է

զառիվներ, կառապանը ցած է իջնում և քայլում ձիւս կողքով: Առհասարակ ծանր բարձած սայլ քաշող անասուններին միշտ քշում են կողքից և ոչ թէ մեր երկրի պէս բազմում խեղճ անասունների պարանոցներին:

Ես կարող էի անթիւ նման օրինակներ բերել, բայց կարծեմ այսքան էլ բաւական է ապացուցանելու համար, որ շվէյցարական ժողովուրդը վաղուց հասել է այն գիտակցութեան, թէ կենդանի արարածը, լինի նա բանական թէ անբան, արժանի է գթութեան, ուշադրութեան, խնամքի, սիրոյ: Զգայունութիւնը դէպի կենդանի արարածի ցաւը, դէպի նրա տառապանքը ամենալաւ ապացոյցն է մի ժողովրդի հասարակական խղճի զարգացման, նրա կուլտուրականութեան: Այնքան ժամանակ, որ մի ժողովուրդ կարող է անտարբեր աչքով տեսնել իր աչքի տակ կատարուող անգթութիւնները դէպի անասուններն ու մարդիկ, և նրա խիղճը չի ըմբոստանայ՝ տեսնելով թէ ինչպէս հարուածների տակ մէջքեր են կռանում, ցաւից անզօր արցունքներ են թափւում իր նմանների աչքերից, այդ ժողովուրդը չի կարող կուլտուրապէս հասունացած համարուել, թէկուզ եւրոպական կեանքի բոլոր արգասիքները նրան ծանօթ լինին:

Բնութիւնը, սիրելիս, մարդու կրծքի տակ տեղաւորելով խիղճը՝ ստեղծել է այն զարմանալի շղթան, որ կապում է մարդկութիւնը, և հնար է տալիս զգալ մերձաւորի զգացածը: Միմիայն տգիտութիւնը, խաւար անգիտակցութիւնն է, որ հնարաւոր է դարձնում դազանութիւններ, անգթութիւններ դէպի մարդիկ և դէպի անասունները: Այս տեսակէտից «քաղաքակրթուած մարդը» մի հասկացողութիւն է, որ Եւրոպայում և մասնաւորապէս Շվէյցարիայում ընտանի է, բոլորովին սովորական և որ մեր երկրում տարաբաղդաբար տակաւին խորթ է, անծանօթ: Իմ ճանապարհորդութեան ժամանակ մեր երկրում ես գնացքի մէջ պատահեցի բժիշկների, ինժեներների, ուսանողների և այլ այսպէս կոչուած՝ բարձրագոյն կրթութիւն ստացած մարդկանց, բայց և ոչ մի «եւրոպացի» իրապէս քաղաքակրթուած մարդ, ինչպէս այդ հասկացւում է այստեղ: Վերդովցուցիչ դէպքեր, ամենատեսակ մանր ու մեծ անարդարութիւններ, համարեա յանցանքներ կատարւում էին նրանց աչքի առաջ՝ առանց գայրոյթ, բողոք առաջ բերելու: Ես ուսանող տեսայ, այն, իսկական ուսանող, որ տրաքւում էր իր համազգեստի մէջ մի սպուշ, ողորմելի գոռոզութեամբ,

որ տարօրինակ է գտնուում, թէ ինչո՞ւ իրանից դուրս մարդիկ են շարժւում աշխարհի երեսին, և այդ ուսանողը ցոյց տուեց, որ ինքը մի գուեհիկ է, մի ազէտ, մի բիրտ արարած է: Նրանից երբէք եւրոպացի չի դուրս գայ, թէկուզ տասն համալսարան աւարտի:

Ես մի քահանայ տեսայ, մի ծեր, խեղճ քահանայ, որ ոչ մի կերպով չէր կարողանում գնացքի մէջ իր տեղը գտնել, մնացել էր կանգնած, սրան նրան էր դիմում, և «շորերով միայն եւրոպացիները» հռհուում և հեզնում էին այդ ծերութիւնը: Ինչո՞ւ երկարացնեմ, դու գիտես, թէ մեր երկրի թուրքը երկաթուղով ճանապարհորդելիս որքան արկածներ է ունենում շնորհիւ իր խեղճութեան, իր ազիտութեան: Եւ կը գտնուի «կրթուած» ճանապարհորդների մէջ գէթ մէկը, որ արգահատանք զգայ, օգնի, բացատրի. ընդհակառակը բոլորն էլ կը գտնեն նրա արկածները զուարճալի և լի թոքերով կը հըռհռան:

Եւ այս չէ բոլորը, ես էլ ինչեր եմ տեսել:

Եւ ուրիշ կերպ չի էլ կարող լինել: Յիշիր մեր մանկութիւնը: Յիշիր, թէ ինչպէս գիւղերում սովորութիւն կայ «աւելորդ» կատուի ձագերը յանձնել երեխա-

ներին, որ տանեն թաղեն, յիշիր, թէ որպիսի վրդովեցուցիչ, անուր տանջանքներով այդ փոքրիկ արարածները, որոնք դեռ աչք էլ չեն բացել արև տեսնելու, թաղուում են կենդանի-կենդանի: Եւ ես ու դու քահանայի ենք թաղել: Հասկա թռչունների բներ քանդելը: Յիշում ես X...ենց բարդիների և կազամախների վրայի ագուանների բները, ամենից շատ այնտեղ էինք գնում, և թռչունների աղիողորմ ճիչերը, և ձագերի ճըճուցը. կար մէկ հասակաւոր, որ բողբէր, սաստէր: Մենք կարծեմ վախեցանք միայն այն ժամանակ, երբ մեզանից մէկը բարդիի կատարից վայր գլորուեց՝ վարտիքի կէսն այնտեղ թողնելով և ընկաւ գետին շախշախաւած:

Հասկա այն ծեր քիւրդի աղջիկները միտդ են: Պատերազմի ժամանակ էր, մենք երևի ազգասիրաբար հալածում էինք քիւրդերին: Ծերունին երկու փոքրիկ աղջիկների հետ հաց էր հաւաքում գոնէ-դուռ ընկած, իսկ մենք խումբ կազմած՝ քարեր էինք շարտում նրանց գլխին: Դժբաղդ ծերունին նախ աշխատում էր պաշտպանել երկու փոքրիկների մերկ մարմինները՝ մեր քարերից, ապա ճարը կտրած ձեռքերը տարածեց և անիծեց մեզ: Օ՛, այդ բարձրահասակ, վտիտ, տանջուած ծերունու յուսահատ շարժումը

ես երբէք չեմ մոռանայ. յիշում եմ, որ ես փախայ սարսափած, ինձ թւում էր, թէ երկնքից քար կընկնի իմ գլխին:

Ինչէր են անում երեխաները մեր երկրի խենթերի հետ, աղքատների հետ: Փողոցներում ընկած անտէր կատունները, շները, խենթերը, աղքատները, ահա մեր երկրի մանուկների զուարճութեան սովորական առարկաները: Եւ ինչէր են կատարում այդ մանուկների աչքի առաջ հասակաւորները: Յիշում ես հարսանիքի եզր. դա անգիր ժամանակներից մնացած մի բարբարոսութիւն է, որ այնպէս կենդանի պատկերացնում է մարդ-զազանը: Կանգնած է հսկայ եզր բակի մէջտեղում, չորս կողմում շահիլ աղջիկներ ու տղամարդիկ պար են բռնում, իսկ այդ պարի կենտրոնում հաստավիզ, բիրտ մսագործը սրում է դանակը, մի քանի հոգի կապում են կենդանու ոտները, նա պաշտպանում, ձգձգում է կապերը, իզուր, քաշում են, նա ընկնում է: Մօտենում են մի քանիսը, բռնում են անասունի գլուխը, և մսագործն իր ահագին դանակը նրա կողորդն է կոխում պարող հանդիսականների առաջ: Անասունի զարհուրելի խռլուոցը, նրա յորդահոս արեան փշոցը խառնում է դափ ու զուռնայի ձայնին, և մարդիկ ճիշտ աֆրի-

կական վայրենիների պէս պարում, ցատկոտում են այս նողկալի տեսարանի շուրջը: Եւ մանուկներն ուրախական աղաղակներով իրանց վէգերը ներկում են եզան արեան մէջ:

Բարբարոսներ...

Մենակ մենք չենք այսպէս, ամբողջ արևելքն է այս արտասուելի տգիտութեան, այս դազանային անգիտակցութեան մէջ: Բարբաղդաբար կարելի է ասել՝ դեռ հայ ժողովուրդը լաւ պայմաններում, շատերից աւելի ընդունակ, աւելի հեշտութեամբ է ձեռք վերցնում այս նախնական բարքերից և շատ աւելի հակամիտ է դէպի իրական քաղաքակրթութիւնը: Այնուամենայնիւ շատ, չափազանց շատ աշխատանք է հարկաւոր մեր երկիրը Եւրոպա դարձնելու համար այս բառի իսկական մտքով. սերունդներ և քաղաքակրթական աւանդութիւններ են պէտք:

Մեր ժողովուրդը դեռ շատ պիտի բարձրանայ, որպէսզի կարողանայ շվէյցարացու պէս ըմբռնել արարածների մեծ եղբայրութիւնը, որպէսզի մայր բնութեան մեծ գաղտնիքը թափանցի, և հոգին զգայուն դառնայ դէպի ամեն մի ցաւ, ամեն մի տառապանք, ուր և լինի նա: Իրական քաղաքակրթութիւնը՝ արդարութեան գերագոյն յաղթանակն

է, իսկ այդ նուիրական յաղթանակը անկարելի է այնտեղ, ուր մարդը տակաւին գիտէ տօկալ ամենավրդովեցուցիչ, ամենաարտասուելի փաստերը առօրեայ կեանքում, ուր նա այնքան հասունացած չէ բարոյապէս, որ կարողանայ անկարելի դարձնել իր շուրջը թափուող անօգուտ արցունքները, իր ականջի տակ հնչուող անզօր հառաչանքները:

Յը գրութիւն.

Ընկերք՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

XI

Հակառակ քո ցանկութեան, ուշացնում էի գրել շվեյցարական զիւղական դպրոցի մասին, սիրելիս. ուզում էի աւելի լաւ ուսումնասիրել այդ հաստատութիւնը: Ուրախ եմ, որ այդ յապաղումը օգտակար եղաւ, և ես այժմ կարող եմ գրել քեզ:

Իմ գբօսանքի ժամանակ մի անգամ դաշտում տեսայ մի շիկահեր երիտասարդ կին խոտ հնձելիս մի ահագին գերանդիով: Առողջ ու բարեձև կնոջ այդ աշխատանքը, նրա լիքը բազուկների լայն շարժումները իմ ուշադրութիւնը գրաւեցին: Աշխատանքը՝ մանաւանդ կանաչագարդ ու բուրալից դաշտերում միշտ գրաւիչ է, բայց երբ աշխատողը մի կին է, որ իր գեղեցիկ մարմնակազմի մէջ միացնում է ոյժի և կանացի քնքշութեան հակադրութիւնը, տեսարանը դառնում է աւելի գեղեցիկ, աւելի ակնապարար: Այդպէս էր այն հնձող գեղջիկուհին, որ իմ ուշադրութիւնը գրաւեց: Շվեյցարա-

կան դաշտերում կանայք տղամարդկանցից պակաս չեն աշխատում. բայց այս մէկը իր արտաքինի, իր շարժումների մէջ մի բան ունէր, որ յատուկ չէր ամենքին:

Նայեցի և անցայ:

Երկու օր յետոյ մեր տանտիկինը ծանօթացնում է ինձ մի ջահիլ կնոջ հետ:

— Եղբօրս ամուսինն է, պարոն, և մեր դպրոցի վարժուհին, խնդրեմ ծանօթանալ: Հնձող կինն էր:

— Վարժուհի՞ն... շատ ուրախ եմ, ես ձեզ տեսայ անցեալ օրը...

— Այո, այո, պարոն, ես հնձում էի. արձակուրդի օրերը մենք այդպէս ենք անցկացնում. ժամանակը միշտ կարճ է, պատասխանեց նա ժպտալով:

«Ժամանակը կարճ է, պէտք է աշխատել», սա շվէյցարական դեվիզ կարող է համարուել: Դժուար թէ մի այլ երկրում աշխատանքը իր բոլոր արտայայտութիւնների մէջ այս աստիճան սրբագործուած լինի, որքան Շվէյցարիայում: Այս մտքով շատ հետաքրքիր դիտողութիւններ գուցէ կարողանամ քեզ գրել, բայց առայժմ այդ թողնենք: Վարժուհու վերաբերեալ այս փոքրիկ միջադէպը պատմեցի միայն, որպէսզի տեսնես, թէ մինչև որ աստիճան բարձրի

գեղջուկ պարզութիւնը այս երկրում դիմացել է քաղաքակրթութեան հետ ընթացող որոշ համարեա անխուսափելի փոփոխութիւններին: Դու լաւ գիտես, սիրելիս, որ մեր գիւղերում եւրոպական գլխարկ ծածկող, զգեստներ հագնող մի ջահիլ աղջիկ, մանաւանդ եթէ հարուստ ծնողների զաւակ է, դժուարութեամբ կամ բնաւ յանձն չի առնի հնձուորների ճաշի կերակուրը ձեռքից կախել և դաշտ դուրս գալ: Հաւատացած եղիւր, որ նրան ճնշողը իր գլխարկն է, իր շորերն են. խղճուկ արարածն իր ազիտութեան մէջ կարծում է, որ եւրոպական գլխարկը աշխատանքի թշնամի է և ներկայացնում է ամօթ յարուցանող անպատեհութիւն, երբ պէտք է սովորական գործը կատարել: Միշտ այսպէս է, երբ զգեստների քաղաքակրթութիւնն աւելի վաղ է գալիս, քան գլխի և սրտի: Մեր երկրում գլխարկի քաղաքակրթութիւնը արդէն մըտնում է կարծեմ, գլխինը չը գիտեմ երբ կը գայ:

Դառնանք դպրոցին:

Վարժուհուց յետոյ ես ծանօթացայ նաև ուսուցչի հետ: Monsieur Գայիօն, գիւղական ուսուցիչը, մի նիհար, բարձրահասակ, բարետես մարդ է, մօտ 35 տարեկան. նա

ապրում է դպրոցի վերին յարկում իր կնոջ հետ: Խեղճ արտաքինով մի կին, որ ինձ բաւական խելացի թւաց: Մարդ ու կին ինձ՝ օտարական այցելուիս ընդունեցին մի ուշադրութեամբ, որ բարեկամական լինելութոյր հանգամանքներն ունէր: Երեք սենեակ ունին. խոհանոց, որ միւսնոյն ժամանակ սեղանատուն է, ընդունարան, որ և պարամունքի սենեակ է, և ննջարան: Ընդունարան մտնելու համար պէտք է անցնել խոհանոցից, շվէյցարական խոհանոց, ուր իշխում է կարգ ու մաքրութիւն. այդ մասին ես քեզ գրել եմ:

Գայիօ ամուսինները երեխայ չ'ունին. նրանք որդեգրել են մի փոքրիկ աղջիկ, որին փայփայում, խնամում են ծաղկի պէս: Երեխան երջանիկ էր, ժպտուն, ուրախ, ծնողները խօսք չէին գտնում իրանց գոհութիւնն ու ցնծութիւնն արտայայտելու: Այս տանը, այս բարեկիրթ ընտանիքի մէջ մի մեղմութիւն, մի պարզութիւն կայ, որ վարակիչ է, օտարականն անգամ իրան շատ լաւ է զգում Monsieur Gayot-ի մօտ:

—Մի բաժակ գինի, Վօ կանտօնի լաւ գինի, առաջարկում է ինձ տանտէրը:

Համաձայն եմ:

Վօ կանտօնի գինին այստեղ հռչակուած

է, բայց անշուշտ շատ ստոր է կովկասեան գինիներէից:

—Պարօնը հայ է, ասում է մոսիօ Գայիօն իր ամուսնուն, երբ մենք տեղ ենք բռնում սեղանի առաջ մի-մի բաժակ առաջներս:

Անմիջապէս սկսում է խօսակցութիւն malheureux (գժբաղդ) հայերի մասին: Գայիօ ամուսինները գիտեն ամեն ինչ, կարգացել են իրանց լրագրերը, շվէյցարական անկաշառ, մաքուր թերթերը: Գիտեն ամեն ինչ, բայց էլի հարցնում են, հարցնում են հարգար ու մի բաներ, որից սոսկում են, անիծում են ժամանակը, եւրոպական պետութիւններին: Թիւրքեր, Աբգիւլ-Համիդ, ջարդեր, քրիստոնեաներ—սովորական նիւթ, սովորական խօսակցութիւն, որ աշխատում եմ կարճ կապել: Գուցէ զարմանում ես, սիրելիս, բայց ես սիրով կ'ուզէի, որ ոչ ոք այդ մասին ինձ հարց չը տար, այն աստիճան այդ անվերջ գթութիւնը դառնում է վիրաւորական ազգային զգացմունքի համար. malheureux բառը մեխի պէս ականջ է ծակում:

Զգուշութեամբ խօսքը դարձնում եմ շվէյցարական դպրոցին: Մոսիօ Գայիօն ուսուցիչ է, հետեապէս շատախօս, դա իր արհեստն է: Նա տալիս է ինձ ամենատեսակ տեղեկութիւններ: Ցած ենք իջնում միասին:

նա ցոյց է տալիս ինձ դպրոցը, նրա բա-  
ժանմունքները, նստարանների կազմութիւ-  
նը, դասագրքերը, տետրակները, քարտէզ-  
ները:

Այս բոլորը սակայն ես քեզ նկարա-  
գրելու ցանկութիւն չ'ունիմ, և դա օգուտ  
էլ չ'ունի: Տեղնուտեղը հաւաքածս տեղե-  
կութիւնների հիման վրայ ես կ'աշխատեմ  
քեզ պատմել այն ընդհանուր սկզբունքները,  
որոնցով այստեղ առաջնորդուում է դպրոցը  
դէպի պետութիւնը, դէպի մարդկային խիղճը,  
դէպի անհատը՝ որպէս քաղաքացի և որպէս  
սոսկ մարդ: Այսպիսով քեզ համար էլ պարզ  
կը լինի այն դերը, որ այս երկրում յատ-  
կացուած է դպրոցին, և հասկանալի կը դառ-  
նայ այն անօրինակ քնքշութիւնը, որ ամ-  
բողջ Շվեյցարիան տածում է դէպի ման-  
կութիւնը, դէպի նրա դաստիարակութիւնը:  
Այս բոլորը, կարծում եմ, շատ աւելի նշա-  
նակութիւն ունի, քան նստարանների ման-  
րամասն նկարագրութիւնը:

Շվեյցարիայում ինչպէս ամեն օրէնք,  
նոյնպէս և կրթական հաստատութիւններին  
վերաբերեալ օրէնքը հիմնուած է ապակեն-  
տրոնացման սիստեմի վրայ: Դաշնակցական  
Սահմանադրութիւնը ձգում է ընդհանուր  
հիմունքները, թողնելով իւրաքանչիւր կան-

տոնին կատարեալ ազատութիւն այդ ան-  
հրաժեշտ ու արդար հիմքի վրայ բարձրա-  
ցնել իրանց ներքին վարչութեան շէնքը՝  
համապատասխան տեղական ազգաբնակու-  
թեան առանձնայատկութիւններին, բարքե-  
րին, ճաշակին: Դաշնակցական Սահմանա-  
դրութեան 27 յօդուածը, որ նուիրուած է  
այս երկրի տարրական կրթութեանը (ins-  
truction primaire), այսպէս է բնորոշում  
կանտոնների պարտքը և իրաւունքը այդ  
խնդրում.

«Կանտոնները պարտաւոր են հոգ  
տանել տարրական կրթութեան մասին,  
որը լինելու է բաւարար և դրուելու  
է բացառապէս քաղաքացիական իշխա-  
նութիւնների հսկողութեան ներքոյ:  
Տարրական կրթութիւնը պարտագիր է  
և հասարակական դպրոցներում ձրի:

Հասարակական դպրոցները դրուում  
են այնպիսի պայմանների մէջ, որ բո-  
լոր դաւանութիւններին պատկանող մա-  
նուկները յաճախել կարողանան, և որ-  
պէսզի նրանց խղճի և հաւատալիքների  
ազատութիւնը ոչ մի կերպ չը ճնշուի:

Դաշնակցութիւնը պէտք եղած մի-  
ջոցները ձեռք կ'առնի այն կանտոննե-

րի դէմ, որոնք չեն կատարի այս պարտաւորութիւնները»:

Ահա այն ընդհանուր շրջանակը, որ դաշնակցութիւնը դրել է իւրաքանչիւր կանտոնի առաջ կրթական հարցում, և որից նրանք իրաւունք չ'ունին դուրս գալու: Այդ շրջանակի մէջ նրանք ազատ են կազմել ամենատեսակ ծրագրներ ու կանոններ իրանց զաւակների դաստիարակութեան համար: Եւ արդարև իւրաքանչիւր կանտոն այս ընդհանուր հիմունքների վրայ կազմել է իր առանձին կրթական կանոնադրութիւնն ու ծրագիրը: Այդ բոլոր ըստ երևոյթին ուրոյն կրթական սիստեմները սակայն իրարից շատ չեն տարբերում, համարեա նոյնքան, որքան այս գեղեցիկ երկրի որևէ մասի դիւթիչ Ալպերն ու կապուտակ լճերը մի այլ մասի լեռներից ու լճերից:

Ինչպէս տեսանք, Դաշնակցական Սահմանադրութիւնը ժողովրդական կրթութեան օրէնքի մէջ առանձնապէս շեշտում է երեք խոշոր սկզբունքի վրայ. ա) ձրի և պարտադիր տարրական կրթութիւն, բ) խղճի կատարեալ ազատութիւն և գ) աշխարհական ոգու գերիշխանութիւն: Ինքնըստինքեան այս երեք սկզբունքներն էլ թւում են հասկանալի և ճիշտ իրագործելի, բայց երբ մի

փոքր աւելի մօտիկից ես նայում, խնդիրը երևում է շատ աւելի բարդ: «Պարտադիր կրթութիւն» — բայց ծնողի իրաւունքը կայ, նա ազգատ է, կարօտ, նրա պէտքը չէ, որ իր զաւակը ձրի կրթութիւն է ստանալու, նա կը նախադասէր մի աշխատող ձեռք ունենալ իր հետ տան ցաւը հողալու, բայց նա «պարտաւոր է» իր որդուն դպրոց տալ: Ահա արդէն մի խոշոր դժուարութիւն: «Նղճի, հաւատալիքների կատարեալ ազատութիւն» — այս էլ դպրոցում իր բազմաթիւ դժուարութիւններն ունի՝ ինկատի ունենալով հարցի լրջութիւնը և բազմաթիւ դաւանութիւնները: Շվեյցարիայում կողք-կողքի ապրում են կաթոլիկներ ու բողոքականներ. բայց վերջինը ունի իր բազմաթիւ բաժանումները. «ազգային եկեղեցի», «ազատ եկեղեցի»; և ուրիշ շատերը, նորերս էլ լոյս է ընկած «փրկութեան բանակը»: Ահա այսներքին, տեղական դժուարութիւնները վերացնելը, ապահովելով Դաշնակցութեան Սահմանադրութեան դրած երեք խոշոր սկզբունքները, ընկնում է կանտոնների վրայ:

Թէ առանձին կանտոնները իրանց ներքին, տեղական պայմանները ինչպէս են հաշտեցնում Դաշնակցութեան դրած ընդհանուր սկզբունքների հետ, այդ ցոյց կը

տայ օրինակ Վօ կանտոնի կրթական կանոնադրութիւնն ու ծրագիրը:

Կանտոնային սահմանադրութիւնը համակերպուելով դաշնակցական սահմանադրութեան գծած հիմունքին՝ որոշում է.

«Պետութիւնը (կանտոնային) և համայնքը պարտաւոր են հասարակական կրթական հաստատութիւններին տալ այն կատարելութիւնը, որ անհրաժեշտ է տեղական պէտքերին և որ հնարաւոր է երկրի ունեցած միջոցներով:

Կրթութիւնը պէտք է համապատասխան լինի ռամկավարական սկզբունքներին»:

Այնուհետև 18 յօդուածը բառաբան կրկնում է դաշնակցական սահմանադրութեան խօսքերը՝ ձրի, պարտադիր կրթութեան և խղճի ազատութեան մասին՝ աւելացնելով հետևեալը.

«Հասարակական դպրոցներում կրօնի ուսուցումը համապատասխան քրիստոնէական վարդապետութեան սկզբունքներին աւանդուելու է անկախ միւս առարկաներից»:

Կանտոնային սահմանադրութիւնը կրօնի դասաւանդութիւնը դուրս է թողնում

պարտադիր առարկաների կարգից և դարձնում կամաւոր: Այսպիսով դպրոցը միանգամայն ազատ է մնում այս ու այն դաւանութիւնների ներկայացուցիչների ազդեցութիւնից, և պաստեօրները իրանց մանուկ հօտի կրօնական դաստիարակութիւնը լրացնում են դպրոցից դուրս, մասնաւոր տներում: Իսկ դպրոցներում աւանդուող l'histoire biblique-ը—«աստուածաշնչի պատմութիւնը», ինչպէս անուանուած է ծրագրի մէջ, երեխաները ազատ են լսել կամ չը լսել: Դպրոցական կանոնադրութեան 14-րդ յօդուածը որոշակի շեշտում է այդ հարցի վրայ.

«Իւրաքանչիւր դպրոցում աւանդուում է կրօնի ուսուցում, որ կամաւոր է և անկախ պարտադիր առարկաներից... այդ ուսմունքը այնպէս պիտի դրուած լինի, որ չը հետևող աշակերտների կրթութեան համար խափանաւիթ հանգամանք չը հանդիսանայ: Այս առարկան նոյնպէս աւանդում է ուսուցիչը, որը սակայն իրաւունք ունի կրօն ուսուցանելուց հրաժարուել, եթէ այն գտնում է իր խղճի հակառակ»:

Հետաքրքիրն այն է, որ տարրական կրթութիւնը պարտադիր է ոչ միայն տեղա-

ցիների, այլև Շվեյցարիայում ապրող օտարականների համար: Մի օտարերկրացի, որ ընտանիքով թէկուզ մի տարի ապրում է այս երկրում և դպրոցական երեխաներ ունի, պարտաւոր է նրանց դպրոց ուղարկել: Այս խելացի օրէնքը անշուշտ աչքի առաջ է ունեցել այն առաջնակարգ նշանակութիւն ունեցող հանգամանքը, որ իւրաքանչիւր երկրի կարգի, խաղաղութեան, յառաջադիմութեան տեսակէտից շատ քիչ բան արժէ հասարակութեան միայն մի մասի ձեռք բերած կրթութիւնը, երբ նրա ծոցում մնում է թէկուզ մի հոգի անկիրթ, որը կարող է միշտ վտանգաւոր տարր հանդիսանալ ընդհանուր բարոյական շահերի դէմ: Դեռ Արիստոտելն իրաւացի կերպով ասել է, որ «մարդը հանրակենցաղ կենդանի է», կատարեալ մեկուսացումը նրան յատուկ չէ, կամայ թէ ակամայ նա ստիպուած է ապրել իր նմանների հետ, կազմել հասարակութիւններ, գիւղեր, քաղաքներ, ազգեր, ուր անհատները իրանց բարոյական և նիւթական անթիւ շահերով երես առ երես են գալիս, ընդհարւում: Ընդհանուր առողջ դաստիարակութիւնը միայն կարող է հեշտացնել այդ յարաբերութիւնները, հնարաւորութիւն տալ, որ մարդիկ իրապէս հասկանան իրար:

Դու յիշում ես, իմ ընկեր, մեր ընդարձակ խաղողի այգին, որի վրայ խեղճ հայրս այնքան տարի աշխատել էր՝ արիւն, քրքրտինք թափելով: Որովհետև այդ այգին գտնւում էր գիւղից մի փոքր աւելի հեռու, քան միւսները, մեր գիւղի թուրքերը շարունակ կողոպտում էին գիշերները: Մի անգամ գողերի երկու խմբեր իրար հանդիպեցին, զարկուեցին, մէկն սպանուեց, միւսը վիրաւորւեց, և խեղճ ծերունի հայրս արցունքն աչքերին՝ պատւիրեց յաջորդ տարին քանդել այդ այգին, «որովհետև, ասում էր նա, մի օր էլ այդ անողորմները կը խփեն, որդիներս կը սպանեն»: Եւ այն գեղեցիկ այգին, այնքան աշխատանքի այնքան քրտինքը, պտուղը քանդուեց, ոչնչացաւ, որովհետև մեր հարևան թուրքերն այդպէս կամեցան: Ահա քեզ մի շատ փայլուն օրինակ, թէ մինչև ո՞ր աստիճան անհրաժեշտ է մի երկրի բարօրութեան համար, որ բոլոր ազգաբնակութիւնը անխտիր կրթութիւն ստանայ, պարտադիր կրթութիւն, որպէսզի մէկի շինածը միւսը չը քանդի:

Իւրաքանչիւր համայնք (համայնքներն այստեղ խիստ փոքր են) պարտաւոր է ունենալ գոնէ մի հատ դպրոց, միմիայն այն գէպքում, երբ համայնքում դպրոցական ե-

բեխաների թիւը չի հասնում քսանի, կարելի է առանձին դպրոց չը պահել և միանալ հարեան համայնքի հետ: Դրա հակառակ որևէ մեծ համայնքի մի հեռուոր մասում, ձորերում ցրուած խրճիթներում եթէ կան քսան դպրոցական երեխաներ, պէտք է մի դպրոց բանալ: Այդ չէ բոլորը. որևէ համայնքի մէջ եթէ մի քանի ընտանիքներ, որոնք կարող են 5—7 տարեկան քսան երեխայ ներկայացնել, պահանջ դնեն, համայնական վարչութիւնը պարտաւոր է համայնական դպրոցից դուրս բանալ նաև մի մանկական դպրոց (école enfantine), կամ ինչպէս մեզանում անուանում են՝ մանկական պարտէզ:

Կարծում եմ, անօգուտ է դպրոցական տեղեկութիւնները քրքրել, թուեր առաջ բերել. բաւական է սսել, որ ամբողջ Շվէյցարիան ծածկուել է դպրոցների ցանցով, և գրագիտութիւնն ու տարրական բաւարար կրթութիւնը թափանցել են ժողովրդի ամենահեռուոր, ամենամութ խաւերում:

Շվէյցարիայում վաղուց է, որ այլևս անգրագէտ մարդ ճարել չի կարելի. այդպիսի կացութիւնը դարձել է նոյնիսկ անհասկանալի: Լոգանում՝ երբ պանսիոնում խօսք էր բացուում գրագիտութեան մասին,

իմ պառաւ տանտիկինը սիրում էր պատմել, թէ ինքը իր ջահիլ ժամանակից յիշում էր մի պոստային ցրիչ իրանց գիւղում, որ անգրագէտ էր և ստիպուած էր ստացած սակաւաթիւ նամակները բաժանել ուրիշների օգնութեամբ: Այդ խեղճ պոստային ցրիչին նա քանի անգամ էր նկարագրել արդէն, բայց ամեն անգամ վերսկսում էր, հէնց որ մի նոր պանսիոններ էր յայտնուում, և նոր առիթ ներկայանում: Եւ այս անգրագէտ մարդուն նա ամեն անգամ նկարագրում էր այնպէս, ինչպէս կենդանաբանը կը նկարագրի որևէ կենդանական անցած ցեղ: Նորերս նա դարձեալ մի նոր գիւտ էր արել. մի երեկոյ յուզուած կերպով հաղորդեց իր պանսիոններներին, որ իրանց իտալացի լուսցարարուհին ոչ գրել գիտէ և ոչ կարդալ: Ես ժպտացի խեղճ շվէյցարուհու միամտութեան վրայ, որ կարծում է, թէ ամբողջ աշխարհը Շվէյցարիա է, էլ չը գիտէ, որ մեր երկրում 5—20% գրագէտ թէ լինի, գոհ կը լինինք:

Իւրաքանչիւր երեխայ պարտաւոր է դպրոց յաճախել այն տարուայ ապրիլի 15-ից, երբ լրանում է նրա եօթ տարին, մինչև այն տարուայ ապրիլի 15-ը, երբ լրանում է նրա 16 տարին: Այս ժամանակի ընթաց-

քում ծնողները իրաւունք չ'ունին որևէ պատրուակով երեխաներին տանը պահել՝ զրկելով ուսումից: Վերահսկող իշխանութիւնները, որոնց մասին կը խօսեմ յետոյ, այդ դէպքում ուշադիր են և խիստ:

Ծնողները իրաւունք ունին իրանց զաւակներին դպրոց ուղարկելու փոխարէն տանու դաստիարակութիւն տալ, բայց այդ դէպքում նրանք պարտաւոր են ներկայանալ տարեկան քննութիւններին և հաշիւ տալ իրանց սովորածի մասին: Հակառակ դէպքում ծնողները ենթարկուում են 5—10 ֆրանկ տուգանքի:

Դասերից բացակայող աշակերտները ցուցակը ամենայն օր պարբերաբար հաղորդուում է դպրոցական մասնագործին, որ բացատրութիւն է պահանջում ծնողներից: Երբ պատճառը յարգելի չէ, յայտնում է պրեֆեկտին, որ ենթարկում է ծնողներին նախ 20, ապա 50 սանտիմ տուգանքի իւրաքանչիւր բացակայութեան համար: Միայն այն դէպքում, երբ ապացուցուի, որ բացակայութեան յանցանքը երեխաների վրայ է ընկնում, ծնողներն ազատուում են, և բացակայողն է պատժուում: Հետաքրքիր են աշակերտների համար նշանակուած պատիժները. ինչ ասել կ'ուզի, որ ծեծը իսպառ

վերացուած է, և մի այդպիսի փաստ կարող է ամենածանր հետևանքներ ունենալ ուսուցչի համար: Ուսուցիչը կարող է վատ թւանշան դնել, յանդիմանել դասարանի առաջ կամ առանձին, չորս ժամուայ աւելորդ աշխատանք նշանակել, կամ կէս օրով դպրոցից արձակել՝ ծնողներին յայտնելով պատճառը: Ինչպէս տեսնում ես, սիրելիս, խեղճ ուսուցիչը մեծ զէնք չ'ունի կուելու անկարգ, անհնազանդ աշակերտների դէմ, նրան մնում է միայն բարոյական ներշնչումը, համբերութիւնը, իր անձնական օրինակը: Շվէյցարիայի ուսուցիչները բազմից այստեղի մանուկները շատ հնազանդ են, մեղմ, անուշ բնավորութիւն ունին թէ՛ գիւղում և թէ՛ քաղաքում: Անկարգ աշակերտներին դպրոցից արձակելու իրաւունքը վերապահուած է բացառապէս կրթական դեպարտամենտին, որ իւրաքանչիւր կանտոնի կրթական նախարարութիւնն է: Բայց այդպիսի դէպք հազիւ տեղի ունենայ, որովհետև դպրոցական ստորին վարչութիւնները հազարումի բարոյական միջոցների կը դիմեն անհնազանդ երեխային փողոց չը ձգելու համար:

Ես քեզ կարծեմ գրել եմ, որ դպրոցական շէնքերը իւրաքանչիւր գիւղում առա-

Ղին տեղն են բռնում իրանց մեծութեամբ, մաքրութեամբ, ճոխութեամբ: Մի գիւղ մըտնելիս, առանց հարցնելու հեռուից կարելի է իմանալ, թէ ո՞րն է դպրոցը, որովհետև նա իշխում է բոլոր միւս շէնքերի վրայ: Այդ դեռ քիչ է. նրա շրջապատն էլ պէտք է պատշաճ լինի դպրոցի նպատակին. նրա մօտերքում չի կարելի տեսնել ո՞չ կաֆէ, ո՞չ գինետուն, ո՞չ իջևան, որ կարող էին աշակերտները դաստիարակութեան վրայ փաստակար ազդեցութիւն ունենալ: Դպրոցական շէնքը ազատ ժամերում կարելի է գործածել որևէ ուրիշ նպատակի, բայց միայն հանրօգուտ նպատակի, օրինակ՝ դասախօսութիւն, որևէ ընկերութեան նիստ, բայց ո՞չ մի պայմանով այնտեղ չի թոյլ տրուի կազմակերպել խմիչքի վաճառանոց և պարեր:

Այս տողերը գրելիս միտս եկաւ մեր անցեալ դպրոցական կեանքից երկու դէպք: Չը գիտեմ դու էլ յիշո՞ւմ ես, թէ ոչ, մեր հոգաբարձուն առանց աւագ ուսուցչի համաձայնութիւնն առնելու դպրոցական դահլիճը տուել էր կասկածելի բարոյականի տէր մի խումբ թափառական պարողների, որոնք դպրոցում պէտք է զանազան խայտառակ խաղեր սարքէին ամբոխի ամենաստոր ինստիտուտների համար: Կանայք էլ կային: Այդ

երեկոն ես երբէք չեմ մոռանայ: Դպրոցը աւերակ էր դարձել, նստարանները տակն ու վրայ, ապակիները փշրուած: Խեղճ աւագ ուսուցիչը եկաւ տեսաւ, մնաց շուրած: Պատուիրեց անկոչ հիւրերին դուրս գնալ դպրոցից: Հետևանքը յիշում ես ինչ եղաւ, քիչ մնաց՝ մարդը բանտ նստէր, էլ դատաստանական ու վարչական իշխանութիւն, էլ բողոք, էլ իրարանցում: Այս բոլորի հեղինակ հոգաբարձուն էլ խօսմ կրակ էր կտրել, նրա անձնասիրութիւնը վիրաւորուած էր, իսկ ցիրկի վարիչներն էլ մասամբ իրաւացի կերպով իրանց նիւթական փաստն էին պահանջում խեղճ աւագ ուսուցչից: Օրեր էին մեր գիւղական ուսուցչիչները, այդ ազնիւ, աշխատաւոր դասակարգի համար, որ տքնեց, տառապեց և անցաւ: Չը գիտեմ՝ այժմ զգո՞ւմ են դոնէ, թէ որպիսի մշակներ էին նրանք մեր խաւար ժողովրդի կրթութեան լուսաւորութեան գործում:

Մի անգամ էլ հոգաբարձուներից մէկը, որ երեսփոխ էր միևնոյն ժամանակ, գատկի մատաղի եզը մորթելուց յետոյ ներս էր քաշել դպրոցը և բաժանել: Դասարանների յատակը պատած էր արիւնով, քանի օր պէտք եղաւ քերել, տաշել մաքրելու հա-

մար: Դարձեալ որքան անախորժութիւն ուսուցիչներէ համար:

Շվէյցարիայում իւրաքանչիւր համայնք մօտիկից հետևում, հսկում է իր դպրոցի ընթացքին մի առանձին պաշտօնական մարմնի միջոցով, որ կոչւում է դպրոցական յանձնաժողով (Commission scolaire): Այդ յանձնաժողովի անդամները նշանակւում են համայնական վարչութեան կողմից չորս կամ աւելի տարով և պարտք ունին յաճախակի այցելել դպրոցները, և հսկել ուսուցիչներէ և աշակերտներէ ընթացքի վրայ: Այս յանձնաժողովից դուրս նաև համայնական վարչութիւնը ամբողջապէս կտմ պատգամաւորներով պարտական է ներկայ լինել քննութիւններին, դպրոցական զանազան տօներին և առհասարակ հսկել դպրոցի ընթացքի վրայ: Այսպէս, իւրաքանչիւր համայնք, ինչպէս տեսնում ես, իր դպրոցի անմիջական տէրն է, և որը նրա համար իր բոլոր հաստատութիւններից ամենաթանկն է: Դպրոցը որևէ գիւղում չի նկատւում որպէս ուրոյն հաստատութիւն, անկախ միջավայրից, որը կառավարում են ինչ-որ հեռաւոր մարդիկ և որոնք երբեմն երբեմն փայլակի պէս յայտնւում են ուսնցնում: Շվէյցարական գիւղը գիտէ, թէ

դպրոցն ինչ է. նա նախանձոտ սիրով գըրկել է իր մանուկ սերունդը պատրաստող այդ հիմնարկութիւնը, գուրգուրում, փայփայում է և բնաւ կարիք չունի աւելորդ միջամտութեան, միշտ վնասակար հեռաւոր խնամակալութեան, որ յաճախ արտայայտւում է կամ տարեկան մի այցելութիւնով կամ մի շարք անմիտ կարգադրութիւններով:

Ես դեռ չը վերջացրի. շվէյցարական գիւղական դպրոցի մասին դեռ էլի ասելիք ունիմ: Այն էլ յաջորդ նամակով:

Յ'գրութիւն.

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ.

## XII

Ես քեզ գրեցի անցեալ անգամ, սիրելիս, որ շվէյցարական զիւղական դպրոցի մասին դարձեալ ասելիք ունիմ: Այժմ շարունակում եմ, յուսամ այդ քեզ չի ձանձրացնի:

Ինչպէս յայտնի է, գրագիտութիւնը Շվէյցարիայում ընդհանուր է, բացառութիւն չը կայ: Համաձայնիք ինձ հետ սակայն, որ «գրագիտութիւն» բառը բաւական առաձգական է. գրագէտ է և նա, ով գրել-կարդալ զիտէ մայրենի լեզուով, ինչպէս և նա, որ դրա հետ միաժամանակ հէնց դըպրոցից դուրս է բերել որոշ հասկացողութիւններ իւրաքանչիւր անհատի բազմապիսի պարտքերի և իրաւունքների վերաբերեալ: Հին ժամանակ, մի քանի դար առաջ, գրագիտութեան սահմանները շատ որոշ էին և համարեա բոլոր երկրներում միակերպ՝ շնորհիւ կրօնի բացառիկ գերիշխանութեան գաստիարակութեան խնդրում և ուսուցման

միակողմանիութեան: Վերջին երկու դարերում դրական գիտութիւններն ու փիլիսոփայութիւնը մի շարք այնպիսի կարևոր փոփոխութիւններ առաջ բերին մարդկային հասկացողութիւնների մէջ, որ հասարակական, անհատական յարաբերութիւնները տակն ու վրայ եղան: Կեանքի կատարեալ կերպարանափոխութիւնը և նրան զուգընթաց բազմաթիւ նոր պահանջներ, նոր շահեր, բարոյական, նիւթական, հասարակական և ազգային, ժողովրդական կրթութեանը տուին մինչև այդ օրերը չը տեսնուած կարևորութիւն:

Մեր աչքի առաջ այժմ համարեա բոլոր աւելի կամ պակաս քաղաքակիրթ երկրներում ժողովրդական կրթութեան հողի վրայ կատարւում է մի պայքար, որի առաջնակարգ կարևորութիւնը ապացուցւում է իր ուժգնութեամբ: Քաղաքական և ազգային, դասակարգային և կրօնական շահերը բաղխւում են իրար, իսկ յաղթանակի առարկան ժողովրդական կրթութեան գործն է: Այն գիտակցութիւնը, թէ այսօրուայ մանկութիւնը վաղուայ մարդկութիւնն է, պայքարող կողմերին մղում է բոլոր հնարաւոր և նոյն իսկ անհնարին միջոցներով ձեռք ձգել ապագայ սերունդը կաղապարե-

լու իրաւունքը և նրա բնաւորութեան մէջ շեշտել իր կամքը, իր հասկացողութիւնները և այսպիսով ապահովել իր անմիջական ու հեռաւոր շահերը:

Ժողովրդական կրթութեան շուրջը մըղուող պայքարի մէջ առաջնակարգ դերը խաղում է բնականապէս պետութիւնը, որ իւրաքանչիւր երկրում աշխատում է մատաղ սերունդների դաստիարակութիւնն իր ձեռքի տակ ունենալ: Մէկ տեղ նա՛ պետութիւնը իր սեփական կղերի ձեռքից է դուրս քաշում ժողովրդական կրթութիւնը, մի ուրիշ տեղ իր ձեռքի տակ ունեցած բոլոր նիւթական կարողութեամբ ծանրանում է զանազան այլացեղ տարրերի վրայ, որոնց քաղաքական ճակատագիրը այդ հնարաւոր է դարձնում:

Դու անշուշտ լրագրերի միջոցով հետեւում ես արտասահմանեան կեանքին և երևի ծանօթ ես մօտաւորապէս այն մեծ պայքարին, որ հանրապետական Ֆրանսիան ստիպուած էր մղել իր կաթոլիկ կղերի դէմ՝ ժողովրդական դպրոցների մէջ աշխարհական ոգին, ռամկավարական սկզբունքները, քաղաքացիական ժամանակակից լուսաւոր հասկացողութիւնները սերմանելու համար: Գիտես նոյնպէս, թէ եկեղեցին որպիսի առ-

կունութեամբ, ինչ անօրինակ յամառութեամբ դիմադրում էր պետութեանը իր հնազոյն ժառանգութիւնից չը զրկուելու համար: Կեանքի և մահուան կռիւ էր նրա համար: Այդ կռիւը հին է, սիրելիս, արտայայտութիւններն են տարբեր այս կամ այն ժամանակում: Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը պետութեան և եկեղեցու մէջ ապահարզան առաջ բերելով, այդ կռիւը դարձրեց աւելի սուր, աւելի ուժգին: Դա հնի և նորի, գիտութեան և խաւարի պայքարն է, որ քանի դարերից իվեր յեղեղում է առանց վերջնական լուծման յանգելու: Այս անգամ սակայն Ֆրանսիայում, ինչպէս յայտնի է, աշխարհիկ ոգին յաղթանակեց:

Դու անշուշտ այնքան միամիտ չես լինի կարծելու, որ Ֆրանսիական հանրապետութիւնը նոյնքան իրաւունք կունենար, եթէ այդ խիստ միջոցները ձեռք առնէր իր իշխանութեան տակ գտնուող մի կամ մի քանի ազգութիւնների՝ օրինակ ալժիրցիների կամ հնդկաչինացիների դէմ, թէ նա բռնի կերպով և ժողովրդական կրթութեան միջոցով յանուն ինչ-որ պետական շահերի ստիպէր իր հպատակ այդ փոքր ազգերին մոռանալ իրանց լեզուն, կրօնը, ազգութիւնը: Յանուն խղճի և մտքի ազատութեան

ազգերին չեն տրորում ոտքի տակ, նրանց գերագոյն անհատական իրաւունքները չեն ոչնչացնում:

Նախաբանս գուցէ մի փոքր երկար եղաւ, բայց, կարծում եմ, ոչ անօգուտ և ոչ անտեղի: Շվէյցարիայի ներքին խաղաղութիւնը և ժողովրդական դաստիարակութեան հարցում իշխող կատարեալ համերաշխութիւնը գնահատելու համար հարկաւոր էր տեսնել, թէ ի՞նչ է կատարւում այդ փոքրիկ երկրից քիչ հեռու: Նամակիս սկզբում ասացի, որ ժողովրդական կրթութեան խնդրում պետութիւնը մեր օրերում երկու տեսակ պայքար է մղում. մէկտեղ նա կուռն է իր սեփական կղերի դէմ, ինչպէս Փրանսիայում, մի այլ տեղ նա ժողովրդական դպրոցի միջոցով աշխատում է ոչնչացնել իր ծոցում ապրող այլացեղ տարրերի ազգային ինքնուրոյնութիւնը, պատմութեան սրբագործած աւանդութիւնները: Ժամանակակից Շվէյցարիան չի ճանաչում ոչ մէկը և ոչ միւսը: Նրա դպրոցները աշխարհիկ են, այնտեղ իշխում է աշխարհական ոգի, կղերականութիւնը իր նեղ մաքով անձանօթ է: Կրօնի դասաւանդութիւնը, ինչպէս տեսար իմ անցեալ նամակից, դրուած է այնպիսի պայմանների մէջ, որ նա ան-

գօր է միակողմանի ազդեցութիւն ունենալ կամ ընդհարումն առաջ բերել տարբեր դասնութիւնների մէջ: Միւս կողմից՝ չը նայելով որ Շվէյցարիայում կողք կողքի ապրում են երեք լեզու, գերմաներէն, ֆրանսերէն և իտալերէն, այնուամենայնիւ լեզուական գերիշխանութեան հարց անգամ չը կայ: Շվէյցարիայի մեծամասնութիւնը գերմանախօս է, այնուհետև ֆրանսիախօս և շատ փոքրիկ մասը իտալախօս: Շատ բնական էր կարծել, որ աւելի գօրեղ տարրը, օրինակ գերմանախօսը գլուխ ունենալով Դաշնակցութեան կենտրոն Բերնը, կ'աշխատէր իր լեզուն ընդհանուր դարձնել, բայց իրականութիւնը ցոյց է տալիս, որ այդպիսի ձգտման գաղափար անգամ չը կայ, և իւրաքանչիւր շվէյցարացի ամօթից կը կարմրէր մի այդպիսի փորձի առաջ: Ես յիշում եմ, նախ անցեալ տարի գերմանական մի թերթ յօդուածներ տպագրեց այն մասին, թէ գերմանական Շվէյցարիան բաւականաչափ ուշադիր չէ դէպի իր լեզուն, թէ ֆրանսերէնն աւելի է տարածւում գերմանախօս կանտոններում: Յիւրիխի (գերմանախօս) թերթերը արհամարհանքով պատասխանեցին, թէ գերմանացիների գործը չէ Շվէյցարիայի ներքին խնդիրները յուզել:

Այսպիսով շվեյցարական բազմալեզու և բազմակրօն (եթէ կարելի է ասել) ժողովուրդը արտաքին տարբերութիւնների ներքոյ կարողացել է գտնել մի միութիւն, ընդհանուր հայրենիքի պատմական ճակատագրի, ապրած անցեալի միութիւնը և իր ինքնուրոյնութիւնը հաստատել է այդ միութեան վրայ: Ամենքն էլ շվեյցարացի են, ինչ լեզուով էլ խօսեն, ինչ դաւանութիւն ունենան: Կրօնը և լեզուն, որպէս պատմական ժառանգութիւն շվեյցարական ամբողջութիւնը կազմող իւրաքանչիւր տարրի, որպէս անկապտելի իրաւունք անհատականութեան, որպէս հոգու և խղճի գերաւորյն արտայայտութիւն՝ ազատ են մնացել ամեն մի ոտնձգութիւնից՝ ազգային քաղաքական միութիւնը համերաշխութեամբ ամրապընդելու համար: Այս քաղաքակրթուած գեղջուկների քաղաքական իմաստութիւնը արդարև սքանչելի է:

Ահա, սիրելիս, այդ քաղաքական իմաստութիւնը, այդ քաղաքացիական օրինակելի առաքլինութիւնն է, որ հիմունք է ծառայում շվեյցարական ժողովրդական կրթութեանը, դա այն չափն է, որ ընդունուած է այս երկրում հասկանալ «ընդհանուր գրագիտութիւն» տերմինի տակ: Շվեյ-

ցարական բոլոր հաստատութիւնները իրանց վրայ կրում են ներքին բազմազանութիւնը ընդգրկող այդ միութեան կնիքը, օժանդակում են նրա զարգացմանը. ամենից աւելի բնականապէս դպրոցն է, ստորին ժողովրդական դպրոցը, որ այս փոքրիկ երկրի կազմակերպութեան, ազատ վարչութեան մեծ իրէան գուրգուրում, խնամում է քրնքշութեամբ և սիրելի դարձնում սերունդներին:

Մի փոքր մօտիկից նայենք շվեյցարական ժողովրդական դպրոցի ծրագրին: Պարտադիր ուսանելի առարկաներն են.

Մայրենի լեզու:

Թւաբանութիւն:

Աշխարհագրութիւն:

Քաղաքացիական ուսումն (Instruction  
վայելչագրութիւն: [civique])

Գծագրութիւն:

Երգեցողութիւն:

Մարմնամարզութիւն:

Ձեռքի աշխատանք:

Բնական գիտութիւններից տարրական հասկացողութիւններ և նրանց գործադրութիւնը կեանքի մէջ:

Տնտեսութիւն և առողջապահութիւն (միայն աղջիկների համար):

Իւրաքանչիւր շվէյցարացի երեխայ պարտաւոր է 7—16 տարեկան դառնալը նուիրուելու այս առարկաների ուսանելուն: Որպէսզի որոշ գաղափար տուած լինիմ իւրաքանչիւր մանկան մտաւոր պատրաստութեան մասին դպրոցն աւարտելուց յետոյ, ես այստեղ կը դնեմ նրանց սովորածի մինիմումը այն առարկաներից, որոնք ամենից աւելի սատարիչ են հանդիսանում քաղաքացիական և անհատական առաքինութիւնների մշակելուն և ընդհանուր զարգացմանը:

Սյուպէս՝ աշխարհագրութիւնից իւրաքանչիւր շվէյցարացի դպրոցն աւարտելուց յետոյ գիտէ՝ — շվէյցարական բոլոր կանտոնները, նրանց ֆիզիկական և քաղաքական կազմակերպութիւնը, գիտէ իր երկրի վաճառականութիւնը, երկրագործութիւնը, գլխաւոր արդիւնաբերութիւնը, Ընդհանուր աշխարհագրութիւնից ծանօթ է 5 աշխարհների ֆիզիկական և քաղաքական կազմութեանը: Եւ այնուհետև դպրոցից դուրս իր լրագրի ընթերցանութեամբ նա կարողանում է հետևել համաշխարհային անցքերին, գիտէ ազգերի համախմբումները, հասկանում է մեծամեծ ընդհարումների պատճառները, որ նա քննադատում է և յայտնում է իր

կարծիքը: Գուցէ աշխարհի ոչ մի անկիւնում այնպէս լաւ ծանօթ չը լինին արևելեան և մասնաւորապէս հայկական հարցին, որքան Շվէյցարիայում, մեր արիւնոտ անցքերից և ոչ մէկը սրանց ուշադիր աչքից չի վրիպել: Երանի թէ իւրաքանչիւր հայ մարդ այնքան բան հասկանար իր սեփական ճակատագրից, որքան այդ հասկանում է օտար շվէյցարացին:

Բնական գիտութեան դասաւանդութիւնը յարմարեցրուած է իւրաքանչիւր տեղի ֆլօրային ու ֆաունային: Բացի ընդհանուր կենդանաբանական, բուսաբանական, քիմիական գիտելիքները, վերջին տարիներում աշակերտները սովորում են նաև մարգագետինները, օգտակար խոտերը, նրանց սնուցանող յատկութիւնը, վնասակար միջոցները և այլն: Իսկ ուր որ այգեգործութիւն կայ, այնտեղի դպրոցում աւանդուած է վազի մշակութիւնը. արուեստական պարտաացումը, խաղողի հիւանդութիւնները, բժշկութիւնը: Վերջին տարին աշակերտները ծանօթանում են իրանց տեղի մասնաւոր արդիւնաբերութեան հետ, կաթի, հացի, պտուղների, ձուի, մսի, բանջարեղէնների կազմութեան հետ: Սովորում են նոյնպէս արհեստի պարունակող և առանց արհեստի ըմ-

պելինները և զգեստեղէնի յատկացրած հում նիւթերի տեսակները — ինչպէս քաթան, բամբակ, բուրդ, մետաքս, կաշի և այլն:

Այսպիսով չը կայ մի հատ շվէյցարացի, որ իր երկրում բնութեան երևոյթները, կամ քաղաքակրթական արտայայտութիւնների առաջ ապուշ կտրուած մնայ: Կայծակ, որոտ, աստղեր, եղանակի փոփոխութիւններ, ելեկտրականութիւն, ելեկտրաքարշ, երկաթուղի, հեռախօս, զանազան մեքենաներ, քիմիական այլևայլ փորձեր էլ նրա զարմանքը չեն շարժում: Նախապաշարմունքները հալածուած են այս երկրից, մարդը կանգ է առել բաց բնութեան հանդէպ, աշխատում է և ապրում:

Ես ոչինչ չ'ասացի լեզուի և պատմութեան մասին, որովհետեւ հասկանալի է, որ նրանք առաջնակարգ տեղ են բռնում և ամենալայն չափով ուսուցանում: Չեմ խօսի նոյնպէս մնացած առարկաների ծրագրի մասին, որովհետեւ այսպիսով նամակս շատ կ'երկարէր. կ'ասեմ միայն, որ գիւղերում առանձին ուշք են դարձնում երեխաների ֆիզիքական զարգացման վրայ, բոլոր դպրոցներում շաբաթական մի քանի ժամ յատկացուած է մարմնամարզի. բացի այս, մասնաւոր խնամքով ուսուցանում են դաշտա-

յին և այգեգործական աշխատանքները, տրնկաբանութիւն, պատուաստ և այլն, իսկ աղջիկներին կարուձև ու ձեռագործ, տուն կառավարել, հիւանդ խնամել, մի փոքր դեղագործութիւն:

Իրա փոխարէն ես մասնաւորապէս կանգ կ'առնեմ շվէյցարական դպրոցներում աւանդւող այն օրիգինալ առարկայի վրայ, որ ես թարգմանեցի քաղաքացիական դաստիարակութիւն — «Instruction civique»:

Այս բոպէին իմ առաջն է այդ առարկայի դասաւանդման համար կազմուած դասագիրքը՝ «Cours élémentaire d'instruction civique». հեղինակն է յայտնի Նոլմա Դրոզը, մի անուն, որ մի առժամանակ, աւանդ, շատ կարճ ժամանակ, 1895-ին կապուեց հայ յոյսերի հետ: Քանի մօտիկից եմ ծանօթանում այս դասագրքի հեղինակի առաջնորդող ոգու, նրա զգացմունքների հետ, այնքան աւելի է մեծանում ցաւս, որ Նոլմա Դրոզը մեզ համար միայն անուն մնաց<sup>1)</sup>:

Ինձ թւում է, որ շվէյցարացի մանուկը լաւ քաղաքացի դառնալու համար կարիք չունի դպրոցում առանձին ժամեր նուիրել

<sup>1)</sup> 1895 թուին հայկական հարցի եռուն շըրջանում խօսք կար Նոլմա-Դրոզին պետութիւնների կողմից անուանել զեներալ-նահանգապետ ինքնավար Թիւրքաց Հայաստանի:

ուսուցչի բերանից լսելու իր պարտքերն ու իրաւունքները: Բաւական է, որ նա մեծանում է Շվէյցարիայում, ապրում է այս ազատ ու առողջ միջավայրում, տեսնում է իր շուրջը կատարուածները, իրանց մեծերի արածները: Ամենքը և ամեն ինչ, նոյնիսկ լեռներն ու ձորերն այս երկրում հզօրապէս օժանդակիչ են լաւ դաստիարակութեան: Բայց շվէյցարացիք այնուամենայնիւ պէտք են համարել առանձին ժամեր յատկացնել դպրոցում իրենց զաւակների քաղաքացիական դաստիարակութեանը, և նրա դասագիրքը կազմել է մի այնպիսի մարդ, որպիսին է Նոմա Դրոզը, շվէյցարական լաւագոյն քաղաքացիներից մէկը:

Սիրելի ընկեր, իւրաքանչիւր ժողովուրդ իր քաղաքացիական դաստիարակութիւնը, առաջնորդող բարոյական սկզբունքներն ունի: Եւ այդ դաստիարակութիւնը լաւագոյն չափն է որոշելու մի երկրի քաղաքակրթութեան աստիճանը. որչափ ստոր է կանգնած մի ժողովուրդ, մի հասարակութիւն, նոյնքան աւելի անորոշ, խառնիխուռն են նրա բարոյական հասկացողութիւնները, պարտքերի և իրաւունքի սահմանները, նոյնքան լի է հակասութիւններով նրա կեանքը:

Տրամաբանութեան, հետևողական սիս-

տեմի վրայ հաստատուած բարոյականութիւնը յատուկ է բարձր կուլտուրայի հասած ժողովուրդներին, որոնք առաջնորդում են բանականութեամբ, արդար օրէնքներով և ոչ թէ վայրիվերոյու խախտւած սովորութիւններով, նախապաշարմունքներով, կրօնական առասպելներով: Ահա թէ ինչու ես որոշեցի մի փոքր աւելի երկար կանգ առնել շվէյցարացիների քաղաքացիական դաստիարակութեան վրայ:

Նոմա Դրոզից աւելի լաւ բացատրել չեմ կարող քաղաքացիական դաստիարակութիւնը, ուստի ես բառաբառ կ'արտագրեմ նրա գրքի յառաջաբանը, որ մի տեսակ ընդհանուր ծրագիր է մնացածի:

1) «Քաղաքացիական դաստիարակութիւնը, ասում է Դրոզ, նպատակ ունի պատրաստել լաւ քաղաքացիներ: Դուք մեծանում էք, ով իմ փոքրիկ բարեկամներ, և ձեր ծնողները ծերանում են: Կամաց-կամաց նրանք գերեզման կ'իջնեն, ընդունակ կը լինէք դուք այն ժամանակ նրանց տեղը բռնել: Այո՛, եթէ ձեր մանկութիւնից սկսած պատրաստուէք լաւ քաղաքացի դառնալու:

2) «Լաւ քաղաքացին նա է, ով սիրում է իր հայրենիքը, ով ձանաչում է իր իրա-

ւունքները և ով կատարում է իր պարտքը դէպի իր համաքաղաքացիները:

«Մեր սիրուն հայրենիքի՝ Շվեյցարիայի պատմութիւնը մեզ տալիս է բազմաթիւ լաւ քաղաքացիների օրինակ: Նա ցոյց է տալիս մեզ, թէ որպիսի ջանքերի, անձնուրացութեան գնով մեր հայրերը կարողացել են ձեռք բերել անկախութիւն, ինչ ներդրութիւններ են կրել այդ անկախութիւնը օտարներից պաշտպանելու համար: Նա մեզ սովորեցնում է, որ միութեան և զոհի պատրաստակամութեան ոգին է, որ Դաշնակցութեանը տուել է ոյժ և բարգաւաճումն. այդ ոգին է, որ արտայայտուում է՝ «մէկը ամենքի և ամենքը մէկի համար» մեր ազգային գեղեցիկ դեւիզի մէջ: Սովորեցէք ուրեմն ձեր պատմութիւնը սիրով, ո՞վ մանուկ շվեյցարացիներ, և աշխատեցէք լինել արժանի զաւակներ ձեր հայրերի:

3) «Իրաւունքն այն է, ինչ որ արդար է. պարտքը իրաւունքի յարգանքն է:

«Աստուած դրել է մեր հոգու մէջ արդարութեան և անարդարութեան գիտակցութիւնը: Ձեր մերձաւորին չարիք չը պէտք է անէք, որովհետեւ չէիք կամենայ, որ նա նոյնն անէր ձեզ: Պարտական էք ընդհակառակը նրան բարիք անել, որովհետեւ ուզում

էք, որ նա նոյնն անէ ձեզ: Ձը կայ իրաւունք առանց պարտքի, պատիւ և իրաւունք միևնոյն մեղալի երկու երեսներն են: Մի կրկնէք շարունակ, թէ «սա իմ իրաւունքն է», մտածեցէք նոյնպէս ձեր պարտքի մասին և կատարեցէք այն:

4) «Մարդը ստեղծուած է հասարակութեան մէջ ապրելու համար:

«Խելքն ու փորձառութիւնն այդ ապացուցանում են: Երեխաներն ի՞նչպէս կը մեծանային, եթէ ծնողները նրանց ձգէին ծնունդից յետոյ, ինչպէս այդ անում են շատ կենդանիներ:

«Մի հատ մարդը մենակ ի՞նչպէս պիտի կարողանար իր բոլոր կարիքները հոգալ:

«Աֆրիկայի և Աւստրալիայի վայրենիներն անգամ ապրում են ցեղերով: Էլի մի ապացոյց, որ մարդը մենակ առանց հասարակութեան ապրել չի կարող:

5) «Ամեն մի հասարակութիւն կարիք ունի կազմակերպութեան և կանոնների:

«Երբ դուք հաւաքուում էք խաղալու, սահմանում էք կանխաւ խաղի կանոնները: Ով խախտում է այդ կանոնը կամ խաբում, դուք նրան պատժում էք:

«Ընտանիքի մէջ ծնողները սահմանած կանոններ ունին, որոնց պէտք է հպատակ-

ւեն երեխաները: Անհնազանդը պատժուում է:

«Մի ցեղի, մի ազգի մէջ էլ կանոններ են հարկաւոր, գլխաւորներ են պէտք կանոնները յարգել տալու համար, այլապէս ամեն բան տակնուվրայ կը լինէր, զօրեղները կը ճնշէին թոյլերին, խորամանկը թակարդի մէջ կը ձգէր միամիտին: Պարտք է իրաւունք էլ գոյութիւն չէին ունենայ:

6) «Ամեն մի ժողովուրդ, որ իր կենցաղի կանոնները և մի ընդհանուր կազմակերպութիւն ունի, կազմում է մի պետութիւն:

7) «Քաղաքացիական դաստիարակութիւնը մեզ սովորեցնում է ճանաչել նախ այն ընդհանուր սկզբունքները, որոնցով պիտի առաջնորդուի իւրաքանչիւր լաւ կազմակերպուած հասարակութիւն, և երկրորդ՝ հայրենի հաստատութիւնները:

«Իմ փոքրիկ բարեկամներ, երբ դուք իսկապէս կը հասկանաք, թէ ինչ են նշանակում այս սիրուն խօսքերը՝ հայրենիք, ազգային ժողովրդական իշխանութիւն, ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն, ռամկավարութիւն, դաշնակցութիւն (Ֆեդերացիա) և ուրիշ շատերը, որ յաճախ յսում էք, այն ժամանակ դուք կը կարողա-

նաք աւելի արդիւնաւէտ կերպով ուսումնասիրել շվէյցարական հաստատութիւնները:

«Այն ժամանակ աւելի լաւ կը հասկանաք, թէ ինչ մեծ սիրոյ է արժանի այն հայրենիքը, ուր ծնուել էք, և թէ պարտական էք աշխատել ձեր բոլոր ուժերով արժանի լինել այդ հայրենիքին»:

Այս ընդհանուր հիմունքների վրայ կազմուած ծրագիրը, որով շվէյցարական քաղաքացին մշակում է իր հոգին, չափազանց հետաքրքիր պարունակութիւն ունի, բայց տարաբաղդաբար ես անկարող եմ մանրամասնութիւնների մէջ մտնել քեզ շատ հասկանալի պատճառներով: Կ'ասեմ միայն ընդհանուր կէտերը: Ծրագիրը բաժանուած է երեք մասի, ա. ընդհանուր սկզբունքներ, բ. հայրենի հաստատութիւններ և գ. կանտոնային հաստատութիւններ:

Առաջին մասում երեխաները լիուրի դադափար են կազմում հայրենիքի մասին և թէ կառավարչական ինչ ձևեր կան աշխարհում — միապետութիւն, սահմանադրական միապետութիւն, հանրապետութիւն: Բացատրում են վարիչ իշխանութիւնները, օրէնսդրական, դատական, վարչական համայնքը և միջազգային իրաւունքը, ինչքան այդ հնարաւոր է:

Երկրորդ մասով ուսանում են մանրամասն կերպով Շվեյցարիայի կազմակերպութիւնը — Դաշնակցութիւնը, ժողովրդական իշխանութիւնը, Շվեյցարիան միջազգային տեսակէտով կային:

Երրորդ մասով իւրաքանչիւր կանտոնի գուակ մանրամասն կերպով սովորում է իր փոքրիկ հայրենիքի սահմանադրութիւնը, նրա յարաբերութիւնը մեծ հայրենիքի՝ Շվեյցարիայի հետ, նրա պարտքն ու իրաւունքը Դաշնակցութեան մէջ, կանտոնային իշխանութիւնները, եկեղեցի, դպրոց, համայնք:

Ես ասացի, սիրելիս, որ մանրամասնութիւնների մէջ մտնել անկարող եմ, բայց քեզ մի մօտաւոր գաղափար տալու համար, թէ ինչպէս են շվեյցարացի երեսային քաղաքացի պատրաստում, մէջ կը բերեմ մի կտոր Դրոզի գասագրքից որպէս նմուշ:

Այսպէս՝ աշխատանքի մասին ասուած է.

«Մարդու առաջին կարիքն է կարողանալ ազատօրէն վաստակել իր ապրուստը: Հետևապէս նա իրաւունք պիտի ունենայ ընտրել աշխատանքի իր ցանկացած ձևը: Անձ այս է, որ կոչուում է աշխատանքի ազատութիւն:

«Բայց այս ազատութիւնը մի անպա-

րունակ խօսք կը լինէր, եթէ մարդու աշխատանքի պատուը կարելի լինէր նրանից խլել բռնի ուժով կամ նենգութեամբ: Այստեղից առաջ է գալիս սեփականութեան յարգանքը:

«Իւրաքանչիւր ոք, որ ստեղծել է մի օջաղ, նա պէտք է տէր լինի իր տան մէջ: Հակառակ իր կամքի ոչ ոք իրաւունք չունի նրա տունը մտնել, բացի այն դէպքից, երբ ոճիր կայ գործուած: Այս ազատութիւնը կոչուում է բնակարանի անբռնաբարելիութիւն»:

Այստեղ ես կանգ կ'առնեմ:

Այսպիսով՝ ինչպէս տեսնում ես, սիրելիս, իւրաքանչիւր շվեյցարացի պատանի ժողովրդական դպրոցն աւարտելուց յետոյ՝ շնորհիւ քաղաքացիական լայն դաստիարակութեան՝ գիտէ իր պարտքերը և իրաւունքները թէ իբրև մարդ և թէ իբրև քաղաքացի: Նա ճանաչում է իր հայրենիքի անցեալն ու ներկան, գիտէ բոլոր հաստատութիւնները — դատական, վարչական, գիտէ օրէնքները, հասկանում է պաշտօնեաների պարտքերը և իրաւունքները: Իր պարտքը կատարում է սրբութեամբ, որովհետև սիրում է իր հայրենիքը, հպարտ է նրա քաղաքացիութեամբ, և յարգում է իր երկրի օ-

րէնքները, որոնց մէջ ինքը մաս ունի իբր քուէարկող: Որչափ պարտական է դէպի հասարակութիւնը, նոյնքան խստութեամբ պահանջող է իր իրաւունքների վերաբերմամբ, սրոնցից մի մագ չի գիշի: Այն գարշելի սուղունները, որոնք յայտնի են մեր գաւառական կենտրոններում «վաքիլ» կամ «խնդիր գրող» անուններով, որոնք ծծում են մեր խեղճ ժողովրդի արիւնը շնորհիւ նրա կատարեալ ազիտութեան, այստեղ միանգամայն անծանօթ են: Եթէ այդպիսի տիպեր հրաշքով յայտնուէին Շվէյցարիայում, կարծեմ նրանք միակը կը լինէին, որոնց տեղական իշխանութիւնները բանտ կը նետէին, որովհետեւ նրանցից աւելի ծանր յանցագործներ այստեղ չեն ճարուում: Շվէյցարական ժողովուրդը իր երկրի արդարադատութեանը դիմելու համար այդ կարգի աւագակ միջնորդներին դիմելու, խնդիր գրել տալու կարիք չունի: Նա գիտէ իր իրաւունքը, հասկանում է օրէնքը, ճանաչում է նաև հաստատութիւնն, ուր պէտք է դիմել:

Քանի որ խօսքը պարտքի և իրաւունքի գիտակցութեան մասին է, անօգուտ չի լինի գուցէ մի քանի օրինակներ էլ մեր ժողովրդի կեանքից բերել:

Ես քեզ պատմել եմ այն ոուս գիւղա-

ցու արկածը, որ առաջին անգամ երկաթուղով ճանապարհորդելիս տեսնում է, թէ ինչպէս մի տղայ—որ անշուշտ տոմսակ չունէր—նստարանի տակ թագնուեց, հէնց որ կանդուկտորը կանչեց, թէ «կոնտրոլը գալիս է», և առանց մտածելու ինքն էլ ծածկւում է նստարանի տակ, բոլորովին հաւատացած, որ «երբ կոնտրոլը գալիս է», տոմսակ ունենան թէ չէ, այդ միւսոյն է, բոլոր ճանապարհորդները պէտք է թագնուեն:

Բայց ինչո՞ւ անծանօթներին և օտարներին դիմենք, մեր գիւղացի Բադօի յայտնի արկածը: Բադօն մի անգամ ռեսին վիրաւորել էր, կարծեմ մի աքացի էր տուել: Այդ պատահում է գիւղերում. և Բադօն գիտէր, որ դրա համար իրան կը պատժեն, բայց գիտէր և այն, որ այդ պատիժը գլաւան կը տայ. ճիւղտի մի քանի լաւ հարւածներ թիկունքին, մի քանի օրուայ բանտարկութիւն: Բանտ ու ծեծ, այս երկսից չէր վախենում Բադօն, ինչպէս և ոչ մի գիւղացի, դա այնպէս բնական է: Չը գիտեմ սակայն ինչպէս պատահեց, որ այս անգամ Բադօի կոյր բաղդից բանը գաւառապետին հասաւ: Ես այժմ էլ, այնքան տարիներից յետոյ, լաւ յիշում եմ այն սարսափելի իրարանցումը Բադօեց տանը, երբ

չափար ոստիկանը մտրակը խաղացնելով, կարմիր էպօլեաներն ուսերին, եկաւ ու յայտնեց, թէ «Բաղօլին նաչալնիկը էս սնաթիս ուզում է»: Հեշտ է ասել՝ «նաչալնիկը ուզում է»... ամենքը մտածեցին, որ «էք անիծած ոեսը մի օյին է խաղացել, բանը ուզովնի է դարձել»: Բազօն ծնկները դողալով ձանապարհ ընկաւ, իսկ երեք եղբայրներն էլ անուղողով հետևեցին նրան: Հասան:

— Տօ, դու քանի՞ գլխի տէր ես, որ սաք ես վերցնում ու էսի վրայ: Բազօն հազիւ կարողացաւ կանգնած լսել այս խօսքերը ու իսկոյն ծնկների վրայ ընկաւ, սողաց գէպի դատաւորի ոտները: Նրան վերկացրին և բանտ տարան գաւառապետի հրամանով: Դրսում եղբայրներն սպասում էին՝ ձեռքերը զրած ծոցերին: Նրանց առջևից անցնելիս՝ Բազօն մի յետին յուսահատ հայեացք գցեց նրանց վրայ ու ասաց լացալու մած.

— Ախպէրներ, ես որ գնացի Սիբիր, ամանաթ ձեզ իմ երեխաները:

Խեղճ Բազօն հաւատացած էր, թէ իրան տանելու են Սիբիր: Նրան Սիբիր իհարկէ՝ չը տարան, նոյնիսկ գաւառապետից Բազօն աւելի հեշտ պրծաւ, քան թէ գլաւայից, վերջինս երևի կը ծեծէր էլ, բայց և

այնպէս այդ արկածը այնքան վախեցրեց ողորմելի մարդուն, որ այնուհետև փայլուն կոճակներ կամ ոստիկաններ հեռուից երևալուն պէս նրա ոտներն սկսում էին դողդոզալ: Եւ Բազօն մէկ չի, երկու չի, անթիւ...

Այս օրինակը, սիրելիս, կարծեմ չափազանց պերճախօս սպացոյց է, թէ մինչև որ աստիճան մեր ժողովուրդը զուրկ է իր իրաւունքի և պարտքի գիտակցութիւնից: Բազօն ինքը մեր խաւար ժողովուրդն է, որ ոչ իր պարտքն է ձանաչում և ոչ իրաւունքը:

Տ'գրութիւն!

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

## XIII

Ես այժմ գտնուում եմ Շվեյցարիայի գերմանական մասում, սիրելիս, և յատկապէս Բերնի կանտոնում, այն աննման, մըշտածիծաղ, դալարագեղ վայրերում, որոնք ընդհանուր անունով կոչւում են՝ Oberlande Bernois: Քիչ անդամ է բնութիւնը աշխարհի որևէ ուրիշ անկիւնում այսքան հմայիչ գեղեցկութիւն թափել: Լեռները՝ ձիւնապատ կատարներով, կապուտակ ու սառնորակ լճերը, կաթնային ամպով պատած ժայռերի բարձրութիւնից գահավիժուող ջրվէժները, մշտականաչ անտառներն ու մարգագետինները, բոլորը, բոլորը միասին՝ ասես խօսք մէկ արած՝ մի դիւթական, համարեա ցնորական պատկեր ստեղծելու համար այստեղ հանդիպել են իրար:

Սա արդէն բնութեան մի անհասկանալի շոայլութիւն է կամ գուցէ մի սքանչելի քմահաճոյք, որի առաջ պիտի ծուռկ չօքել, եթէ անկարող ես լուծուել նրա լայնատա-

րած, խորհրդաւոր ծոցում: Ինչգֆրաուն, Եգերը և այլ բազմաթիւ կատարներ իրար գրկող, իրար գալարուող կամ ձեռք ձեռքի տուած խելագարօրէն ընթացող լեռնաշղթաներ, Թուն, Բրիենց, Եշընինգէ, Կապոյտ և այլ մանր ու մեծ լճերը, լեռնային սառցադաշտեր, Կանդեր և Զիմրն սահանքաւոր գետերը, բոլորն այստեղ են, այս գարմանալի Օբերլանդում, ուր խենթ բնութիւնը հարբեցութեան մի վայրկեանում ասես դուրս է թափել իր գեղեցկութեան գանձերը՝ առանց որևէ օրէնքի և տրամաբանութեան՝ գեղարուեստական մի հմայիչ անկարգութեամբ:

Ահա այստեղ եմ, սիրելիս, այս ապշեցուցիչ բնութեան մէջ, և, ինչ որ խիստ տարօրինակ է, շաբաթներ են անցնում, ես չեմ կարողանում հաշտուել իմ նոր կացութեան հետ, և... չափազանց ախուր եմ: Թւում է, որ ես այստեղ մի բան պէտք է իմանամ և չեմ կարողանում իմանալ: Հաւատացնում են, որ լայնարձակ ու խաղաղ բնութեան ծոցում մարդ հանգստանում է, մտքերը պարզւում են, և մի ախորժ մեղմութիւն համակում է մեր ամբողջ էութեամբ, միայն այս լեռների ու անտառների

մէջ՝ բնութիւնը կառավարող գաղտնիքին մարդ այնպէս մօտ է զգում իրան, որ ուզում է զրկուել նրա հետ. և որովհետև այդ այնուամենայնիւ անկարելի է, ճշմարտութեան ծարաւը մնում է անյագուրդ, անյոյս տխրութիւնն անհասկանալի, յարատև մեղանխորիան է բաժին մնում մենաւոր թափառականին:

Դիտեմ, այս տողերը կարգալիս երևի ինձ լաւ ծանօթ հին ժպիտը վերստին խաղում է շրթունքներիդ. դու ինձ միշտ համարել ես միստիկ, յոռետես, լալկան, բայց հաւատա, ընկեր, սա այն չէ, այսպիսի բռնութեան մէջ մարդկային հոգին ազմկող բոլոր իրական յոյզերն և ցանկութիւնները ջնջուում են, մնում է միայն մի հատիկ բուռն տենչ—խառնուել անզառնալի կերպով շուրջդ փախսացող գաղտնիքին, ազահ շրթունքներով ծծել նրա թագցրած ճշմարտութիւնը և ջնջուել՝ ինչպէս Նիրվանայի մէջ՝ մոռացութեան ու ոչնչութեան ծոցում: Բայց հնարաւոր է այդ... և տխրում ես ու մռայլում, և արցունքն այնքան ախորժելի, այնքան սփոփիչ է դառնում: Բնութեան այսքան հմայքի, այսքան գեղեցկութեան առաջ լաւագոյն վայելքը անխառն ու քաղցրը թախիժն է միայն: Անգորութեան թա-

խիժ, համաձայն եմ, բայց որքան դուրեկան:

Աշխատել չի լինում, անգամ այս խոհերը գրի առնելու ցանկութիւն չը կայ: Մարդ այստեղ թափառում է՝ առանց կանխորոշ ծրագրի. քայլում է՝ ուր պատահում է և մտածում է անվերջ: Կարճ, անհասկանալի կեանքի ժամերը ընթանում են յոգնեցուցիչ դանդաղութեամբ: Է՛հ, սիրելիս, մեր գոյութիւնը մի չար հեգնութիւն է բռնութեան, երբ մարդն այնքան չնչին տեղ է բռնում այս զարմանալի տիեզերքի մէջ: Անթիւ սերունդներ գալիս են ու անցնում, իսկ այդ Իւնգֆրաուն իր տեղումն է. միայն այս փաստը բաւական չէ, որ հարիւրաւոր «ինչո՞ւներ» պաշարեն մարդի գլուխը և դիակներ բզկատող սև ագռաւների պէս քրքրեն նրա ուղեղը:

Սակայն քեզ խոստացել եմ գրել շվէյցարական գիւլի մասին, ուստի փորձեմ թողնել լեռներն ու ձորերը, մտնեմ մարդկային բնակութիւնները: Դիտելու, գրելու շատ բան կայ:

Գիւղը, ուր ես ապրում եմ, Վիմիս է կոչւում, Զիմըն գետի ափին և Նիզըն անտառապատ լեռան ստորոտում: Բաւական մեծ գիւղ է, մօտ 30—40 տնով, մի կող-

մից առաջը փռուում են հարթ մարգագետիններ, իսկ միւս կողմից երեք լեռներ իրար կողքի շարուած՝ նայում են իրանց ոտների տակ փռուած բնակութիւններին, որպէս պահապան առիւծներ: Շվէյցարական գիւղը իրապէս ճանաչելու և նրա կեանքով ապրելու համար պէտք է խոյս տալ բազմաթիւ մեծ ու փոքր հիւրանոցներից, որոնցով ծածկուած են այս երկրի լեռներն ու ձորերը, և տեղաւորուել մի որևէ գիւղացու տան մէջ, նրա ընտանիքի հետ:

Այդ շատ հեշտ է. շվէյցարացին օտարներից փախչող չէ և բնութիւնից երեխայի պէս վստահող անծանօթ մարդուն: Հաւատը դէպի մարդկային շիտակութիւնն ու ազնուութիւնը սրանց մէջ խիստ զարգացած է: Իմ տանտէրը, պարոն Իլգ, շվէյցարացու իսկական տիպար է թէ՛ արտաքինով և թէ՛ իր բնավորութեամբ: Կարճահասակ, լիքը մարմնով, կլոր դէմքով, կապտաչեայ ու շիկահեր, մշտածիծաղ ու բարեմիտ պ. Իլգը մի վերին աստիճանի ախորժելի անձնավորութիւն է. իսկ իր կինը — madame Ilg, ըստ ամենայնի սիրուն գոյգ է կազմում ամուսնու հետ: Չորս երեխայ ունին (մէկ տղայ երեք աղջիկ), որոնցից մեծը եօթ տարեկան է, իսկ փոքրը մի տարեկան, խելա-

ցի, բարեկիրթ մանուկներ, որոնք ինձ այնքան զբաղեցնում են իմ բազմաթիւ տխուր ժամերին: Որպէսզի այս ամբողջ ընտանիքի նկարագիրը լրացնեմ, յիշեմ նաև պարոն Ilg-ի հօրը, grand papa-ին, ինչպէս անուանում են նրան բոլոր տանեցիք: Քաջաուղջ մի ծերունի՝ եօթանասունից անց, որ առաւօտից երեկոյ աշխատում է պարտիզում, որի յետևից շարունակ քաշ են գալիս երեխաները՝ ինձոր կամ տանձ ստանալու յուսով:

Այս ընտանիքի խնամքն ու հոգածութիւնն ինձ համար, ճշմարիտ, զարմանալի է և իմ բոլոր սպասածից անցնում է: Պ. Իլգ և իր կինը առաւօտից երեկոյ զանազան միջոցների են դիմում, որ ես ըստ ամենայնի գոհ և ուրախ լինիմ: Իմ սեղանը միշտ ծածկուած է բազմատեսակ ծաղիկների փրնջերով, սենեակումս իշխում է օրինակելի մաքրութիւն, որ ուշադիր տանտիկնոջ խնամոտ ձեռքերի արդիւնք է: Նա, այդ ջանիլ և մի փոքր քնքոյշ կազմուածքով կլինն աշխատում է առաւօտից երեկոյ. չորս երեխաները միշտ մաքուր ու խնամքով հազնուած են, նա պատրաստում է նաև ընտանիքի կերակուրը, անում է բոլորի լուացքը, հոգում է ամենիս համար և զեռ ժամանակ

է գտնուած կարգալու: Եւ դեռ այս չէ բո-  
լորը. պարոն Իլզը խմբագիր-հրատարակիչ  
է Վիմիսի գիւղական թերթի, ինքն է գրում  
բոլորը, իսկ կինը տպագրում է. բայց այդ  
մասին յետոյ, երբ ես քեզ կը գրեմ գիւ-  
ղական լրագրի մասին:

Դեռ առաջին օրուանից պ. Իլզը՝ երևի  
ինձ զբաղեցնելու սիրալիր մտահոգութեամբ՝  
իր ծառայութիւններն առաջարկեց ինձ գիւ-  
ղի հետ ծանօթանալու համար: Տօն օր է.  
գիւղին մօտիկ անտառից լսուում է երա-  
ժշտութեան ձայն: Տանտէրս ինձ բացատ-  
րում է, որ գիւղը գուարճանում է այնտեղ:

— Գիւղական ուրախութիւն է, պարոն,  
չը գիտեմ, ձեզ կը հետաքրքրի: Եթէ կա-  
մենաք, կարող ենք գնալ միասին:

Բարի, սիրալիր մարդ, իհարկէ կը հե-  
տաքրքրի:

Գնում ենք:

Գիւղը մի հատ գլխաւոր փողոց ունի  
մի քանի աննշան ճիւղաւորութիւններով աջ  
ու ձախ: Մեծաւ մասամբ փայտեայ երկ-  
յարկանի մաքուր շինութիւններ են, կան  
նաև քարէ շէնքեր: Այս գիւղի ընդհանուր  
պատկերը համարեա նոյնն է, ինչ որ Փրան-  
սիական մասում, որ ես նկարագրել եմ ար-  
դէն: Այստեղ էլ նոյն մաքրութիւնն ամեն

կողմ, նոյն վճիտ յորդառատ ջրով աւազան-  
ները իւրաքանչիւր դրան առաջ, նոյն պար-  
ակեցներն ու ծաղկանոցները, միայն այստեղ  
աչքի է ընկնում պատշգամբների բազմու-  
թիւնը: Իւրաքանչիւր տուն անպատճառ իր  
սիրուն պատշգամբն ունի՝ ծաղիկների և  
մշտականաչ բաղեղների մէջ կորած:

Փողոցները լի են մեծ ու փոքր երե-  
խաներով. նրանք հատ-հատ, զոյգ-զոյգ շտա-  
պում են դէպի անտառը, որտեղից լսուում է  
երաժշտութիւնը: Հասակաւորների առաջից  
անցնելիս այդ փոքրիկները երբէք չեն մո-  
ռանում իրանց մեղմաձայն gruss-ը—ողջոյ-  
նը: Նրանք մենակ չեն. այդպէս մեր նահա-  
պետական գիւղերի պէս այստեղ ոչ ոք միւսի  
առաջից չի անցնում առանց բարևի, առանց  
իրանց անխուսափելի gruss-ի:

Շվէյցարական գիւղն ուրախութեան  
մէջ է: Անտառի մէջ մի փոքրիկ կանաչա-  
զարդ հրապարակ ներկայացնում է ակնա-  
պարար տեսարան: Մի կողմում բարձրա-  
նում է տախտակեայ ժամանակաւոր էստ-  
րադա՝ ոստերով ու ծաղիկներով զարդա-  
րուած: Այնտեղ՝ այն բարձրութեան վրայ  
տեղ է բռնել գիւղացիներից կազմուած ե-  
րաժշտական խումբը: Այս բանը թող քեզ  
չը զարմացնի, սիրելիս, Շվէյցարիայում

գիւղ չը կայ, որ իր երաժիշտների խումբը չ'ունենայ:

Կանաչ հրապարակի վրայ խոնուած է հարիւրաւոր բազմութիւն տօնական շորերով: պարզ, գեղջուկ, խայտաբղէտ շորեր: Այստեղ են ամենքը, ծերեր ու տղամարդիկ, կանայք ու ջահիլ աղջիկներ, փոքր երեխաներ: Երաժշտութիւնը նուագում է ուրախ եղանակներ, ջահիլները՝ երիտասարդներ և մանկամարդ աղջիկներ՝ զոյգեր կազմած՝ տարւում են կանաչազարդ հրապարակում, պարում են այն երջանիկ անհոգութեամբ, որ յատուկ է պարզ և ցուցամոլութեան անսովոր գիւղին: Հանդիսատեսները պարապ չեն, նրանք էլ կատակներ են անում՝ չըբխկացնելով փրփրուն գարեջրի բաժակները: Պարում են նաև մանուկները: Անտառը կրկնում է այս աղմուկի, ծիծաղի, երաժշտութեան արձագանգները, որոնք խառնւում են Զիմըն գետի սրբնթաց ալիքների անվերջ մումուոցին: Ընդհանուր այս ուրախութիւնն ինքնաբուխ է, յորդառատ դուրս է թափւում, ինչպէս վարարած գետ: Բռնագատութիւն կամ ձևացումն չը կայ. մարդիկ ուրախանում են, որովհետև հոգիներում միշտ չը կայ, սրտերը լի են ցնծութեամբ, որ արտայայտելու պէտք ունի:

Ուշադրութեան արժանի մի հանդամանք է, որ այսպիսի պարերն ու գուարձութիւնները միշտ կապուած չեն լինում այս կամ այն ազգային-պատմական խոշոր անցքի տարեդարձի հետ, այլ շատ յաճախ կազմակերպւում են մասնաւոր գիւղերում, հէնց այնպէս, «pour amuser la jeunesse» — «ջահիլներին ուրախացնելու համար», ինչպէս իրանք ասում են:

Գիւղերում, ինչպէս և քաղաքներում, բազմաթիւ ընկերութիւններ կան սպորտի կամ այլ նպատակով: Ահա այս ընկերութիւններից մէկն ու մէկը կազմակերպում է կիւրակէ օրերում հանդէսներ: Դրա համար շատ բան հարկաւոր չէ, միայն լաւ եղանակ: Անտառը մօտ է, բնութիւնը՝ գեղեցիկ, տախտակից նստարաններ շինելը ժամի գործ է, իսկ պարելու, գուարձանալու տրամադրութիւնը միշտ կայ, բաւական է, որ աշխատանքից դուրս ժամանակ գտնեն: Եւ գտնում են կիւրակէ օրերում, երբ ամեն մի պարապմունք զադարում է:

Եւ այս եղանակներն ու պարերը... միանգամայն տարբեր մերիներից, առհասարակ արևելքի պարերից և եղանակներից: Երաժշտութիւնը կենդանի, եռանդուն շեշտ ունի, իսկ իրար պլլուած զոյգերը տարւում

են թափող, արագութեամբ: Այստեղ ամբողջ պարը կենտրոնացած է համարեա միայն տաների եռանդուն շարժումների մէջ, իրանը մնում է ուղիղ, առանց ծամուռելու, առանց դալարուելու: Այս երաժշտութիւնն ու պարերը ընդհանուր եւրոպական կամ աւելի ճիշտ՝ արեւմտեան են, բայց բուն շվէյցաբական ժողովուրդն իր սեպհական երգերն, իր խաղն ու պարն ունի, նոյնպէս կենդանի, նոյնպէս ուրախ: Որչափ ես կարողացայ նկատել, սրանց երգերում երբէք չի լսում ցաւի շեշտ. եթէ մի փոքր տխուր եղանակ լսես, այդ էլ անպատճառ սիրային արկածի է նուիրուած: Ընդհանուրի տառապանքին, արցունքին նուիրուած երգ չը կայ, որովհետեւ զրա համար հարկաւոր է արեւելցու ճակատագիրն ունենալ, որին սրանք անծանօթ են իրանց բաղդից:

Ինչ նկատել ես, սիրելիս, որ մեր գիւղերում ու առհասարակ արեւելքում անգամ խաղ ու պարին յատկացուած եղանակները լայկան են, ցաւոտ ու դանդաղ: Շատ անգամ հարսանիքների առթիւ նուագուած երաժշտութիւնը կարելի է թաղման ծառայեցնել առանց վիրաւորելու սգի զգացմունքը: Մեր այն երկար «գեոնդերը» ծխոտ մրոտ խրճիթների կիսախաւարի մէջ, հեղձուցիչ

օդում, մարմինները այն միակերպ, դանդաղ երերումները համարեա միևնոյն տեղում, այն մարած աչքերը, ուր եռանդի, կեանքի նշոյլ չը կայ, այս բոլորը չէ՞ն կրում իրանց վրայ մեր ամբողջ կեանքի կնիքը: Թւում է, թէ մարդիկ չեն գուարճանում, այլ կատարում են մի անհաճոյ պարտք, որից ազատուել չեն կարող: Եւ գեոնդի մէջ, յատակի վրայ փռուած բազմութիւնը մակաղած հօտի պէս, սրը պառկած, սրը թեք ընկած, սրը նստած՝ նիրհելիս, իրար վրայ, իրար կողքի, մէջ-մէջքի, թե-թեի յենուած և ամենքը մեղկ, յոգնած, թուլամորթ ու ձանձրալի: Աւելացրու սրա վրայ նաև մեր անտանելի դափ ու գուռնան իրանց խլացուցիչ, վայրենի որոտով ու պղզոցով, նրանց շուրջը քանի մի հարբած, կարմրած դէմքեր, ծամածռութիւններ, անճոռնի ճիչեր, և պատկերը կատարեալ կը դառնայ: Ահա թէ ինչն է մեզանում կոչում հարսանիք, գուարճութիւն:

Խեղճ, խաւար ժողովուրդ: Պարերն ու եղանակներն այս կամ այն ժողովրդի քմահաճոյքի, վայրկենական, ժամանակաւոր տրամադրութեան արդիւնք չեն: Աշխարհագրական, կլիմայական, քաղաքական պայմանները դարերի ընթացքում որոշ ձևով

մշակում են մարդկային հոգին, նրա բնա-  
ւորութիւնը, որ արտայայտում է իր եղա-  
նակները և իր բոլոր շարժումների մէջ: Ա-  
րեւելքն ու արեւմուտքը տարբեր երկնքի տակ,  
տարբեր պայմաններ ունեցան: Հսոց է  
այդպէս, և այժմ էլ մէկ տեղ խնդում են,  
միւս տեղ արտասում:

Գիւղից բարձր, մի լեռան ստորոտում  
երևում է մի դղեակ, որ իր սուր, գոթական  
աշտարակով գրկում է շրջապատի հինա-  
ւուրց կաղնիների հետ: Շատ հեռուից այդ  
շէնքը իր պատերի միապաղաղ սպիտակու-  
թեամբ փայլում է համատարած կանաչ  
ֆոնի վրայ: Նրա կատարից հնչող մեծ ժա-  
մացոյցը գիշեր թէ ցերեկ ասում է գիւղա-  
ցիներին քառորդները, կէս-ժամերը և ժա-  
մերը: Դաշտում, ձորերում աշխատող մարդը,  
լեռներում գիշերները իր կովերի ու այծե-  
րի հետ անցնող հովիւր, ուշացած ճամբորդը,  
անկողնում անքուն մնացող հիւանդը, շնոր-  
հիւ աշտարակից լսուող այդ բարձրաձայն  
դողանջի միշտ գիտեն, թէ ցերեկուայ կամ  
գիշերուայ որ ժամն է, և իւրաքանչիւր ժամի  
ո՞ր քառորդն է:

Շվէյցարիայում գիւղ չը կայ որքան և  
փոքր լինի նա, որ իր գիւղական խոշոր ժա-

մացոյցը չ'ունենայ կամ դպրոցի, կամ եկե-  
ղեցու կամ որևէ հինաւուրց դղեակի վրայ:  
Եւ այդ ժամացոյցերը նոր չեն, սիրելիս,  
դրանցից շատերը մի քանի տասնեակ տա-  
րիներ, նոյնիսկ դար են տեսել: Նրանք այն-  
պիսի անհրաժեշտութիւն են դարձել շվէյ-  
ցարական գիւղի համար, ինչպէս եկեղեցի-  
ների գանգակները մեր գիւղերի համար:  
Շվէյցարիայի ժողովրդական բանաստեղծու-  
թեան մէջ գիւղական ժամացոյցը աստեղա-  
զարդ գիշերուայ, գունատ լուսնի, մեղմիկ  
հովերի չափ տեղ է բռնել:

Կարծում եմ սխալ չի լինի համեմա-  
տութիւնս, եթէ ասեմ, որ մեր երկրում  
աքաղաղն է հեռաւոր ձևով կատարում այս  
ժամացոյցի պաշտօնը: Յիշիր, թէ մեր հէ-  
քիաթները, մեր առօրեայ յարաբերութիւն-  
ների, մեր զրոյցների մէջ որքան խոշոր տեղ  
է բռնում աքաղաղի կանչը: Աւանդական այդ  
թռչունի ձայնը սև խաւարում ձիւների մէջ  
մոլորուած ճամբորդին ցոյց է տալիս գիւ-  
ղի տեղը. անքուն հիւանդը այդ ձայնից է  
սպասում մի փոքր թեթևութիւն, որ լու-  
սաբացի հետ պիտի գայ, աշխատաւորները  
նրանով են ոտքի ելնում, քահանան իր ժամն  
է յիշում, պառաւանները իրանց աղօթքը: Ես  
սիրում եմ աքաղաղի կանչը ձմերային գի-

շերներին, սիրում եմ, երբ միապագայ, խա-  
լար հեռավորութեան մէջ նիրհող գիւղի վը-  
րայ հնչում են նրա ելեէջները՝ անգիտակ-  
ցաբար հագարաւոր յոգնած հողիներին յի-  
շեցնելով իրանց ծանր ճակատագիրը, սի-  
րում եմ այդ բոլորը, որովհետեւ բանաստեղ-  
ծական է, երազների նման սիրուն: Բայց,  
սիրելիս, կեանքը իր բիրտ իրականութեամբ  
միայն բանաստեղծութեանը չի պատկանում:  
Արեւելքի կարաւանները նոյնպէս բանաստեղ-  
ծական են իրանց գիշերային շուերով, իրանց  
բացօդեայ դադարներով, բայց նրանք տեղի  
են տալիս երկաթուղու առաջ, և նրանց բո-  
ժոժների ձայները խեղդում են շոգու ո-  
րտաի տակ: Հաւատանք, որ մեր գիւղերն էլ  
մի օր կ'ունենան աշտարակների կամ գան-  
գակատների կատարներից հնչող իրանց ժա-  
մացոյցները, իսկ առայժմ տխուր է ասել,  
որ ինչքան հեռու է աքաղաղը ժամացոյցից,  
նոյնքան հեռու են մեր գիւղերը շվէյցարա-  
կան գիւղերից:

Տանտէրս ասում է. թէ «գիւղի վրայ  
իշխող այն սպիտակ շէնքը հինաւուրց դղեակ  
է, որ մի ժամանակ պատկանում էր՝ մեր  
երկրը, մեր գիւղերը տիրող կալուածական  
իշխաններին»:

—Այժմ մենք այլևս ոչ կալուածատէր

ունինք, ոչ ազնւականներ, ոչ իշխողներ,  
շարունակում է նա ժպտալով, մենք ենք  
մեր գլխի, մեր բաղդի, մեր աշխատանքի,  
քրտինքի տէրը, ինչպէս ամեն բան, այդ  
հինաւուրց դղեակն էլ մեզ է պատկանում:  
Արդարութիւնն էլ այդ է պահանջում, այն-  
պէս չէ՞, պարոն. այդ դղեակը անշուշտ շի-  
նուած է մեր պապերի աշխատանքով, նը-  
րանց դառն քրտինքով. այժմ տառապած  
հայրերի զաւակները իրաւունք ունին ժա-  
ռանգել այն և վայելել: Մենք այնտեղ տե-  
ղաւորել ենք մեր դատարանը, մեր դպրոցը  
և գիւղական բանտը:

—Մի փոքր տարօրինակ համախմբումն  
այդ իրարից տարբեր հաստատութիւնների:

—Իրաւունք ունիք, բայց դատարանը  
գտնւում է դպրոցի և բանտի մէջ, դա մի  
կամուրջ է, որով բարեբաղդաբար մենք  
անցողներ շատ չ'ունինք, և այդ թիւն էլ  
տարէց-տարի նուազում է:

Մենք գնում ենք այցելելու այդ դը-  
ղեակը: Այդ շէնքը նկարագրելու ցանկու-  
թիւն չ'ունիմ. որպէս բազմութեան վրայ  
իշխող, նրանց քրտինքը շահագործող, բայց  
իր կաշւի համար շարունակ դողացող մարդ-  
կանց բնակարան, դղեակներն ամեն տեղ  
նոյնն են: Նոր ժամանակներն ու պայման-

ները նոր փոփոխութիւններ են կատարել զդեակում. օդն ու լոյսը շատացել են մինչև այն աստիճան, որ կարելի է եղել այնտեղ սեղաւորել անգամ շվէյցարական դպրոցը: Ինձ առանձնապէս հետաքրքրողը այս անգամ գիւղական բանտն է, որ գտնւում է դղեակի ամենաբարձր մասում հէնց առաստաղի տակ: Բարձրանում ենք այնտեղ:

— Մենք մեր բանտարկեալներին երկինք ենք հանում, ասում է առաջնորդս ծիծաղելով, որպէսզի Աստուծոց վախենան, եթէ մարդկանցից չեն ամաչում:

— Բայց դուք պէտք է որ շատ բանտարկեալ չ'ունենաք:

— Օ, շատ քիչ, գուցէ և այժմ այնտեղ ոչ ոք չը լինի:

Եւ այնտեղ ոչ ոք չը կայ:

Հէնց առաստաղի տակ իրար կողքի շարուած են 5—6 խցեր բաւական ընդարձակ, որոնց փոքրիկ, երկաթապատ լուսամուտները նայում են դէպի անտառապատ լեռներն ու կանաչ բլուրները: Տեսարանն այստեղ շատ սիրուն է. իւրաքանչիւր բանտասենեակում դրուած է մի փայտէ մահճակալ՝ սպիտակ կտաւէ անկողնով, որ ծածկուած է բրդէ վերմակով: Լուսամուտի մօտ մի փոքրիկ սեղան, մի աթոռ, գրելու յար-

մարութիւններ, իսկ պատի վրայ՝ մի դարեկում, փոքրիկ գրագարան՝ բանտարկեալի ընթերցանութեան համար:

Եւ այսպէս շվէյցարացի բանտարկեալը անարգ, անասնական վիճակի չի վերածւում: Նա ունի օդ, լոյս, տեսարան և իր ժամերն սպանելու համար օգտակար գրքեր: Հասարակութիւնն այստեղ էլ իր փաստակար անդամից պաշտպանւում է՝ նրան առանձնացնելով, նրան անգոր դարձնելով, որովհետև տակաւին մարդկութիւնը չը կարողացաւ այդ միջոցից դուրս մի ուրիշը մտածել, որ լինէր պակաս վիրաւորական և աւելի օգտակար դժբաղդ յանցագործի և պատժող հասարակութեան համար միաժամանակ: Ուշագրաւը սակայն այն է, որ այստեղ՝ Շվէյցարիայում, ինչպէս այդ երևում է բանտերի սարքուկարգից, դէպի յանցագործը իր ունեցած վերաբերմունքի մէջ բնաւ չի առաջնորդւում վրէժխնդրութեան գգացմունքով: Նա առանձնացնում է փաստակար անհատին, բայց չի անարգում, զըստում է նրան, բայց չի տանջում, չի չարչարում, հաւատացած լինելով, որ իւրաքանչիւր մարդ ինչքան և մեծ լինի նրա գործած յանցանքը, կարող է իր հոգու խորքում մի թագնուած, բարոյական կայծ ու-

նենալ, որը երբեմն լաւ պայմանների, լաւ վերաբերմունքի շնորհիւ հնարաւոր կը դարձնի մի ամբողջ վերածնութիւն:

Վերջին ժամանակները, սիրելիս, առհասարակ բարոյական և հասարակական խրնդերներում շատ է խօսւում ժառանգականութեան տակաւին մութ մնացած օրէնքների, ատաւիզմի մասին: Անշուշտ իւրաքանչիւր ներկայ խոր արմատներով խրուած է հնագոյն անցեալի մէջ, և օրգանական անօրգանիկ կեանքի բազմաթիւ արտայայտութիւններն արդիւնք են անթիւ դարերի ընթացքում իրար յաջորդող պայմանների: Մարդկային գործողութիւններն ևս, լաւ թէ վատ, անշուշտ ենթարկւում են նոյն ընդհանուր օրէնքին, նոյն ձևով կապուած են մի մութ անցեալի հետ: Իւրաքանչիւր հոգի բազմաթիւ քնած, ծածուկ ոյժերի մի շաւմարան է: Շոպենհաուերը իրաւունք ունի՝ ասելով որ մարդ ինքն էլ չը գիտէ, թէ ի՞նչ է թագցնում, ինչի՞ է ընդունակ իր կամքը, իր հոգին: Հասարակութիւնն իր վերաբերմունքով դէպի անհատը գործ ունի այդ մութ, խաւար ոյժերի հետ, լաւ թէ վատ, նա նրանց զարգացնում է կամ չէզոքացնում, փութացնում կամ յետաձգում, զօրացնում կամ թուլացնում է նրանց արտայայտութիւնները:

Իւրաքանչիւր յանցանք գուցէ շատ աւելի շարժառիթներ, ազդակներ ունի անհատից դուրս, քան անհատի մէջ: Ահա թէ ինչու բանտային դժոխային պայմանները, անօգուտ տանջանքների սխտեմը յանցանքների խոշոր աղբիւր են հանդիսանում:

Վիրաւորուած, արօրուած մարդկային եսը դուրս է գալիս բանտից, ինչպէս մի վրէժխնդիր ոգի, որ հաշիւ է պահանջում հասարակութիւնից իր կրածները համար, Անարդար, անօգուտ տեղը տանջուած մարդը ամեն վայրկեան կաթիլ-կաթիլ թոյն է կուտակում իր սրտում, և եթէ ունի իր հոգում քնած, կորստաբեր ոյժեր, նրանք զարթնում են բուռն կերպով և բարոյական աւերածի գործը կատարեալ դարձնում:

Մեր նմանների տանջանքին սիրահար բիրտ գիւլիները իրանց վայրագութեան առաջացրած նողկանքը մեղմելու համար՝ սովորաբար յենւում են տգէտ ու խեղճ մարդկանց անգիտակցութեան, անզգայութեան վրայ:

Նրանք գտնում են, թէ ուրիշ կերպ անկարելի է վարուել անկիրք, կոպիտ արարածների հետ: Մոռանում են սակայն, որ բիրտութեան ու կոպտութեան ապացոյցը տանջանքներ կրելը չէ բնաւ, այլ պատճա-

ուելլը: Ում ձեռքը բարձրանում է մի խեղճ,  
խաւար արարածի վրայ, նա ոչնչով բարձր  
չէ իր զոհից:

Եւ յետոյ մի սպացուցեց, որ օրինակ՝  
մի թէկուզ միանգամայն տգէտ, մի անգրա-  
գէտ գիւղացի, մի բանուոր անզգայ է դէ-  
պի իր կրած անարգանքը, զուրկ է իր մարդ-  
կային արժանապատուութեան որևէ գիտակ-  
ցութիւնից: Իր անզորութեան մէջ սովորա-  
բար լուռ են այդ ողորմելիները, բայց այլ-  
ուում, փոթոթում են ներսից ամեն անգամ,  
երբ նրանց անարգում, ստորացնում են,  
երբ նրանց չարքաշ թիկունքին բիրտ բռունցք-  
ներով հարուածներ են տեղում: Նկատել  
ես, սիրելիս, թէ ինչպէս մեր գիւղացիները  
բանտ տարուելիս աշխատում են խոտոր  
ճանապարհներով գնալ՝ հարևանների, ծա-  
նօթների աչքին չ'երևալու համար, թէ նը-  
րանք ինչ միջոցների են գիմում՝ հրապա-  
րակով բազմութեան առաջ չը ձեծուելու  
համար:

Ծեծը և մեր գիւղական բանտերը: Յի-  
շում ես մեր գիւղի հրապարակը, ուր մի  
քանի խանութներ կան շէն կամ աւեր, փակ  
կամ մի ողորմելի առևտուրի յատկացրած:  
Ռէսն այնտեղ է նստում, այդ խանութնե-  
րի առաջ, իշխաններն էլ են այգտեղ: Դա

գիւղի խորհրդարանն է և դատարանը: Հար-  
կերն այնտեղ են հաւաքում, խորհրդածու-  
թիւններն ու վճիռները այնտեղ կատարում:  
Եւ ձեծում են, անողորմ, անգիտակից ծեծ,  
սպտակով, մտրակով, մահակով, ճիպուտով:  
Հայհոյանք, արիւն, աղաղակ, ունոց և ա-  
պա բանտ, այսինքն այն խոնաւ, խարխլած  
խանութներից մէկը, հողերի, մկների, կա-  
րիճների և կեղտի մէջ: Յիշում ես, որ մեր,  
երեխաներիս՝ զուարճութիւններից մէկն էր  
գալ կանգնել այդ «բանսի» առաջ, պատի  
ձեղքերից նայել ներսում կծկուած մարդին,  
կամ փոքրիկ խճեր նետել նեղլիկ լուսա-  
մուտից ներս:

Ես երբէք մոռանալ չեմ կարող մեր  
գիւղում կատարուած «արդարադատութեան»  
մի դէպք: Զոհը մի պառաւ քրդուհի էր:  
Նրան բռնել էին մի այգում խաղող գողա-  
նալիս: Ի՞նչքան պիտի գողանար խղճալին,  
երեխի մի քանի ողկոյդ: Բայց բռնել էին ու  
բերել գիւղամէջ և կապել մի խանութի  
պատշգամբի սիւնից: Զորս կողմից հաւա-  
քում էին նայելու այս գողին: Նա տես-  
նում էր իր շուրջը զայլոյթով լի աչքեր,  
սղմուած բռունցքներ, կրճատացող ատամներ,  
և վախից կպել էր սեանը: Մտածում էին,  
ինչպէս պատժեն այս գող պառաւին, որ

օրինակ դառնայ ուրիշներին: Յանկարծ վրայ հասաւ ծերունի Փանոն, նայեց կապուած կնոջը, լսեց եղելութիւնը և բացագանչեց.

— Էլ ինչո՞ւ էք կանգնել, թակեցէք այս անպիտան պառաւին. ինչքան դող ու աւագակ կայ, սրանից են ծնուել, թակեցէք, տուէք...

Եւ թակեցին...

Արևելքի արգարագատու թիւնն է այս: Իրանք թակողները քանի-քանի անգամ են թակուել: Բոլոր աւանդութիւններից, բոլոր սովորութիւններից ամենաարտասուելին փոխադարձ բռնութեան աւանդութիւնն է, որ այնպէս ծանրանում է մեր ժողովրդի վրայ: Մարդիկ ծեծում են, չը գիտեն ինչո՞ւ, և ծեծում են՝ նոյնպէս չ'իմանալով ինչո՞ւ համար: Լաւ, սրտոտ ուսը նա է, որի ճիւղտը խաղում է անդադար սրա նրա գլխի վրայ, որ գիտէ պինդ հայհոյել և լաւ թակել: Սովորութիւն է այդ, պապերից է եկել հասել, կարծես թէ առանց ծեծի այդ ողորմելիների կեանքը կանգ կ'առնի, ապրել չեն կարողանայ: Ծեծում են մեծերը, ծեծում են փոքրերը, գիւղի հրապարակը դաստիարակում է նորանոր սերունդներ՝ ծեծելու և ծեծուելու համար:

Այսպիսի բարքերը շվէյցարական գիւ-

ղացու համար նոյնքան տարօրինակ, նոյնքան գաղանային են, որքան մեզ համար աֆրիկական վայրենիների մարդակերութիւնը: Հաւատացնել չի լինում սրանց, որ մեք գիւղում մարդկանց թակում են անասունների պէս: Եւ ի՞նչպէս հաւատան խեղճերը, երբ իրանց ճիւղին ու կովերին էլ թակել չի կարելի, երբ ոչ մի շուն անգամ փայտի հարուած չի ստանում, ուր մնաց թէ մարդիկ: Այստեղ չը կայ մի բռունցք, որ համարձակուի բարձրանալ, ինչպէս և չը կայ մի հատիկ մէջք, որ կռանալ յանձն առնի այն ընդունելու համար:

Ուշադրութեան արժանի մի հանգամանք էս. շվէյցարացու մէջքը չի կռանում նաև բեռ կրելու համար: Ծանրութիւնները սրբանք քաշում են մեծաւ մասամբ բազմատեսակ մանր ու մեծ սայլակներով: Ես չեմ տեսել դաշտից վերադարձող մի շվէյցարացի, որ խոտը, ցախը կամ արմտիքը շալակած տուն բերէր. նա անպատճառ քաշում է իր յետից երկանիւ կամ քառանիւ թեթեւ սայլակ, որով հնարաւոր է շատ ծանր բեռ տեղափոխել: Սայլակ ունի փոքրիկ երեխան, աղջիկները, սայլակներ ունին կանայք, հասակաւորները, և ամենքը քաշում, կրում են մըջիւնների պէս՝ առանց երբէք

իրանց մէջքին փոքրիկ ծանրոց դնելու: Միակ բանը, որ նրանք երբեմն յանձն են առնում մէջքի վրայ կրել, մի փոքրիկ թեթև կողով է, որ իրանք hotte են անուանում, և որով սովորաբար հացագործի աշակերտները հաց են բաժանում: Դեռ շատ անգամ այն էլ շալակելիս նստում են հեծանւի վրայ և սլանում:

Դէ, այժմ մտաբերիր, սիրելիս, մեր երկրի այն զարհուրելի բեռները, ցորենով, ալիւրով լի ջուալները, որ մեր գիւղացիք շալակում են, և քանի՜ փուլ: Յիշիր հեռու գաղտերից բերած շալակները, այդ տնքացող, հեացող կրծքերը, այդ ձգուած, արիւնով ուռած պարանոցները, կարմրած, գուրս ձգուած աչքերը, դողդողացող ոտները, կուացած, ճուռացող մէջքերը:

Ծանր բեռների տակ գալարուած, ծըմբուած, արորուած այդ մարմինները մեր խաւար ժողովրդի կեանքի իսկական պատկերն են:

Բեռ, բեռ, երբ կը թեթևանայ մի փոքր:

Յը գրութիւն.

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

## XIV

Ես քեզ գրել եմ արդէն, սիրելիս, որ մի բախտաւոր դիպուածով ինձ վիճակուեց ապրել այստեղի գիւղական թերթի խմբագրի տանը: Պ. Իլզը՝ իմ տանտէրը, իր սեփական թերթն ունի, որ ինձ անչափ հետաքրքրում է: Այս նամակս նուիրելու եմ հէնց այդ թերթին՝ հաւատացած, որ դա քեզ էլ հետաքրքրութիւն և գոհութիւն կը պատճառի:

Իսկապէս այդ թերթը, որ Simmenthaler Blatt (Սիմմենթալի թերթ) է կոչուում գաւառի անունով, միայն պ. Իլզին չի պատկանում, այլ նրա ամբողջ ընտանիքին մեծից մինչև փոքրը: Ամենայն օր առաւօտից երեկոյ իմ աչքի առաջ կատարեալ մըջիւնային աշխատանք է կատարում Simmenthaler Blatt-ը գլուխ բերելու համար: Աշխատում են նաև փոքրիկ երեխաները, որոնցից մեծը միայն ութ տարեկան է: Simmenthaler Blatt-ը կարծես Իլզ ընտանիքի մի անդամն

է, ամենքի խնամքի, հոգածութեան առարկան:

Աշխատանքը արդարութեամբ բաժանուած է ընտանիքի անդամների մէջ. ինքը պիլզը իսկական խմբագիրն է, նա է գրում, նիւթեր քաղում քաղաքների մեծ թերթերից, դասաւորում, կազմում թերթը, հարեան սենեակում մի հատիկ գրաշարի հետ շարում է այդ բոլորը: Այնուհետև թերթը հասնում է madame Մարիին. տան ներքին յարկում մի արագատիպ կայ, տիկին իլզը նրա գաղտնիքը և լեզուն գիտէ: Տնտեսութեան վերաբերեալ բոլոր աշխատանքները կատարելուց յետոյ նա ցած է իջնում ներքնայարկ, բանի է ձգում արագատիպը և սկսում է թերթի տպագրութիւնը: Պ. իլզը այդ ժամանակ ներքև իջնելու կարիք չունի, կնոջ վրայ միանգամայն վստահ է, նա հաստատ գիտէ, որ Մարին մի քանի ժամ յետոյ Simmenthaler Blatt-ի տպագրուած ծալքերը վեր կը հանի: Քանի-քանի անգամ հիացմունքով հետևել եմ ներքնայարկում կատարուող այն փոքրիկ աշխատանքին, որից այնքան մեծ բաներ են ծնւում: Կանգնած է մեքենայի վրայ տիկին Մարին, իր մեղմ աչքերը մի վայրկեան չը հեռացնելով անգաղար դառնող թևերից՝ ձեռքի միա-

կերպ շարժումով դնում է սպիտակ թերթերը, և իրանց սիրելի լրագիրը դուրս է գալիս միևս կողմից սիրուն տպագրութեամբ: Ներքնայարկի մի փոքր աղօտ լուսաւորութեան մէջ աղմկուող այդ մեքենան, նրա վրայ արձանացած համարեա միշտ սպիտակազգեստ ու գունատ այն կինը, որ այնքան դուրեկան մեղմութիւն ունի իր բոլոր շարժումների, դէմքի արտայայտութեան ու մանաւանդ հնազանդ ու երագուն աչքերի մէջ, արդարև խիստ ուշադրաւ, խիստ գրաւիչ մի տեսարան է, մանաւանդ երբ մտածում ես, թէ որքան խոշոր, որքան նուիրական է կատարուող գործը: Տպագրուած թղթի այդ փոքրիկ կտորը, որ հանգարտ դուրս է սողում մեքենայի բերանից, լեռնային այս խուլ անկիւնը և նրա գեղջուկ ժողովրդին կապում է ամբողջ աշխարհի հետ, խօսում է ծովերով ու ովկիանոսներով բաժանուած հեռու երկրներից ու ազգերից: Եւ այս մեծ գործը կատարում է մի փոքրիկ ներքնայարկում, մի խեղճ գիւղացի կնոջ ձեռքով: Այնպէս չէ, սիրելիս, հրաշալի է այս բոլորը, լեզենդայի պէս գեղեցիկ:

Թերթը տպագրուած պատրաստ է, նոյն երեկոյ փոքրիկ խմբագրատանը, ուր

grand papa-ն (պապիկը) իր լամպի առաջ կռացած՝ իր ծեր աչքերով դանդաղութեամբ կարդում է թարմ նորութիւնները քնելուց առաջ, տիկին Մարին և իր ամուսինը ծալում են Simmenthaler Blatt-ը, հասցէները փակցնում և իրար վերայ դարսում: Յաջորդ առաւօտ աշխատանքի հերթը հասնում է փոքրիկներին. որդին Վիլլին, որ աւագն է, խմբագրատուն է քաշում իր փոքրիկ սայլակը, նրա վրայ շարում ծալուած թերթերը և իր փոքրիկ քոյրերը՝ Մաթիլդի և Օտիլի հետ փոխառփոխ քաշելով սանում են դէպի պոստատուն: Այնտեղ նրանց սպասում է հաստ ձայնով, հաստ շրթունքներով, կոլոր լիքը դէմքով մի սակաւխօս ծերուկ, գիւղական պոստատան միակ պաշտօնեան, որ ամբողջ օրը աշխատում է իր երկու հասած աղջիկների հետ: Փոքրիկ երեխաները լրագրով լի իրանց սայլակը աղմուկով ներս են քաշում պոստատուն:

— Ach, So, բացականչում է սովորաբար ծերուկ պաշտօնեան, թերթերն ընդունում է, և Simmenthaler Blatt-ը ճանապարհ է ընկնում դէպի հեռաւոր լեռները, հեռաւոր անտառներն ու գիւղերը, ձորերում կորած խրճիթները և օտար երկիրներ: Մի

գողարիկ սովորութեամբ օտարութիւն գնացած շվեյցարացիք կարծես հայրենիքի կարօտն առնելու համար, ուր և լինին, սիրում են իրանց գիւղական թերթն ստանալ: Հայրենի երկրի, հայրենի լեռների, անտառների, դաշտերի համն ու հոտն է տանում իր թեւերի վրայ այդ անշունչ թիթեռը, որի անունն է լրագիր: Պ. Իլզը առանձին և իրաւացի պարծանքով գեռ առաջին օրը ինձ ցոյց տուեց Ռուսաստանի զանազան հեռաւոր անկիւններում ապրող սիմմենթալցիների, վիմիսցիների հասցէներ. նրանք բոլորն էլ ստանում են իրանց սիրելի Simmenthaler Blatt-ը:

Իսկապէս պ. Իլզը մի թերթ չի խմբագրում, այլ երեք, որովհետև «Սիմմենթալի թերթը» ունի նաև երկու յաւելուած՝ Heimatklänge (հայրենի հնչիւններ) և Anzeiger (Յայտարարութիւն), որոնցից առաջինը պատկերազարդ է: Simmenthaler Blatt-ը, որ այս տարի բոլորում է իր 13-օրդ տարին, համարում է քաղաքական օրգան ազատամիտ շահերի: Նա լոյս է տեսնում շաբաթը երկու անգամ, չորեքշաբթի և կիրակի օրերը, և իր երկու յաւելուածներով միասին արժէ ընդամենը տարեկան հինգ ֆրանկ, այսինքն մօտ երկու բուլբլի. դա մի գին է, որ մաս-

չելի է գիւղական ազգաբնակիւթեան, և զարմանալի չէ, որ այս խուլ անկիւնում թերթը ունի 1500 բաժանորդ, իսկ յայտարարութիւնների բաժինը տարածուած է ճրիագէս չորս հազար օրինակ:

Այս թերթերը չափազանց հետաքրքիր են, սիրելիս, որպէս իսկական և բազմակողմանի արտայայտութիւն շվէյցարական գիւղական կեանքի և նրա կարիքների: Ահա թէ ինչու կ'ուզէի քեզ մի մօտաւոր գաղափար տալ Simmenthaler Blatt-ի բովանդակութեան մասին, որով միևնոյն ժամանակ հասկանալի կը լինէր, թէ ինչով է հետաքրքրուած շվէյցարական գիւղական մամուլը, որոնք են նրան առանձնապէս զբաղեցնող հարցերը: Իմ առջև դրուած է այդ թերթի մի պատահական համարը՝ № 85: Նոյնիսկ արտաքին պատկերը վկայում է, որ դա գիւղական թերթ է և յատկապէս շվէյցարական գիւղական թերթ: Ճակատը զարդարուած է գեղջուկ կեանքը ներկայացնող մի ըէպիսոտ նկարով: Վերևի երկու անկիւններից իրար են նայում մի եզ և մի կով. նրանցից վար դէմուզէմ կանգնած են դաշտում աշխատող մի գեղջուկ և մի գեղջիկուհի տեղական տարագով. աւելի վար Բերնի կանտոնի և Սիմմերթալ գաւառակի զինանշաններն են բռնում:

Նկարի կենտրոնական մասը ներկայացնում է շվէյցարական մի լեռնոտ դաշտավայր, մի սիրուն պէյզաժ, որի վրայ այս ու այն կողմ անտառների մէջ, մարգագետիններում, կանաչագարդ ձորակներում հանդարտ արածում են բազմաթիւ մեծ ու վոքք անասուններ: Ամբողջ պատկերը իր պարզութեամբ և նշանակութեամբ օրիգինալ է և գրաւիչ:

Այնուհետև գրուած է անասնապահական մի ընկերութեան վարչութեան նիստի արձանագրութիւնը: Պէտք է ասեմ, որ անասուններն ազնւացնելու համար կազմուած բազմաթիւ ընկերութիւններ կան, որոնք բոլոր միջոցներով աշխատում են բարձրացնել գիւղացու տնտեսութիւնը՝ առաջնորդ հանդիսանալով նրան ընտանի կենդանիները խնամելու գործում: Ամենայն տարի զանազան գաւառներում կազմակերպւում են անասունների զանազան տեսակների ցուցահանդէս, և լաւագոյն նմուշներին տրւում են մրցանակներ: Այդ ցուցահանդէսները կատարեալ ժողովրդական տօներ են: Լեռներից ցած են իջնում խայտաբղէտ, օրիգինալ շորերով հովիւները և քշում են իրանց անասունները նշանակուած տեղը. տեսարանը ակնապարար է. կենդանիների ամենաընտիր տեսակները կարելի է տեսնել ցու-

ցահանդէսի դաշտում: Ահռելի ցուլեր, որոնք զսպուլած են ուռնգի եղջերային պատից անցրած հաստ պարանոյվ. մեծամեծ խայտաբղէտ կաթնատու կովեր, որոնք իրանց մորթու զանազան նշաններով, ազնութեամբ ու գեղեցկութեամբ հիացմունք են շարժում. ալպեան խիստ վտիտ, բայց հարուստ կրծով այծեր. բոլորովին սպիտակ կամ շէկ, լերկամաշկ խոզեր, որոնց մեծութիւնը միանգամայն տարօրինակ կարող է թւալ մեր կողմերում: Ահա այդ անասունները ահազին բազմութեամբ շարուած են կարգ-կարգ մի որևէ կանաչադարգ դաշտում. ժիւրիները — ժողովրդից ընտրուած դատաւորները անցնում են նրանց շարքերի միջով և այս կամ այն աչքի ընկնող կենդանու ճակատից կախում են մրցանակի նշանը և տիրոջը յանձնում մրցանակը: Շրջակայքից հաւաքուած գիւղացիների բազմութիւնը նայում է այդ տեսարանին, իր հերթին քննում է կենդանիների առաւելութիւններն ու թերութիւնները և իր բացազանչութիւններով քաջալերում վարձատրուածներին: Վերջանում է ցուցահանդէսը, և հովիւներն իրանց անասունները կրկին քշում են լեռները: Մրցանակի արժանացած կենդանիները զարդարուած ճակատներով, հանդիսաւոր կերպով

անցնում են փողոցներով, և նրանց հետևում են երջանիկ տէրերը: Հասկանալի է, թէ այսպիսի ցուցահանդէսները, արդարութեամբ բաշխուած մրցանակները, նիւթական և բարոյական քաջալերութիւնները մինչև որ աստիճան կարող են սատարիչ հանդիսանալ անասնաբուծութեան զարգացմանը այս երկրում: Իր անասունների տեսակի ազնւացման համար աշխատող գիւղացին երկու դրդիչ ունի. նախ՝ որ անասունը անկախ մրցանակից աւելի արժէ, և երկրորդ՝ իր գեղեցիկ օգտակար գործի հրապարակական արդար զնահատութեան յոյսն ունի նիւթական վարձատրութեան զուգընթաց: Շվէյցարիան կարելի է ասել՝ ցուցահանդէսների երկիր է: Ցուցահանդէս երկրագործական գործիքների, անային արդիւնաբերութեան, զանազան բոյսերի, սերմերի, ծաղիկների, ցուցահանդէս այգեգործութեան, անասնապահութեան, պանրագործութեան, իւղագործութեան և այլն: Ամիս չի անցնի, որ այդ փոքրիկ երկրի որևէ անկիւնում մի ցուցահանդէս չը լինի: Թողնենք դեռ աւելի մեծերը, ընդհանուր շվէյցարական ցուցահանդէսները այս կամ այն նշանաւոր քաղաքում:

Ես այժմ մասնաւորապէս կանգ առայ

անասունների ցուցահանդիսի և անասնաբուժական ընկերութիւնների վրայ, որովհետև թերթում խօսքը նրանց մասին է: Արձանագրութիւնից երևում է, որ անասնաբուժական տեղական ընկերութեան վարչութիւնը իր նիստում ի նկատի է առնում «կանանց դաշտում» տեղի ունեցած անասունների ցուցահանդիսի սուլած արդիւնքը, որը համարում է փայլուն: Ընկերութեան վարչութիւնը սակայն այդքանով չի բաւականանում, անտեսութիւնը զարգացնելու համար նա որոշում է «ձմերային դասընթացներ» կազմակերպել նոյեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 5-ը, այսինքն՝ մի շաբաթ շարունակ, և ամեն միջոց ձեռք առնել, որ յաճախողների թիւը մեծ լինի: Այս դասախօսութիւնների միջոցով կարելի կը լինի գիւղացիներին հաղորդել անասնաբուժութեան վերաբերեալ նորագոյն կատարելագործութիւնները, նոր յայտնութիւնները, որոնցով հնարաւոր է աւելի յառաջադիմութիւն, աւելի յաջողութիւն գիւղական անտեսութեան մէջ:

Այս արձանագրութեանը թերթի մէջ հետևում է մի փոքրիկ լուր, որ նոյնպէս վերաբերում է անասնապահութեանը, և որ մեր երկրին էլ կարող էր օգտակար լինել:

Բերնի կանտոնի 112 անասնատէրեր որոշել են իրանց անասունների ապահովագրութեան համար փոխադարձ օգնութեամբ մի դրամագլուխ հաւաքել ու ֆոնդ հաստատել: Թերթը հրաւէր է կարգում գիւղացիներին հետևել այդ գեղեցիկ օրինակին. ինքնըստինքեան մի եզր կամ մի կովը շատ մեծ հարստութիւն չէ, բայց մի գիւղացու անտեսութեան մէջ նա ահագին նշանակութիւն ունի: Դու գիտես, սիրելիս, թէ մեր երկրում ինչ խորը, ինչ յուզիչ նշանակութիւն ունի հետևեալ ասացուածքը, թէ՛ «լուծս ցելում մնաց». երեք բառ, միայն երեք, բայց դա նշանակում է մեր գիւղացու համար անաքանդութիւն, դժբախտութիւն, անտեսութեան աւերած: Լուծը ցելումն է մնում, երբ յանկարծամահ է լինում արօրը քաշող եզր, և ահա արտը ցանել չի կարող, իսկ մնացածը հասկանալի է, անօգուտ է երկարացնել: Շվէյցարիայում գիւղացու «լուծը ցելում մնալ» այն մտքով, ինչպէս մեզանում են հասկանում, այդ՝ իհարկէ՛ չի կարող, այնտեղ բազմաթիւ միջոցներ կան ձախորդութիւնից մի կերպ ազատուելու: Նախ՝ համատարած ախտերը շնորհիւ բժշկական միջոցների այնքան էլ մահացու չեն անասուններին համար. երկրորդ՝ եթէ եզր մեռնի, շվէյ-

ղաքի բնակիչ, այլ citoyen) այնուհետև յայտնի օրում և տեղում գնում է ազատօրէն ասելու իր կարծիքը, որ օգտակար է համարում իր և իր երկրի շահերի տեսակէտից: Չեմ երկարացնում, որովհետև գուցէ յետոյ ակելի երկարօրէն գրեմ, երբ Շվէյցարիայի գաշնակցական, կանտոնային և համայնական կազմակերպութեան մասին խօսեմ: Առ այժմ ասեմ, որ իմ առջև դրուած Simmenthaler Blatt-ի այս համարում մի հետաքրքիր օրինակ կայ շվէյցարական օրէնսդրական գործառնութեան: Առաջիկայ կիրակի համայնական ժողով է տեղի ունենալու Վլիմսում, ուր պիտի ձայնատուութեան ենթարկուեն օրէնսդրական մի քանի կարևոր փոփոխութիւններ: Այդ առթիւ «Բերն կանտոնի ազատամիտ դեմօկրատիական կենտրոնական վարչութիւնը» մի կոչ է ուղղել ընտրողներին, որի մէջ բացատրում է իր հայեացքները առաջարկուած օրինադրի մասին և մէկիկ-մէկիկ մատնանիչ է անում այն կէտերը, որոնց վերաբերմամբ հարկաւոր է «այն» կամ «ոչ» ասել: Ահա այդ կոչն է, որ հրատարակուած է այս գիւղական թերթի մէջ: Օրինադրի առաջին կէտի նպատակն է, ասուած է այդ կոչի մէջ, ժողովրդաշատ և հաղորդակցութեամբ հարուստ

կանտոնների ազդեցութիւնը թուլացնել «ազգային խորհրդում»: Դա վնասակար է, որովհետև բազմաթիւ դժտուութիւնների և արդարացի դժգոհութիւնների առիթ կը դառնայ, պէտք է մերժել, ասելով «ոչ»!

Երկրորդ կէտը վերաբերում է ոգելից ըմպելիքների վաճառման համար սահմանուած 32 յօդուածին: Ցանկութիւն կայ այդ յօդուածը փոփոխութեան ենթարկել այնպէս, որ ալկոհոլիզմի տարածման առաջն առնուի: Այս փոփոխութիւնը օգտակար է և անհրաժեշտ, ասում է կոչը, պէտք է ընդունել — «այն»:

Օրինադրի երրորդ կէտը վերաբերում է պատժական օրէնքի լրացուցիչ մի յօդուածին, որը ցանկալի է և օգտակար. ասել «այն»:

Ամենից հետաքրքիրը չորրորդ կէտն է, որ վերաբերում է շների վրայ դրուած հարկին: Իդէպ է ասել, որ Շվէյցարիայում աշխատում են հարկի ենթարկել այն ամենը, ինչ ծառայում է ժողովրդի ունևոր մասին շռայլութեան քմահաճոյքներին և անհրաժեշտ կենսական պէտքերի մէջ տեղ չի բռնում: Իմ նախորդ նամակներից դու գիտես արդէն, որ շները այս երկրում վաղուց է՝ ինչ համարում են համարեա բացառապէս զուար-

ճուրթեան, ճոխութեան առարկաներ: Տներ պահպանելու տեսակէտից նրանք էլ հարկաւոր չեն, որովհետեւ գողութիւնը համարեալ դատարել է: Ահա թէ ինչու մեր երկրում տակաւին այնքան անհրաժեշտ, այնքան պիտանի այդ կենդանիները, որոնցից ամեն մարդ կարող է պահել՝ որքան սիրան ուզի, այստեղ՝ Շվէյարիայում բաւական դժուարութեան մէջ են դնում իրանց տէրերին, որովհետեւ իւրաքանչիւրի համար պէտք է վճարել տասը ֆրանկ, մօտ չորս ըուբլի հարկ տարեկան: Ինչ ասել կ'ուզի, որ այդ պայմանով երկրի չունկոր մասը բնաւ յանձն չի առնի թէկուզ մի հատիկ շուն պահել, մանաւանդ որ բոլորովին պէտք էլ չ'ունի. կը մնան միայն հարուստները, որոնք իրանց գուարճութեան համար դրամական փոքրիկ գոհողութիւնը կ'անեն հաւատարիմ չորքոտանին իրանց դահլիճներում վաղցնելու համար:

Այսպիսով շների վրայ դրուած հարկը բնաւ չարիք չէ, ընդհակառակը՝ մի աղբիւր է պետական գանձարանի համար: Բայց ինչպէս երևում է, այս երկրի հարուստները չորսական ըուբլի հարկը շատ չնչին են նկատում մի շուն ունենալու համար, նրանք մի քանիսն են պահում մէկի տեղ: Ահա նոր օրի-

նագծի չորրորդ կէտը վերաբերում է վերջին հանգամանքին: Քանի որ, ասուած է կոչի մէջ, հարուստները իրանց միանգամայն աւելորդ գուարճութեան համար սիրում են մի քանի շներ պահել, համայնքները պէտք է իրաւունք ստանան այդ կենդանիներին վրայ դրուած հարկը տասը ֆրանկից բարձրացնել քսան ֆրանկի, այսինքն մօտ ութ ըուբլու: Հետևապէս այդ կէտը քուէարկելիս պէտք է ասել՝ «այո»:

Simmenthaler Blatt-ը իր կողմից քննութեան է ենթարկում այդ կոչը. «Շվէյարիան ազատ երկիր է, ասում է թերթը, ժողովրդական ներկայացուցչութեամբ, ուստի իւրաքանչիւր ոք ազատ իրաւունք ունի իր կամքն արտայայտել ձայնատուութեամբ, ինչպէս ուզում է: Բայց մենք, շարունակում է թերթը, մեր հասուն փորձառութեան վրայ հիմնուելով՝ պարտք ենք համարում ասել, թէ այս առաջարկութիւններին որոնք են օգտակար»:

Այնուհետեւ թերթը մէջ է բերում օրինագծի կէտերը և իր ընթերցողներին խորհուրդներ տալիս իւրաքանչիւրի վերաբերմամբ առանձին-առանձին:

Ահա և մի բնորոշ յօդուած՝ «կիրակին օգտակար կերպով դորժածելու մասին»: Յու-

սամ՝ քեզ չեմ ձանձրացնի, եթէ այդ յօ-  
դուածից մի քանի քաղուածքներ անեմ:

«Այս ամառ, ասում է թերթը, շատ սա-  
կաւ անգամ կարելի էր ասել, «կիրակին գե-  
ղեցիկ է ու պայծառ...», որովհետեւ երկինք-  
քը միշտ մառախլապատ ու անձրևաբար ե-  
ղաւ: Հէնց որ մի գեղեցիկ կիրակի առաւօտ  
էր բացուում, իսկոյն սկսում էր մարդկա-  
յին իղձերի մի ուշագրաւ տեսարան: Դեռ  
վաղ առաւօտից ոմանք կառքերով, ոմանք  
ոտով ճանապարհ էին ընկնում դէպի լեռ-  
ները: Նրանք գնում էին Հելվեցիայի բար-  
ձունքից դիտելու հեռաւոր տեսարանները և  
հնչեցնելու հայրենի երգը.

«Եւրոպայի բարձր վայրերում

Դրել է Ասատուած իմ հայրենիքը:

Մենք այդ բիւրեղեայ բարձունքներից

Ջուր ենք բաժանում ազգերին»:

Մի քանի անգամ ես առիթ եմ ունե-  
ցել քեզ նկարագրելու, սիրելիս, թէ որքան  
գեղեցիկ կերպով է անցկացնում շվեյցա-  
րացին իր տօն օրերը. ուրախ եմ, որ այժմ  
նոյնը կարող եմ հաղորդել քեզ արդէն շվեյ-  
ցարացու շրթունքներով՝ քաղելով մի գիւ-  
ղական թերթից: Եւ տես սրբան թովիչ պար-  
զութիւն, բայց և որքան վեհութիւն, հպար-  
տութիւն այդ գեղջուկ տեսարանի մէջ: Ժո-

ղովուրդը, հասարակ գիւղական ժողովուրդը  
գնում է իր մի քանի ազատ ժամերը անց-  
կացնելու իր հայրենի լեռների բարձունք-  
ների վրայ, գնում է դիտելու այն ակնա-  
պարար տեսարանները, շնչելու կենդանա-  
րար անուշաբոյր օդը իր հայրենի ձորերի  
և անտառների, որոնցով այնքան օտարա-  
կաններ հմայուած են: Այս փոքրիկ ժողո-  
վուրդը այնքան է սիրում իր փոքրիկ, բայց  
դրախտանման հայրենիքը: Կարգա էլի մի  
անգամ, կարգա այդ շորս տող երգը՝ «Եւ-  
րոպայի բարձր վայրերում դրել է Ասատուած  
իմ հայրենիքը...» սքանչելի է, այնպէս չէ՞,  
սիրելիս, «Բիւրեղեայ բարձունքներից Ջուր  
ենք բաշխում ազգերին...» Որքան վեհու-  
թիւն, որքան հմայիչ պարզութիւն կայ այս  
փոքրիկ այլաբանութեան մէջ: Ջր գիտեմ՝  
ինքը շվեյցարացին այլաբանութիւն դրել է  
այս երկտողի մէջ, բայց ես այն ուրիշ կերպ  
չեմ հասկանում. «Ջուր ենք բաշխում ազ-  
գերին...» միայն ջուր... ճշմարիտ է, եւ-  
րոպական շատ գետեր են գոռոզ Ալպերից  
սկիզբն առնում, գերմանական Հռենոսն էլ  
նրանց հարուստ ստինքներով է սնւում, բայց  
ջրից բացի Շվեյցարիան, այս գողտրիկ լեռ-  
նային կղզին էլի մի ուրիշ բան է տալիս  
ազգերին, աշխարհին, որ շատ աւելի թանգ.

է, քան առաջինը. դա այս փոքրիկ երկրի տուած քաղաքական ու քաղաքացիական իմաստութեան մեծ օրինակն է:

Ես առիթ ունեցել եմ քեզ գրելու, թէ այս փոքրիկ ժողովուրդը ինչպէս կարողացել է իր ջերմ ծոցում տարբեր լեզուների, տարբեր ցեղերի ձգտումները հաշտեցնել մի մեծ գաղափարի՝ քաղաքացիական պարտականութիւնների վրայ հաստատելով ազգային ամբողջութիւնը: Մինչդեռ ուրիշ երկրներում (օրինակ Աւստրիա) տարբեր ցեղերը, կրօնները ու լեզուները բզկտում են իրար կամ հեծում են մի բռնապետական բիրտ ընժիմի տակ (օր. Թիւրքիա), այստեղ բոլորն ապրում են եղբօր պէս հաւասար իրաւունքով: Այս մասին կարելի է ամբողջ հատորներ գրել, բայց թողնենք. այժմ ես քո ուշադրութիւնն եմ հրաւիրում շվէյցարական ազգային մի այլ բնաւորիչ գծի վրայ, որ ըստ իս կարող է նոյնպէս օրինակ հանդիսանալ ազգերին, որոնց Շվէյցարիան իր «Բիւրեղեայ բարձունքներից ջուր է բաժանում...» Ահա այդ բնորոշ յատկութիւնը. կարծում եմ չափազանցութիւն չի լինի սակ, որ քիչ ժողովուրդ աշխարհում այնպէս հայրենասէր է, որքան շվէյցարացին, որ և միևնոյն ժամանակ այնքան լայն է, նախա-

պաշարմունքից ազատ դէպի օտարները:

Հայրենի բնութեան գեղեցկութիւնները մէջ ծնուած և ապրած՝ թւում է թէ շվէյցարացին վերջիվերջոյ պիտի սովորէր և անտարբեր աչքով նայէր այն բոլորին, ինչ այնպէս գրաւում է օտարներին: Բայց ոչ. շվէյցարացին իր հայրենիքի վերաբերմամբ նման է խենթ սիրահարին, որ երբէք չի կըշտանում իր սիրոյ առարկայից: Շվէյցարիան նրա համար մի մարմին առած գեղեցիկ ի. դէպ է, որ նա գուրգուրում է, փաղաքշում է ամեն օր, ամեն ժամ: Իր հայրենիքի մասին խօսելիս միշտ երջանիկ է, միշտ ժրպտադէմ. շատ անգամ է լսել օտարներից, բայց էլի երբէք չի ձանձրանում լսել, որ ամեն բան իր երկրում գեղեցիկ է, գրաւիչ: Աւելին կ'ասեմ. նա այնպէս յափշտակուած է իր հայրենիքով, նրա բնութեամբ, քաղաքական, հասարակական կարգերով, որ երբեմն նոյնիսկ չնչին նկատողութիւն օտարներից լսելու տրամադրութիւն անգամ չի ցոյց տալիս: Շատ անգամ մարդ խօսակցելիս այնպիսի տալաւորութիւն է ստանում, կարծես այս երկրում մարդիկ նեղհայեաց են, բայց սահմանափակ մտքով ազգայնականներ: Բայց դա միայն ըստ երևոյթի է, որովհետև նեղսիրտ, սահմանափակ հայրենասիրու-

այլ նոյնիսկ լրացնում են իրար: Այս բուր-  
րից յետոյ նա իհարկէ իրաւունք ունի հը-  
պարտութեամբ երգել իր Այլերի կատար-  
ներից՝

«Մենք բիւրեղեայ բարձունքներից ջուր  
ենք բաշխում ազգերին...» Նուիրական, փրը-  
կարար ջուր, որ լաւ կը լինէր՝ մի փոքր էլ  
միւս՝ աւելի մեծ, աւելի հարուստ, աւելի  
յոխորտացող հարեան երկրների կրծքից հո-  
սէր: Բայց ի՞նչ եմ ասում, Հռենոսը, գեր-  
մանական ազգային գետը Շվեյցարիայից է  
գնում դէպի Վիլհէլմի երկիրը և այնտեղից  
էլ դուրս չի գնում: Ներքի ինձ, որ մի փոքր  
շեղուեցի, բայց ուրիշ կերպ չէր կարելի:

Թերթի միւս երեսում ես գտնում եմ  
մի գեկուցում գիւղատնտեսութեան մասին.  
ապա կայ մի փոքրիկ յօդուած՝ կենդանի-  
ներին սլրեմիա նշանակելու հարցին նուի-  
րուած, մի այլ տեղ խօսւում է մի ալբոմից,  
ուր բացառապէս գեղեցիկ եզների ու կո-  
վերի նկարներ են, յետոյ շվեյցարական լեռ-  
ների մի ճանապարհորդական նկարագիր:  
Վերջում լուրեր գանազան կանտոններից և  
արտասահմանից: Թերթն՝ իհարկէ՝ իր սե-  
փական հեռագիրը չ'ունի, բայց նա քաղա-  
քական խոշոր լուրերը վերցնում է տեղա-  
կան մեծ թերթերից և շաբաթական երկու

անգամ հաղորդում է իր գեղջուկ ընթեր-  
ցողներին: Գիւղն անգամ այստեղ ոչ ծայ-  
րահեղ հետաքրքիր է և ոչ անհամբեր, լու-  
րերի մի երկու օր ուշ հասնելը նրան շատ  
էլ չի անհանգստացնում, և այս թերթը լի-  
ովին գոհացնում է ամենքին, թէև կան քա-  
ղաքների խոշոր թերթեր ստացողներ էլ:

Թերթի վերջում հրատարակուած է ծը-  
նուածներին, մեռածներին և նշանադրուած-  
ների ցանկը, որ նոյնպէս պակաս հետաքր-  
քիր չէ գիւղական ազգաբնակչութեան հա-  
մար որոշելու ազգաբնակչական «շարժման»  
չափը: Սա մի սովորութիւն է նաև այս երկ-  
րի մեծ, քաղաքային թերթերի համար: \*)

\*) Այս տողերը գրելուց իննը տարի յետոյ՝  
ես վերստին առիթ ունեցայ այցելել Վիմիսը, և  
գնացի իմ հին բարեկամ պ. Իլզին տեսնելու, որ  
ինձ ընդունեց գրկաբաց: Փոփոխութիւնը մեծ չէր.  
պ. Իլզը մի փոքր աւելի հաստացած ու կրու-  
ցած, բայց էլի հնչուն, ուրախ ծիծաղով, տիկին  
Մարին, նոյն անուշ ու ջահիլ դէմքով, երեխանե-  
րը մեծացած, երկու շիկահեր սիրուն աղջիկներ,  
ու մի տղայ 16—17 տարեկան: Թերթը առաջուայ  
պէս լոյս է տեսնում, տիկինն առաջուայ պէս  
տալագրում է և երեխաները պոստ են տանում:  
Միայն փոխուած է տալագրական մեքենան, ներք-  
նայարկում որոտում է նոր սիստեմի մի փայլուն  
մամուլ, որ և՛ տպում է և ծալում, յետոյ գրերը  
շարելու համար ևս մի նոր մեքենայ կայ, որ գոր-  
ծը սաստիկ հեշտացրել է:—Drand papa-ն մեռաւ,  
ասաց պ. Իլզը, և դա միակ փոփոխութիւնն էր

Ահա քեզ, սիրելիս, շվէյցարական գիւղական թերթը. նրա բովանդակութիւնը՝ ինչպէս տեսնում ես՝ ինքը գիւղն է, անասունների ապահովագրութիւն, ցուցահանդէս, անասնաբուժական ընկերութիւններ, օրէնսդրական քուէարկութիւններ, գիւղական եկեղեցի, դաշտային աշխատանքներ, զբօսանքներ լեռներում և այլն:

Գիւղական թերթ... խեղճ, համեստ անուն, բայց որքան-կարևոր օրդան հասարակական տեսակէտից: Գիւղն էլ կեանք ունի, ապրում է, չէ՞, և այդ կեանքը խոշոր, ցընցող, ուշք գրաւող չէ, նա շատ անգամ նոյն շատերի համար գրաւիչ չէ, որովհետև արտայայտում է բազմաթիւ մանր, աննշան երևոյթների մէջ, որոնք հեշտութեամբ խուսափում են աշխարհի աչքերից: Յետոյ գիւղը բարձր խօսել չը գիտէ իր պէտքերի, իր ցաւերի մասին, նրա ձայնը երբեմն քաղաքներից չի հասնում, կամ եթէ հասնում է, ոչ այնպէս, ինչպէս հարկաւոր է: Ահա այնտեղ, գիւղական այդ համեստ անկիւնում բուն է դրել թղթի այն կտորը, գիւղական թերթը, նա տեսնում է, լսում է բաներ, ո-

տանը: Եւ իլգի տանը մի բաժակ գինու առաջ, շրջապատուած նրա ընտանիքով ես վերստին ապրեցի անցած լաւ օրերը: Կ. Հ.

րոնք այլապէս աննկատելի կ'անցնէին և որոնք՝ լաւ է, որ քաղաքներում, ուր նստում են աշխարհի հզօրները, լսելի և տեսնելի դառնան: Եւ յետոյ այդ թղթի կտորը նաև բանբեր է, աշխարհի ամեն ծայրերից լուրեր ունի, լաւ թէ վատ, տխուր թէ ուրախ, այդ միկնոյն է, նա միջնորդ է, իսկ իր հաղորդածները օժանդակում են ժողովրդի մութ գիտակցութեան պարզուելուն, կենսական ճշմարտութիւնների աղբիւր են դառնում:

Երբ մի երկրում այնպիսի գիւղ կայ, ուր բարքերը գեղջկօրէն քաղաքակրթուած են, և ուր քաղաքացիական ու ազգային գիտակցութեանը հնարաւոր է եղել միացնել համամարդկային գաղափարը, ուր մի թերթ է հրատարակւում հազար հինգ հարիւր օրինակով, չէ՞ս գտնում, որ այդպիսի մի երկիր կարող էր օրինակ դառնալ շատ ուրիշներից:

Յիշիր, թէ ինչ արտասուելի վիճակի մէջ են մեր գիւղերը շնորհիւ առհասարակ լրագրի բացակայութեան: Լուրերը գալիս են բերանէբերան, ում ինչպէս հաճելի է՝ պատմում է լսածը, իր սիրած յաւելուածներով, վերջիվերջոյ սաքունների խաւարի մէջ ամեն բան դառնում է այլանդակ, ուռած, հրէշաւոր: Եւ յետոյ մեր գիւղը համր է, նա իր

Թերթը չ'ունի խօսելու համար, նրա կեանքի մէջ երևոյթները, ցաւոտ թէ ուրախ, ծնունւմ են և մեռնում աշխարհից ծածուկ, աչքերից հեռու, մի խաւարի մէջ, որը որքան հին է, նոյնքան էլ թանձր է: Թողնենք գիւղական թերթը, քաղաքների թերթերն էլ չեն հասնում, եթէ հասնեն էլ, ո՞վ կարգայ, երբ գիւղը դեռ կարգալ չը գիտէ: Կը կարգայ մի օր, հաւատանք, սիրելիս, ժամանակը դանդաղ է, բայց էլի շարժում է, աշխարհում չը կայ ժողովուրդ, որի ճակատը յաւիտենականապէս մեխուած լինի խաւարի ժայռերին:

Տ'գրութիւն!

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

#### XIV

Քեզ մի քանի անգամ առիթ եմ ունեցել գրելու, սիրելիս, այս երկրում կատարւող լեռնային զբօսանքների մասին, որոնց այնպէս սիրահար է շվէյցարացի ժողովուրդը: Թոյլ տուր ինձ այս անգամ նկարագրել քեզ մի այդպիսի զբօսանք լեռներում, որին ես էլ մասնակցեցի, և որը ինձ համար կը մնայ որպէս կեանքիս լաւագոյն յիշողութիւններից մէկը:

«Արևի ծագումը տեսնել» այս կամ այն լեռան կատարից, հորիզոններին իշխող բարձունքներից՝ մի շատ տարածուած, շատ հաճելի զբօսանք է Շվէյցարիայում: Արևի ծագումը տեսնելու համար մարդիկ այս երկրում այնպիսի նեղութիւններ են յանձն առնում, որ մեզանում կարող է նկատուել առնուազն յիմարութիւն: Երևակայիր, սիրելիս, որ մարդիկ օրերով՝ գիշեր ցերեկ մագլցում են Ալպերի կատարները, շատ անգամ անձրևի կամ ձիւնի տակ, վտանգաւոր

առապարհներով, սառցադաշտերով, ժայռերի ու մացառանների մէջ, որպէսզի մի լեռնակատարից կամ արևի ծագումը դիտեն կամ լայնարձակ հորիզոնների գեղեցիկ տեսարանների պատճառած հաճոյքը մի քանի ըոպէով ճաշակեն: Վտանգներն այնքան մեծ են և այնպէս յաճախ լեռնային տուրիստների համար, որ իւրաքանչիւր տարի մի քանի տասնեակի է հասնում զոհերի թիւը:

Մոլորում են անծանօթ կիրճերում ու սառչում, կամ հոսող ձեան հետ տարւում են անդունդները, կամ սխալ անզգոյշ քայլով վայր են գլորում ահագին բարձրութիւններից ու ջարդ ու փշուր լինում ձորերի մէջ: Այնուամենայնիւ բնութեան գեղեցկութիւններին, Ալպերի օդին սիրահար ճանապարհորդները չեն քաշում ամեն տարի նոյն վտանգաւոր արահետները մագլցել և նորերը փնտրել, միշտ դէպի վեր, միշտ դէպի վեր: Ինչ ուզում ես, ասա, սիրելիս, բայց ըստ իս մի տրագիկական մեծութիւն, վեհութիւն կայ դէպի լուսաւոր բարձունքները, դէպի անհունը դիմող այս ըմբոստ հոգիների գեղեցիկ խենթութեան մէջ: Քեզ չեն զբաւում բոցի շուրջը սաւառնող և այրուող թիթեռները: Նոյն բանն է:

Անցեալ տարի ցանկութիւնս այնպէս

մեծ էր սրանց պէս լեռնակատարների վրայ շրջել, անծանօթ հովիտներում թափառել, մօտիկից տեսնել վտանգը, ճաշակել գեղեցիկ խենթութեան պատճառած քաղցր սարսափը, դողալ, բայց նայել մութ անդունդներին, լսել խորխորատների մէջ փշրուող ջրվէժների հառաչանքը, տեսնել այն զարմանալի ծառերը, որոնք ասես երկրից խռոված՝ սիրում են անմատչելի բարձունքները, որտեղից նրանք ամառ թէ ձմեռ փսփսում են աստղերի հետ, տնքում ու գանգատում փոթորիկների տակ: Այնպէս էի ուզում գէթ մի անգամ արծիւների շնչած օդը շնչել, նրանց պէս երկնքին մօտ զգալ ինձ, որ չը նայելով իմ բոլոր անկարողութեան, լեռնային ճանապարհորդութիւն կատարելու իմ խղճուկ անզօրութեան, յանձն առայ ուսանող ընկերներիս հրաւէրը մի լեռնակատար բարձրանալ, այն էլ ձմեռ ժամանակ:

Յունուարի տօներն էին: Իմ ընկերներն էին մի գրիգոնցի երիտասարդ, մի գերմանացի՝ Հանովրից և էլի մի ուրիշ ուսանող դարձեալ Գերմանիայից: Լողանից ճանապարհ ընկանք երկաթուղով առաւօտեան ժամի 4-ին: Գնացքը լիքն էր նոյն զբօսանքի դնացող ջահիլ աղջիկներով ու երիտասարդներով, օտարականներ ու տեղացիներ, պա-

յուսակները թիկունքներին, լաւ կապած, ոտներին լեռնային հաստ կօշիկներ, իսկ ձեռներին մի-մի հաստ, երկար գաւազան: Աղմուկ, ճիչ, ուրախութիւն, սրախօսութիւններ: Լուսաբացից առաջ հասանք լեռան ստորոտը, և սկսուեց վերելքը: Մեզանից առաջ քանի մի ուղեկիցներով հանդարտ բարձրանում էր մեր փրկիսփայլութեան երիտասարդ պրօֆեսսոր Միլիւ, որ Ալպերի ջերմ սիրահար է և ամբողջ ամառ թափառում է լեռներում:

Քանի դեռ ձիւն չը կար, լաւ էր. ես էլ միւսների պէս կատակներով բարձրանում էի, բայց հէնց որ հասանք ձիւնին, երբ պէտք էր տեղ-տեղ գաւազանով ոտնատեղ փորել առաջ շարժուելու համար, իմ բանը դժուարացաւ: Քայլում էի ահագին ճիգ գործ դնելով, աշխատելով ծածկել իմ թուլութիւնը ընկերներիցս, որոնք ցատկրտում էին այծեամների պէս, մանաւանդ գրիգոնցի երիտասարդը: Վերջինս իր եռանդի յաւելուածը չը գիտէր՝ ուր մաշէր. վազում էր առաջ, յետոյ իր գաւազանի վրայ յենուած՝ ցած էր սլլում մեզ մօտ, կրկին բարձրանում, կրկին վար գլորւում: Լեռնային օդը նրան իստակ խենթ էր դարձրել: «Մեզանում այսպէս ենք անում», բացազանչում

էր նա և շեղ բարձրութիւնից ցած սլլում սառած, հարթ ձիւնի վրայից: Լեռան որդի էր, Գրիգոնի կանտոնը Շվէյցարիայի ամենալեռնոտ մասերից մէկն է: Վատ չէին նաև գերմանացիները, առանց աւելորդ գրժութիւնների, առանց վերահներքև անելու, նըրանք դանդաղ, բայց հաստատ քայլուածքով բարձրանում էին անդադար: Ես աւելի և աւելի յետ էի մնում, ծածկել չէի կարող իմ անգորութիւնը. գրիգոնցի երիտասարդը այդ առաջինը նկատեց և ծիծաղելով՝ ինձ մօտեցաւ, որ փոխանակ գժութիւնների՝ ինձ օգնի: Խելացի միտք էր. նա կատակներ անելով քայլում էր իմ կողքից, ոտնատեղ էր փորում սառած ձեան մէջ և երբեմն ձեռքիցս բռնած՝ անցկացնում վտանգաւոր տեղերից, ճիշտ մայր թռչունների պէս, որոնք իրանց փետրակալած ձագերին թռչել են սովորեցնում. այս բոլորը շատ գեղեցիկ էր, ձիւնապատ լեռան կէսից աւելի կտրել էինք արդէն, մնում էր մի յետին ճիգ գործ դնել կատարին հասնելու համար: Ես նայում էի այդ գրաւիչ բարձունքին, ոյժ էի տալիս ոտներիս, գրիգոնցի ընկերս ոչինչ չէր խնայում ինձ օգնելու համար, բայց իզուր, վերելքը կամաց-կամաց դառնում էր ինձ համար անտանելի:

— Լսեցէք, բարեկամ, ես էլ չեմ կարող քայլել, անկարելի է:

— Կարող էք, կարող էք:

Գրիգորնցին էլի քաշում էր ինձ, էլի ոտնատեղեր փորում, կրկին բարձրութիւն թևակոխում ինձ հետ:

— Նայեցէք, թէ մեր պրոֆեսսորը ինչպէս է բարձրանում:

— Հա, բայց նա շվէյցարացի է:

— Իսկ ձեր երկիրը մի՞թէ լեռնոտ չէ:

— Լեռնոտ է, սիրելիս, շատ լեռնոտ, բայց մենք երբէք չենք համարձակուի այսպիսի վերելքներ կատարել, վտանգաւոր է:

Եւ ես բոլորովին ուժասպառ՝ պառկեցի ձեան վրայ՝ խնդրելով ընկերներին թողնել ինձ և ճանապարհը շարունակել: Ես հանգստանալուց յետոյ կարող էի մենակ վար իջնել: Գրիգորնցի ընկերս չը համաձայնեց, նա ինձ անընդունակ դտաւ նոյն իսկ մենակ վար գալու, ընկերացաւ ինձ մինչև ապահով տեղերը և կրկին բարձրացաւ նոյն եռանդով:

Ես յետ դարձայ ու հիացմունքով նայում էի նրա յետևից, տիրութեան մի խորին զգացմունք համակեց ինձ. լեռներ, լեռներ, լաւ է լեռնցի լինել, լեռնցի ծնուել և

անուել, շատ, շատ կողմերով լաւ է. երանի՛ ձեզ, շվէյցարացիներ:

Այս տարի, երբ տանաէրս ինձ առաջարկեց Վիմիսի մօտ բարձրացող Նիզըն լեռը բարձրանալ, ես սկսեայ յիշեցի իմ անցեալ տխուր փորձը և պատմեցի իմ արկածը: Նա ժպտաց ու հաւատացրեց, թէ նոյն դժուարութիւններն այստեղ չեն կարող լինել, նախ՝ այժմ ամառ է, երկրորդ՝ դէպի Նիզըն լաւ ճանապարհ կայ, և երրորդ՝ այնքան բարձր չէ, ընդամենը 2200 մետր: Եւ այդ Նիզընը... ինչ սիրուն լեռ է. բարձրանում է նա իմ լուսամուտի հանդէպ, որպէս մի հսկայ պիրամիդ, ամբողջապէս ծածկուած անտառներով ու կանաչով: Երկրորդ փորձ. գնում ենք բարձրանալու: Վերելքը կատարելու ենք լուսնկայ գիշերով:

Ճանապարհն սկսում է սահանքաւոր աղմկուող կանդար գետակի ափերից: Ի դէպ է ասել, որ այս երկրում գետերն ու գետակները իրաւունք ունեն աղմկուել ու բողբոջել. շվէյցարացին նրանց սեղմել, խեղդել է քարէ պատերի մէջ, համարեա ամբողջ երկարութեամբ, մեծամեծ թումբերով նրանց ընթացիկ կատաղի թափը մեղմել ու չափի տակ դրել: Ջրերն էլ այստեղ ընտանի են ու ձեռնասուն:

Կանդարի ափին, Նիզընի ոտքի տակ մի թէև փոքր, բայց սիրուն հարթութիւն կայ, որի վրայ տեղ-տեղ երևում են շվէյցարական կոկիկ, սիրուն խրճիթներ, ցաքուցրիւ, իրարից հեռու՝ խռոված մանուկներին պէս: Եւ խրճիթների առաջ տարածւում են մարգագետինները, ուր աշխատում են գիւղացիք աշնանը վայել եռանդով: Աշխատանքը բազմաշան չէ, նրանք գերանդրներով խոտ են հնձում, կամ տեղ-տեղ գետնախնձորներ հանում: Այս է բոլորը. ինչ աղքատ է այս երկիրը մերի համեմատութեամբ:

Բարձրանում ենք. մի գալարուն ճանապարհ օձապտոյտ մանուածներով ձգւում է գէպի վեր, գէպի Նիզընի կատարը, որ մերթ ծածկւում է ծառերի տակ, մեր յայտնւում հպարտ ու գեղեցիկ:

Երեկոյեան հովը մեզմիւ կիսում է, ծառերի մէջ աղմկում են թռչունները, աւելի բարձրից լսում է մեզանից առաջ գնացածների կանչւոտոցն ու երգը, անտառային մթնոլորտը բուրալից ու գաղջ շնչում ենք լայն կրճքով և բարձրանում կատակելով:

Այս վերելքն այնքան հաճելի է, այնպէս զրաւիչ: Ճանապարհի իւրաքանչիւր պտոյտ մեր առաջ բաց է անում աւելի

լայն տեսարաններ, լայն հորիզոններ, և մենք հաճոյքով յետ ենք դառնում նայում գէպի վար, հեռուն, ուր գեղանկար Օբերլանդը ձգւում է իր լճերով, գետակներով, անտառներով ու գիւղերով:

Արևը մայր մտաւ, և մենք արդէն կէս ճանապարհին ենք: Անտառը դադարեց, այժմ քայլում ենք կանաչների և խոտերի միջից, ուր ուշ աշնանն էլ շվէյցարական լեռներում պակաս չեն: Այստեղից գէպի վեր հովիւների աշխարհն է, նրանք այստեղ են իրանց կովերով, եզներով, ոչխարներով: Անտառի եզրով ձգւում է փայտեայ մի անվերջ ցանկապատ, որ մերթ իջնում է ձորերը, մերթ բարձրանում կատարները ծառերի քմահաճոյքի համեմատ: Հովիւների շինածն է այդ, որպէսզի անասունները չ'իջնեն. անտառներում մոլորուեն կամ գիւղերը մտնեն:

Գիշեր է արդէն, բայց այս լեռնակատարին խաղաղութիւն չը կայ: Բազմաթիւ մեծ ու փոքր զանգակների ձայները խառնւում են ու տարածւում անտառներում անթիւ արձագանգներով: Այդ զանգակները կախուած են անասունների պարանոցներից, որպէսզի հսկողութիւնը նրանց վրայ հեշտ լինի: Հսկող չը կայ սակայն, կովերն ու եզները անագին խմբերով փռուած են լեռնա-

լանջերին, հանդարտ արածուժ են լուսնի գունատ շողերի տակ, և կարծես պատկանում են ոչ մարդկանց, այլ լեռնային ոգիներին: Կարո՞ղ ես երևակայել, սիրելիս, թէ որքան զբաւիչ է այս բոլորը, արածող անասունների ստուերները, նրանց զանգակների ձայնը, մեզնից վար մթին սուռոց անտառները, աւելի բարձր լեռնակատարը, այս գիշերային հովը, որ սկսում է մրսեցնել, ամբողջ այս լեռնային բնութիւնը, որ չը գիտես՝ ինչ մի առանձին, գաղտնի թովչութիւն ունի, որ գերում է, որ մարդու էութիւնը համակում է մի անորոշ, թախծոտ, բայց ախորժելի զգացմունքով:

Ճանապարհին տեղ-տեղ մենք անցնում ենք անասունների հօտերի միջով, լսում ենք նրանց առողջ, երջանիկ փնչոցը մօտիկից, նրանք բարձրացնում են գլուխները, մի վայրկեան մեզ նայում, ապա կրկին շարունակում արածել: Մի քանի հատ նրանցից ընկնում են մեր առաջը, փակում են լեռնային նեղ շաւիղը և բարձրանում են մեզ հետ զէպի վեր գնալու սիրուն բնազդով: Հարկաւոր է լինում մի մեծ պտոյտ գործել նրանցից ազատուելու համար: Պահապան չը կայ, հօտերն արածում են առանց հսկողութեան: Բարձրից լսում է մի սուլոց, և իս-

կոյն մեր առջևն է յայտնուժ մի գիւղացի պատանի, միակ հովիւը այս բոլոր հօտերի: Նա մօտ տասնևեօթ տարեկան է և ինչպէս բոլոր հովիւները՝ անհոգ արտաքին ունի: Լայնեզր ձողէ գլխարկը, որ իջել է մինչև ականջները, իր ստուերի տակ ծածկել է նրա դէմքը. անազին գաւազան ունի ձեռքին, խոշոր կօշիկներ, որոնց մեխերը ազմուկ են հանում քարերի վրայ: Նա մեզ բարևեց, իր կովերին ինչ-որ բան ասաց, քրշեց հակառակ կողմը ու անցաւ: Մի առժաշեց հակառակ կողմը ու անցաւ: Մի առժամանակ լեռնաշաւղի վրայ մերթ երևում և մերթ ծածկւում էր քարերի յետևում նրա անորոշ ստուերը. նա իջնում էր ոչ իսկական ճանապարհով, այլ կտրուկ շաւիղներով, կամ ինչպէս պատահի: Շուտով նրա սուլոցն էլ լռեց, և մնաց միայն զանգակների ձայնը և լեռնային հովի սուլոցը:

Լեռնակատարը հեռու չէ. էլի մի քանի պտոյտ, և մենք կանգնած ենք մի փոքրիկ հիւրանոցի առաջ, որ հաստատուած է այս բարձրութեան վրայ բազմաթիւ այցելուներին մի քանի անհրաժեշտ յարմարութիւններ տալու համար: Այցելուն այստեղ համեմատաբար ոչ թանկ գնով պատրաստ գտնում է տաք և փափուկ անկողին առանձին սենեակում, ամենատեսակ զինիներ և

լաւ ճաշ: Ուշ գիշեր է. քայլել ենք ընդամենը վեց ժամ: Թեթև ընթրիքից յետոյ ես դուրս եմ գնում լուսնի լուսով Ալպերին նայելու, եթէ հնար է: Հեռուն միայն կաթնագոյն մշուշ է, սրի մէջ անորոշ կերպով գծագրւում են լեռների ստուերները, ներքև թուն լճի ակերում պլպլում են բազմաթիւ ճրագներ, իսկ աւելի հեռու ինտերլակենը ամբողջապէս բոցավառուած է երևում ելեկտրական ճրագներով: Սորին լուծիւն է, որ հնար է տալիս միանգամայն մոռանալ աշխարհը, ներքևում թողած գունատ իրականութիւնը: Թւում է, թէ երկինքը կախւել է վար, վար և նա է այս լուծեան տէրը, նա է պահանջում, որ ամեն ինչ և ամենքը լռեն ու խորհեն:

Այստեղ՝ լեռան վրայ ես աւելի լաւ եմ հասկանում, սիրելիս, թէ ինչու են ծնուել կրօնները, բոլոր միասիկ վարդապետութիւնները, հանգերձեալից, երկնքից, տիեզերքի նպատակից, ընտրեան մութ, խօյական ոյժերից խօսող այնքան հաւատալիքները, որոնցով մարդը հնագոյն ժամանակներից պաշարել է իր հոգին ու գլուխը: Այստեղ ամեն ինչ թւում է անհուն, յաւիտենական, որովհետև ամեն առարկայի միայն սկիզբն է երևում, իսկ վախճանը կորչում է մի խոր-

հրդաւոր շամանգաղի մէջ, որ երկնքից է կախուած:

Պատկում ենք քնելու՝ խնդրելով մեզ զարթեցնել առաւօտեան ժամի 5-ին՝ արևի ծագումը տեսնելու համար: Աղախինները սակայն այդ նեղութիւնը կրելու պէտք չեն զգում. ժամը 5-ը չ'եղած, հիւրանոցի պատերի տակ լսուող երգը, ծիծաղը, աղմուկը մեզ զարթեցնում է. մեզանից աւելի ուշ ճանապարհ ընկած այցելուների մի ահագին բազմութիւն է այն, որ այժմ միայն հասնում է կատարին: Դուրս ենք գալիս, էլ քրնել անկարելի է: Հիւրանոցի նախասենեակներում, աստիճանների վրայ, ընդարձակ սեղանատանը, զբսում՝ պատերի տակ իրար կողքի թափթփուած են երիտասարդների և ջահիլ աղջիկների ահագին բազմութիւն: Սա մի խայտաբղէտ ամբօխ է. կան ուսանողներ, ուսանողուհիներ, աղախիններ, բանկային փոքրիկ պաշտօնեաներ, գիւղացիներ, արհեստաւորներ, բանւորներ, շվէյցարացիներ և օտարներ, կան բանւորական կամ արհեստաւորական ամբողջ ընկերութիւններ, որոնք միասին եկել են իրանց կիւրակէն Նիզընի վրայ անցկացնելու: Իւրաքանչիւրը թիկունքին կապած ունի իր պաշարը և ձեռքին մի ահագին գաւազան: Մի փոքր հան-

գատանալուց յետոյ իրար յետևից ամենքը դուրս են գնում և լեռան ամենաբարձր կէտում յարմարաւոր դիրքեր գրաւում արևի ծագման բոլոր մանրամասնութիւնները լատեսնելու համար:

Արևելքը շառագունում է կարծես Ալպերի յետևում բռնկած մի հսկայական հրդեհից, որի բոցերը չեն երևում: Արևմուտքում երկնքի կապուտակ Փոնի վրայ, գունատ հորիզոնի շրթունքին կախուել է բիւլուսինը, խղճուկ ու անփայլ, առանց իր ընկեր աստղերի: Բայց բազմութիւնը դիշերային լուսատուին չի նայում, բոլոր հայեսացաները դարձել են դէպի արևելք, ուր արշալոյսի առաջին նուրբ ցնցուղները Ալպերի թիկունքից ձգուել են ուղիղ բազմերանգ գրծերով մինչև երկնակամարի կէսը: Այնպիսի ժամ է, որ կարծես բնութեան մէջ ամեն ինչ հեքը բռնած՝ նայում է միայն մի կէտի, հորիզոնի այն բոցավառ մասին: Եւ այն ներքևի լճերը, որոնք լեռների ստների տակ սարսրում են առաւօտեան հովի առաջ, և այս անձոռնի ժայռերը, որոնք կարծես արևին նայելու համար է, որ չեն ուզում թարթել իրանց խոռոչէ ահուելի աչքերը, և մանաւանդ այս զարմանալի, ձիւնասլատ Ալպերը, որոնք քնից զարթնած հսկաների պէս՝ իրար

թիկունքի, իրար գլխի վրայից աշխատում են առաջին շողերը գողանալ, բոլորը, բոլորը շնչակտուր սպասում են արևածագին:

Եւ ինչ դանդաղ, ինչ հանդիսաւորութեամբ է գալիս նա՛ այդ ամենքի սպասած արևը: Շողեր, շողեր, երփներանգ, նուրբ, խուրձ-խուրձ կամ կտոր-կտոր, որոնք դուրս են ընկնում ասես անդունդներից, վազվզում լեռների սպիտակ կատարներին, նստում են այս ու այն ցից ժայռերի վրայ, կամ խաղում են մի մոռացուած ամպի հետ: Անհրանարին է նկարագրել երկնքի վրայ կատարւող ճառագայթների բոլոր խաղը, գոյների բոլոր նրբութիւնները, լոյսերի անհրահատ բեկբեկումը, անկարելի է նոյն իսկ աչքով հետևել այդ բոլորին, ջոկել իրարից բոլոր նրբութիւնները, գոյների սահմանները, նրանց դասաւորութիւնը. այդ ամենը կատարւում է ըստ երևոյթին աննկատելի դանդաղութեամբ, բայց իրօք այնքան արագ, որ լոյսերի, գոյների, շողերի շարժման սկիզբն ու վախճանը կարծես միշտ խառն են իրար հետ. ճառագայթների ծնունդը, նրանց յանկարծական փայլը և ամբողջի մէջ նրանց լուծումը կատարւում է աւելի արագ, քան միտքը: Աչքը շփոթւում է, լեզուն կարկամւում, և միայն հոգին է, որ կարողա-

նում է հասկանալ, ապրել այդ փախչող վայրկեանները, զգալ ճառագայթների թըրթիւր, նրանց հետ դողալ, նրանց հետ լուծուել անհունութեան մէջ:

Ալպերի վրայ արևածագը բնութեան մեծագոյն հրաշալիքն է: Մարդկային կարողութիւնից վեր է նկարագրել այդ հրաշալիքը, ուստի ես կասեմ. «Նիզընի կատարից մենք տեսանք Ալպերի վրայ ծագող արևը»:

Յը գրութիւն!

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

## XV

Այս առաւօտ զարթնելով՝ մեր հարևան տունը գտայ ընդհանուր ցնծութեան մէջ. ծիծաղ, ուրախաձայն աղաղակներ, փոքրիկ իրարանցում: Դուրս եկաւ, որ տանտէրը կամ papa-ն, ինչպէս նրան անուանում են իր կինն ու փոքրիկ աղջիկը, գնում է զինւորական ծառայութեան: Ցած իջայ փողոց և ինքս էլ ծիծաղս պահել չկարողացայ: Կանգնած է մեր monsieur-ն բակում, գլխին կէպի, վրան զինւորի համազգեստ, մէջքին կաշւէ պայտուակը պինդ կապած, ոտներին ահագին երկարավիզ կօշիկներ, կողքից կաշւէ պատեանի մէջ նիզակը, և զինւորականին վայել լրջութեամբ դիտում է ու կարգի ձգւում իր հրացանը: Կինն ու փոքրիկ աղջիկը ծիծաղելով, կատակելով յարդարում են նրա զգեստը, ուղղում են ծալերը: Եւ քառասուն տարեկան papa-ն, որին ես ամեն օր սովոր էի տեսնել գեղջուկ զգեստներով, դաշտում, բակում, պարտիզում աշխատելիս,

յանկարծ զինուոր է գնում: Ես ծանօթ էի շվէյցարական զինուորական կարգերի հետ, գիտէի, որ իւրաքանչիւր շվէյցարացի նաև զինուոր է, բայց և այնպէս այս ծանօթ գիւղացու յանկարծական կերպարանափոխութեան հանդէպ անկարող եղայ ծիծաղս զրսպել. այն աստիճան նա տարօրինակ էր իր զգեստներով, իր լրջութեամբ:

— Է, սիրելի պարոն, ասաց նա գոհութեամբ, զինուորական ծառայութեան եմ գընում, ինչպէս տեսնում էք, մեր գունդը խմբւում է Մօրժ, տունը ձեզ եմ յանձնում, աւելացրեց նա ծիծաղելով:

— Իսկ դաշտային աշխատանքները, հմէնձը:

— Հանգիստ եղէք, կը վերադառնամ երկու շաբթից յետոյ:

Երկու շաբաթ, ահա զինուորական ծառայութիւնը, ահա թէ ուր է թագնուած այս ընդհանուր ցնծութիւնը, որ համակել է և՛ գնացողին, և՛ մնացողներին:

Եւ papa-ն գնաց զինուոր... կինն, աղջիկը և ես ընկերացանք նրան մի փոքր տեղ դէպի գիւղից դուրս, յետոյ նա համբուրեց իւրայիններին, զինուորական բարև տուեց ինձ և ժպտալով առաջացաւ:

Մի առժամանակ դեռ երևում էր բլրի լանջին նրա բարձր հասակը, նրա պայու-

սակը, հրացանը, մի քանի անգամ յետ նայեց, ձեռքով բարև ուղարկեց, ապա ծածկուեց բլրի յետևում: Շուտով նաև ուրիշ գիւղացիներ զանազան տարիքի, զինուորի ճմուած համազգեստով, մաքրած փայլուն հրացանը ուսերին, պայուսակները թիկունքին և ծիծաղելով գնացին նոյն ճանապարհով դէպի երկաթուղու մօտակայ կայարանը: Ճանաչում էի այդ դէմքերը, համարեա մենքին տեսել էի դաշտերում աշխատանքի ժամանակ, և այժմ տեսնում էի զինուած, թիկունքներն ուղիղ, քայլուածքները խրոխտ, քսան տարեկանից մինչև քառասուն և աւելի տարիք ունեցող տղամարդիկ գնում էին զինուորական ծառայութեան, և կարծես ոչինչ պատահած չլինէր, մնացողները ծիծաղում էին, գնացողները երգում: Շվէյցարական քաղաքացիներ էին և գնում էին կատարելու իրանց պարտքը դէպի հայրենիքը խնդրութեամբ ու սիրով:

Եւ այդ պարտքը, զինուորական այդ ծառայութիւնը ոչ միայն ծանր չէ, այլև դարձել է մի գեղեցիկ, հաճելի զբօսանք:

Ձինուոր և բանակ այն մտքով, ինչպէս մենք հասկանում ենք, այստեղ գոյութիւն չունի, ինչպէս և գոյութիւն չունի մեր քրոնուսով զինուորական ծառայութիւն: Ինչ-

պէս շատ բան այս երկրում, նոյնպէս և զինւորը տարբեր հասկացողութիւն է, օրի-  
գինալ, զուտ շվէյցարական: Իւրաքանչիւր շվէյցարացի, ով և լինի նա, եթէ միայն  
Ֆիզիկապէս արատաւոր չէ, 20—48 տարե-  
կան անպատճառ զինւոր է: Զինուորակոչի  
ենթարկւում է շվէյցարացի երիտասարդը,  
հէնց որ լրանում է նրա քսան տարին,  
բայց սրանից մի տարի առաջ, այսինքն  
տասնինն տարեկան հասակում, նա պար-  
տաւոր է ներկայանալ զինւորական վար-  
չութեանը, ուր նա երթարկւում է բազ-  
մակողմանի քննութեան անհրաժեշտ ընդու-  
նակութիւնների տեսակէտից: Այստեղ ա-  
ռանձին ուշադրութեան է առնւում ոչ մի-  
այն զինւորացուի մարմնակազմը, առողջա-  
կան վիճակը, հապա և մտաւոր պատրաս-  
տութիւնը: Իւրաքանչիւր զինւորացու պար-  
տական է ապացուցանել, թէ բարեխղճօրէն  
անցել է տարրական դպրոցի ընթացքը, որ  
ունի անհրաժեշտ ընդհանուր գիտելիքները,  
ճանաչում է իր հայրենիքը, գիտէ նրա աշ-  
խարհագրութիւնը, պատմութիւնը, կառա-  
վարութեան ձևը, ճանաչում է իր պարտ-  
քերն ու իրաւունքները իբրև քաղաքացի:  
Այս անհրաժեշտ քննութիւնից յետոյ տասն-  
ինն տարեկան պատանիներն արձակւում

են իրանց տները՝ յաջորդ տարին ներկա-  
յանալու համար: Ֆիզիկապէս պակասաւոր-  
ները ծառայութիւնից ազատւում են և նա-  
յելով իրանց նիւթական միջոցներին՝ պար-  
տաւորւում են վճարել զինւորական հարկ —  
taxe militaire: Մտաւորապէս անպատրաստ-  
ները զինւորական ծառայութեան ընթաց-  
քում Ֆիզիկական վարժութիւններից բացի  
պարտաւորւում են լրացնել իրանց ուսման  
պահասը:

Զինւորական ծառայութիւնից ազատ են  
պատեօնները, պոստի և երկաթուղային ծա-  
ռայողները, դատաւորները, քաղաքային վար-  
չութեան անդամները: Սրանք 20-ից մինչև  
32 տարին զինւորական ծառայութեան փո-  
խարէն վճարում են քսան ֆրանկ տարեկան  
խսկ 32—44 տ. տասն ֆրանկ, այնուհետև  
վճարը դադարում է:

Առաջին տարին շվէյցարացի երիտա-  
սարդը զինւորական ծառայութեան մէջ մը-  
նում է 60—90 օր, նայելով թէ որ գնդում է.  
նրան հազցնում են և կերակրւում ձրիապէս,  
տալիս են հրացան և փամփուշաներ, որ  
դառնում է նրա կատարեալ սեփականու-  
թիւն: Այնուհետև մինչև 32 տարեկան դառ-  
նալը նա իւրաքանչիւր երկու տարին մի  
անգամ կատարում է զինւորական ծառա-

յութիւն միայն տասնութ օր ամեն անգամին: Այդ ժամանակաշրջանում (20—32 տարեկան) նա համարուում է ճրնտիր գնդի անդամ (le corps d'élite): Ապա 32-ից մինչև 48 տարին նա միայն երեք տարին մի անգամ է գնում կատարելու զինւորական վարժութիւններ և ամեն անգամ 18 օր. այդ ժամանակաշրջանում նա համարուում է պահեստի զօրքի մէջ: Զինւորական իսկական ծառայութիւնից ազատուում է քառասունութ տարին լրանալուց յետոյ. միայն սպաները կարող են դեռ այնուհետև էլ իրանց ծառայութիւնը շարունակել, եթէ կամենան: Պատերազմի կամ սպառնացող վտանգի ժամանակ իւրաքանչիւր շվէյցարացի 17—50 տարեկան, անգամ նրանք, որոնք որևէ գնդի չեն պատկանում, գէնքի են կանչուում: Կուլի անընդունակները ծառայում են որպէս բանւորներ, հացթուխներ, մսագործներ, որպէս զի իսկական զինւորները այդ աշխատանքների համար բանակից չը խլուեն:

Ահա, սիրելիս, շվէյցարացի զիւղացու կատարած զինւորական ծառայութիւնը.— ընդամենը մօտ 200 օր քսանէնչորս տարուայ ընթացքում: Երկու-երեք տարին մի անգամ նա բացակայում է տնից երկու կամ երեք շաբաթով, այն էլ յարմարեցրուած է այն-

պէս, որ դաշտային աշխատանքները շատ շտուժեն, որ կարելի չափ զիւղացին ազատ լինի, նիւթական զրկանքներ չկրի: Հասկանալի է այժմ, թէ ինչու այս առաւօտ հարևան տանը ցնծութիւն էր տիրում, ինչու մայր և աղջիկ այնպէս զուարճանում էին, որ papa-ն գնում է զինւորական ծառայութեան: Եւ յետոյ զինւորական վարժութիւնները Շվէյցարիայի մշտագալար, օդաւէտ մարզագետիները վրայ, անտառներով եզերած հովիտներում, ականակիտ աղբիւրների, կարկաչին վտակների մօտ, այդ գեղատեսիլ Ալպերի ստորոտներում, ուր տեսակցում են հեռաւոր կանտոններից ու լեռներից եկած ընկեր-ծանօթները հետ, ուր կապուում են ծանօթութիւններ, երգում են նոր երգեր, պատմում են նորութիւններ, այս բոլորը որքան գրաւիչ, որքան քաղցր է դարձնում սրանց զինւորական ծառայութիւնը:

Տեսել եմ նաև շվէյցարական զօրանոցը, մէկը հէնց Լոզանում է, քաղաքից վեր, մի սիրունիկ, օդաւէտ բարձրութեան վրայ, որ Պոնտեզ է կոչուում: Երկյարկանի գեղեցիկ շէնք է, որ չորս կողմից ընդարձակ ու դեղանկար հորիզոն ունի Լեման լիճը, Ալպերը, ընդարձակ անտառներ ու մարգագետ-

տինները փռուած են առաջը իրանց սքան-  
չելի տեսարաններով: Շէնքի յետևում տա-  
րածւում է մի լայնարձակ, մշտականաչ  
մարգագետին, ուր կատարւում են վարժու-  
թիւնները: Եւ յետոյ շէնքի ներսը մի ահա-  
զին միջանցք, որի պատերի վրայ Ֆրանսիա-  
կան էնցիկլոպեդիստներից ցիտատներ են  
գրուած քաղաքացիների պարտքի և իրաւունք-  
ների մասին: Այդ միջանցքից աջ ու ձախ  
բացւում են մաքուր, կոկիկ, լուսաւոր  
սենեակներ, թէև կոշտ, բայց բոլորովին վա-  
յելուչ անկողիններով, որոնց մաքրութիւնը  
ոչ մի կասկածի տեղիք չի թողնում: Շվէյ-  
ցարական քաղաքացի զինւորը ուրիշ կա-  
ցութիւն տանել չի կարող: Ներկայ եմ եղել  
նաև սրանց զօրակոչին, երբ սպան թիւը  
ճշտելու համար կարդում է անունները  
մէկիկ-մէկիկ՝ յիշելով նաև նրանց պարապ-  
մունքները: Մեծամասնութիւնը գիւղերից  
են եկել, հեռաւոր լեռներից ու խրճիթնե-  
րից և խառնուել են քաղաքացիների հետ:  
Ահա թէ ինչու իրար յետևից լսում ես հա-  
ցագործ այս ինչ, յետոյ բժիշկ, հիւսն, վա-  
ճառական, դռնապան, ուսանող, ինժեներ,  
հողագործ, քիմիագէտ, բեռնակիր, բոլորն  
էլ նոյն համագգեստով, նոյն պայուսակով,  
նոյն ազատութեամբ առաջանում և շար-

քերում իրանց տեղերն են գրաւում: Նայում  
ես դէմքերին, տարբերութիւնը միայն այն-  
տեղ է—աշխատաւորը, արհեստաւորը, մշակը  
կնճած դէմք ու ճակատ, յոգնած անքեր,  
կոշտ մորթի ունի, իսկ քաղաքացին աւելի  
կոկ, աւելի նուրբ արտաքին ունի. արտո-  
նութիւն չկայ, սրանք բոլորն էլ միանգա-  
մայն հաւասար ժամանակ պիտի ծառայեն,  
նոյն անկողնի վրայ պիտի պառկեն, նոյն  
կերակրից պիտի ուտեն: Յաճախ տեղի են  
ունենում և այնպիսի հետաքրքիր դէպքեր,  
երբ յայտնի, հարուստ վաճառականը սովո-  
րական զինւորների շարքումն է յայտնւում,  
իսկ մի գործակատարը սպայի համագգեստով  
նրա առաջն է և նրան հրամայում է: Սո-  
վորական կեանքի անհաւասարութիւնները  
զինւորական շրջանում կամ բոլորովին հարթ-  
ւում են կամ գլխիվայր դառնում:

Ասացի, որ իւրաքանչիւր զինւոր իբրև  
կատարեալ սեփականութիւն է պահում ծա-  
ռայութեան ժամանակ ստացած իր գէնքե-  
րը—սուր, հրացան, նիզակ, ինչպէս և հա-  
մագգեստը: Ծառայութիւնից յետոյ տուն  
վերադառնալով՝ նա բերում է իր հետ այդ  
բոլորը, և բացի այդ՝ նրան տալիս են սահ-  
մանափակ թւով փամփուռներ, որ նա  
պարտական է ազատ ժամանակ կրակել՝

հրացանաձգութիւնը չը մոռանալու համար: Այսպիսով իւրաքանչիւր շվէյցարացի իր հրացանն ու փամփուշտները պատրաստ ունի տանը, բաւական է մի հեռագիրը և մի քանի ժամ, որ շվէյցարական ամբողջ ազգը կազմ ու պատրաստ, մի մարդի պէս ոտքի ելնի թշնամու դէմ:

Շվէյցարական գիւղն է եղել միշտ իմ նամակների նիւթը, սիրելիս, և այսօր կամեցայ քեզ նկարագրել այս երկրի զինուոր գիւղացուն, բայց -օգտւում եմ առիթից մի քանի խօսք էլ ասելու այս երկրի բանակի մասին ընդհանրապէս, հաւատացած, որ դա էլ քեզ հաճոյք կը պատճառի:

Իմ այս նկարագրից իմացար անշուշտ, որ Շվէյցարիայում զինուորական դասակարգ գոյութիւն չունի: Զինուորական ասպարէզ այս բառի իսկական մտքով չը կայ, որովհետև զինուորական ամենաստորին աստիճանից մինչև ամենաբարձրը միայն ժամանակաւոր պաշտօն է: Ինչպէս հասարակ զինուորը երկու-երեք տարին մի անգամ միայն, այն էլ մի քանի օրով է գէնքի տակ, այնպէս էլ սպաները, այնուհետև և՛ մէկը, և՛ միւսը սովորական քաղաքացիներ են աւօրեայ կեանքի, հասարակական յարաբերութիւնների մէջ, ուր շատ անգամ, ինչպէս

տեսանք, դերերը միանգամայն փոխւում են: Զինուոր և սպայ իսկական ծառայութիւնից դուրս երբէք չեն կարող համազգեստ կրել, և այս պատճառով Շվէյցարիայի քաղաքները փողոցներում տարին մի անգամ երկու շաբաթուայ ընթացքում միայն կարելի է զինուորական համազգեստ տեսնել:

Շվէյցարիայում սպայ դառնալ կարելի է, բայց այդ պաշտօնով մշտապէս ապրել ու պարապել անկարելի է: Զինուորական վարժութիւնները վերջացան թէ՛ չէ՛, սպան հանում է իր համազգեստը և գնում է իր պարապմունքին. նա կամ խմբագիր է կամ որևէ բանկային զբասենեակում ծառայող, կամ պարզ առևտրական:

Զինուոր-քաղաքացիների այս բանակը բաժանուած է ութ գումարտակի (division)՝ համաձայն երկրի աշխարհագրական սիստեմի. այս ութ գումարտակները կազմում են չորս գունդ (corps d'armée), որոնցից իւրաքանչիւրը յանձնուած է մի գնդապետի: Ի դէպ է ասել, որ Շվէյցարիայում գնդապետից բարձր զինուորական պաշտօն չկայ, միայն պատերազմի վերահաս վտանգի ժամանակ Դաշնակցական Սորհուրդը նշանակում է մի գեներալ, որին և յանձնւում է զօրքի ծայրագոյն իշխանութիւնը: Այսպէս

պատահեց ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ, երբ Շվեյցարիան իր երկրի չէ-զոքութիւնը պաշտպանելու համար ստիպ-ւած էր իր գնդերը ոտքի հանել սահման-ների վրայ:

Մեզ անշուշտ հետաքրքրում է, սիրե-լիս, թէ այսքան դեմօկրատ, այսպէս ըստ երևոյթին քիչ պատրաստուած բանակը մինչև սր աստիճան ընդունակ է դիմադրել ազ-գային ինքնապաշտպանութեան ժամանակ, թէ կարող կը լինի Շվեյցարիան չափուել մի թշնամու հետ, որ մշտական բանակ ու-նի, զինւորական դպրոցներով ու զօրանոց-ներով: Այս հարցը հետաքրքրել է Եւրոպա-յում շատ շատերին, և ամեն տարի շվեյ-ցարական մեծ զօրախաղերի ժամանակ բա-ցի բազմաթիւ օտարերկրացի թղթակիցնե-րից՝ գալիս են նաև շատ բարձրաստիճան զինւորականներ Ֆրանսիայից, Գերմանիա-յից, Ռուսաստանից, Իտալիայից՝ իրանց աչ-քով տեսնելու, թէ ինչ արժէ ազատ լեռ-նականների այս առանց մեծամեծ ծախսե-րի, առանց բռնագատութեան կազմուած բանակը: Եւ ամենքը հեռանում են հիաց-մունքով, ամենքի հրապարակական վկայու-թեամբ շվեյցարացի զինւորը, որ առաջին տարին միայն 60—90 օր է վարժութիւն-

ներ կատարել, և շվեյցարացի սպան, որ միայն 462 օր է զինւորական արուեստը սովորել, ոչնչով յետ չեն մնայ իրանց օ-տար պաշտօնակիցներից, որոնք ամբողջ տա-րիներ են անցկացնում զինւորական դպրոց-ներում և զօրանոցներում: Իսկ ինչ վերա-բերում է ուղիղ նշան զարնելուն, շվեյցա-րացիք իրանց հաւասարը չունին աշխար-հում: Եւ ամեն տարի շվեյցարական զօրա-խաղերից յետոյ՝ օտար երկրի թերթերը լի են լինում համակրանք՝ և հիացմունք ար-տայայտող յօդուածներով այս լեռնական-ների զինւորական կարգ ու սարքի, նրանց յաջողակութեան, տոկունութեան, գեղեցիկ կարգապահութեան մասին:

Ձեմ ուզում ծանրանալ այն բոլոր օ-ժանդակիչ և զուտ տեղական հանգամանք-ների վրայ, որոնց արդիւնք է այս օրիգի-նալ, խիստ հետաքրքիր բանակը: Կ'ասեմ, որ դրանց մէջ առաջնակարգ տեղ է բռնում պարտքի բարձր գիտակցութիւնը դէպի հայ-րենիքը, որին հասել է այս երկրի ժողո-վուրդը: Իւրաքանչիւր ոք այս երկրում գի-տէ, թէ ինչ է անում և ինչի համար: Եւ յետոյ կայ մի այլ նշանաւոր հանգամանք, որ պակաս չի օժանդակում զինւորական

գործին: Սօսքս Շվէյցարիան ցանցի պէս պատող ընկերութիւնների մասին է:

Շվէյցարիայում ամեն մարդ մի քանի կամ անպատճառ մի ընկերութեան անդամ է: Ամենից տարածուածը մարմնամարզով պարապողների և հրացանաձիգների ընկերութիւններն են: Ազատ օրերին պատանիներ ու երիտասարդներ լայնարձակ հովիտներում իրանց զուսմութեան համար շարունակ պարապում են մարմնամարզութեամբ և հրացանաձգութեամբ. երկուսն էլ այնպիսի կատարելութեան է հասցրուած այս երկրում, որ միջազգային մրցութիւնների ժամանակ միշտ առաջին մրցանակ տանողները շվէյցարացիներ են:

Յայտնի է շվէյցարական tir cantonal-ը (կանտոնային հրացանաձգութիւնը). դա համարեա մի ազգային աօն է: Որևէ կանտոն ահագին յայտարարութիւններով հրաւէր է կարդում միւս կանտոններին՝ որոշ ժամանակ շնորհ բերել իր մայրաքաղաքը, որի շրջականերում հրացանաձգութեան մրցութիւն է լինելու, որ տևում է մի շաբաթ:

Որոշուած քաղաքը զարդարւում է ազգային դրօշակներով, և Շվէյցարիայի բոլոր ծայրերից խումբ խումբ այնտեղ են թափուում զանազան կանտոնների ամենա-

ընտիր հրացանաձիգները ազգային հագուստներով: Նրանց ընդունում են զինուորական երաժշտութեամբ տեղական կանտոնային վարչութեան անդամները: Քաղաքն ստանում է տօնական կերպարանք, ամբոխը՝ մարդ, կին, ծեր մանուկ՝ զարդարուած դուրս են թափուում փողոցները՝ դիտելու հետաքրքիր թափօրները: Հիւրերն առաջնորդւում են քաղաքից դուրս պատրաստուած հրապարակը, ուր սկսում է հրացանաձգութիւնը երգուեալ դատաւորների ներկայութեամբ: Յերեկն այդպէս է անցնում, իսկ դիշերները քաղաքում ընդհանուր ցնծութիւն է, հրավառութիւն, երգ, կերուխում, և այսպէս մի քանի օր շարունակ: Լրագիրները օր-աւուր արձանագրում են մրցութիւնների հետևանքը, մրցանակ տանողների անունները, որոնք այսպիսով յայտնի են դառնում ամբողջ Շվէյցարիայում և ցնծութեամբ ու հպարտութեամբ հնչւում: Վերջանում են tir cantonal-ի հանդէսները, և հեռաւոր լեռներից եկած հիւրերը նոյն պատիւներով ճանապարհ են ընկնում իրանց տեղերը: Ահա այսպիսի տօներն են, որոնք թէև իբրև անմեղ, հաճելի զբօսանքներ, բայց լրացնում են զինուորական արուեստը, և շվէյցարական

լեռնականներից պատրաստում հայրենիքի ընտիր պաշտպաններ:

Շվէյցարիայով անցնելիս դու կը տեսնես դաշտերում աշխատելիս խաղաղ, բարի դէմքով, քաղաքավարի, արտաքուստ նոյնիսկ խեղճ գիւղացիներ, որոնք ոչինչ չունին զինւորական: Խօսիր հետները, նրանցից մի բառ անգամ չես լսի արիւնհեղութեան, պատերազմների մասին, որոնցից նրանք պարզապէս դարձում են: Սպանութեան մի որևէ փաստ չվէյցարացին լսում է միշտ զգուսանքի հետ խառն սոսկումով: Մեր երկրի խոշոր խէնջարներն նկարագիրները անգամ լսելիս՝ նա բացազանչում է՝ quelle horreur! (ինչ զարհուրելի է): Իսկ աւազակութիւնները, սպանութիւններն ու թալանները նրա համար դարձել են լեգենդաներ: Նա այնքան բարի է, բնութիւնից այնքան արդարասէր, քաղցրաբարոյ, քաղաքավարի, որ կարծես բնաւ զէնքի երես չի տեսել: Եւ սակայն այդ գիւղացին մի ընտիր զինւոր է, նա տանը պատրաստ ունի ամենավերջին ձևի հրացանը և փամփուշտներ: Զինւորական վարժութիւնները, զօրանոցի մի քանի շաբաթուայ կեանքը նրան Ֆիզիկական առաւելութիւններ տալով, բարոյական ոչ մի փոփոխութիւն առաջ չի բերել նրա ազնիւ

աշխարհայեացքի մէջ դէպի իր նման օտարը, դէպի իր հարևանը: Սրեան, սպանութեան պաշտամունքը չունի նա ի բնէ. այդպէս և մնում է: Իր հրացանն ու համազգեստը նա պահում է իբրև ծայրագոյն և տխուր անհրաժեշտութիւն, երբ մի անկող ու կոպիտ հիւր կը յայտնուի իր երկրի սահմանների վրայ չար դիտաւորութիւններով: Եւ այն օրը երբ որևէ մեծ պետութիւն կը փորձի այս փոքրիկ ժողովրդի մեծ հայրենիքի ազատութեան դիպչել, կը լինի մի սարսափեղաշարութեան դիպչել, կը լինի մի սարսափեղաշար: Այլերի վրայ պէտք է արիւնաթաթաւ ընկնի վերջին շվէյցարացի հովիւը, որ պէսզի կարելի լինի այս երկրին տիրանալ:

Տ'գրութիւն!

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

## XVI

Վաղուց է, սիրելիս, որ խոստացել եմ քեզ գրել շվեյցարական համայնքի (la commune) մասին: Այսօր կը փորձեմ այդ խոստումս կատարել: Ասում եմ «կը փորձեմ», որովհետեւ ես յաւակնութիւն չունիմ շվեյցարական համայնքի ամբողջական ուսումնասիրութիւնը ներկայացնել. աւելին կ'ասեմ. եթէ ինձ յաջողուի մի համառօտ նկարագրութեամբ քեզ հեռաւոր հասկացողութիւն տալ այս երկրի գիւղական հասարակութեան կազմի և վարիչ մարմինները գործառնութեան մասին, ես բոլորովին գոհ կը լինիմ:

Շվեյցարական բոլոր հաստատութիւնները՝ կարել է ասել՝ գերազանցօրէն ազգային են, իրական արտայայտութիւն այս ժողովրդի պատմական-հասարակական կեանքի, կլիմայական, աշխարհագրական, ցեղական ուրոյն պայմաններէ: Դու երևի կը նկատես,

որ ես շատ յայտնի ճշմարտութիւն եմ կըրկնում, որ բնականաբար ամեն երկրի հաստատութիւններ օրգանապէս կապուած պիտի լինին երկրի հետ որպէս արդիւնք նրա պատմական զարգացման և մի շարք տեղական պայմանների: Իբրև տեսութիւն՝ այդ նկատողութիւնդ ճշմարիտ է, բայց չպէտք է մոռանալ, սիրելիս, որ շատ յաճախ ամենատարամբանական տեսութիւնները աշխարհում, իրական կեանքում ճիշտում, այլանդակում են, ինչպէս քարերի արանքում ծլող մի խղճուկ բոյս, որ արև տեսնելու համար ստիպուած է ծռմուռել ու անճոռնի գալարներ կաղմել: Երբ՝ օրինակ՝ մի յաղթում ժողովուրդ ստիպուած է իր հասարակական կեանքը կաղապարել յաղթողի տուած խորթ նմուշներով, չէս գտնում, որ այդպիսի պայմաններում վերև յիշուած տեսութիւնը ճշմարիտ որ դառնում է մի արորուած, այլանդակուած բոյս:

Անշուշտ Շվեյցարիան էլ իր պատմութեան ընթացքում զգացել է պարտութեան և օտարի լծի բոլոր դառնութիւնը. բայց նախ դա շատ հեռու է, և երկրորդ այս երկրի լեռնային բացառիկ դիրքը հնարաւորութիւն չի տուել յաղթողներին իրանց ոտների տակ իսպառ ճխել այս ժողովրդի հո-

զին կամ կողապարել այդ իրանց ուզածի պէս: Չնայելով պատմական անցքերի բոլոր յեղեղումներին՝ շվէյցարացին իր ազգային-հասարակական հաստատութիւններին իբրև նմուշ ունեցել է միշտ գեղեցիկ ու գոռոզ Ալ'պերը: Դա մի վերին աստիճանի խոշոր և նշանակալից հանգամանք է, սիրելիս, այժմեան Շվէյցարիան հասկանալու համար: Արդարև Ալ'պերը թէև իրար կողքի, մի հողի վրայ, նոյն կլիմայի տակ, բայց անշատ շրջ-թաներ, առանձին-առանձին կատարներ են, և իւրաքանչիւրն ունի իր ներքին կեանքը, իսկ ամենքը միասին ասես միահամուռ թափով դէպի երկինք, դէպի արևը, դէպի յաւիտենական լոյսն են ձգւում: Նոյն պատկերն ունի նաև քաղաքական Շվէյցարիան. այս զարմանալի Ալ'պերի գեղեցիկ քմահաճոյքը կամեցել է, որ նա էլ բաժան-բաժան լինի մանուածոյ գծերով, ինչպէս գալարւում են իր շղթաները, իւրաքանչիւր լեռնային պարի կրծքին ու ոտներին կախուի մի կանտոն, իւրաքանչիւր ձորում մի համայնք, և այդ զատ-զատ կանտոններն ու համայնքները դարձեալ Ալ'պերի պէս իրանց հիմունքներով միացած մայր հողին, գլուխներն ունենան միշտ ազատ, ճակատները բաց, երկնասլաց, երկնահայեաց:

Կարելի է ասել, որ Շվէյցարիայի քաղաքական-հասարակական ամբողջ կազմը Ալ'պերի պատկերի կրկնութիւնն է, և այս ժողովրդի ոգին էլ նոյն լեռների շնչով է պարուրած, նրանցից թափ ու ձև է ստանում: Հողմերն ու փոթորիկները անցել են Ալ'պերի կատարներով, գոռոզ լեռները մնացել են անսասան և այսօր էլ՝ ինչպէս հազարաւոր տարիներ առաջ՝ ապրում են իրանց ձևով, օտարներն էլ եկել են ու անցել այս երկրով, բայց շվէյցարացին այսօր էլ՝ ինչպէս հազարաւոր տարիներ առաջ՝ ապրում է իր ուզածի պէս: Ահա թէ ինչ մտքով սասցի, որ շվէյցարական հաստատութիւնները գերազանցօրէն ազգային են: Օգտւում եմ առիթից քեզ մի քանի խօսք ասելու ընդհանրապէս շվէյցարական կառավարական ներկայ սիստեմի և նրա պատմական զարգացման մասին, որից յետոյ կ'անցնեմ շվէյցարական համայնքին: Այս երկրի ընդհանուր կառավարութեան և նրա ստորաբաժանումների մէջ իշխում է ապակենտրոնացման սկզբունքը իր հնարաւոր լայնութեամբ: Այդ սկզբունքի վրայ հաստատուած կառավարութիւնը դաշնակցական-ռամկապետական է: Այդպէս էլ եղել է դեռ շատ հնագոյն ժամանակներից, որովհետև՝ ինչ-

պէս տեսանք՝ այս երկրի բնութիւնը կառավարութեան ուրիշ ձև տանել չէր կարող. դեռ Յուլիոս Կեսար (101—44 Ք. առ.) և Տակիտոս (54—140 Ք. յ.) յիշում են հին հելլէստների ռամկավարական դաշնակցութեան մասին: Հռոմէական տիրապետութիւնը և նրանից յետոյ աւատականութիւնը անկարող եղան իսպառ ջնջել շվէյցարական ազգային ոգուն յատուկ կառավարական սկզբունքը: Հարթութիւնների ժողովուրդը ընկձուեց օտարի լծի տակ, բայց ազատութեան ոգին լեռնային բնակիչների հետ խոյս տուեց դէպի Ալպերը: Եւ արդի Շվէյցարիան ծնունդ առաւ հէնց դռոգ Ալպերի ծոցում 1291 թիւն, երբ երեք լեռնային կանտոններ՝ Շվայց, Ուրի և Ունտերվալդեն Դաշնակցութիւն կազմեցին (pacte fédérale Bundesbrief): Յիշեալ երկրի կանտոններին հեազհետէ միացան Լիւցերնը (1332), Յիւրիխ (1351), Գլարիս, Յուզ (1352) և Բերն (1353): Այս ութ կանտոնների Դաշնակցութիւնը՝ եթէ ոչ առանց ներքին մի շարք ցնցումների և կռիւների՝ կարողացաւ տեւել մինչև 1481 թիւը: Այդ ժամանակից սկսած դարձեալ ուրիշ հինգ կանտոններ — Փրիբուրգ, Սոլուր, Շաֆհաուզ և Ապպենձել միացան Դաշնակցութեանը: Մանր պետութիւնների միանալը սակայն

առաջացրեց մի շարք ներքին խնդիրներ, որոնք երկար ժամանակ յուզեցին երկիրը: Կային մի քանի գաւառներ, ինչպէս Տիւրգովի, Վօ, Տեսսէն, որոնք Դաշնակցութեան իրաւասութեան տակ էին գտնուում որպէս հպատակ երկիրներ. կային յօգուտ քաղաքացիների իրաւագուրկ եղած գիւղացիներ, կրօնական խնդիրներ կաթոլիկների և բողոքականների մէջ: Հպատակ գաւառները ազմկուում էին և ապստամբութիւն որոճում, զրկուած գիւղացիները բողոքում էին, և տարբեր եկեղեցիներն ընդհարում. երկրի այս կացութեան մէջ վրայ հասաւ Փրանսիական Մեծ Յեղափոխութիւնը (1798): «Մարդու և քաղաքացու իրաւունքների» հռչակումը բնականապէս ամենից առաջ արձագանք տուեց Շվէյցարիայում, որտեղից դժգոհներն ու զրկուածները դիմեցին Փրանսիայի օգնութեան: Միջամտութիւնն անմիջապէս կատարուեց, և Շվէյցարիայում կազմակերպուեց միանգամայն Փրանսիականի նման մի հանրապետութիւն, որ կոչուեց «Հելլլետեան հանրապետութիւն, մի և անբաժանելի» (République Helvétique, une et indivisible): Բոլոր քաղաքացիների հաւասարութիւնը յայտարարուեց, կանտոնները դարձան պարզ դեպարտամենտներ, օրէնս-

դրական իշխանութիւնը տրուեց երկու մարմինների, վարչական հինգ անդամներից կազմուած գիրեկտորիայի (directoire), մի խօսքով մի կատարեալ մանրանկար Ֆրանսիական հանրապետութեան: Հինգ տարուայ փորձը ցոյց տուեց սակայն, որ այն, ինչ լաւ է Ֆրանսիայում, չի կարող յարմար լինել նաև Շվէյցարիայում: Կրկին յուզումներ, կրկին դժգոհութիւններ, և 1803-ին Նապոլէոնը պէտք համարեց մի նոր սահմանադրութիւն կազմել Շվէյցարիայի համար, որ յայտնի է «L'acte de médiation» (Միջնորդական սահմանադրութիւն) անունով: Այս վերջինը՝ թէև աւելի համապատասխան երկրի պատմական և ազգագրական պայմաններին, բայց դարձեալ չկարողացաւ երկար տևել, որովհետև Նապոլէոնի անկումից յետոյ ընտաւրացիան պէտք համարեց խառնուել նաև Շվէյցարիայի ներքին գործերին, և 1815 թւին կազմուեց նոր սահմանադրութիւն (pacte fédérale), որով էլի երեք նոր կանտոններ—Վալէ, Նեոշաթել և ժընև միանում էին Դաշնակցութեանը: Սակայն ինչպէս բոլոր դէպքերում, նոյնպէս և Շվէյցարիայի վերաբերմամբ ընտաւրացիան յետագէմ եղաւ: Նոր սահմանադրութիւնը աշխատեց այստեղ էլ վերականգնել Ֆրանս-

սիական յեղափոխութիւնից առաջ իշխող կացութիւնը եթէ ոչ ամբողջութեամբ, գէթ որոշ չափով: Ազատուած կանտոնները վերստին չդարձան հպատակներ, բայց նախկին գերիշխող կանտոններին իրաւունք տրուեց ի հարկին ջնջել իրաւունքների հաւասարութիւնը, վերականգնեց նաև վանքերի գոյութեան իրաւունքները, մի բան, որ այնքան անախորժութիւնների և կռիւների պատճառ էր եղել:

Այս պայմաններում՝ հասկանալի է, թէ ի՞նչու ազատամիտ տարրերը դժգոհ մնացին, և խուլ աշխատանք սկսուեց սահմանադրութիւնը փոփոխելու, արդար հիմունքների վրայ դնելու համար: Մտքերի խմորումը Շվէյցարիայում բաւական զօրեղ էր, երբ 1831 թւին Ֆրանսիայում սկսուեց յուլիսեան յեղափոխութիւնը և երբ ընկաւ ընտաւրացիան: Շվէյցարիայում ռամկապետական ոգին սաստիկ զօրացաւ Ալպերի միւս կողմում կատարուող դէպքերի ազդեցութեան տակ, նոյնիսկ տասնևերկու կանտոն հռչակեցին ազատամիտ և ռամկապետական սկզբունքները իրանց վարիչ հաստատութիւնների մէջ: Հարկ համարուեց մի նոր ազատամիտ սահմանադրութեան ծրագիր մշակել, որ յանձնարարուեց ժընևցի պրոֆեսսոր Բոսսիին:

Բայց հին կարգերի սիրահարները, գլխավորապէս կաթոլիկ կանտոններ, դժգոհ մնացին, և սկսուեց 1847 թւի ներքին կռիւները, որոնք յայտնի են սոնդերբունդ (sonderbund) անունով: Կատաղի և վտանգաւոր պատերազմ ծագեց երկու կուսակցութեան բաժանուած կանտոնների մէջ: Սահմանադրութեան վերաքննութեան կուսակիցները յաղթանակեցին, և 1848-ին հաստատուեց նոր սահմանադրութիւն լայն, ազատամիտ հիմունքների վրայ և ժողովրդի ու կանտոնների մեծամասնութեան քուէով ընդունուեց նոյն թւի սեպտեմբերի 12-ին: Այսքան դժուարութեամբ ու զոհերով հաստատուած քաղաքական նոր կարգերը Շվեյցարիային պարզեցին մօտ երեսուն տարիների խաղաղ և երջանիկ կեանք: Քաղաքակրթական գործը այդ ժամանակի ընթացքում խոշոր առաջադիմութիւն կատարեց: Ըստ երևոյթին շվեյցարական ազգը գտել էր վերջապէս իր իսկական ազգային պահանջներին և հոգեկան ձգտումներին համապատասխան կառավարութեան ձև: Բայց կեանքը կանգ չի առնում, և որքան արագ քաղաքակիրթ է մի երկիր, այնքան արագ են փոխւում պայմանները և այնքան բազմանում նորանոր կարիքները: Որևէ սահմանադրութիւն տևա-

կան և կենսունակ է, երբ շնորհիւ հիմնական սկզբունքների ձկունութեան կարողանում է ընթանալ ժամանակի հետ և չքարանալ: Այդպէս էլ շվեյցարական 1848 թ. սահմանադրութիւնը, որի վերաքննութեան պահանջն զգացուեց 1870-ական թւականներին, վերաքննուած սահմանադրութիւնը սակայն ժողովրդի մեծամասնութեան քուէն չստացաւ, և պէտք եղաւ էլի երկու տարի սպասել, որպէսզի ժամանակն առաջ բերի մտքերի որոշ պատրաստութիւն: Եւ 1874 թ. ապրիլի 19-ին դաշնակցական նոր սահմանադրութիւնը քուէարկուեց և ընդունուեց ձայների մեծամասնութեամբ, որ արտայտուեց հետևեալ կերպով — 340,199 ձայն 198,013-ի դէմ և 14½ կանտոն 7-ի դէմ: Ահա այս սահմանադրութիւնն է, որով կառավարւում է Շվեյցարիան և այսօր: Տեսնենք այժմ հակիրճ տեսութիւնով, թէ որոնք են այդ սահմանադրութեան աչքի ընկնող բնորոշ գծերը, ինչպէս է հաշտեցրած կանտոնների ինքնուրոյնութիւնը ընդհանուր դաշնակցական սկզբունքների հետ, որոնք են իւրաքանչիւրի իրաւասութեան և պարտքի սահմանները:

Շվեյցարիայի օրէնսդրական իշխանութիւնը կազմուած է երկու խորհրդից

ա) Ազգային խորհուրդ (Le conseil national), որ ներկայացնում է շվեյցարական ժողովուրդը, և բ) Պետութիւնների խորհուրդ (Le conseil des états), որ ներկայացնում է քսաններկու կանտոնները:<sup>(1)</sup> Որովհետև ազգային գերիշխանութիւնը պատկանում է հաւասարապէս ժողովրդին և կանտոններին, ուստի այդ երկուսը միասին են կազմում Դաշնակցական իշխանութիւնը: Ազգային խորհուրդը նորոգւում է երեք տարին մի անգամ: Իւրաքանչիւր կանտոնի ժողովուրդը ընտրում է 20 հազար հոգու համար մի պատգամաւոր: Սա շվեյցարական պարլամենտն է և ունի 167 պատգամաւոր:

Քսան տարեկան ամեն մի շվեյցարացի աշխարհական ընտրելի է: Հոգևորականները դուրս են թողուած կրօնական վէճերի առիթ չտալու համար:

Պետութիւնների խորհուրդը (Le conseil des états) կազմուած է իւրաքանչիւր կանտոնի ընտրած երկ-երկու պատգամաւորներից: Բոլոր պատգամաւորների թիւը հաս-

<sup>1)</sup> Շվեյցարիան իրօք 22 կանտոն ունի. բայց զրանցից երեքը՝ իրենց ներքին կեանքում երկու անկախ, ինքնուրոյն պետութիւններ են. այս է պատճառը, որ կանտոնների թիւը համարւում է նաև 25:

նում է 44-ի պետութիւնների խորհրդում: Իւրաքանչիւր կանտոն իր պատգամաւորներին յատկացրած ժամանակի վերաբերմամբ միանգամայն ազատ է. կան այնպիսիները, որոնք տարին մի անգամ են ընտրութիւն անում, կան ուրիշները, երկու կամ երեք տարին մի անգամ:

Այս երկու խորհուրդները (Ազգային և Պետութիւնների) իրանց նիստերը կատարում են առանձին-առանձին, բայց նրանց համաձայնութիւնն անհրաժեշտ է որևէ օրէնք ընդունելու համար:

Մի շարք առաջնակարգ կարևորութիւն ունեցող հարցեր վճռելու համար այս երկու խորհուրդները միանում են և կազմում դաշնակցական ժողով (assemblée fédérale): Այսպէս դաշնակցական ժողովն է ընտրում իր դաշնակցական խորհուրդը (Conceil fédéral), նրան է պատկանում յանցաւորներին ներումն շնորհելու գերագոյն իրաւունքը, նա է քննում վարչական և դատական իշխանութիւնների մէջ ծագած վէճերը և վերնուրիշների մէջ ծագած վէճերը և վերջապէս նա է ընտրում Դաշնակցութեան նախագահին, ինչպէս և դաշնակցութեան բարձրագոյն դատարանի (le tribunal fédéral) անդամներին:

Հետաքրքիր է դաշնակցական խորհրդի

(Le conseil fédéral), և նախագահի (Le président de la Confédération) ընտրութիւնը: Դաշնակցական ժողովը (Assemblée fédérale) ընտրում է իր միջից եօթ հոգի տարբեր կանտոնների ներկայացուցիչներ երկրի գործադիր իշխանութիւնը վարելու համար:

Սրանք համապատասխանում են ուրիշ երկրի մինիստրներին, և իրօք նրանցից իւրաքանչիւրը վարում է երկրի վարչութեան հետևեալ ճիւղերից մէկն ու մէկը:

1. Քաղաքականութիւն (արտաքին).
2. Ներքին գործեր և հասարակական աշխատանքներ.
3. Արդարադատութիւն և ոստիկանութիւն.
4. Զօրք.
5. Ֆինանսներ.
6. Վաճառականութիւն և երկրագործութիւն.
7. Հաղորդակցութիւն:

Ահա այս վարչական մարմնի անդամներից տարին մէկը ընտրւում է Դաշնակցութեան նախագահ դարձեալ դաշնակցական ժողովի կողմից և մի ուրիշը՝ փոխ-նախագահ: Նախագահի անձնաւորութիւնը ոչ մի առանձին նշանակութիւն չունի, ոչ մի նշանով կամ իրաւունքով նա չի տարբերւում

իր միւս ընկերներից, միայն արտաքին պաշտօնական յարաբերութիւնների ժամանակ նա ներկայացնում է կառավարութիւնը:

Որպէս սովորական երկիր՝ Շվեյցարիան աշխատում է ըստ ամենայնի խոյս տալ արտաքին փայլից. հէնց այս պատճառով իր պաշտօնական ներկայացուցիչը՝ նախագահը դրուած է նիւթական ամենասովորական պայմանների մէջ. նրա տարեկան ռոճիկն է 13,500 Ֆր. (մօտ 5000 ռուբլի), մինչդեռ իր միւս ընկերներն ստանում են 12,000 Ֆր. տարեկան: Պարզ է, որ այդպիսի միջոցներով Դաշնակցութեան նախագահը՝ ինչքան և նա կամենալու լինի, չի կարող իր համաքաղաքացիներից տարբերուել ապրուստի, նիստ ու կացի եղանակով, չի կարող ամբոխ շացնելու համար ճոխութիւն փռել իր շուրջը: Նա ստիպուած է միանգամայն համեստ կեանք վարել:

Եւ յետոյ մի ուրիշ հանգամանք կայ, որ էլ աւելի նսեմացնում է նախագահի ազդեցութիւնը: Նա ընտրւում է մի տարով և չի կարող վերընտրուել յաջորդ անգամ: Մի տարի ժամանակամիջոցը չափազանց կարճ է, որպէսզի կարելի լինի փառասիրական որևէ ձգտում փայփայել կամ դեմագոյ դառնալու մասին խորհել: Ոչ նախագահը,

ոչ իր ընկերները, ինչպէս և որևէ քաղաքացիական կամ զինուորական պաշտօնեայ իրաւունք չունին ընդունել օտար պետութեան շնորհած շքանշան կամ տիտղոսներ: Շվէյցարական ազատ քաղաքացին ո՛չ մի օտար երկրից չի ուզում կախումն ունենալ և տարբերուել իր համաքաղաքացիներից: Այնտեղ թէ Դաշնակցութեան նախագահը, թէ սովորական արհեստաւորը վայելում են միևնոյն քաղաքացիական իրաւունքները, ունին միևնոյն պարտքերը:

Դաշնակցական դատարանը (le tribunal fédéral) հանդիսանում է որպէս այս երկրի բարձրագոյն դատական իշխանութիւնը և գըւանում է Լօդանում: Անդամները (Juges fédéraux) թւով 19 են, 9 փոխանորդով: Ընտրուած են 6 տարով և վերընտրելի են:

Ահա մօտաւորապէս Շվէյցարիայի դաշնակցական իշխանութեան կազմը, որ ծառայում է որպէս կապ բոլոր կանտոնների համար և որ հաւասարապէս գնահատելի և թանգ է շվէյցարական բոլոր քաղաքացիների համար: Դաշնակցութիւնը միանգամայն անկախ է օտար երկրների հետ ունենալիք յարաբերութիւնների մէջ, նրան է պատկանում պաաներագմի և խաղաղութեան իրաւունքը, նրան է ենթարկում երկրի բա-

նակը, նա կարող է օրէնքներ հրատարակել քաղաքացիների իրաւունքներն ու ազատութիւնը ապահովելու և ընդհանրութեան շահերը պաշտպանելու համար: Սակայն Դաշնակցութեան օրէնքները հրատարակելու իրաւունքն անսլայման չէ: Երեսուն հազար քաղաքացիներ կամ ութ կանտոն եթէ դժգոհ են որևէ օրէնքից կամ վճռից, միշտ իրաւունք ունին պահանջել, որ այդպիսի օրէնքը դորժագրութեան մէջ մտցնելուց առաջ ենթարկուի ընդհանուր ժողովրդական քուէարկութեան: Ահա ժողովրդական այս գերագոյն իրաւունքն է, որ կոչւում է ըեֆէրանդում (référéndum), և որը դաշնակցական կենտրոնական իշխանութիւնը ստիպուած է հաշւի առնել օրէնքներ հրատարակելիս: Քուէարկուած օրէնքը կամ վճիռը ընդունելի է դառնում միայն այն դէպքում, երբ ժողովրդի մեծամասնութեան ձայներն է ստանում: Այսպիսով իր կատարեալ գերիշխանութիւնը և իրաւունքը ապահովելու համար շվէյցարական ժողովուրդը չի բաւականանում նրանով, որ իր դաշնակցական օրէնսդրական մարմինները կազմուած լինին բացառապէս իր ընտրեալներից, հապա և վերապահել է իրան՝ ցանկացած դէպ-

քում իր վճռական խօսքն ասել այս կամ այն օրէնքի մասին:

Իւրաքանչիւր դաշնակից կանտոն որոշ հարցերում կենտրոնական կառավարութեան իրաւասութիւնն ընդունելով հանդերձ՝ մընում է միանգամայն անկախ իր ներքին խնդիրների կարգադրութեան մէջ: Կանտոնն էլ Դաշնակցութեան պէս ունի իր օրէնսդրական մարմինը, որ կոչւում է grand conseil Մեծ խորհուրդ, ուստի 236 անդամները ընտրւում են 4 տարով: Յետոյ իր վարչական մարմինը (conseil d'état) բաղկացած 7 անդամից, որոնց ընտրում է Մեծ խորհուրդը 4 տարով: Եւ վերջապէս իր դատական իշխանութիւնը (tribunal cantonal), որի 9 անդամները դարձեալ ընտրում է Մեծ խորհուրդը չորս տարով: Կանտոնի վարչական-գործադիր իշխանութիւնը, կամ Conseil d'état իր եօթ անդամով վարում է կանտոնային պետութեան եօթ դեպարտամենտները: Կանտոնը միանգամայն ազատ է օրէնքներ հրատարակել, ներքին սահմանադրութիւն կազմել, միայն թէ այդ չհակասէր ընդհանուր դաշնակցական սկզբունքներին: Այսպիսով կանտոնը ներկայացնում է որպէս մեծ Շվեյցարիայի մի մանրանկար, և նա մի անկախ հանրապետութիւն է մի

անկախ ժողովրդի, առանց սակայն մաքսային սահմաններ ունենալու:

Կանտոնը իբրև անկախ հանրապետութիւն մի հատիկ սահմանափակում է ընդունում. նա իրաւունք չունի զինուորական ոյժ գործածել առանց դաշնակցական խորհրդի, նա չի կարող նաև ինքնուրոյն կերպով մասնաւոր դաշինքներ կռել հարևան կանտոնների կամ օտար պետութիւնների հետ: Մնացած բոլոր հարցերում կանտոնների վայելած ազատութիւնն այնքան մեծ է, որ նրանց ներքին կառավարութիւնը, նրանց օրէնքները իրարից յաճախ խոշոր տարբերութիւններ ունին, որովհետև իւրաքանչիւրը առաջնորդւում է ըստ իր տեղական պայմանների: Այսպէս՝ շատերից մի օրինակ — կանտոններ կան, ուր մահու պատիժը վերացուած է, կան ուրիշները (յատկապէս կաթոլիկ կանտոններ) ուր նա դեռ մնում է: Այսպիսի շատ օրինակներ կարելի է բերել, որոնք ապացուցանում են իւրաքանչիւր կանտոնի կատարեալ ինքնուրոյնութիւնը իր ներքին կառավարութեան, իր ներքին խնդիրների կարգադրութեան մէջ: Սակայն այսքանով չի սահմանափակւում շվեյցարական վարչական և օրէնսդրական ապակենտրոնացումը:

Եթէ Դաշնակցութեան մէջ կան ինքնուրոյն, անկախ կանտոններ, իւրարանջիւր կանտոնի մէջ էլ կան մօտաւորապէս նոյնչափ անկախ համայնքներ (la commune), որոնք հանդիսանում են կանտոնների մանրանկարներ: Կարելի է ասել, որ այս երկրում որքան լեռնաշղթայ կայ, այնքան էլ կանտոն, և որքան լեռնադաշտ, այնքան համայնք: Բնութիւնն ինքն է չափել-ձևել այս երկրի կառավարութիւնը:

Այս նամակով խոստացայ քեզ գրել համայնքների մասին, սիրելիս, բայց հակառակ իմ կամքի՝ յառաջաբանս երկար եղաւ: Իմ նպատակն էր քեզ ցոյց տալ, թէ որքան ճշմարիտ է Ալպերի և շվէյցարական դաշնակցական կառավարութեան մէջ արած իմ համեմատութիւնը: Համոզեցի քեզ, թէ ոչ, չգիտեմ, բայց էլ աւելի երկարացնել չեմ կարող, ուստի դառնում եմ շվէյցարական համայնական կազմակերպութեանը:

Այդ մասին յաջորդ անգամ. նամակս երկարեց:

Յ գրութիւն!

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

## XVII

Համայնքի մասին խոստացայ քեզ գրել, սիրելիս, ստիպուեցի հեռուից սկսել, և նախաբանս երկար եղաւ: Այս նամակով դառնում եմ իմ բուն նիւթին՝ շվէյցարական համայնական կազմակերպութեանը: Թէև ես նախ խօսեցի շվէյցարական դաշնակցութեան, կանտոնների մասին, բայց սխալ կը լինի այստեղից եզրակացնել, որ այս երկրի վարչական կազմակերպութեան մէջ իշխում է այն ստորաբաժանման սիստեմը, որ յատուկ է կենտրոնացման ընդդէմ: Ո՛չ թէ ժիմի ենթակայ պետութիւններին: Ո՛չ թէ դաշնակցութիւնն է ստորաբաժանման ենթարկւում և իջնում մինչև համայնքը, այլ ընդհակառակը՝ վերջինն է, որ կազմում է ամհիմունք, և նրա վրայ բարձրանում է ամբողջ կազմը: Շվէյցարիայում համայնքը մի այնպիսի մեծութիւնն է, որ ինքնըստինքեան ոչինչ լինէր, ինքնուրոյն կեանքի անընդունակ. նա մի մասն է, որ միայն

ամբողջութեան մէջ կարողանայ արտայայտել իր դերը, նա մենմենակ պետութիւնից անկախ վերցրած դարձեալ իր որոշ ամբողջացրած պատկերն ունի, որովհետեւ զուրկ չէ այն բոլոր օրգաններից, որոնք հնարաւորութիւն են տալիս ինքնուրոյն գոյութիւն ունենալ: Համայնքը այս երկրում իր տեսակի փոքրիկ դաշնակցութիւն է ընտանիքների, ինչպէս որ պետութիւնը դաշնակցութիւն է զանազան կանտոնների: Նա էլ մի փոքրիկ պետութիւն է և ունի միւսնոյն օրգանական մասերը, ինչպէս՝ ոստիկանութիւն, հասարակական աշխատանքներ, դաւանութեան գործեր, հիւանդների և աղքատների խնամակալութիւն և այլն: Իւրաքանչիւր շվէյցարացի, ուր էլ նա ծնուած լինի, համարուած է բնակիչ այն համայնքի, որտեղացի է իր հայրը: Նա կարող է հաստատուել, ապրել ուրիշ համայնքում, բայց միշտ պահելով իրաւունքներն ու պարտքերը որոնք կապուած են հօր ծնընդավայրի հետ: Այս հանգամանքը առանձնապէս նշանակութիւն ունի այն դէպքում, երբ օտար համայնքում հաստատուած շվէյցարացին հիւանդանում է կամ ընկնում է ծանր կարիքի մէջ և կարիք է լինում հասարակական օգնութեան: Ուր և լինի նա,

իր իսկական համայնքը պարտական է նրան օգնութիւն հասցնել, կամ բերել տալ ու խնամել: Իւրաքանչիւր համայնք իր հասարակական խնամակալութիւնն ունի միայն իր կարօտ համաբնակիչների համար:

Համայնքները Շվէյցարիայում շատանգամ խիստ հին ծագումն ունին, երբեմն նոյնիսկ իրանց կանտոնից էլ վաղ են կազմակերպուել: Նրանք սովորաբար անփոփոխ պահուած են իրանց ինքնուրոյն ձևը, իրանց սահմանները, կենտրոնավայրը: Ունին նաև իրանց առանձին զինանշանը որպէս մի-մի փոքրիկ պետութիւններ: Որևէ համայնքի բնակիչ, մանաւանդ հարուստ համայնքի բնակիչ դառնալը այնքան էլ հեշտ չէ այստեղ: Համայնքներ կան, որոնք իրանց անշարժ կալուածքների -- անտառների, մարգագետինների -- արդիւնքով ոչ միայն կարողանում են համայնական և պետական հարկերը վճարել, այլև իւրաքանչիւր տարի բաժանում են ընտանիքների վրայ նրանց յաւելածը: Մի քանի համայնքների համար շատ սովորական է ամեն տարի փոխանակ հարկ վճարելու ընդհակառակն ստանալ վառելիք, կարագ, կաթ, պանիր համայնական աղբիւրներից: Շատ հասկանալի է, որ այսպիսի հարուստ համայնքը բնաւ յանձն չի առնի ընդունել

իր ծոցում եկուորներ, որոնք իրանց հետ կը բաժանեն այս նիւթական առաւելութիւնները: Կան շատ փոքր և շատ մեծ համայնքներ կողքկողքի, այնուամենայնիւ նըրանց սահմանները մնում են անփոփոխ, այլապէս կը խախտուի համայնական սեփականութեան սկզբունքը:

Այսպիսով համայնքների առանձնացումը դրուած է պահպանողական հողի վրայ և առաջ է բերել այսպէս ասած համայնական «հարեանութիւն»: Երկար ժամանակ միասին նոյն կարգերի, նոյն հասարակական պայմանների մէջ ապրող ընտանիքները վերջիվերջոյ այնպէս սովորել են իրար, որ կարծես մի մեծ ընտանիք են կազմում — համայնքը: Գուցէ սխալ չի լինի ասել, որ Շվէյցարիայում համայնքը իր բարոյական պատկերով համապատասխանում է մեր երկրի գիւղին, ուր բոլորն իրար ճանաչում են. կան հին ընտանիքներ, նոյնիսկ փոքրիկ տեղական հայրենասիրութիւն, որ արտայայտուում է անմեղ սրախօսութիւններով՝ ուղղած հարեան գիւղերի դէմ. շվէյցարական համայնքն էլ ունի իր փոքրիկ հայրենասիրութիւնը, իր երգիծաբանական երգերը հարեանների մասին, իր տօները և ուրախութիւնները, որին հրաւի-

ւիրում է մամնակցել հարեաններին, ինչպէս մեզանում ուխտագնացութիւնները դէպի այս կամ այն գիւղը: Գիւղացիներն այստեղ անգիր գիտեն և հպարտութեամբ են արտասանում այն բոլոր յայտնի անուանները, որոնք իրանց համայնքից դուրս գալով՝ նշանաւոր դեր են խաղացել Շվէյցարիայի մօտաւոր և հեռւոր պատմութեան մէջ:

Եւ քիչ չեն այդ նշանաւոր անուանները. այս երկրի գիւղը քաղաքից ոչ պակաս կըրում է իր ուսին հասարակական-քաղաքական կեանքի բեռը: Դա հասկանալի է, եթէ ի նկատի ունենանք, որ Շվէյցարիայում դասակարգային խարութիւնները, ծագման, արիւնի առաւելութիւնները իսպառ վերացւած են և անհատական ընդունակութիւնների ճանապարհը խելացի կերպով լայն բացւած է իւրաքանչիւր շվէյցարացու առաջ, լինի նա քաղաքացի թէ գիւղացի, աղքատ թէ հարուստ: Այսպիսով գիւղն էլ քաղաքին հաւասար հնարաւորութիւն է ստացել ի հարկին թեւակոխել դէպի հասարակական և մըտաւոր աւելի բարձր ասպարէզներ: Գիւղատաւոր աւելի բարձր ասպարէզներ: Գիւղացի երեխան, որ գիտութեան և փառքի ծառաւ ունի, այստեղ շատ աւելի պակաս դըժլարութիւններ կը գտնի իր ճանապարհին, քան այն երկրներում, ուր ճրի և պարտա-

դիր նախնական ուսումը գոյութիւնն չունի, և ուր բազմաթիւ ձեւականութիւններ, սահմանափակումներ, յաճախ դիտաւորեալ դրութւորութիւններ, մտաւոր կենտրոնների հեռաւորութիւնը և այլ նիւթական հանգամանքներ եթէ ոչ անկարելի, գէթ չափից դուրս փշոտ են դարձնում գիւղացի երեխայի կրթական ճանապարհը: Այստեղ գոյութիւնն չունին այնպիսի միջնակարգ կամ բարձրագոյն դպրոցներ, ուր բացառիկ պայմանների շնորհիւ մտնել կարողանային միմիայն որոշ դասակարգի զաւակներ: Այսպիսի սահմանափակումներ այս երկրում անհասկանալի են, և արտօնութիւնն բաւը հասարակական կարգերի մէջ կորցրել է իր խորհուրդը, որովհետև վերաբերում է ամենքին անխտիր: Ահա թէ ինչու, ինչպէս ասացի, այստեղ գէպի քաղաք թարմ, պատրաստած ոյժերի հոսանքն աւելի հեշտ է և անընդհատ:

Անշուշտ՝ դա մի երևոյթ չէ, որ յատուկ լինէր բացառապէս Շվեյցարիային, իւրաքանչիւր երկրում այդ հոսանքը գոյութիւն ունի, գիւղական ժողովուրդը ամեն տեղ հանդիսանում է մի տեսակ մատակարարող քաղաքին ոչ միայն կենսական մթերքների, այլև կենսական և մտաւոր էներգիայի, մի-

այն Շվեյցարիայում այդ երևոյթն աւելի հեշտ և աւելի լայն չափով է կատարւում յիշածս պայմանների շնորհիւ: Չափազանցութիւնն չի լինի ասել, որ այստեղ յաճախ գիւղն է գալիս քաղաքացի դառնում և կառավարում իր երկիրը: Հասկանալի է թէ ինչու ուսման պետական-գեղջկական ոգին այնպէս իշխում է այս երկրի հասարակական-քաղաքական բարքերում: «Nous sommes des paysans cultivés» (Մենք քաղաքակրթուած գիւղացիներ ենք), կ'ասի ժպտալով Չվեյցարացի իւրաքանչիւր պրոֆեսսոր, քաղաքական գործիչ, սպայ, թէ պարզ քաղաքացի: Եւ դա ըստ ամենայնի ճշմարիտ է:

Հետաքրքիրն այն է, որ գիւղերից առաջ եկած այդ վարիչները քաղաքներում իրանք իրանց բնաւ խորթ չեն զգում քաղաքների անձանօթ միջավայրում ու պայմայններում: Իրանց համայնական կարգերից նրանք արդէն որոշ չափով ծանօթ են առաջնորդող ընդհանուր սկզբունքների հետ. ասացի, որ համայնքը մի փոքրիկ կանտոն է, մի փոքրիկ պետութիւն: Գիւղացի գործիչները քաղաք են բերում իրանց անտառների պարարիչ շունչը, լեռների առողջ ոգին, իրանց շիտակ բնաւորութիւնը, կոյս եռանդը, այն մանկական հաւատը գէպի լաւն ու

բարին, որ յատուկ է բնութեան մարդուն: Այս բոլորի հետ նրանք երկրի կարգերի վերայ ձգում են և այն անխուսափելի պահպանողականութեան քօղը, որ այնպէս աչքի է ընկնում Շվէյցարիայում: Ի դէպ է ասել, որ չնայելով իր ռամկապետական ազատ կարգերին՝ այս երկիրը գերազանցապէս պահպանողական է և բնականից խորշում է բիրտ բռնկումներից, յանկարծական փոփոխութիւններից, յեղափոխութիւններից, և առհասարակ արիւնից, ճիշտ ինչպէս իր հայրենի բնութիւնը, ամեն ինչ այնքան մեղմ է, սրտապարար: Շվէյցարացին էվօլիցիան միշտ գերադասել է ընթացիկային, վերջինը ընթացիկային (յեղափոխութիւնը) որպէս մի ծայրահեղ և արիւնոտ անհրաժեշտութիւն նա գործ է դրել օտարի լուծը թօթափելու համար, բայց իր ներքին կեանքում նա միշտ աշխատել է հետևել խաղաղ էվօլիցիային: Արիւնոտ պայքարները օտար բռնապետութեան դէմ վաղուց են վերջացել, և նա այժմ խորշում է նոյնիսկ ընթացիկ բառից, հասկանալի է, էլ կարիք չունի: Շատ բնորոշ է մի խօսակցութիւն, որ մի անգամ տեղի ունեցաւ իմ պրոֆեսսորներից մէկի ընտանեկան շրջանում: Խնդիրը վերաբերում էր թիւրքահայկական գործերին: Դուստրը հարցնում

էր, թէ շատ կան թիւրքիայում հայ յեղափոխականներ (ընթացիկներ): Մայրը ընդհատեց նրան. — «Մի ասա ընթացիկներներ, աղջիկս, այդ բառից արիւնի հոտ է գալիս (ça sent du sang!), ասա պատրիոտներ» (հայրենասէրներ): Մի զարմանար, սիրելիս, ում դէմ ես ուզում, որ շվէյցարացին յեղափոխութիւն ունի, և ինչո՞ւ ունի, ինչո՞ւ չէր բերելու համար: Իր քաղաքական-հասարակական կարգերը, իր օրէնքները, իր սեփական հոգու, իր մտքի, կամքի գերասեփական հոգու, իր մտքի, կամքի գերազոյն արտայայտութիւններն են, լաւ թէ վատ՝ ինքն է պատասխանատու իր արածի համար, երբ գտնում է անհամապատասխան, փոփոխելու կամ իսպառ ջնջելու գերազանց իրաւունքներն ու յարմարութիւններն ունի: Բայց ես դարձեալ իմ նիւթից հեռացայ: Ներիք ինձ, իմ ընկեր, ես ուզում եմ շատ-շատ բան ասել և աւանայ շատախօս եմ դառնում:

Այս ընդհանուր տեսութիւնից յետոյ անցնենք այս երկրի համայնական կազմակերպութեան մի քանի բնորոշ մանրամասնութիւններին: Որպէս նմուշ ես վերցնում եմ վօ կանտոնի համայնքը. քեզ արդէն գրել եմ, որ ամենից շատ այդ շրջանում եմ ես ապրել, Լոզանի շրջականերում: Այս կանտոնը, որ համարւում է մեծերից (չորրորդ

տեղն է բռնում), ընդամենը 3223 քառակուսի կիլոմետր տարածութիւն ունի: Նա բաժանուած է 19 գաւառի (district). Իւրաքանչիւր գաւառ ունի մի քանի գաւառամաս կամ շրջան (cercle), իսկ իւրաքանչիւր շրջան մի կամ մի քանի համայնք, նայելով իր մեծութեանը: Այս կանտոնում բոլոր համայնքների թիւը հասնում է 388-ի, որոնք, ինչպէս ասացի, մեծութեամբ խիստ տարբեր են իրարից:

Համայնական վարչութիւնը կազմուած է հետեւեալ մարմիններից.

1) Ամեն մի համայնք, որ 800 հոգուց աւելի ազգաբնակչութիւն ունի, կարող է ունենալ իր համայնական խորհուրդը:

2) Այն համայնքները, որոնց ազգաբնակչութեան թիւը 800-ից պակաս է, փոխանակ համայնական խորհրդի՝ ունի ընդհանուր խորհուրդ:

3) Բոլոր համայնքները՝ մեծ թէ փոքր, ունին իրանց համայնական վարչութիւնը, որի նախագահն է սինդիկը:

Այժմ տեսնենք որոնք են այս մարմիններից իւրաքանչիւրի պարտաւորութիւններն ու իրաւունքները:

Չորս տարին մի անգամ համայնքի բոլոր բնակիչները հաւաքւում և կազմում են

ընդհանուր ժողով (L'Assemblée générale), որ ընտրում է իր միջից 45—100 անգամ՝ նայելով համայնքի մեծութեանը, և ահա սրանք կազմում են համայնական խորհուրդը (Conseil communal). այս խորհրդի պաշտօնը համարժէք չունի մեր գիւղերում, դա աւելի շուտ համապատասխանում է մեր երկրի քաղաքային խորհուրդներին (գումա), միայն աւելի լայն իրաւունքներով: Համայնական խորհուրդը գիւղերում ընտրում է համայնական վարչութիւն (La municipalité)՝ բաղկացած 3—9 անգամից, նայելով ընտրողների թուին: Նոյն համայնական խորհուրդն է ընտրում նաև համայնական վարչութեան նախագահին, որ կոչւում է սինդիկ: Վերջինս իր պաշտօնով յիշեցնում է ֆրանսիական մէրին:

Փոքր համայնքներում սովորաբար համայնական խորհրդի տեղը բռնում է ընդհանուր խորհուրդը (conseil général), որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ բոլոր քաղաքացիների ժողովը: Այս ժողովին կարող են մասնակցել նաև այն երկուոր շվէյցարացիները, որոնք հաստատուած են այնտեղ երեք ամսից ի վեր: Սակայն և այս դէպքում դարձեալ համայնական վարչութիւնը և սինդիկը ընտրում են միմիայն բնիկները:

Ինչպէս տեսնում ենք, համայնական կազմակերպութեան մէջ առաջնակարգ դեր է յատկացրուած համայնական խորհրդին, որ անմիջապէս ժողովրդից է ընտրուում: Բացի ստորագաս մարմինների—ինչպէս՝ համայնական վարչութեան, սինդիկի—ընտրութիւններից նրա վրայ ծանրացած են և այլ կարևոր պարտքեր. նա է հսկում վարչութեան և սինդիկի գործունէութեան վրայ, նա է տեսնում համայնքի ծախսերի հաշիւները, իրաւունք է տալիս նոր արտակարգ ծախսեր անել, նա է վճռում կալուածներ ձեռք բերելու կամ վաճառելու խնդիրը, նա իրաւունք ունի փոխառութիւն անել, դատ վարել, ինչպէս և համայնքի մէջ նոր անդամներ ընդունել: Այս հարցերի մէջ կան այնպիսիները, որոնց վերաբերմամբ համայնական խորհուրդը ինքնագլուխ է, կան ուրիշները, երբ նա ենթարկւում է պետական խորհրդի գերիշխանութեանը: Այսպէս համայնական խորհուրդը չի կարող փոխառութիւն անել կամ վաճառել ու գնել կալուածներ առանց պետական խորհրդի համաձայնութեան:

Այսպիսով համայնական խորհուրդը գիւղում ժողովրդական ներկայացուցչութիւնն է. դա մի փոքրիկ պարլամենտ է, որ մարմնացնում է իր ընտրողների ցանկութիւն-

ները, կամքը համայնական գործերի վերաբերմամբ: Նրա իրաւասութիւնը մի կողմից այնքան է լայն, որքան հարկաւոր է համայնական ինքնավարութեան համար, և միւս կողմից այնքան սահմանափակ, որքան անհրաժեշտ է պետական ամբողջութեան սրկգբունքի տեսակէտից: Նրա վճիռների իրագործումը յանձնուում է համայնական վարչութեանը (municipalité) և սինդիկին: Վերջիններս ներկայացնում են համայնական գործադիր իշխանութիւնը (pouvoir exécutif)

Այս վարչութիւնից է կախուած տեղական ոստիկանական իշխանութիւնը, համայնքի կալքերի կառավարութիւնը — ինչպէս՝ դպրոցական գործերը, աղքատների արկղը և այլն: Յաճախ արդիւնաւէտ գործունէութեան համար համայնական վարչութիւնը բաժանուում է մի քանի մասնաճիւղերի, որոնցից իւրաքանչիւրը յանձն է առնում համայնական գործերի այս կամ այն մասի կառավարութիւնը. այսպէս կայ ոստիկանական մասնաճիւղ (section de la police locale) հասարակական աշխատանքների, դպրոցների, կալուածների, ֆինանսների և այլն: Թէ ինչպէս է արտայայտուում համայնական վարչութեան գործունէութիւնը հասարակական այս կամ այն հաստատութեան մէջ, այդ

երևում է օրինակ դպրոցական գործերից: Յիշեալ վարչութիւնն իր անմիջական գործադիր իշխանութեան տակ ունի համայնքի բոլոր դպրոցները, որոնց կառավարութեան համար կազմում է դպրոցական յանձնաժողով (comission scolaire) ամենաքիչը երեք-չորս հոգուց, որոնց կէսը նա կարող է իր անդամներից նշանակել: Այս յանձնաժողովը անմիջական հսկողութիւն ունի դպրոցական պաշտօնեաների և աշակերտների ընթացքի վրայ, հոգում է բոլոր պէտքերը, կազմակերպում է դպրոցական հանդէսները, կազմում է տարեկան հաշիւները և այլն: Մօտաւորապէս նման ձևով համայնական վարչութիւնը յանձնարարում է իր այս կամ այն մասնաժողովին իր իրաւասութեան ենթարկուած գործերը, միշտ ցուցումն ընդունելով համայնական խորհրդից, որ, ինչպէս ասացի, ներկայացնում է հասարակական կամքը:

Սինդիկը թէև համայնական վարչութեան նախագահն է, բայց նա ներկայացնում է նաև գործադիր իշխանութիւնը վարչական ընթացիկ հարցերի, մանաւանդ կարգապահութեան համար: Գիւղական համայնքի մէջ նա միակ ոստիկանն է, միակ անձը, որին յանձնուած է ի կատար ածել վարչական օրէնքները և հսկել ընթացիկ

կեանքի խաղաղութեան վրայ: Նա է, որ հաշտարար դատաւորին հաղորդում է կատարուած յանցանքի մասին: Սովորաբար Շվէյցարիայում ոչ ոքի չի կարելի ձերբակալել առանց պատշաճաւոր դատաւորի գրաւոր վճռի, որ պէտք է ցոյց տալ յանցաւորին: Սինդիկը միայն մի բացառիկ իրաւունք ունի՝ ձերբակալութիւն կատարել առանց գրաւոր վճռի և այդ այն դէպքում միայն, երբ մէկը բռնուած է հէնց յանցանքի տեղում: Այս դէպքում էլ սակայն նրա իրաւունքը շատ սահմանափակ է, նա պարտական է իր բանտարկեալին ներկայացնել դատաւորին ամենաուշը տասներկու ժամուայ ընթացքում ձերբակալելուց յետոյ, հակառակ դէպքում ինքը կ'ենթարկուի ծանր պատասխանատուութեան, որովհետև այս երկրում անհատական ազատութիւնը ոչ միայն անբռնաբարելի, այլև ամենաթանգ բանն է մարդու բարոյական սեփականութիւններից, նրա էութեան ամենանուիրական մասը: Ոչ միայն սինդիկը իրաւունք չունի քմահաճ բանտարկութիւններ կատարել թէկուզ մի ժամ, այլ և քննիչը իր բանտարկեալին պարտական է լսել քսանեչորս ժամուայ ընթացքում և արձակել, եթէ անմեղ է: Վերջին դէպքում բանտարկութեան ենթարկուած անձը իրա-

ունք ունի պետութիւնից պահանջել իր կորցրած ժամանակի (24 ժամի) և կրած վիրաւորանքի որոշ հատուցումն:

Ամիսներով ապրում ես շվէյցարական գիւղում և չես իմանում՝ ո՞վ է սինդիկը, ո՞վ է հսկում հասարակական կարգի վրայ, ո՞ւր է համայնքի ոստիկանութիւնը: Տօներ, հանդէսներ են կատարւում, հազարաւոր ամբօխ է խոնւում այս ու այն առթիւ որոշ կենտրոններում, դարձեալ չը կայ ոստիկանութիւնը, ճիպոտ չի շարժւում, հայհոյանք չի լսւում, քիթ-երես չի արիւնոտւում, մարդ չի բանտարկւում: Ոստիկան և ժողովուրդ իրար գտել են, որքան մէկը բարեբարոյ, խաղաղ, արդար վաստակի հետամուտ է, նոյնքան միւսը ուղղամիտ է, քաղաքավարի և աւելի աշխատում է ծածկուել, ոչնչանալ, քան հրապարակ գալ իր իշխանական յաւակնութիւններով, որոնք ոչ ոքի հարկաւոր չեն: Միակ դէպքը, երբ սինդիկը երևան է գալիս և նրա հետ մի հատիկ համազգեստով ու սրով մարդ, դա որևէ տեղում պատահած հրդեհի ժամանակն է: Փողոցներում հնչւում է մի անախորժ չարագուշակ սուլոց, մի մարդ է այն, որ վազում է և փչում մի շեփոք, միևնոյն ժամանակ անընդհատ

դողանջում է եկեղեցու կամ դպրոցի դանգը, ձայներ են լսւում «au feu! au feu! — դէպի կրակը, դէպի կրակը — գիւղը շարժւում է ասես մոզական գաւազանով, հեռաւոր խըրճիթները արձագանք են տալիս, լեռներով, ձորերով, դաշտերով, անտառներով մարդիկ են վազում դէպի այն կողմը, ուր ծխի բարդ ամպեր են բարձրանում և երկինքը շառագունել է: Համայնքի կենտրոն համարուած գիւղում պատրաստ կան հրդեհամարտի մեքենաներ, կառքեր և այլ կատարելագործուած պարագաներ: Դաշտերից վերադարձած, յոգնած, քրտնաթոր գիւղացիները մի վայրկէսում հագնում են իրանց հրդեհաշէջները համազգեստը, ծածկում են փայլուն սաղաւարտները, շալակում պարաններն ու կացինները, և այս զինուած սքանչելի բանակը շարժւում է դէպի հրդեհի տեղը: Նրանց հետ է սինդիկը, պատտերը և գիւղական ուսուցիչը: Այնտեղ սկսւում է մի եռանդուն պայքար կատաղի տարերքի դէմ, գործում են ամենքը, և մեծաւ մասամբ չարքը ընկրկւում է նրանց միահամուռ ջանքերի առաջ: Անցեալները ես ակնատես եղայ մի այդպիսի դէպքի: Մոնպելլերէն լեռան կրճքին վառւում էր մի մենաւոր խըրճիթ, Պիդուի համայնքում: Երեկոյեան ժա-

մի տասն էր. գիւղն իրար անցաւ: Հրդեհա-  
շէջները անմիջապէս խմբուեցին հեռաւոր  
խրճիթներից: Առաջին անգամ տեսայ նաև  
այս համայնքի սինգիլիին: Եւ յետոյ բոլորը  
վազեցին անտառի միջից լեռնիվեր դէպի  
բոցավառ խրճիթը: Ես և գիւղական ուսու-  
ցիչ մոսիօ Պայիոն գնում էինք միասին,  
և նա մանրամասն պատմում էր ինձ հա-  
սարակական աղէտների դէմ կռուելու ի-  
րանց սիստեմը, գիւղական կայքերի ապա-  
հովութիւնը և այլն: Մեր կողմից խաւարի  
միջից անընդհատ վազում, անցնում էին  
երիտասարդներ դէպի հրդեհի վայրը: Չնա-  
յելով, որ խրճիթը շատ հեռու էր, այնու-  
ամենայնիւ շատ բան կարելի եղաւ փրկել:

Ակամայ յիշեցի հրդեհները մեր գիւ-  
ղերում: Միտդ է, երբ մի ամառ մեր  
փոքր ժամանակ պառկած էինք կտրանը,  
յանկարծ բռնկուեց Ղաղօենց ցորենի դէզը  
կալում: Տէրը գլուխը կորցրած ծնկներին  
էր տալիս, քանի մի բարեմիտներ կժերով  
ջուր էին կրում և ցանում բոցերի վրայ,  
ոմանք թաց փալասներով աշխատում էին  
ծածկել բոցավառ խրճերը, իսկ մեծաւ մա-  
սամբ բազմութիւնը իր ինչ անելը չիմա-  
նալով կանգնել էր քարացած: Եւ դէզը վառ-  
ւում էր, վառւում...

Դէ, մեր գիւղերը խօ առանց հրդեհի  
էլ վառուած, տոչորուած են: Ահաւոր չա-  
րիքի դէմ ի՞նչ ունին խեղճերը—մի քանի  
թաց փալաս, մի քանի կուժ ջուր:

Է՛հ, սիրելիս, հիանալի է շվէյցարական  
ժողովրդի ընկերական ոգին: Ճշմարիտ է,  
այս երկրում վաղուց անհետացել է այն «հա-  
րկանութիւնը», որով մեր կողմերում այն-  
քան հպարտ են, հիւրասիրութիւնը չափա-  
ւորուել է, անհատականութիւնը խիստ շեշ-  
տուել, «իմ ու բոն» աւելի պարզ սահմա-  
նում ստացել, շատ թուլացած է մասնաւոր  
ձևով «իրար ձեռք բռնելու» սովորութիւնը,  
իւրաքանչիւրը թողնուած է իր ուրոյն ճա-  
իւրաքանչիւրը թողնուած է իր ուրոյն ճա-  
կատագրին, իր անհատական ընդունակու-  
թիւններին: Այդ բոլորը ճշմարիտ է, և ու-  
րիշ կերպ չի էլ կարող լինել, եթէ ինկատի  
առնենք քաղաքակրթութեան բարդ պահանջ-  
ների հետ ստեղծուած նիւթական նոր պայ-  
մանները, կեանքի անթիւ նիւթական դժ-  
ւարութիւնները, որոնք այնպէս սովորական  
են այստեղ և որոնց մասին մեր երկիրը հաս-  
կացողութիւն չունի: Սակայն դեռ չի կա-  
րելի ասել, թէ այս երկրի հասարակական  
պայմանները առաջ են բերել միայն տխուր  
երևոյթիներ, որ օգնութեան կարօտները,  
խեղճերը մոռացութեան են տրուել: Ճշմա-

ըիտը միայն այն է, որ անհատական յաճախ ստորացուցիչ, երբեմն անզօր, անօգուտ օժանդակութիւնները ընդունել են հասարակական, հաւաքական կերպարանք: Շվէյցարացիին փողոցում իր եկեղեցու դրանը ողորմութիւն տալ չգիտէ, բայց իր երկրի ազգատները ու անկարները համար դրամարկը ունի, և մենք տեսանք, որ համայնական վարչութիւնների առանձին հոգսերը առարկան են նրանք: Մեր երկրի պէս այստեղի գիւղացիք գնալ-գալ չունեն իրար տուն. տարիներ կ'անցնեն յաճախ, և նրանք հարեանի «հացից չեն կտրի», եթէ շատ մօտիկ ազգական չեն. բայց երբ վրայ է հասնում հասարակական աղէտը, երբ հեղեղն է վնասում, կամ հրդեհ վրայ հասնում, պէտք է տեսնել սրանց ընկերական ոգին, որ արտայայտում է էական օգնութեամբ: Նրանք նախ աշխատում են փրկել տունը, եթէ հրնար է, անկարելի դէպքում հոգացում է համայնական արդիւնքից, որ վնասուած համագիւղացիին ոտքի կանգնի նորից: Թողնենք դեռ այն, որ այս երկրում գիւղացիները բոլոր ունեցածը ապահովագրուած է: Այսպիսով այն, ինչ մեզանում ողորմութիւն, մասնաւոր անհատի սրտի գործ է, որ յաճախ արտայայտում է բաւական ստորա-

ցուցիչ եղանակով ստացողի համար, այստեղ դարձել է հասարակական նուիրական պարտականութիւն: Զարմանալի չէ, որ Շվէյցարիայում թէև աղքատներ, անկարներ, կարօտներ կան, բայց մուրացկանութիւն չը կայ: Մուրացկանութիւնը արգելւած է օրէնքով, որովհետև հասարակութիւնը իր ամբողջութեամբ ինքն է յանձն առել կերակրել իր դժբախտ անգամներին:

Յը գրութիւն!

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

## XVIII

Շվեյցարական համայնքի կազմակերպուածեան մասին՝ իմ վերջին նամակից յետոյ դու սաստիկ ցանկանում էիր իմանալ, սիրելիս, թէ ի՞նչպէս է կատարուում հարկահանութիւնը, ո՞ւմ է յանձնուած այդ, ի՞նչ առաւելութիւններ կամ թերութիւններ ունի: Հասկանում եմ քեզ, դու ուզում ես և՛ այս մասում մեր երկրի զիւղական կարգերի հետ համեմատութիւններ անել: Յաւուում եմ սակայն, սիրելիս, որ ես չեմ կարող այդ նիւթի վրայ անհրաժեշտ վիճակագրական թուեր տալ քեզ հարցերը հիմնովին լուսաբանելու համար: Դու զիտես, որ անտեսական խնդիրները հետ ես զլուխ չունիմ: Յիշում ես մեր աշակերտութիւնը, թուերի առաջ ես միշտ յօրանջում էի, իսկ երբ առիթ էր լինում խօսել բարոյական հարցերի մասին, իմ շատախօսութիւնը վերջ չունէր: Այժմ էլ նոյնն է: Բայց շատ էլ մի վհատուիր, այն, ինչ ես կը գրեմ, յոյս ունիմ՝ այնուամե-

նայնիւ քեզ մօտաւոր գաղափար կը տայ այս երկրի հարկային սիստեմի մասին:

Նախ ասեմ, որ անշարժ կալուածները և հողային սեփականութեան իրաւունքն այստեղ անհատական է և բացարձակ: Իւրաքանչիւր շվեյցարացի բացարձակօրէն տէր է իր արտի, իր այգու, իր տան, ինչպէս և իր շարժական կայքի: Ի հարկին նա կարող է ծախել իր արտը կամ այգին ու և երբ կամենայ: Սրա համար նա պատասխանատու չէ ո՛չ պետութեան և ո՛չ համայնքի առաջ: Միակ ձեականութիւնը որ սեփականատէրը պարտական է կատարել վաճառքի ժամանակ, այն է, որ նա պէտք է ջնջել տայ համայնական մատեաններից իր անունը և նրա փոխարէն զրի նոր սեփականատիրոջ անուանը, որպէս տէր իր նախկին կալուածի: Այս նպատակով հաստատուած գրասենեակներ կան, ուր յիշեալ ձեականութիւնը կատարելու համար առանձին դժուարութիւններ չի հարկէ չկան: Միայն թէ զնոզը պարտաւոր է իր ձեռք բերած կալուածի արժողութեան 10% վճարել պետական գանձարանին որպէս նոր սեփականութեան հարկ:

Բացի մասնաւոր սեփականութիւնից զիւղերում կան նաև համայնական և պետական հողեր: Ինչպէս որ մասնաւոր անհատ-

ներ ունին իրանց անտառներն ու արօտները, նոյնպէս պետութիւնը (կանտոն) և համայնքը ունին իրանց կալուածները: Պետականը շահագործուում է կալուածական դեպարտամենտի ձեռքով, իսկ համայնականը գտնուում է համայնական կառավարութեան բացարձակ իրաւասութեան տակ: Համայնքների հարստութիւնն ու աղքատութիւնը այսպիսով կախուած է ոչ միայն մասնաւոր անհատների սեփականութեան, այլ աւելի համայնական սեփականութեան քանակութիւնից: Որքան մեծ է մի համայնքին պատկանող (մասնաւոր սեփականութիւնից դուրս) արօտների և անտառների տարածութիւնը, նոյնքան հարուստ է համայնքը, և ընդհակառակը: Մի քանի համայնական կալուածներ մնացել են անցեալ դարու կէսին (1847) եզովիտներին և վանական այլ կաթողիկ կարգերին Շվեյցարիայից դուրս անելուց յետոյ: Համայնքները գրաւել են իրանց շրջանում եղած վանապատկան հողերը:

Ծնորհիւ վերջին հանգամանքի հարկատուութեան տեսակէտից շվեյցարական գիւղերը կարելի է բաժանել երեք կարգի. 1. Համայնքներ, որոնց անդամները ոչ միայն իրանց մասնաւոր սեփականութիւնից ոչինչ չեն վճարում պետական գանձարանին, այլև

ամեն տարի բաժանում են իրանց մէջ բերքերի և հում նիւթերի մի որոշ քանակութիւն: 2. Համայնքներ ուր գիւղացին ոչ վճարում է և ոչ ստանում, և 3. Համայնքներ, ուր գիւղացին ստիպուած է իր մասնաւոր սեփականութիւնից տարեկան հարկ վճարել: Այս երեւոյթը գուցէ մի փոքր անհասկանալի թուայ: Սռաջին կարգի գիւղերը, համայնական կալուածներ ուրոնք շատ համայնական կալուածներ ունին, խելացի տնտեսութեամբ իւրաքանչիւր տարի այդ կալուածներից ստանում են վառելիքի, խոտի, կարագի, պանրի այնպիսի քանակութիւն, որ վաճառելով վճարում են համայնքի բոլոր հարկերը, իսկ մնացորդը բաժանում են գիւղացիներին վրայ: Այսպիսով իւրաքանչիւր տարի գիւղացին ոչ միայն ոչինչ չի վճարում իր մասնաւոր գրքայանից, այլև ստանում է ուտելիքի և վառելիքի մի աչքի ընկնող քանակութիւն: Երկրորդ կարգի գիւղերը նրանք են, որոնց համայնական կալուածները այնքան է, որքան հարկաւոր է տարեկան հարկերը լրացնելու համար: Այդ համայնքների գիւղացիները ոչ իրանց մասնաւոր արդիւնքից հարկ են վճարում և ոչ էլ բերքեր ստանում: Համայնական կառավարութիւնը հոգում է հարկեանաւոր կալուածներից: Եւ երբորդ

կարգի գիւղերը նրանք են, որոնք չունենալով համայնական հողաբաժիններ՝ ստիպուած են իրանց մասնաւոր արգիւնքներից լրացանել պետական հարկը: Սրանք են ամենաաղքատ գիւղերը: Ինչ ասել կ'ուզի, որ առաջին կարգի համայնքները խիստ սակաւաթիւ են:

Պետութիւնը ինչպէս իրաւունք չունի որևէ համայնքում նոր բնակիչներ, գաղթականներ տեղաւորել, նոյնպէս նա չի կարող հողաշատ համայնքի սահմաններից կտրել և յանձնել հարևան սակաւահող համայնքին: Այս դէպքում էլ սեփականութեան իրաւունքը բացարձակ է, ինչպէս և անհատների վերաբերմամբ: Պարտքերի և իրաւունքների սահմանները պետութեան և համայնքների մէջ, ինչպէս և փոխադարձաբար անհատների մէջ այնպէս խստութեամբ սահմանուած են, որ ոչ մէկը միւսին չի խանդարում, և գերագոյն դիտումներ չեն կարող այս յարաբերութեանց հիմնաւոր սկզբունքները խախտել:

Գառնանք հարկերին:

Շվէյցարիան, ես քեզ գրել եմ ուրիշ անգամ, աղքատ է և նեղ իր բնակիչների համար: Միայն ծայրայեղ տնտեսութիւնը թէ պետութեան, թէ համայնքների և թէ ան-

հատների, և մանաւանդ բնակիչների տոկուն աշխատասիրութիւնը, գիտական տեխնիկական հողի մշակութեան մէջ և խելացի արգիւնագործութիւնը հնարաւոր են դարձնում համեմատական բարեկեցիկ վիճակ: Այս պայմաններում զարմանալի չէ, որ անմիջական գլխաւոր հարկերից դուրս կան բազմաթիւ մանրմունք ուղղակի կամ անուղղակի հարկեր: Քեզ արդէն գրել եմ, որ այս երկրում շների վրայ հարկ կայ դրուած՝ տարեկան 10 ֆրանկ (4 ռ.): Այժմ կաւելացնեմ, որ հարկ կայ նաև կառքերի, օթօմորիլների, բիլիարդների, նաև հեծանիւների վրայ:

Միաձի կառքի համար հարկ են վճարում 12 ֆր., մի քանի ձիով կառքին՝ 24 ֆր.: Հեծանիւի համար տարեկան 20 ֆր., օթօմորիլին 80—300 ֆր., նայելով իր ոյժին և մեծութեանը: Հեծանիւի տարեկան հարկն է 3 ֆր., իսկ բիլիարդի համար 10 ֆր.: Մասնաւորապէս ուղադրութեան արժանի է որսորդութեան հարկը: Առանց շան որսորդութեան իրաւունքն արժէ 25 ֆր., մի շնով՝ 35 ֆր., երկու շնով՝ 50 ֆր., երեքից-հինգ շնով՝ 150 ֆր. և հինգից աւելի շներով 300 ֆր. (մօտ 120 ռ.):

Քանի որ որսորդութիւնը լոկ գրօսանք է, հաճոյք, ի վրաս երկրի ֆառնայի, ուստի

չեն ճնշուում մեծ հարկի ենթարկել. առհասարակ Շվեյցարիայում մի նոր հարկ սահմանելիս աշխատում են հարկի ենթարկել բացառապէս այնպիսի առարկաները, որոնք ժողովրդի անմիջական և կենսական պէտքերին չեն ծառայում, այլ աւելի շուտ ճոխութեան, գուարճութեան առարկաներն են, ինչպէս շները, հեծանիւնները և դաշնամուրները: Այս հիմնական սկզբունքը պահելով՝ խուսափում են բազմաթիւ անարդարութիւններէ: Երկրորդ խոշոր սկզբունքն է հարկատուութեան մէջ համեմատական չափը ունեւորների և չունեւորների մէջ: Եթէ օրինակ հազար ըուբլի ունեցողը վճարում է 2 ըուբլի, երկուհազար ունեցողը կը վճարի ոչ թէ 4, այլ օրինակ 5 ըուբլի, 3 հազար ունեցողը փոխանակ 6-ի կը վճարէ 8 և այլն:

Սա հարկատուութեան այն սիստեմն է, որ կոչուում է պրոգրեսսիւ (impôt progressif): Այսպիսով աղքատ ու հարուստ ոչ թէ վճարում են կարողութիւնների յարաբերութեան համեմատ, այլ հարուստը վճարում է շատ աւելի, և երկրի հարկերի խոշոր բաժինը ընկնում է նրա վզին: Ըստ երևոյթին այս սիստեմը թւում է անարդար, որովհետև համեմատական չափը խախտուում է ի վնաս հարուստների, բայց երբ մարդ խորը քըն-

նում է, տեսնում է, որ աւելի արդար սիստեմ դժուար է մտածել: Որչափ մեծ է մի մարդու կարողութիւնը, այնքան փոքրանում են նրա համար միութիւնները, և այնքան հեշտ է դառնում խոշոր գումար վճարելը. տարեկան տասնեակ հազարներ արդիւնք ունեցող մարդու համար ըուբլին նոյնքան մեծ չի, որքան միքանսի հարիւր ունեցողի համար, և ոչինչ անարդարութիւն չկայ, եթէ առաջինը շատ աւելի վճարի, քան երկրորդը: Եւ միւս կողմից եթէ ինկատի ունենանք, որ հարկը վճարում է փոխանակ այն առաւելութիւնների, որ իւրաքանչիւր քաղաքացի լուծութիւնը իր քաղաքական կազմակերպութեամբ տալիս է անհատին՝ ապահովելով նրա գոյութիւնը, նրա վաստակը, գոյքը, եթէ ի նկատի ունենանք այս բոլորը, հասկանալի և արդար կը լինի աշխատաւորի այս փոքրիկ արտօնութիւնը: Նա իբրև նիւթական կարողութիւն, աւելի քիչ է պարտական հասարակութեանը, քան հարուստը. մի գործարան, կամ մի խոշոր կալուած աւելի մեծ հոգս պիտի պատճառի պետութեանը, աւելի հաւաստիքներ պէտք ունի բարդաւա-

ճելու համար, քան բանուորի բահն ու քր-  
լունգը:

Շվէյցարիան, դու գիտես, սիրելիս, ուամկավարական երկիր է, ուր կառավարու-  
թիւնը բաժանուում է երեք խոշոր միութիւն-  
ների վրայ, և դրանք են դաշնակցական  
կենտրոնական իշխանութիւնը, կանտոնը և  
համայնքը: Սրանցից իւրաքանչիւրը իր ինք-  
նավարութեան սկզբունքով խոշոր չափով  
անկախ է իր գործունէութեան մէջ: Ահա  
թէ ինչու այդ երեք կազմակերպութիւննե-  
րից իւրաքանչիւրն էլ իր առանձին հարկերն  
ունի իր ներքին անտեսութիւնը վարելու  
համար: Այսպիսով Շվէյցարիայում կան  
դաշնակցական, կանտոնային և համայնա-  
կան տուրքեր: Առաջինին պատկանում են  
մաքսերը և ոգելից ըմպելիների, ծխախոտի,  
պոստային նամականիշների, ինչպէս և զի-  
նուորական ծառայութիւնից յարգելի պատ-  
ճառով ազատ մնալու համար որոշուած  
տուրքերը:

Կանտոնները իրանց հերթին իրաւունք  
ունին ամենատեսակ հարկեր սահմանել ըստ  
իրանց սահմանած հարկադրութեան սխտե-  
մի. նրանց արգելուած է միայն մաքս առ-  
նել իրանց սահմանների վրայ, որովհետև  
այլապէս երկրի ներքին առևտուրը և առ-

հասարակ անտեսական կեանքը կը տուժէր  
և միութիւնը կը խախտուէր:

Եւ վերջապէս համայնքները կարող են  
հարկեր սահմանել իրանց պէտքերի համար՝  
համակերպուելով կանտոնային կառավարու-  
թեան դիտումների հետ:

Շվէյցարիայում բացի բազմաթիւ մանր  
տուրքերից, կան երեք գլխաւոր հարկեր.  
1) հողային տուրք (impôt foncier), որ վերա-  
բերում է մարգագետիններին, արտերին,  
այգիներին. 2) շարժական կայքերի տուրք  
(impôt mobilier), որ վերաբերում է կապի-  
տալին, տոկոսաբեր թղթերին և սրանց նը-  
ման կարողութեան. և 3) աշխատանքի ար-  
դիւնքի տուրք (impôt sur le produit du  
travail), որի համաձայն իւրաքանչիւր աշ-  
խատաւոր իր տարեկան վաստակի մի որոշ  
տոկոսը վճարում է գանձարանին:

Այս հարկերից առաջին երկուսը, այս-  
ինքն անշարժ և շարժական կայքերի տուր-  
քերը պրոզրեսսիւ են: Փոքր կարողութիւն-  
ների տէրերը համեմատաբար աւելի քիչ են  
վճարում, քան մեծահարուստները: Այսպէս  
25000 ֆր. ունեցողը վճարում է ամեն մի  
հազարին 1 ֆր., ուրեմն 25 ֆր. բայց 50000  
ունեցողը վճարում է առաջին 25000 ի հա-  
մար դարձեալ 25 ֆր. իսկ երկրորդ 25000-ի

համար վճարում է հազարին 1 ֆր. 25 սանտիմ, ուրեմն և այսպէս յաջորդաբար: Ահա այսպիսով խոշոր դրամագլուխ կամ ընդարձակ և հարուստ կալուածներ ունեցող մարդը ստիպուած է ամենայն տարի ահագին գումարներ վճարել պետական գանձարանին:

Եթէ հարուստը, դրամատէրը վճարում է իր կարողութիւնից, աշխատաւորն էլ վրձարում է իր քրտինքի արդիւնքը: Եւ ինչպէս որ պէտք էր սպասել, շվեյցարական օրէնքը աշխատաւորի քրտինքի ամեն մի կաթիլը խիստ թանկ է գնահատել: Աշխատաւորի մի ֆրանկը հաւասար է համարել հարուստ դրամատիրոջ հարիւրներին և հազարներին: Ահա թէ ինչու երկրորդ տեսակի տուրքը՝ աշխատանքի արդիւնքի վրայ, որ սովորաբար վերաբերում է բանուոր դասակարգին, դրուած է հարկատուների համար մի շարք նպաստաւոր պայմանների մէջ: Այսպէս ամեն մի աշխատաւոր նախ իրաւունք ունի իր վաստակի տարեկան քանակը նուազեցնել 600 ֆրանկով, յետոյ նա իր իւրաքանչիւր անչափահաս երեխայի համար պէտք է վերցնի դարձեալ երեքհարիւրական ֆրանկ, ապա թէ մնացածի մի որոշ տոկոսը վճարի իբրև տուրք: Եթէ ընդունենք

որ բանուորն ունի երկու անչափահաս երեխայ և վաստակում է տարեկան միջին թուով 1200 ֆրանկ, ապա նա ոչինչ չի վճարի միայն 600 ֆրանկի համար:

Շվեյցարիայում, ինչպէս և մեր երկրում, իւրաքանչիւր համայնք իր ներքին ծախքերի համար իրաւունք ունի, ինչպէս ասացի, պետականից դուրս տուրքեր սահմանել, եթէ այդ անհրաժեշտ է համարում: Միայն թէ նա պարտաւոր է նախապէս պետական խորհրդի համաձայնութիւնն ստանալ, պատճառաբանելով նոր տուրքի անհրաժեշտութիւնը: Եւ ամեն մի նոր հարկ կարող է տւել միայն հինգ տարի, որից յետոյ նա կամ պէտք է դադարի, կամ նոր թոյլտուութիւն ստացուի:

Համայնական հարկերն ևս կանտոնայինի նման երեք գլխաւոր աղբիւր ունին, անշարժ, շարժական կայքեր և երրորդ՝ աշխատանքի արդիւնքը: Խոշոր տեղ է բռնում այդ բոլորի մէջ կտակներից և առհասարակ կալուածների վաճառումից ստացած տուրքը, այն, ինչ կոչւում է droit de mutation կամ՝ եթէ կարելի է այսպէս ասել, փոխանցելու իրաւունք: Բացի այս՝ իւրաքանչիւր անհատ, որ ապրում է որևէ համայնքում, ինի բնակիչ, թէ եկուոր, պարտական է

գլխահարկ վճարել: Այս հարկից ազատ են միայն ամուսնացած կանայք և աղքատները:

Ասացի, որ Շվեյցարիան աղքատ երկիր է, և ժողովուրդն ստիպուած է բաւական խոշոր հարկ վճարել ուղղակի և անուղղակի, որպէսզի կարողանայ երկրի կառավարական անհրաժեշտ պէտքերը հոգալ: Մի մտաւոր գաղափար տալու համար ես առաջ կը բերեմ մի փոքրիկ վիճակագրութիւն այդ մասին: Այսպէս վերջին ժամանակները դաշնակցական հարկը հասել է 58 միլիօն երկու հարիւր հազար ֆրանկի, կանտոններինը՝ 50 միլիօն չորս հարիւր հազարի, համայնքներինը 40 միլիօն 250 հազարի, գումարն է 148 միլիօն 850 հազար, ասել է իւրաքանչիւր շվեյցարացի միջին թւով վճարում է տարեկան 50 ֆրանկից աւելի (մօտ 20 ռուբլի): Սա բաւական խոշոր գումար է: Եւ ժողովուրդը վճարում է անտրտունջ, նախ որովհետեւ ինքն է սահմանել տուրքերը գիտակցաբար, և երկրորդ՝ հարկատուութեան սխտեմը խելացի կերպով յարմարեցրած է տեղական պահանջներին, ի նկատի են առնուած մի շարք հանգամանքներ, որոնք հեշտացնում են հարկահանութեան գործը:

Հարկահանութիւնը կատարւում է ամենախաղաղ կերպով: Իւրաքանչիւր համայնք

ազատ է կատարել այդ գործը ըստ իր հայեցողութեան: Նա ընտրում է իր հարկահանը, ինչպէս մեզանում, և կարող է նրանից որոշ գրաւականներ պահանջել, որովհետեւ պետութիւնը պատասխանատու է, եթէ զեղծումներ տեղի ունենան: Հարկաժողովի օրերը սոսկումի, ծեծի և հայհոյանքի օրեր չեն գիւղերի համար: Իւրաքանչիւր գիւղացի որոշ ժամանակին առանց տրտունջի և վիրաւորանքի տանում, վճարում է իր պարտքը: Իւրաքանչիւրը գիտէ, որ իր ամեն մի սանտիմը նախատեսուած է երկրի ծախքերի մէջ և առանց դրան հասարակական-քաղաքական կազմը չի կարող ընթանալ: Իւրաքանչիւր կանտոն իր հարկային ուրոյն սխտեմն ունի: Չափազանց հետաքրքիր է Վօ կանտոնի հարկահանութեան ձևը: Այստեղ իւրաքանչիւր հարկատու ինքն է գալիս յայտարարում իր հարստութեան քանակը և ըստ այնմ հարկը սահմանել տալիս: Անշարժ կալուածները ճշտել հեշտ է, բայց շարժական կալուածներին, տոկոսաբեր թղթերին, հնչուն դրամի, դրամագլխի քանակն ի՞նչպէս ճշտել: Վերջին գէպքում համայնական վարչութիւնը հաւատում է իւրաքանչիւր անհատի շիտակութեան ու ազնւութեան: Եւ մեծ մասամբ նրա

հաւատն արդարանում է: Չեն խաբում, չեն թագցնում հարկի ենթակայ հարստութիւնը: Եթէ մէկի մահից յետոյ յայանուի, որ նա իր կարողութիւնը ծածկել է, այն ժամանակ համայնքն իրաւունք ունի բացի անցած տարիների հարկը, նաև մի խոշոր գումար որպէս տուգանք վերցնել նրա թողած ժառանգութիւնից: Այսպիսի դէպքերը սակայն խիստ հազուագիւտ են:

Գրում եմ այս տողերը և միտս են գալիս իմ մանկութեան օրերը. ես տեսել եմ մեր գիւղում հարկահանութիւնը կամ ինչպէս մեզանում ասում են՝ «խարջ ժողովելու օրերը»: Նախ՝ այն մութ ու անիրաւ գործը, որի անունն է «թովջի»—հարկերի բաշխումը: Նստում են գիւղամիջում այսպէս կոչուած գիւղի իշխանները, բանիմացները, ուսի հետ և կազմում են համայնական ծախքերի հաշիւը: Մի խումբ գայլեր երբէք աւելի վատ չեն կարգադրի դաշտում անտէր ձգուած ոչխարի հոտի ճակատագիրը: Այստեղ մտնում են և՛ պատուաւոր հիւրեր ընդունելու ծախք, և՛ ընծաներ ջրբաժանին, ճաշ տանուտէրին, և՛ Արաքսից շուր կապելու ծախք, և հարկահանի ոտճիկ, և կամուրջներ, որոնք գոյութիւն չունին, ճանապարհներ, որոնք անանցանելի են, առուններ, ո-

րոնք չեն փորուած կայլն կայլն: Եւ այս բոլորը, որ միքանի հացկատակ պարագիտները գրպան է մտել, համայնական հարկի անուան տակ աւելանում են պետական հարկերի վրայ, և յետոյ սկսում է հարկաժողովը:

Վաղ առաւօտից ուսը դալար ճիւղտը ձեռքին հարկաժողովի հետ բազմում է գիւղամիջումն և ուղարկում է գզրին կանչելու գիւղացիներին: Չեն գալիս, հեշտ է... «խարջ են ուզում ախր»: Գրիգորը՝ հանդ, Թորոսը դաշտ է գնացել, Սարգիսը՝ հարեան գիւղը կայլն: Իրօք բոլորն էլ փախչում են այս ուայն կողմ, պէտք է ժամանակ վաստակել, պէտք է այսուայն կողմ ընկնել, խնդրել, մուրալ, ճարել այս սարսափելի հարկը, որովհետև ճիւղտ կայ, հայհոյանք կայ, ծեծ ու բանտ կայ: Բայց ուսը նստել է, նրան «խարջ» է հարկաւոր, պահանջում են, յետոյ ինքն էլ, իր ընկերակից իշխաններն էլ շահագրգռուած են, որ շուտ հաւաքուի, արած ծախսերը շուտ ծածկուեն, ծայրերն անհետանան, մութ գործերը թաղուեն: Անցնում է մէկ, երկու օր, շատ քչերն են բերում, գիւղն աղքատ է, դարուն է, աշխատանք չկայ, տանը շատ անգամ հաց չկայ, վաճառելու ապրանք չկայ, կահկարասիների

մեծ մասը նախընթաց «խարջերի» համար ծախսուած են, մնացել են մի տուն լիքը հաց ու ատոդներ, մի խումբ երեխաներ, որոնց եթէ «թոնիր ածես, մշահոտ չի գայ», այնպէս մերկ են:

Եւ ոէսը խարջ է պահանջում:

Սկսում է վրդովեցուցիչ, վայրենի տեսարանների, յուզիչ պատկերների մի ամբողջ շարք: Ռէսը ծեծում է, գլիրը ծեծում է, չափարը ծեծում է, քրտնած թիկունքների վրայ վերից վար իջնում է դալար ճիւղտը, յետոյ հայհոյանքներ... բոլոր գերեզմանները բացւում են, մեռելները դուրս են գալիս կենդանիների հետ անարգուելու համար: Խարջը պէտք է վճարել, ինչ ուզում է լինի: «Մի քանի օր, տանուտէր, միայն երկու օր ժամանակ».— «Հէրդ, մէրդ ծախի, խարջը բեր»։ լինում է պատասխանը: Եւ ծախուում է, ինչ ճարուում է, անցած աշխատանքի արդիւնքը կէս գնով, ապագայ վաստակը, բերքը քառորդ գնով. հրապարակ են գալիս վաշխառուները, բամբակի, խաղողի, ցորենի փող բաժանողները: Կողոպուտն ընդհանուր է դառնում: Վաճառում, անարգում, կողոպուում է ամենինչ: Խարջի օրերը գիւղում, սգի օրեր: Յիշում ես, ընկեր, այն տարին մեր

ուէսը թուրք էր և անունը Սադրդ, նա դեռ կենդանի է: Մենք երեխաներով խաղում էինք փողոցում, երբ նա իր գզրի հետ յայտնուեց և հրամայեց կանչել հարևան Սարգսին: Եւ դուրս եկաւ նա, այն ողորմելի Սարգիսը, նա հագած ունէր մի երկար, գզգզուած մուշտակ, որի բազմաթիւ բացուածքներից բրդերը կախկխուել էին՝ տալով նրան մի բրդաթող գազանի տեսք. տըխուր ու այլանդակ պատկերը լրացնելու համար նա գլխին ձգել էր մի կեղտոտ, նոյնպէս պատուտուած լիեք աչքերին հովանի անելու համար, որոնք ցաւում էին: Նա քայլում էր դանդաղութեամբ, այդ խեղճ ու կրակ արարածը մի ձեռքով փայտի վրայ, միւսով փոքրահասակ որդու ուսին յենուած: Եկաւ ու կանգնեց ոէսի առաջ, գլուխը կախ, մէջքը կռացած որպէս մի ստրուկ, մի դատապարտուած: Մենք նայում էինք. սկսուեց մի հարց ու պատասխան, որ մենք այնքան անգամ լսել էինք. «Ինչո՞ւ հարկը չես տալիս շուն շան...»

— Կը տամ, տանուտէր, կը տամ, թող որ աչքերս բացուեն մի քիչ, անից դուրս գալ չեմ կարողանում, աչքերս չեն տեսնում, ձեռքիս էլ չկայ, աղերսում էր Սարգիսը: Նա միայն ձայնն էր լսում այն այ-

լանդակ լհեբի տակից, չէր երևում ոչ գը-  
լուխը, ոչ դէմքը: Ռէսը լսում էր և սպառ-  
նալի կերպով ճօճում ձեռքի փայտը: «Նս  
քեզ ասում եմ՝ խարջը սուր էս սհաթիս,  
քո...» և ճիպտոր շարժեց, ու հարուածները  
տեղացին Սարգսի գլխին, լհեբի... տակ ըս-  
կսուեց վայ-վայը, անէծքը, աղերսը, հեծե-  
ծանքը: Մենք փախանք զանազան կողմեր:

Օ՛, գիւղը խարջի օրերում, դժոխք...  
Այս և նման պատկերներ գալիս, անցնում  
են աչքիս առաջից որպէս հիւանդ վիրաւոր  
ուղտերի մի կարաւան, որ գնում է, գնում  
և դադար չունի, որի տեսքը նողկալի է և  
յոգնեցնում է: Յիշում եմ այդ բոլորը և  
մտածում ցաւով, թէ ինչո՞ւ յատկապէս ար-  
ևեւքի պայծառ երկնքի տակ այդքան ցաւ  
ու արցունք: Մեր հողը արգասաբեր է, ջը-  
րերը առատ, բնութիւնը հարուստ կուրծք  
ունի, որ միայն թեթև աշխատանք է պա-  
հանջում, ինչո՞ւ այնուամենայնիւ մեր ժո-  
ղովուրդն այնպէս աղքատ է, կարօտ, ան-  
ճար: Այս աղքատ Շվէյցարիան, որի մակե-  
րևոյթը ծածկուած է կամ լեռներով ու ժայ-  
ռերով, կամ լճերով ու անտառներով, կա-  
րողանում է իր զաւակների պէտքերը լըրա-  
ցնել իր այնքան սուղ բերքերով: Ինչո՞ւ մե-  
զանում տառապում են, խեղճ են ու քաղ-

ցած, անիծում են ու լալիս անճարութեամբ,  
խակ այս աղքատ Շվէյցարիայում մարդիկ  
գոհ են ու երջանիկ:

Հարցեր, հարցեր, ծանր ու տանջող,  
որոնց ծանրութեան տակ մարդու ուղեղն է  
տնքում:

Տ'գրութիւն!

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

## XIX.

Ամառն անցաւ, իմ ընկեր, և ես հակառակ իմ ցանկութեան քեզ շատ քիչ գրեցի: Դժգոհ ես գիտեմ, բայց ներիր ինձ, անուղղելի երազողիս: Հրապուրիչ խենթութիւններով հարուստ մի կեանք անցրի շվէյցարական այս աննման լեռ ու ձորերում:

Ձիւնազարդ Ալպերի, կապուտակ լճերի, մթին անտառների այս գեղանիստ աշխարհում թափառական կեանքը դառնում է մի անյաղթելի պահանջ՝ երբ խոհեր ունիս կամ մի ծանր վիշտ, լուռ թախիծս է քեզ մաշում կամ կիզիչ կսկիծը:

Թափառիր, թափառիր...

Հեռուն՝ իր մշուշով, իր ձևերի անորոշութեամբ դիւթում, քաշում է քեզ. լեռների առաջին շարքին հետևում է երկրորդը, և յանկարծ մի հովիտ այնպէս կռնաչ ու այնպէս կոկ, որ ասես իւրաքանչիւր խոտ ու ծաղիկ կանացի քնքոյշ մասններով են շարուած իրար կողքի: Բարձր, բարձր լեռնա-

կատարների վրայ, ձիւների ու սառոյցների եզրին լճակներ կան մանկան արցունքի պէս վճիտ, մոլորուած դուստրեր կապուտակ երկնքի, որոնք լեռների գրկից կարօտով նայում են դէպի վեր, դէպի մայր երկինքը. ջրվէժներ կան, որոնք ձիւնապատ բարձունքներից խորտակում են հառաչանքով և ձորերը նրանց յաւիտենական ողբին ձայնակցում են այնպէս ներդաշնակ, այնպէս անուշ:

Այդ ջրվէժները...

Երգում եմ քեզ, իմ ընկեր, ես հասկանում եմ նրանց որոտը, նրանց անկման խենթ քրքիջն ու հառաչանքը. ճիշերի, տընքոցի, մոմոոցի այս սասանեցուցիչ ժիորը ինձ համար նոյնքան հասկանալի է ու նոյնքան քաղցր, որքան մօրս օրօրները, որոնք մի անդառնալի օր հնչեցին օրօրոցիս վրայ...

Եւ ո՛չ մի տեղ խոհերս այնպէս խորունկ, զգացմունքներս այնպէս յստակ, երևակայութիւնս այնպէս թափով չէ, որպէս մի ջրվէժի կողքին: Նստում եմ ժայռի վրայ, որ դողում է ոտքերիս տակ, և տեսարանի ահաւորութիւնից ցուրտ քրտինքով է ծածկուած: Նայում եմ այս որոտացող ջրվէժին և ինձ թւում է, թէ այս գահավէժ

յորձանքները, այս գալար-գալար կոհակները, ամենքն էլ կենդանի, գերբնական էակներ են, որոնք իմացականութիւն ունին՝ մերինից խորունկ ու գերազանց, կրքեր ունին աւելի ուժգին ու կատաղի, խօսք ու լեզու ունին, որի շեշտերի թափից լեռներն են դողում: Եւ ընկնում են բարձունքից ոմանք գիտակցաբար և դիւական քրքիջով, ուրիշները՝ անդունդի վրայ սոսկումի ու ցաւի ճիչ արձակելով, ոմանք ծանրախոհ ու մռայլ, որպէս դատապարտուած գլխաւորներ մի ընկճուած ցեղի: Մանուկներ կան, որոնք լալիս և քրքշում են միաժամանակ, մատաղ կանայք իրենց գեղանի մերկութեան բոլոր խենթացուցիչ ձևերը փրփուրէ վարսերի տակ սքօղած, երիտասարդներ՝ իրենց խելայեղ ցասումը ակուաների տակ փշրելով, և ծերեր՝ ալեգարդ ու հոյակապ, իրար փարած, իրար գալարուած, մէկը՝ մէկի թիկունքին, ուսերին, ոտներին տակ, ճիչ ու աղմուկով, քրքիջ ու հառաչանքով, թաւալ-թաւալ խորտակուած են անդարձ: Լսում եմ նրանց ցնորական աղաղակը՝ իր միակերպութեան մէջ բազմազան, իր շփոթի մէջ՝ ներգաշնակ, և թուում է ինձ, թէ ջրվէժն իմ հոգու մէջ է թափուած, և բոլոր այդ ձայները այնտեղ են հնչում անվերջ արձա-

գանքներով: Եւ մտքերս հսկայ յորձանքներով, այս գալարուող, փշրուող կոհակների պէս, ո՞վ գիտէ իմացականութեանս ո՞ր կոյս բարձունքներից, ո՞ր մթին խորքերից կուտակ-կուտակ իրար հրհրելով, իրար ոտքի տակ տալով, բարձրանում են, ուռչում, եռում, թաւալում և յանկարծ խորտակուած են էութեանս մռայլ անդունդները: Չայներն օրօրում են ինձ, հողիս երազների մէջ է լողում և աչքիս առաջ բացում են անծայր հորիզոններ, հեռաւոր, անծանօթ ճանապարհներ, ուր մարդկային կեանքն է թաւալում իր բոլոր չար ու բարիով: Եւ մեր կրքերը վայրագ, իրենց կատաղութեան մէջ գեղեցիկ՝ որպէս մոմաջող գիշատիչներ, և մեր յոյսերը եռուն և մեր պատրանքները գունատ, և մեր երազները վաղանցուկ, որոնց բոլորին, բոլորին, վիճակուած է մի անդարձ խորտակում, ցուրտ շամանդաղի պատանով պարուրուած որպէս այս յորձանքները:

Տեսել ես երբևիցէ ջրվէժ, իմ ընկեր, ականջ դրե՛լ ես նրա տիտանեայ երգին, որ այնպէս ազնուացնում, բարձրացնում է մեր հոգին:

Ջրվէժը, ջրվէժը, դա մարդկային կեանքի վսեմ պատկերն է:

Ես դարձեալ շատախօսեցի:

Շվէյցարական բնութեան մասին չըպիտի գրէի այսօր, այլ ճանապարհների:

Ներքի ինձ. գիտես, որ պաշտում եմ բնութիւնը, և Շվէյցարիան իր գեղեցիկ բնութեան արժանի ճանապարհներ ունի:

Զեմ խօսի երկաթուղիների մասին. ասեմ միայն, որ բոլոր մանր ու մեծ քաղաքները իրար միացած են երկաթուղային գծերով. բազմաթիւ գիւղերի միջից անցնում է նաև ելեքտրական տրամվայր: Այսպիսով ամենահեռաւոր, ամենախուլ գիւղերն իսկ երկաթուղային հաղորդակցութեան բարիքը վայելելու լայն հնարաւորութիւն ունին: Զբօսասէր օտարականների, տուրիստների համար էլ բազմաթիւ ֆինսկիւլերներ կան լեռնի վեր գնալու, և լեռնային երկաթուղիներ, որոնք չանգոստում են նոյն իսկ Ալպերի կատարները:

Այսպիսով ճանապարհորդութիւնն այս երկրում դարձել է մի հաճելի ժամանց: Գնացքներն այնքան բազմաթիւ են, ու ժամանակն այնպէս յարմարեցրած, որ 50—100 վերստ իրարից հեռու ապրող քաղաքների բնակիչները հնար ունին օրական մի քանի անգամ եթէ պէտք լինի գնալ գործի և վերադառնալ: Այսպէս Լօզանից Փընս, որ 60—65 վերստ տարածութիւն է, օրական

քսան և մէկ զանազան տեսակի գնացք է մեկնում և քսան ու եօթը՝ գալիս: Ճամբորդական գնացքը այդ տարածութիւնն անցնում է ուղիղ մի ժամում: Կարելի է ասել նոյնքան էլ դէպի Մօնտրեօ, Բերն, Նեօշաթել: Եւ արդիւնագործութեան հսկայական զարգացումը, եռուն առևտուրը անագին բազմութիւն է մղում դէպի ճամբորդութիւն. իսկ վաղ գարունից՝ մինչև ուշ աշուն, նոյն իսկ ձմեռը, օտարականների անց ու դարձը անվերջ է:

Զը նայելով այս անընդհատ եռ ու զեռին, այս ծով բազմութեանը բոլոր կայարաններում, այնուամենայնիւ ո՛չ մի անկարգութիւն, ո՛չ մի դժգոհութիւն, ո՛չ մի դժլարութիւն: Մենակ երեխան իսկ կարող է ճանապարհորդել:

Յիշում ես, իմ ընկեր, մեզանում քանի հոգի են գնում կայարան օգնելու, երբ պէտք է մէկին ճանապարհ դնել...

Թողնենք սակայն երկաթուղիներն ու տրամվայները, սիրելիս, դրանք խրատներով ու խորհուրդներով չեն իրագործուի, այլ տնտեսական, քաղաքակրթական յարաճուն պահանջների անյաղթելի մղումով, որ վաղ թէ ուշ՝ մեր աշխարհին էլ կը հասնի: Ինձ հետաքրքրողը աւելի Շվէյցարիայի սովորա-

կան ճանապարհներն են գիւղից՝ գիւղ, ձորից՝ ձոր, լեռից՝ լեռ, կառքերի, սայլերի, օտոմոբիլների երթևեկութեան և տուրիստների քմահաճ թափառումների համար:

Հեշտ չէ ճանապարհների գործը Շվեյցարիայի լեռնային բնութիւնն ունեցող մի երկրի համար: Հարթ տարածութիւններ, տափարակ հովիտները շատ հազուադիւս են: Դրանց փոխարէն անվերջ, իրար յաջորդող լեռնաշղթաներ, բլուրներ, շարան-շարան ձորեր, բազմաթիւ գետեր, վտակներ, ջրվէժներ, ամենքը սահանքաւոր, աղմկալի, և յետոյ լճեր, սնտառներ, որոնք տասնապատիկ աշխատանք են պահանջում թէ երկաթուղիներ և թէ սովորական ճանապարհներ շինելիս: Պէտք է փլշող լեռան առաջ քարէ հսկայական պատուարներ քաշել, ջրերի ընթացքը փոխել, ձորերի առաջը փակել, ջրովէժները կապել, ժայռերը խորտակել, լեռները ծակել տունելներ շինել, խրամատները լցնել ու բարձրացնել, լեռնալանջերը փորել անծայր պտոյտներով վերելքները հեշտացնելու համար, և յետոյ՝ կամուրջներ ձգել ձորերի, գետերի, վտակների, նոյնիսկ անդունդների վրայ այնքան բարձրից, որ վար նայելն իսկ թւում է ահաւոր:

Տիտանեան ճիգեր են հարկաւոր այս

բոլորը կատարելու համար և շվեյցարական փոքրիկ ժողովուրդը այդ ճիգերը թափել է, ու իր լեռներն ու ձորերը ողջ պատել է դիւրատար, հեշտ ճանապարհներով, որոնք այս գեղեցիկ բնութեան հետ ներդաշնակաւ՝ կազմում են մի հրապուրիչ ամբողջութիւն և առանձին հմայք են տալիս այս երկրին ու իր դիւթական տեսարաններին:

Այն, պէտք է տեսնել շվեյցարական ճանապարհները՝ սքանչանալու ու զարմանալու համար թափուած աշխատանքի, ձեռներեցութեան ոգու, քաղաքակրթական ձգտումների վրայ: Ինչպէս տնտեսական-հասարակական ու վարչական ամեն կարգի խնդիրներում, նոյնպէս և ճանապարհների համար համայնքն ու կանտոնը իրենց ուրոյն իրաւասութիւններն ու պարտքերն ունին: Կան կանտոնային և համայնական ճանապարհներ: Եւ կանտոն ու համայնք ասես մրցութեան են դուրս եկել իրար գերազանցելու իրենց ճանապարհների գեղեցկութեամբ ու յարմարութեամբ: Թողնում եմ կանտոնը, որ պետութիւնն է, հետաքրքիրը և այս դէպքում ըստ իս դարձեալ համայնքն է:

Համայնական վարչութեան հաշեկշռի մէջ ճանապարհների ծախքը խոշոր տեղ է բռնում: Ճանապարհներ են հարկաւոր ո՛չ մի-

այն գիւղից քաղաք, գիւղից գիւղ և դէպի դաշտերը, այլ և դէպի հեռաւոր ձորերն ու անտառները, դէպի բարձր լեռնակատարները, ուր երբեքէ հովիւն ու հօտն է հասնում: Համայնքը՝ մի եռանդով ու խնամքով, որ հիացմունք է շարժում, իր բոլոր հողերն ու մարգերը ծածկում է ճանապարհներով: Եւ ինչ որ նշանակալից է, ուշադրաւ, մեծ ու փոքր այս ճանապարհները, այս լեռն ի վեր գալարւող կածանները, անտառների մէջ ծառերի տակից օձի պէս սողացող շաւիղները, բոլորը, բոլորը ամուր, հաստատուն խճուղիներ են, քարեայ հաստակուռ պատնէշներով հեղեղների ու փլուածքների դէմ պաշտպանուած: Եւ յետոյ կամուրջներ կան՝ որոնք շինուած են ասես յաւիտենականութեան համար—ողջ քար ու երկաթ: Այդպիսի կամուրջը ոչ միայն մեծ պողոտաների վրայ, այլ գիւղական դաշտերում, արտերի կողքին, մարգերում, ուր գիւղացին տարին մի քանի անգամ միայն պիտի տանի իր սայլը ցանելու կամ արդիւնքը բերելու համար: Չը կայ մի հատիկ արտ, մի մարգագետին, մի բանջարանոց, որքան և հեռու լինի գիւղից, որ իր յատուկ խճուղին, իր սայլի ճամբան, իր կամուրջները չունենայ:

Եւ այդ խճուղիները, արտերից դուրս, գրեթէ բոլորը եզերած են ծառերով: Օրերով կարելի է ճամբորդել ու միշտ երկու շաբթ ծառերի ստուերում. յաճախ նոյն իսկ պտղատու ծառեր, որոնք համայնական խնամքի տակ են, Հետաքրքիր են մանաւանդ անտառների ճանապարհները: Մուգ անտառն առաջդ է. խճուղու միայն սկիզբն է երեւում, ու մի սեան վրայ տախտակ, ուր գրուած է, թէ ուր է առաջնորդում ուղին: Առանց երկար տարակուսանքի թաղուիր այդ անտառում, քայլեր առանց մտահոգութեան: Սա մայր ճանապարհն է, որից աջ ու ձախ բաժանում են բազմաթիւ սիրուն կածաններ, յարգարուած, կոկուած, խնամուած, և միշտ փրկարար սիւնը, իր խնամոտ արձանագրութեամբ, որ քեզ կ'ասի, թէ ուր ես գնում, երբ կը համեստ առաջիկայ գիւղը, երբ առաջին իջևանը, ուր տաք կաթով սուրճ, կարագ, պանիր, թէյ, կամ այլ ըմպելիներ, ինչպէս և գիշերելու յարմար թխան քո տրամադրութեան տակ է շատ աժան գնով: Քեզ չեն խաբի, չեն շահագործի ոչ տեղի հեռաւորութիւնը, ոչ քո անձարութիւնը, ոչ քո օտարութիւնը այս պատուական Շվէյցարացիք:

Այսպէս են ճանապարհները Շվէյցարիա-

յում, սիրելիս: Եւ անշուշտ չեմ գարմացնի քեզ եթէ ասեմ, որ այս երկրի գիւղացին չը գիտէ, ինչ ասել է աւերակ կամուրջ, անանցանելի վտակ, ցեխի մէջ թաղուած և անիւր կոտրած սայլ: Այս դար ու փոսերով հարուստ երկրում, այս վիհերի ու անդունդների վրայ, այս խորունկ ձորերում ու լեռներում, այնպիսի զգուշաւոր, խելացի պտոյտներով են անցնում ճանապարհները, որ վերելքը չես զգում. անագին բեռան տակ, սայլը քաշում է միշտ միայն մի հատիկ եզ, ձի, կամ կով: Երկձի սայլը շատ հազիւ է պատահում: Արտակարգ դէպքերում:

Եւ սայլակները թեթև, անիւները փոքր, ճաղերը նուրբ, որոնք երբէք մեր երկրում գործել չեն կարող:

Մեր երկիրը... մեր ճանապարհները...

Յիշում ես, մեր գիւղի հէնց կեղբունում անձրևներից կազմուած մի գարշահոտ լճակ կար, որ մերթ մեծանում, մերթ փոքրանում էր ըստ եղանակին, բայց ցեխը միշտ կար և դաշտից դարձող բոլոր բեռնած սայլերը նրա միջից պիտի անցնէին: Գիւղացիք բոլորը գիտէին, որ սայլը այնտեղ պիտի շուռ գայ, իւրաքանչիւրը այդ աղէտին ենթարկուել էր արդէն և սպասում էր տեսնել հարևանի սայլը նոյն վիճակում: Եւ

անա գալիս է հարևաններից մէկի սայլը. մենք չորս կողմից փոշում շարուում ենք այդ փոսի կողքին, սպասելով: Քշող գիւղացին լաւ գիտէ վտանգը. նա աշխատում է զգուշութեամբ անցնի. մենք հետում ենք անհամբերութիւնից, գիտենք, որ սայլը պիտի շուռ գայ. անա հասան, մի զոյգ հաստավիղ գոմէշներ, և երկու եզ, զոյգ ամուլով քաշում են սայլը: Յորեն է բարձած, ծանր է—հարիւր խուրձ կայ: Ահա անիւները թաւալեցին, թափով խրուեցին ցեխի մէջ: Ճիպոտ, խարազան, գոմէշների և եզների ուսին, հայհոյանք, քաջալերիչ աղաղակներ. կենդանիները ճկուում են, քաշքշում շղթաները. սայլը ճուռաց, բեռի ամբողջ դէզով թեքուեց, մի վայրկեան ևս և անիւները ցցուեցին օդի մէջ, սայլը շուռ եկաւ...

Եւ այսպէս տարիներ...

Միթէ միայն մեր գիւղում. ո՞ր կայ ճանապարհ, կամուրջ, ո՞վ է հոգացող, ո՞վ է մտածող, մեր գիւղացին, մեր համայնքը ձեռներեցութեան ոգի չ'ունի. հասարակական բնազդը շատ թոյլ է, գործակցութեան գիտակցութիւնը բացակայ է. մարդիկ աշխատում են մի կերպ գլուխ թափել իւրաքանչիւրը միայն իր մասին մտածելով:

Շնորհիւ հաղորդակցութեան հեշտու-

թեան, ճանապարհների յարմարութեան շվէյ-  
ցարացիին դաշտային աշխատանքները կա-  
տարում է անհամեմատ աւելի կարճ ժա-  
մանակում, աւելի քիչ եռանդ և ոյժ վատ-  
ներով. մեր գիւղացիին ստիպուած է լծել  
դանդաղաշարժ գոմէշները, դանդաժային  
անիւներով սայլին, և դաշտ գնալ գալու հա-  
մար մի ամբողջ օր կորցնել: Յետոյ, երբ  
իր քրտինքի արդիւնքը, իր ցորենը, իր պը-  
տուղները արդէն հասել են, նա հնար չ'ու-  
նի հեշտութեամբ, աժան գնով փոխադրել  
քաղաք ու վաճառել. ճարը կտրած տալիս  
է կէս գնով ճարպիկ խաբեբաներին, կամ  
առատութեամբ թափում է իր երեխաների  
առաջ, ինչպէս մեր զարմանալի բոստաննե-  
րի ու այգիների արդիւնքը:

Ճանապարհ, լայն, սիրուն ճանապարհ  
մեր դանդաղ ու ճիւղած կեանքի առաջ:

Յգրութիւն.

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

## XX.

Այս վերջին նամակս է քեզ Շվէյցա-  
րիայից, իմ ընկեր:

Յագուրդ տուի՞ ես հետաքրքրութեանդ,  
գոհացրի՞ քեզ թէ ոչ, չը գիտեմ. բայց հա-  
ւատացած եմ, որ նամակներս կարգալիս յա-  
ճախ ես ժպտացել իմ միամիտ յափշտակու-  
թիւնների, իմ երեւկայական խոյանքների,  
զուցէ և իմ մանուկ հաւատի վրայ դէպի  
արդարութեան և ճշմարտութեան յաղթանա-  
կը: Համաձայն եմ, սիրելիս, որ աւելի ե-  
րազող բանաստեղծ եղայ, քան գործնական  
խորհուրդներ տուող, ծրագրներ կազմող մարդ.  
պիտի ցաւիմ սակայն, եթէ մեղադրես ինձ  
դրա համար, որովհետև դու կապացուցանես  
քո սխալ ըմբռնումը բանաստեղծութեան  
դերի մասին: Բանաստեղծութիւնը, սիրելիս,  
այն անտեսանելի, դիւթական ձեռքն է, որ  
մշուշապատ հաւանականութիւնների, նոր  
ցնորական, բայց հնարաւոր հորիզոնների

վրայից յետ է քաշում խաւարի քողը և առաջխաղացութեան տենչերը մտրակում:

Հազարաւոր տարիների խաղաղ, կենսունակ քաղաքակրթութեան կողքին ես դրի ձախող, գլխիվայր պատմութիւն ապրած մեր աշխարհը. պատկերը վհատեցուցիչ եղաւ մեծ մասամբ, բայց մի կարծիր, թէ հնար չը կայ սփոփիչ եզրակացութիւնների յանգել, պատրանքներ հիւսել, յոյսեր փնջել նոյն իսկ մեր կեանքի խոպան անապատներում: Ժողովուրդների բարոյական արժէքը միմիայն բիւրեղացած, արձանացած շօշափելի արտայայտութիւնների մէջ չէ, այլ այն քաղաքակրթական կարելիութիւնների, այն նիրհող ոյժերի, այն թրթռուն, մանուկ խանդի մէջ, որ ժամանակի ու պայմանների պէտք ունի կերպարանաւորելու ստեղծագործական հզօր ձեռնարկներով:

Գրութեանս ընթացքում ես աշխատեցի շօշափել բազմաթիւ խնդիրներ, հասարակական, քաղաքական ու մօրալ հարցեր. նկարագրեցի բազմաթիւ լուսաւոր երևոյթներ, որոնք Շվէյցարիան շատ տեսակէտներով դարձրել են նախանձելի ո՛չ միայն մեզ, այլ մեզանից շատ աւելի քաղաքակիրթ ազգերին: Ես այնքան միամիտ չեմ հաւատալու համար, թէ հնարաւոր է մէկէն ի մէկ մեր գիւղը շվէյ-

ցարական գիւղի վերածել: Այո, կան մի շարք ձեռնարկներ, որոնց իրագործումը կարելի է իսկոյն, հէնց այսօր. բայց այդպիսի անմիջական նպատակ ես չեմ հետապնդել:

Մեր ժողովուրդը իր բոլոր թշուառութիւնները, իր բոլոր սև օրերը, իր անձար խեղճութիւնը համարում է մահւան պէս բնական, անխուսափելի, անողոք: Արևելքի մռայլ պատմութիւնն է ծնել այս աղէտաւոր ըմբռնումը կեանքի, որ ընդունակ է հաւաքական թէ անհատական կամքերը փըշրել և ձեռներեցութեան ոգին սպանել: Պէտք է քանդել այս խաւար հասկացողութեան բորբոսնած, գարշահոտ շէնքը: Փոյթ չէ թէ զրանով մենք աւելի դժբախտ, աւելի անհանգիստ դարձնենք տառապողներին: Անորոշը, նոյն իսկ անկարելին երագելը, ինչքան և ցաւ պատճառի մեր հոգուն, գերագասելի է բուլթ, անամնական խաղաղութիւնից: Թո՛ղ մեր ժողովուրդը գիտենայ, թէ այլ կացութիւն, այլ ճակատագիր հնարաւոր է և՛ իր համար. թող գիտենայ, թէ կան հեռաւոր հորիզոններ, ուր մարդը չի հեծում, չի տնքում, ուր աշխատանքին զուգահաւասար ընթանում է և բարձր վայելքը, և անխառն հաճոյքը: Թո՛ղ նա երագի, տենչայ, թո՛ղ մխայ նրա հոգին հեռաւոր գեղեցկու-

թեան, երջանկութեան կարօտով. թող բազմապիսի ու դժուարին հարցեր, որպէս ճիւղաներ նրա ուղեղը ծլատեն, նրա անզգայ խաղաղութիւնը թունաւորեն, որովհետեւ զարհուրելի է դժբախտութիւնը, երբ նա չի զգացուում, երբ տարւում է որպէս բնական ու անխուսափելի:

Իդէալը, իմ ընկեր, գոնէ իդէալը մարդկային տքնութիւնների յաւիտենական շարքի մէջ:

Շվէյցարիան էլ դրախտ չէ, ուր եղ ու մեղը է հոսում, ուր մարդու ճակատը բռնաւ չի կնճուում: Ընդհանուր չպատկերի վրայ կան բազմաթիւ սև բծեր, մռայլ երեւոյթներ: Այստեղ էլ կեանքը շատ տխուր, շատ ցաւոտ կողմեր ունի: Ընկերական անհաւասարութեան ծանր մղձաւանջը այստեղ ևս կրքերի փոթորիկ է հանում և հոգիների մէջ թոյն ու ցասում քամում. թոյլեր կան, որոնք տրորւում են, հզօրներ, որոնք վայելում են. ընկերական կեանքի դաժան առեղծւածը իր կիզիչ այժմէութեամբ յեղյեղուում է գիւղական խրճիթներից մինչև պերճ քաղաքները: Կատարեալ, անխառն երջանկութիւն չի տուած մարդուն: Նրա ոտքին ճակատագրապէս կապուած է ցաւն ու սևը, ուր և գնալու լինի: Խնդիրը սակայն համե-

մատական չափի մէջ է և մանաւանդ կեանքի դժուարութիւնների, ձախորդութիւնների, դժբախտ պատահարների դէմ մաքառելու և նրանց յաղթելու մէջ: Քաղաքակրթութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ այդ անուաշ պայքարի պատկերը, նրա շօշափելի արդիւնքը:

Շվէյցարիայում քիչ է մնում անկարելին՝ կարելի դառնայ, մինչդեռ մեզանում դրա հակառակ, նոյն իսկ կարելին՝ անկարելի է:

Ահա այս պէտք է փոխել:

Է՛հ, թողնենք, սիրելիս, այս հարցերը առանց այն էլ երևի քեզ շատ սանջեցին իմ այս նամակագրութեանս ընթացքում. բաւականանանք այսքանով, թէ չէ վախենում եմ վերստին շատախօսել:

Ընդհատում եմ նամակներս. նիւթը չէ անշուշտ, որ պակասում է. այս երկիրը դեռ շատ ուսանելի, շատ խրատական կողմեր ունի մեզ համար. ես միայն գիւղից խօսեցի և այն ոչ կատարեալ կերպով, և դեռ այնքան բան կայ ուսումնասիրելու, դիտելու...

Դադարեցնում եմ նամակներս, որովհետև շուտով պէտք է վերադառնամ հայրենիք, որին այնքան յիշեցի, և որին սաստիկ կարօտել եմ: Նա խեղճ է, ազէտ ու խաւար, դարերի մառախուղը տակաւին բռնել

է նրա հորիզոնը, մարդիկ քայլում են խար-  
խափելով, կոյր ու դժբախտ, բայց նա հա-  
րուստ է քնած ոյժերով, որոնք ժամանա-  
կի ու պայմանների պէտք ունին քաղաքա-  
կրթական հզօր ու գեղեցիկ ստեղծագործու-  
թիւնների համար:

Աշխատող ձեռները, մտածող գլուխնե-  
րը, զգացող ջերմ սրտերը վերջ է վերջոյ  
հրաշքներ կը գործեն նաև մեր հայրենիքում:

Հաւատանք, սիրելիս, հաւատանք ու աշ-  
խատենք:

Յտեսութիւն!

Ընկերդ

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ



Ա. Ա Հ Ա Ր Ո Ն Ե Ա Ն Ի

Առանձին գրքերով լոյս տեսած երկերը

Հոս կինը . . . . .	— 40	կ.
Մայրերը (սպառուած) . . . . .	— 15	»
Մըրիկի սուրբը . . . . .	1	— »
Իտալիայում (պատկերազարդ) . . . . .	1	50 »
Արագը . . . . .	— 80	»
Հոութիւնը . . . . .	— 60	»
Ազատութեան ճանապարհին . . . . .	— 80	»
Արցունքի հովիտը . . . . .	— 35	»
Կեանքի վէպը . . . . .	— 75	»
Գայլերը ունում էին . . . . .	— 10	»
Ժողովածու երկերի հատոր I Պատկերներ		
Բ. հրատարակութիւն . . . . .	1	— »
Ժողովածու երկերի հատոր II Խեղճերը		
Բ. հրատարակութիւն . . . . .	— 75	»
Անդունդը . . . . .	— 40	»
Մոխրներէ տակից . . . . .	— 40	»
Շվեյցարական դիւղը . . . . .	1	— »

Իրմեկ Հեղինակին. «Հորիզոն»-ի խմբագրութիւն

ՀՀ Ազգային գրադարան



NL0313094

13.485